



ՀԻՄՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀԻՄՏԱՐԱԿՉՈՒԿԱՆՆԻ»

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ
ՏԱՐԵԳԻՐԻ

Ա. Տ Ա Ր Ի 1939

Խմբագրեց
Հ. ՄԿՐՏԻՉ ՎՐԻ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Տպագրուելն
«ՀԱՅ ՄԱՍՈՒԼ»
Պոլիս

«ԳԱՂՈՒԹԱՀԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱՆԿՉՍԿԱՆ»Ի
ԳՐԲԵՐ ՈՒ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՏԵԼԻԲՆԵՐ
Խմբ. Ա. Ֆ. Գոնսիլեան

Պարբերական հրատարակութիւն մը, իսկապէս
լեցուն հաղարումէկ գիտելիքներով, տարեկան բաժնե-
գինն է 110 լէւ, 15 ֆր. ֆրանք, 2 շին կամ 75 սէնթ.

Որպէսզի մեր ընթերցողները գաղափար մ'ունե-
նան այս շատ հետաքրքրական հրատարակութեան
մասին՝ կը զննէք ըստանդակութիւնը. — Ուղեցոյց կեն-
ցազգայնութեան, Դասընթացք ելեքտրականութեան,
Դասընթացք արամարանութեան և պերճաստութեան,
Դեռահասաներուն, Տնտեսիկն-Չ բարեկամը-խոհանոցէն
ներս (կերակուր և խմորեղէն պատրաստելու կերպեր),
Ընտանեկան քառասուն (Նոր լեզի գործածութիւնը,
...), Մարերուն (ժան-
...), Տնական գեղարան,
... ւածքներ, Պատմական

լար ու մեկ գիտելիք-

ըլլայ:

... նն յեզի զիմել այս

... անարու համար, վճա-

... րազիտակի գործա-

... այնանի մեզի սա հաս-

Ciuc (Roumanie)

Քրիստոսի զարթոյնը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ը «ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ»

059
Գ-24

ԱՅՈՒԿՎԱԾ Է 1961 թ.

Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք

Ա. Տ Ա Ր Ի 1939

1961
A
2000

Խմբագրեց
Հ. ՄԿՐՏԻԶ ՎՐԳ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



ՊՈՒՔՐԷՆ

1939

Տպ. «Հայ Մամուլ»

«ԳՄՂՈՒԹՍՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ»Ի
ՅԱՐԴ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԱԾ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ

ՄԵԿԵՆԱՍ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Պուլքէշարնակ Տիար Արքաֆի Աչրֆկեօղեան
2. Կալացէն Տիար Արմենակ Պօհնէլեան
3. Լոնտոնէն Տիար Ներսէս Կիւլպէնկեան

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Վսեմ. իշխան Պորիս Արղութեանց Երկայնարազուկ (Ֆրանսա),
2. Վսեմ. Ոսկան Մարտիկեան նախկին նախարար Թուրքիոյ (Դահիրէ),
3. Վսեմ. Տիգրան Կամսարական, զրազէտ (Բարիզ),
4. Վսեմ. Սիմէոն Ղարիպեան (Պասրա),
5. Գեր. Յարութիւն վ. Տիւլէկեան (Պաղտատ),
6. Գեր. Պօղոս վ. Գրքմըզեան (Լէմպէրկ),
7. Վարդան Մկրտիչեան (Օմուր Ֆաքա),
8. Ղազարոս Նահապետեան (Դահիրէ),
9. Լրանդ Վարդանեան (Պուլքէշ),
10. Աւետիս Էփտաճար (Կերլա Ռուժանիա),
11. Ներսէս Գասապեան (Բլովփով),
12. Վարդան Մելքոնեան (Պասրա),
13. Արժ. Խորէն քհն. Գասապեան (Պասրա),
14. Լեւոն Շահոյեան (Պաղտատ),
15. Արժ. Յարութիւն քհն. Տէր Մեսրոպեան (Ղազվին),
16. Հայկազ Տէլինեան (Աղեքսանաբիա),
17. Տիրան Փաշալեան (Տիթրոյիա),
18. Ա. Տաթրեան (Ս. Փաւլօ),
19. Տոքթ. Ա. Կէօքճեան (Լառնաքա),
20. Տոքթ. Ռ. Թազուրեան ատամնարոյժ (Նիկոսիա),
21. Յովհաննէս Բարսեղեան (Ղազվին),
22. Յովհաննէս Շէքէրճեան (Պուլքէշ),
23. Ներսէս Թօփալեան (Կալաց),
24. Թորոս Եէթէնէքեան (Յուպէ),
25. Յովհն. Վարժապետեան (Մարսէյ),
26. Անդրանիկ Պաղտասարեան (Պրայլա),
27. Տոքթ. Յովհաննէս Արթինեան (Առնուվի),
28. Խաչատուր Լազարեան (Նոր Ջուղա),
29. Գէորգ Հաճի Արթինեան (Պուլքէշ),
30. Յովհաննէս Աճէմեան (Պոստոն),
31. Արզար Մեսրոպեան (Պասրա),
32. Պր. Տիգրանեան (Լօս Անճէլոս),
33. Միսիրեան Կղարք (Պրիւքսէլ),
34. Միքիաս Արապեան (Թիմիշուարա),
35. Արամ Երեմեան (Նոր Ջուղա):

Փ Ո Խ Ա Ն Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ի

Ամէն գիրք ընդհանրապէս յառաջարան մը կ'ունենայ, Այս Տարեգրքին յառաջաբանը՝ կարճ պատմուածք մըն է:

Ռուսմանիոյ փոքրիկ գիւղի մը մէջ կը բնակի պ. Վարդան Մկրտիչեան, որուն հետ կը թղթակցիմ տասը տարիէ ի վեր, երբ ան իմ երկիր թերթին բաժանորդ արձանագրուեցաւ: Հազուադիւտ բաժանորդ մը, անո՛ր համար որ ովհետեւ ինքը արձանագրուած էր ինքնաբերաբար և, ինչպէս Եւրասպացիները կ'ընեն, կանխապէս միշտ բաժնեգինը կը վճարէր:

Ստէպ գիրք կ'ուզէր այս ընթերցասէր հայրենակիցը և անմիջապէս գրամն ալ փոստին կը յանձնէր: Ինչ գիրք որ զրկէի՝ սիրով կ'ընդունէր: Հետաքրքրուած ուզեցի գիտնալ թէ ո՛ւսկից ինկած է ան Օմար-Ֆաքա գիւղը և թէ ո՛ւր առած իր ուսումը: Առեւտրականի մը որդին եղած է այս առեւտրականը, Պուլկարահայ նախարթարանը աւարտած: Այս հայ կեդրոններէ հեռու ապրող մարդը միշտ կը մասնակցէր ռազային ի նպաստ եղած հանգանակութեանց: Ինքը գրեց ինծի անգամ մը որ Անթիլիասի եկեղեցւոյն կառուցման համար հանգանակութեան սիւնակ մը բացուի Հայ Մամուլին մէջ և իրմէ 2000 լէյ արձանագրուի: Հայաստանը շա՛տ կը սիրէր, ըլլար ան Դահնակցականներուն կամ Պոլշեւիկներուն ձեռքը: «Դադութահայ Հրատարակչականի» «Հիմնադիր անդամ» արձանագրուելի առաջարկեցի. իսկոյն դրամական սահմանուած նուէրը զրկեցի:

Գրեցի իրեն որ օր մը զինքը տեսնելու պիտի երթամ, խոստումս կատարեցի այս (1938) ամառը Պաղարճըզէն ինքնաշարժ կառքով ճամբայ ելայ. անոնք որ իմացան թէ պ. Վարդանին պիտի երթամ՝ — «չաւ գիրքի տէր է և պատուաւոր մարդ» ըսին: Ու բնական է պայատի նմանող առուն մը պիտի ունենար և փայլուն խանութ մը: Կառքը սակայն, որ կանգ առաւ տնակի մը առջև՝ զիս ստիպեց որ հարցնեմ — Այս է պ. Վարդանին խանութը:

Պատուական հայրենակիցս, արդէն խանութէն դուրս թուած՝ քովս էր ժպտը երեսին, երկու հայկական սև աչքերով:

— Հրամեցէք, հրամեցէք Հայր Պոտուրեան, — այնքան զօն էր որ խոստումս կատարած եւ ուխտաւորի մը պէս զինքը տեսնելու գացած եմ:

3 մէթր լայն, 4 մէթր երկայն փոքրիկ խանութ մըն էր այս մեծհոգի հայուն գրքերու ու թերթերու դրամ շահող աղբիւրը: Փոքրիկ պատուէանին ապակին, կ'երեւի շատո՛նց կոտրած է. ինչ փոյթը:

Ընտանիքը կը ներկայացնէ, խաթուն կին մը և երեք զաւակներ: Միայարկ տնակը չէ՛ տախտակամածած, հիւրի համար զեղեցիկ սենեակ մը պահած է. սենեակ մը որուն պատերն ու սեղանները հայկ, պատմական և աշխարհագրական նկարներով զարդարուած են:

Այս ազգասէր հայը շատ տարիներէ ի վեր Թուրքերու մէջ ապրած է միս մինակը. հոն ունեցած է երեք զաւակները, որոնք հայերէ՛ն կը խօսին և հայերէ՛ն կը կարդան:

— Գրքեր զրկեցէք, հայերէն գրքեր զրկեցէք մեզի հայր սուրբ, — կ'ըսէ թախանձանօք 14 տարու Երմոնէն:

Ու երբ հօրը գրադարանը ցոյց տալով

— Տե՛ս, հայրիկը ո՛րքան գրքեր ունի, կ'ըսեմ՝

— Ես առոնք բոլոր կարդացած եմ երկու անգամ. երեք անգամ ալ, ՄԵՐ ՄԻԱԿ ՀԱՃՈՅՔԻ ՀԱՅՅԵՐԷՆ ԳԻՐՔ ԿԱՐԳԱԼՆ Է:

Աչքերուս ՚իջ ուրախութեան արցունքներ կը պտղին:

Գաղաքներու ու գիւղերու մէջ, ուր բազմաթիւ Հայեր կ'ապրին, ունին իրենց դպրոցն ու եկեղեցին, հոն արդէն մայրենի լեզուն հայ շրթունքներուն լրայ հոգեվարքի ժամերը կ'անցընէ. ա՛խ, գաղութներու մէջ ցիրուցան եղած պատանիներ և աղջիկներ կա՞նք արդեօք, որ Օմար-Ֆաքայի Երմոնիէին պէս ըսեն.

— Մեր միակ հաճոյքը հայերէն գիրք կարդալն է:

Ես ձեր հոգևո՛յն մատաղ, իմ փոքրիկ հայրենակիցներս, դուք դար մը կ'ապահովէք դժբախտ Հայուն կեանքը:

Այս գիրքը, ես ու ինձի հետ շա՛տ սիրով Գաղութահայ Հրատարակչականի Մեկենաս, Հինաղիր և Ընթերցող անդամները, մեր գործունէութեան այս երախայրիկը Երմոնիէին և իրեն պէս հայ գիրն ու գիրքը սիրողներուն կը նուիրենք:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

«Գաղութահայ Տարեգիրք»ի խմբագրութիւնը խորին շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց՝ որոնք մեր կոչին արձագանգ տալով իրենց աշխատակցութեան բաժինը բերին Տարեգրքիս:

Գրականութիւնն ո՛չ ազգ կը ձանչնայ, ո՛չ կուսակցութիւն: Իրենք, մեր աշխատակիցները պիտի տեսնեն որ մենք անխտիր զիմած ենք և ո՛ւղած ենք որ «Գաղութահայ Տարեգիրք»ը իր մէջ հաւաքէ դրչի հայ մշակներ, այս բեմէն տարին անգամ մը խօսք մը ըսելու ընթերցողին, գիտունին ու գիտնականին, հայ ժողովուրդին ու հայ պատանիին, բանասէրին ու արուեստագետին: Յոյս ունինք որ մեր նպատակին պիտի հասնինք ու ասորէ տարի պիտի ձոխացնենք այս գիրքը՝ բովանդակութեամբ և ծաւալով: Թող ներողամիտ ըլլան անոնք որոնց յօղուածները ուշ հասնելուն գալիք գրքին մէջ պիտի երեսան:

ԽՄԲ.

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԹԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Վերջերս, Հայաստանի լրագիրներ հաղորդեցին թէ Հայաստանի կառավարութիւնն ու երիտասարդութիւնը որոշած են տօնել Սասունցի Դաւիթը յառաջիկայ տարի և հիմակուց կը տեսնուին պատրաստութիւններ՝ ըստ արժանւոյն տօնախմբութեան տալ զպատիարակչական մի ընաւորութիւն: Ամէ՛ն կերպով ողջունելի է կառավարութեան այս որոշումը, մանաւանդ այն պատճառաւ՝ որ աս առաջին քայլն է որ ունի պատմական արժէք: Պէտք է յուսալ թէ Հայոց ժողովրդական Դիւցազներգութիւնը անձնաւորող մեծագոյն դէմքը, Սասունցի Դաւիթը պիտի տօնուի վայել հանդէսով, նախընթաց և միջին դարերի իրականօրէն պատմական դրուագներով, ընկերական կարգուսարքի, Հայոց ասպետական անուակալութեան կենցաղի, հայ չինականին* և ռամիկի վարքուսարքի կենդանի վերարտադրութեամբ, անոնց տարազների, զէնքերի, զարդերի վաւերական ներկայացումով, վերջապէս

*) Արեւելեան հին աղբերն, ինչպէս Հայոց պատմաքննական փորձերը հիմնապէս սխալ ըմբռնած են գերի.usրուկ, նո՛րս և նման ըստերի իրաւարանական բնոյթը: Արեւմտեան Ասիոյ հին աղբերի մէջ, ուր կը տիրէին ժառանգական միապետութիւններ և ժառանգական քրմական ընտանիքներ, գոյութիւն չունէր զերութիւն և սարկութիւն այն իմաստով՝ ինչպէս այդ բառերը կը հասկցուէին Ելլադայի, հին Հռոմի և Եւրոպայի մէջ մինչև ատէ մէկուկէս դար առաջ: Վերջիններս, իսկապէս ստրուկների պետութիւններ էին իրաւարանական լայնագոյն առումով, մինչդեռ Արեւելքի մէջ, թէ Հեթանոսութեան և թէ Քրիստոնէութեան ու իսլամի օրով, ռամիկն անգամ ունէր իրաւունքներ: Ապացոյց՝ Բարեկոնի մեծ թագաւոր Սամմուրարու օրինագիրքը (1200 Ն. Ք.), Սաստի օրինագիրքը (1400 Ն. Ք.) և այլն: Անկարելի է այստեղ ձեռնարկել սահմանաւորումների, որովհետեւ նիւթը ունի զանազան երանգներ և ելէէջներ, որոնք կարօք են լայնարձակ քննութեան:

ղինսուորական թափօրներով, նկարահանողէսներով և նուազային ու թատերական ցուցադրութեամբ:

Իբրեւ մի փոքրիկ նպաստ համազգային այս մեծ տօնախմբութեան, կ'արժէ շեշտել մի քանի գիծեր և Հայաստանի երիտասարդութեան ներկայացնել հետեւեալ ղիտողութիւնք:

Հայոց հնագոյն մշակոյթի և պատմութեան գիտական ուսումնասիրութիւնը եղած է ամենախորթ զաւակը հայ մտաւորականութեան՝ վերջին 50 տարուան մէջ: Հայոց ներկայ սերունդը ոչինչ գիտէ իր վաղնջական նախահայրերի արուեստի և պատմութեան մասին, իսկ անոր գիտցածը Արեւմուտքի խարդախ ու կեղծ դասադիրքերէն անդին չ'անցնիր — Դասագիրքեր՝ որոնք կը խօսին «Փիւնիկէ»ի, «Մարաց կայսրութեան» և նման ստութիւններ՝ Յոյների և Աղեքսանդրի Արեւելքը քաղաքակրթած լինելու մասին և նման հէքիաթներ: Այդ պատճառաւ Յ. Կոջոյեան որ մի նկարիչ է և ո՛չ թէ հնագէտ-պատմաբան, Սասունցի Դաւիթի նկարը դուրս բերած է ոչ-պատմական գիծերով:

Ինչպէս ծանօթ է, ասկէ երկու տարի առաջ Հայաստանի Պետհրատը ի լոյս ընծայեց հայ հեղինակաւոր գիտնական քրոֆ. Մ. Արեղեանի և Կ. Մէլիք-Օհանջանեանի հոյակապ աշխատութիւնը՝ Սասնոյ Ծուր Վեր վերնագրով: Այս եղակի հրատարակութեան Ս. հատորը բաղկացած 1200 քառածայ էջերէ, բովանդակ հայ մամուլէն ողջունուեցաւ խորունկ երախտադիտութեամբ: Պրոֆ. Արեղեան, հայ մտքին ընծայած է մի անմահ հատոր, ներշնչող, հմայիչ և գերազանցապէս կրթիչ:

Այս հատորի ներածութեան վերջը, և բնագրի սկիզբը ղեակդուած է Սասունցի Դաւիթի խորհրդաւոր, զրաւիչ և զունագեղ նկարը հեծած ճանձկէն և փրփրերախ երիվարի կռնակը և քաշած իր կայծակնացայտ թուրը: Պարզ է որ Յ. Կոջոյեան երկնած է իր նկարը իր պատմական ծանօթութիւնների սահմանին մէջ, ինչ որ հիմնապէս սխալ է և անհամապատասխան՝ հնագոյն մետաղագրական արուեստի գլուխգործոցներին: Հաւաստի եմ որ Յ. Կոջոյեան պիտի ներէ ինձ ընելու այս ղիտողութիւնը, ի սէր Հայոց պատմագիտական ուղիղ մտածողութեան: Ահա թէ ինչպէս:

1878 ին Բրիտանական թանգարանի հաշուին Մօսուլի չրջակայքը պիղուններ կը կատարէր Բիլտանի Հօրմուզը Ռասամ: Մօսուլին մօտ 18 մղոն հարաւ-արեւելք Բալաւաթ անուն կրող Արարական մի գիւղի աւերակների մէջ նա ի յայտ բերաւ Ասորեստանեան մետաղագրական արուեստի ամենազեղեցիկ նմոյշները: Տեղւոյն հին անունն էր Իւզուր-Բեի ուր Ասորեստանի իսկապէս անեղագոյն միապետը Սաղմանասար Գ. (859—824 Ն. Բ.) շինած էր իր աստուածների մեհեանը և արքա-

յական պալատ: Գիւտը կը բաղկանայ 35 սանդիմէթր լայնութեամբ և իւրաքանչիւրը մօտ 2 մէթր երկարութեամբ բրոնզեայ շերտերէ, 15 անջատ կտոր. զորս Սաղմանասար ձուլել փուլած էր իրրև զարդարանք իր պալատի արտաքին դրան փեղկերին: Այս շերտերի 20—22 այլ բեկորներ ցրուած են Եւրոպայի այլևայլ թանգարանների մէջ և կամ եղած են նիւթ օտար վաճառքի:

Բրիտանական թանգարանի մէջ ցուցադրուած 15 կարեւորագոյն շերտերը, մեծ մասամբ լաւ պահուած և ամբողջական, կը կրեն աննըման քանդակներ, աւելի գեղեցիկ և պատմական ցարդ գանուածներէն:

Այդ քանդակներով Սաղմանասար Գ.ը (աւելի ճիշդ իր քանդակող արուեստագէտը) կը ներկայացնէ իր ռազմական արշաւանքները զանազան դրացի երկիրների դէմ, Ասորեստանեան բանակի գործողութիւններ, անոնց և դրացի երկիրների զօրքերի և զէնքերի կենդանի պատկերը, ամրոցների ճարտարապետութիւնը, և իսկական պատերազմական տեսարաններ: Անհնարին է այստեղ մտնել պատմական մանրամասներ: Բաւական է ըսել թէ ըստ Սաղմանասար Գ.ի տեղեկագիրին և այս բրոնզեայ քանդակներին իր ամենահզօր թշնամին էր Ուրարտուի թագաւոր Արամէ (Մովսէս Խորենացու Արամ Հայկազն) և Սարաուրի Ա.ը: Արամի երկարատեւ թագաւորութեան ժամանակ Սաղմանասար, երեք անգամ յարձակեցաւ Ուրարտու-Խալդիոյ վրայ, առանց ո՛րէէ յաջողութեան, իսկ Սարաուրի Ա. ձեռնարկեց յարձակողականի և ջախջախեց Սաղմանասարի բանակը: Այդ քանդակներին 7—8ը կը ներկայացնեն Ասորեստանեան-Խալդի ճակատամարտի զանազան գրուագներ*, ասոնցմէ մի շարքը որոշապէս կը գծէ Խալդի զօրքեր, որոնք կ'իջնեն բլուրներէ յարձակելու Ասորեստանցւոց վրայ: Դէպքը տեղի կ'ունենայ Սուգուենիք ամրոցի առջևը, մէկը Արամի ար-

*) Բաւական թի այս բրոնզեայ քանդակների լաւագոյն ուսումնասիրութիւնը նկարներով գիտական հետախուզութեամբ կատարած են Բիլլըբէք և Դէլիշ՝ 140 հոծ էջերով: Անդ կարելի է տեսնել մանրամասներն A. Billerbeck und Delitsch: Die Palastore Salmanosars III von Balawab ի շարս Beiträge zur Assyriologie. Հատոր VI (1908) մասն Ա. Լայպցիկ: Անցեալ տարի C. G. Gadd հրատարակեց ի Assyrian Bronzes, Լոնտոն. բայց չափազանց թանկ է: Ասկէ մի քանի ամիս առաջ լոյս տեսած իմ փորձին մէջ The Hurri-londs, ամփոփ կերպով շօշափած եմ Արամ-Սաղմանասար մենամարտի տեղագրութիւնը և նոյնացումները:

քայական քաղաքներին: Ստորագրեալ փորձիս մէջ արդէն ասպացուցած եմ որ Սաղմանասարի յիշած Սուգունքա քաղաքն է մեր ներկայի Սուգուն Անձեացեաց գաւառի (այժմ Նորտուզ) պատմական քաղաքը, Հոգւոց վանքէն 4 ժամ դէպի Կարաւ, Տիգրիսի ափին:

Ասորեստանցի արուեստագէտը Խալդի-Հայկազն զինուորներ քանդակած է տարազով, զէնքերով... և ի հարկէ որոշ վերապահումներով: Յարձակող Խալդի զօրքեր բարձրահասակ, թիկնեղ և առիւժակերպ մարդիկ են, զինուած տէգերով, սրերով և վահանով: Իսկ ինչ որ ցարդ անծանօթ մնացած է Հայոց ներկայ պատմագրութեան, այն է որ Խալդի զօրքեր կը կրեն գարգմանակաւոր մետաղեայ սաղաւարտներ, սրածայր և բաշաւոր եզրերով, որոնց նմանութիւնը այժմ կը տեսնենք զանազան երկիրներու մէջ: Ո՛չ մի Արեւմտացի պատմագէտ չէ շեշտած Խալդեան բանակի այդ եզակի առանձնայատկութիւնը, գարգմանակաւոր մետաղեայ սաղաւարտի ամենահին գործածութիւնը մեր Խալդի նախահայրերի մօտ: Անոնք շահ չունին ի վեր հանելու այդ կէտը, մանաւանդ որ մարտական մի այդպիսի առաջնութիւն խոտոր կը համեմատի Հայոց ներկայ վիճակին:

Ոտած եմ Անգլ. Գերմ. և այլն առաջնակարգ մասնագէտներու հետ և մատնանշած այդ մետաղագրական փաստը: Ամէնքն ալ կ'ընդունին որ պատմականօրէն մետաղեայ սաղաւարտը առաջին անգամ ի յայտ կու գայ Ուրարտական բանակին մէջ, ճիշդ նման այն սաղաւարտին՝ զոր կարծեմ Հայր Ղ. Ալիշանը իմաստութիւն ունեցաւ զետեղելու Վարդան Մամիկոնեանին զլիսին: Գիտնականներէն մէկն ինծի ըսաւ որ հին Գարիացիք ևս ի յայտ կու գան մետաղեայ սաղաւարտներով, բայց անոնց թուականը անծանօթ է, յամենայն դէպս ո՛չ Ն. դարէն առաջ ն. Բ.:

Վերևի մանրամասնութիւնք ունին մի միայն մի նպատակ, այն է, յիշեցնել որ Սասունցի Դաւիթը, Հայոց ժողովրդական զիւցազներգութեան անպարտելի և ասպետ-հերոսը, և իր միւս ընկերները, պատմական հարազատութեամբ կրնան ներկայացուցիլ երբ անոնք կը կրեն գարգմանակաւոր մետաղեայ սաղաւարտներ, վաղակք, սակրեր, նակ թրեր, Մոկաց և Սանասունք աշխարհներու պատմական պաճաճազարդ գեառիկը, կաշեայ զանգապաններ, կանեփէ վորժիկներ՝ յատակը ծածկուած սրածայր բեւեռներով:

Ասորեստանցի արուեստագէտի քանդակած Խալդ-Հայկազանց զինուորակազմ տարազը, զոր քիչ փոփոխութեամբ և եզակի հարազատութեամբ պահպանուած է Վասպուրականի, Տարօնի և այլ հայ լեռնականների մարզական տարազին մէջ, Հայոց հին արուեստով հետաքրքրը-

ուողք զիտան հաւ թէ Խալդ-Հայկազանց զինուորական համադգեստը զգալի չափով կը տարբերէր, անոնց տօնական և կամ առօրեայ հագուստէն: Կան սքանչելի նմոյշներ թէ Խալդական աղբիւրներէ Ասորեստանեան մետաղներէն և քանդակներէն:

Հին Յոյներ և Հռոմէացիներ մետաղեայ սաղաւարտ գործածել սկսան համեմատաբար նոր ժամանակների մէջ. յամենայն դէպս Արեւմտեան Ասիոյ և Սև ծովի հետ յարաբերութեան մտնելէ յետոյ Ասորեստանցիք և Բարելացիք երբեք գործածած չեն մետաղեայ սաղաւարտը, որովհեաւ չունէին մետաղ, իսկ երկու խալդ-հայկազանց սպաներն ու զինուորներ կը կրէին փայլուն և գեղեցիկ սաղաւարտներ. 860 ինն. Բ. կայ ամէն պատճառ պնդելու որ զինուորական այդ զգեստաւորումը և մետաղագործական զարգացումը մեր հայրենիքին մէջ գոյութիւն ունեցած էր անյիշատակ ժամանակներէ ի վեր:

Ի՞նչպիսի հոգեպարար և ներշնչող մի դաս կը լինէր գաղութահայ մանկութեան համար, եթէ կարելի լինէր կազմակերպել Սասունցի Դաւիթի տօնախմբութիւնը նաև Ամերիկայի մէջ և ապա ներկացնել միևս գաղութների պատանեկութեան:

Ամէնէն գործնականը կը լինէր եթէ Հայաստանի երիտասարդութիւնը երկրին մէջ տօնելէ յետոյ Սասունցի Դաւիթը, մի փոքրիկ խումբ ուղարկէր գաղութները ներկայացնելու Հայաստանի տօնախմբութեան մանրանկարը:

ԱՐՇԱԿ ՍԱՅՐԱՍՏԵԱՆ

Լոնսոն, Նոյեմբեր 1938

Ս Ո Ն Ա Ք Ա Մ Ա Ռ Ի Ն

Ոսկի ամառն է ջուրերուն մեջ ոսկի ամառն,
 Ի՛նչ բոցերու տուն է արդէն, ի՛նչ թելերու հօգօր բախում
 Բացուեր է սիրքը փառերուն,
 Սիրքը հողին բաց է վերփոս,
 Սիրքը հովին խօ՛ղ կը դառնայ,
 Սիրքն ամառին կ'այրի ջուրի, փարի, հովի սո՛ւրբ խնձիղով:

Կ'իջնէ լեռան զաղտնիքներէն ալը ձիւնհալփ,
 Ի՛նչ կարապի արցունք է ջինջ,
 Ի՛նչ կարապի հեփեաքներուն մեջ բանսարկեալ սիրքն է փերած,
 Երկրին բուրմունքը ծիրանի սափորներով
 Յորդագեղո՛ւն կը ծաւալի:

Անցի՛ր երիվար,
 Աշխէտ երիվար,
 Հրաբաւ երիվար,
 Չուրք ֆեզմէ առաջ կը վազէ,
 Հովը ֆեզմէ առաջ կը վազէ,
 Լոյսը ֆեզմէ առաջ կը վազէ:

Անցի՛ր երիվար.
 Անցի՛ր այս փառն ալ,
 Անցի՛ր այս ծառն ալ,
 Անցի՛ր այս տունն ալ,
 Սիրածն ինձի կը սպասէ,
 Ճրագը ձեռքին՝ աչքը նամբուն:

Սլացի՛ր երիվար,
 Ամառին բորբ ուղիներէն,
 Սլացի՛ր երիվար,
 Աշխէտ երիվար,
 Հրաբաւ երիվար
 Ամառին բորբ ոսկիներէն:



ԱՐՄԷՆ ԵՐԿԱՔ
 Մեր արդի բեղմնաւոր
 բանաստեղծը

Պարանոցիդ շուրջը աստիք կը վառին,
 Կը խմեմ շունչդ, որ կարծես հեւեմ է հողին,
 Ուր հուձֆերուն կը սպասե՛ս սօնը բարի:

Սլացի՛ր երիվար,
 Ամառը հայր աղփասներուն
 Աշխէս երիվար,
 Ամառը վրան սանիֆներուն,
 Ամառը տենչ, ամառը սէր.
 Ի՛նչ սրինգ էր այս հովին արտէն
 Եղեգներու բոց արիւնէն
 Որ հրաւերի ու կարօտի պէս կը հնչէր:

Ամառը քնարն է լուսահոս աղբիւրներուն,
 Է նպուռին սիրտը անհուն կարմիր շուշան,
 Քարերուն վրայ,
 Ծառերուն վրայ,
 Ջուրերուն վրայ,
 Կապոյտն ի վար հոսուն սափոր
 Ու բիւրաւոր ջաներու սօն կանանչի մէջ
 Խնձորենի մեհեաններու հպարտ հրաւեր:

Անցի՛ր, սլացի՛ր նամբաներէն այգիներուն
 Աշխէս երիվար
 Նե՛ս արիւնի
 Հրեղէն նիզակ քրքնաքարս մկաններու
 Նժոյգ երիվար,
 Դեպի ակերք բարձրացո՛ւր լեռնաձիւնի
 Դեպի խորհուրդը բարձրացո՛ւր զուարթ հոգիս
 Աղամանդէ ամայութեան,
 Ու կարապի ու եղնիկի գարբնումին հետ
 Աշխարհն իր սիրտը կը բանայ:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՄՇՈՅ ՏՈՄ ԳԻՒՂԻ ՀԱՐԱՍԱՆԻՔԸ

(Տոմ գիւղի բարբառով)

Ստորեւ նոյնութեամբ կը ներկայացնեմ *Մշոյ Տոմ* գիւղի հարսնիքի մասին այն ինչ որ կրցայ պատմել իսկով զրի առնուլ Պլովզիւաբնակ հայ տիկինէ մը, որ 42 տարիէ ի վեր հայրենիքէն ելած ըլլալով հանդերձ՝ սակաւին բաւական անեղծօրէն պահած է տեղական գաւառաբարբառը: Ինքը բնիկ Մտոյ Տոմցի է. հոն ծնած, մեծցած, ամուսնացած ու զաւկի տեր եղած էւ յետոյ պանդուխտ կեանք անցուցած է Տիարբեքի, Աստնա, որուն հայկական շարդին (1909) ակամաստա եղած է, Յունաստան էւ ամենէն վերջն ալ Բուլղարիա:

Այստեղ իմ ջանքս ու միակ նպատակս եղած է, զայ Մտոյ գաւառաբարբառէն նմոյշ մը, հոգ չէ քէ անկատար ձեւի մեջ, նկատելով որ այդ գաւառաբարբառն այսօր իր բուն հողին վրայ ա՛յլեւս չի խօսուիր ու ի սպառ կորսուելու վտանգի մեջ է:

*
*
*

«Գիտելի միէջ թիեղ կի կարգունն. աղջիկը 13-15, մանչ լէ 13-15 տարեկան: Մէկ օր կի դան կի թոփնին իրիկունն մը կնքահօր տունը՝ նշան կի դնին: Պատկին շատ չին սպասի: Աղջկայ խտուցներ տղի տուն կը թոփնին, հինայ կը դնին: Էռջէն հարսի ձեռք կը դնին: Ինչխտիր մարդ կայ՝ կի դնին: Իրիկ մարդուն միէկ ձեռքը կի դնին հինայ: Աղջկայ տունը կի պարին: Մանչու տուն լէ:

Լուսուն կ'ելլան կի քակին ձեռուընիր, կի վրանան: Օչխար կի մորթին, աղուօր կի կարմրցուն, էնի կի տանին աղջկայ տուն: Տուտերկու կաթայ կի չինին, կի տանին էրթուկն աղջկայ տուն: Իրիկ մարդ կ'երթայ աղջկայ տուն, կնկտի չ'երթայ: Հուտն կ'ուտին, կ'երգին, կի պարին:

Հարսնիքին հիրիսայ կի դնին, օչխար կի մորթին, տուժայ կի դնին: Կ'ուտին, բայց չին խմիր բախի կամ դինի:

Հարսին հալաը (ղգեստ), էրկէն պոյով ջուվայ, անթարի փեշերով, էրկէն շապիկ-վարտիկ. դիւին վիրէն արծթէ թէպիէա՝ ետեւէն փուսկուլ: Ծակտին լէ օսկի շար, անկճին լէ օսկի օղեր, վիզ լէ կեր-

աէալէախ. ձեռուընին ապրճան: Մասնիք երկու երեք մատերը: Ձիլիւ
քունքերէն կախուկ: Հարսին իրես գուռոց է կարմիր փուշիով: Գուրգ-
նին նշխուեն, սուր սիրուն: Գողքը ձերմակ իտիղին, կարմիր՝ էռշիղին:

Փեսին հալաւը. ձերմակ չապիկ-վարաիկ երկէն պոյով: Ապայ փըռ-
չով սիւ գոյնով, թիւերը կարճ, շիւլար լէ բուրդէ կ'եղնի:

Օր պատրաստ ին հարս ու փեսայ՝ կ'երթան ժամ՝ երգով, պարով,
ուրախութիւնով: Ժամ կի պսակունն և կի բերին կի գանփեսի տուն:
Ճամբէն երիկմարդիկ կ'երգին, կի պարին, կի գան տուն: Փեսի տուն
օր կի գան՝ էռջէն խորողը՝ կի մորթին շէմքին վրէն. կի մորթին՝
սորայ հարսը կի մանի նիերս, ժողովուրդ լէ կ'երթայ նիերս: Օր նիերս
էկան՝ կի կոխին լօջ (լաւաշ-բարակ երկայն հաց), կի կոտրին աման
կի հանին լօջ թոնրէն՝ կի դէին հարսի գլխին, փեսին լէ:

Հարս օր կի բերին տուն փեսի՝ սեղան կի շիտկին, հաց կ'ուտին,
կ'երգին* ու կի խաղան (կի պարեն):

Երկու օր, երեք օր հարսնիք կ'ենին: Մարդ կայ շարաթըմ հարս-
նիք կ'ենի: Փեսի տուն կի գան՝ հաց կ'ուտին, ուրախութիւն կ'ենին:

Աղջկայ իրեսը երկու օր գուռոց կի մնայ. մարդու հիւտ չխորաթէ:
Հարսին քողք կիսուր պըտը հանի:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՂՍԵԱՆ



Ծնած է Ապարխել (Ախալցխա,
Կովկաս) 14 Մարտ 1837ին: Վիեննա
գացած 1910ին: Ձեռնադրուած 1921-
ին: 16 տարի ուսուցչութեան պաշ-
տօն վարած: Գրականութեան մէջ
ազգագրական ծիւղին հետեւած: Ունի
զանազան յօդուածներ հայ թերթե-
րու և Տարեցոյցներու մէջ: Հրա-
տարակած է երկու վիպակ և հայե-
րէն աշխարհաբար Գրականութիւն
մը:

*) Դժբախտաբար ուրեւ հարսանեկան երգ չի յիւեր սիկիւնը. չի յի-
ւեր նաեւ վիճակի երգեր:

ԴԻԻԱՆ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Պուլկարահայ գաղութը, մէկը մեր ամենահին գաղթականութիւններէն, իր անցեալի ծալքերուն մէջ կը պարունակէ անսպառ նիւթ հեռաքրքրի ուսումնասիրողին համար: Իր եկեղեցիներու աւանդատուններուն, թէ բնիկ հին ընտանիքներուն մօտ, ընդհանրապէս անխնամ վիճակի մէջ ու իրենց բախտին ձգուած կը գտնուին ազգային և եկեղեցական այլազան հարցերու շուրջ շահեկան վաւերագրեր, հովուական թղթեր կամ ձեռագիր յիշատակարաններ, որոնց հաւաքումը, դասաւորումն ու հրատարակումը այնքան անհրաժեշտ՝ պիտի դան անկասկած լոյս սփռել մեր անցեալի մուկը մնացած հարցերուն վրայ, յաճախ լրացնելով հայ և օտար մատենագրական աղբիւրներու թերի ձգածը:

Մեր ներկայ ձեռնարկը փորձ մըն է այդ ուղղութեամբ, նպատակ ունենալով կորուստէ փրկել այդ կարգի խել մը անտիպ նշխարներ, զորս մեր անհատական միջոցներով և ազգային մարմիններու և գրասէր բարեկամներու բարոյական աջակցութեան շնորհիւ յաջողած ենք ձեռք բերել:

Վաւերաթուղթերը, զորս կու տանք ստորև «Դիւան Պուլկարահայոց պատմութեան» շարքէն, կը ներկայացնեն կը կարծենք որոշ շահեկանութիւն, նաև ոչ-պուլկարահայ ընթերցողին համար:

Փլուսիւ

ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵԱՆ

Մ. Խ. ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ-ին նպասակներէն մին պիտի ըլլայ Գաղութներու պատմութեան նիւթեր հրատարակել: Ուրախ պիտի ըլլանք եթէ պ. Ն. Գասապեան իրեն հետեւողներ ունենայ: Տեղւոյ անձկութեան պատճառաւ հաս միայն կը հրատարակեմք այս անգամ, յաջորդին աւելի լայն էջեր նուիրելով:

ԽՄԲ.

Ա.

140 ՏԱՐՈՒԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԵԱՇԻ (Ռուսներ)

ԵԿԵՂԵՑԻՒՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՄԱՍԻՆ

Ե՛

Էջմիածնի ° ° ° սրբազան վեհաժողովի Գ. Բ. Աստուծոյ ծառայ և սրբոյ գերահարաչ մեծի Աթոռոյն ° ° ° միաբան և նուիրակ Դանիէլ Արքեպ. 1798 թուոյ կենարարին մերոյ և ի Փետրվարի 14ին, յա-

և ուր քառասնորեայ զայստեան Տեառն, վասն սրբոյ Աթոռոյն պատահեալ ի փրապահ քաղաքն Յաշ, աղերսանօք քահանայից և ժողովըրդոցն ձեռնադրեցի և օծի քահանայ զտէր Մաթթէոսի որդի զտիրացու Մարտիրոսն, անուանեալ զնա և կնքեալ Տէր Մարտիրոս Անուխակալ և բարերար Հոգւոյն Սրբոյ Աստուծոյ առատազեղ շնորհիւն և կարգեցի ի սպաս սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն Յաշ քաղաքի և ի տնտեսութիւն Նուսահորչաղաւան ժողովրդոցն ուղղափառ միաբանակրօն և միաբնահաւատ զաւակացն Սրբոյ Աթոռոյն, որպէսզի ի կեանս իւր անձանձիր պաշտեցէ զկարգն հաւատով և կրօնիւք Հաստատանայց Եկեղեցւոյ. ատեցօղ և յանդիմանօղ լինել ամենայն հերձ(ո)ւած չարափառութեանցն և ըստ կանօնի իւրոյ յանձնեալ եկեղեցւոյն, կապեալն ի նմանէ կապեալ է և արձակեալն արձակեալ, օրհնեալն օրհնեալ, և անիծեալն անիծեալ, առ ճշմարտութիւն հաւատոյ և կրօնից արդար կացուցմանց կանոնի և դատաստանին, նաև որքան կենդանի իցէ ընդ կարգակից Քահանայիցն ամենայն կերպ սիրով կենցաղավարել պատուիրեցի և մանաւանդ ընդ քէր Մարկոս քահանային որպէս որդի սիրոյ հնազանդութեամբ կեալ և ընդ Տէր Ներսիսին եղբայրական կենցաղավարութեամբ սիրով մնալ կանոնեցի, կացուցեալ ի վերայնորա դաստիարակ և հոգաբարձու զտէր Մարկոս խոնկամար և սրբակրօն քահանայն, և որքան կենդանի իցէ այսու ուխտիւս կեցեալ բարեաւ վայելեցէ զսուրբ կարգն ընդ երկայն աւուրս և զվարձս ի Քրիստոսէ առցէ աստ և ի հանդերձեալ և ամենայն սպասաւորութիւն իւր ի քաւութիւն և ի թողութիւն և ի փրկութիւն կենդանեաց և նշնեցելոցն եղեցի ի փառս Ամենասուրբ Երորդութեան և միաբուն Աստուածութեան և սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնին Ամէն։*


*) Գրուրեանս նակասր կայ Բաւակուսի կնիք մը. ուր կը կարդացուին Ք Ե Ծ (Քրիստոս ծառայ) Ե Ընդելուզուած գրեք, որոնք կը կազմեն Դանիէլ վարդապետ, տակը 1224 (=1775) թուականը: (Ն. Գ.)

Այս Դանիէլ Արեւիկոպոսը 1801ին կաթողիկոս կ'ընտրուի Եւ 1802 Մայիս 28ին Ալաշկերտի վանքը կ'օծուի: (Տե՛ս Հայ Հանրագիտակ Դանիէլի Ա. Սուրմառեցի): (ԽՄԲ.)

Սիրելի Հ. Պոստոլեան,

Ձեր ծրագրած «Գաղութահայ Տարեգիրք»-ին համար ինքնագիր յղուածս զոր ուղած էք, դժբախտաբար չպիտի կարենամ ձեզի հասցնել, այս միջոցիս կարգ մը ստիպողական աշխատանքներով ծանրարեւոնուած ըլլալով: Անոր տեղ ձեզի կը դրկեմ թարգմանութիւնը այն դեղեցիկ յօդուածին զոր 1924ին Բաֆֆիի Սամուէլին ֆրանսերէն թարգմանութեան երեւման առթիւ այդ վէպին նուիրեց՝ Ժուրնալ սէ Տեպայի մէջ՝ հայ ժողովուրդի և հայ մշակոյթի վաղեմի և սրտագին բարեկամներէն մին, ֆրանսացի հմուտ պատմագիր և գրական քննադատ Ֆիրմէն Բօզ, որ քանի մը տարիէ ի վեր անդամ է Ֆրանսական Կաճառին:

Ա. Չ.



Դեռ քամ է յիշատակը մեր մեծ վիպասանի, Րաֆֆիի
 ծննդեան յոբելեանին, որուն առթիւ հայ գրիչներ
 իրենց ներքողը հիւսեցին: Մեր ընթերցողները օտար
 մեծ գրագէտի մը գովասանքը մեծ հանոյժով պիտի
 կարդան. ԽՄԲ.



A 11
1931

Հ Ա Յ Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ Մ Ը

Բարերադրութիւն մըն է որ պատմական վէպ մը մեր առջև փայլուն կերպով բանայ գրականութեան մէկ քիչ ծանօթ նահանջը և այդ վէպն ալ ըլլայ գործ մը որ ամէնէն հաղուադէպ ու ամէնէն յաջող ձևով իր մէջ միացնէ պատմութեան, տուամիս ու բանաստեղծութեան հմայքները: Նկարագեղ ու մարդկային, այնքան հարուստ՝ տեղական գոյնով որքան հոգեբանական ճշմարտութեամբ, Սամուէլը ունի այն երբեակ նկարագիրը որ յատկանիշն է մեծ գործերուն, — մասնաւոր, աղգային և համաշխարհային:

* * *

Անշուշտ դժուար պիտի գտնուէր աւելի տուամաթիկ պատմութիւն մը քան Հայաստանինը: Փոխանցման երկիր, որ Պարսկաստանի սարահարթը կը միացնէ Փոքր Ասիոյ սարահարթին, լեռներու խառնակոյտ մը ձեւացնող այդ հողամասը, զինքը ձեռքէ ձեռք քաշող ցեղերու և աղքեցութեանց ընդդիմամարտ պայքարներուն շաղապատումով չէր կրնար ճանչնալ ո՛չ խաղաղութիւն, ո՛չ ալ միութիւն, նոյն իսկ անկախ եղած ատենը, երբ թագաւորութիւն մը կը կազմէր: Այդ թագաւորութիւնը ծնած էր, ինչպէս արեւմտեան Ասիոյ բոլոր թագաւորութիւնները, — Պերգամա, Կապադովկիա, Բիւթանիա, Գաղատիա, Պոնտոս, Յուդայի երկիր, — Աղեքսանդրի կայսրութեան անդամատումէն: Աւելի հեռուն գտնուելով քան միւսները և նուազ մատչելի ըլլալով, ան զերծ մնաց Հռովմէական տիրապետութենէն ու յետոյ՝ անհետացաւ արաբական աշխարհակալութեամբ: Հաղար տարիի չափ ակած էր, մերթ՝ յունական աղքեցութեան ենթարկուած ու մերթ՝ պարսկական աղքեցութեան: Այս վերջինը արդէն գերակշիռ դարձած էր յորմեհետէ Արշակունեաց հայկական հարստութիւնը շիջած էր 428ին և Հայաստանի անկախութիւնը անուանական դարձած էր այլևս:

Տաւմը՝ կրօնական կոիւով՝ իր սուր տագնապին հասաւ: Քրիստոնէութեան առաջին շրջանէն իսկ սկսեալ, Յիսուսի աշակերտներէն մին՝ Թադէոս, և Բարթողիմէոս սուրբեալը եկած էին Հայաստան՝ նոր

հաւատքը քարոզելու, բայց ազգաբնակչութեան ստուարագոյն զանգուածը քրիստոնէութեան հանդէպ անտարբեր կը մնար ու յարած մազդեզականութեան, որ պարսկական կայսրութենէն, որուն Հայաստանը այն ատեն մէկ նահանգն էր, ծաւալած էր ամէն կողմ, Տիգրիսէն ինչոս: Տրդատի թագաւորութեան օրով է որ, Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանի մէջ: Եօթանասուն տարի յետոյ կը հանգուցուէր այն գործողութիւնը զոր կը պատմէ Բաֆֆիի վէպը:

Ինչ վեհաշուք նիւթ: Երբեք Հայաստանը չէ ունեցած տաշնապ մը այնքան ծանր: Ընդ մէջ յոյն կայսրութեան որ իր արեւելեան կողմը կը կազմուէ և Սասանեան հարստութեան որ Պարսկաստանի դահուէն վրայ կ'ամրանայ, Հայաստանը ճակատադրականօրէն սահմանուած է հակելու մերթ դէպի մէկ, մերթ դէպի միւս զրացին, որոնց իւրաքանչիւրին շահերը կը պահանջէին որ ան իրեն ենթարկուէր: Անիկա կամուրջը դարձած է. ուրկից անոնք պէտք է անցնին՝ իրարու հանդիպելու համար, և իր դաշնակցութիւնը կշիռքը կը հակեցնէ անոր կողմը զոր ինք կը նախընտրէ: Արդ, Հայաստանի թագաւոր Արշակ Բ., Բիւզանդական կայսր Վաղենտինոսին հետ հայտուելու ստիպուած, անոր ազգականուհիներէն մէկուն՝ Ողոմպիային՝ հետ ամուսնացած էր: Այդ մերձեցումը ատելութիւնը զրգուած էր Պարսից վեհապետ Շապուհին, որ վրէժը լուծելու համար քարուքանդ ըրած էր Տիգրանակերտը, այդ վիթխարի ու ճոխ մայրաքաղաքը զոր Մեծն Տիգրան հիմնած էր Քրիստոսէ 77 տարի պռաջ, ու զրպւած էր Անիի ամրոցը, որուն գանձերը՝ և նոյն իսկ Արշակունի թագաւորներու դամբարանները՝ կողոպտած էր, անոնց ոսկորետիքը աքսոր տանելու համար: Բազմաթիւ կռիւներէ յետոյ, որոնց մէջ մերթ յաղթած ու մերթ յաղթուած էր, Շապուհ հաշտութեան դաշինք մը կնքելու հարկը պատրուակ ըռնած էր Արշակ Բ.ը իր մօտը՝ Տիգրոն, Պարսկաստանի նոր մայրաքաղաքը, ըրելու համար, ու զայն կալանաւոր պահած էր, ինչպէս և հայկական բանակի սպարապետը՝ Վասակ Մամիկոնեան: Անոր ծրագիրը պարզ էր. իր փորձառութեամբն իսկ համոզուած թէ Հայոց ու Բիւզանդական կայսրերու միջև գլխաւոր կապերն էին նախ քրիստոնէութիւնը, յետոյ՝ յունական մշակոյթը, կը ջանար ջնջել այդ կապերը, Հայոց մէջ տապալելով Յունաց կրօնքը, լեզուն, գրականութիւնը, և այդ երկիրն իր թագաւորութեան հետ ձուլելու համար՝ կ'ուզէր անոր մէջ տարածել իր կրօնքը, իր լեզուն, իր գրականութիւնը:

Կրօնի և հարցը այսպէս ազգային հարցին սերտօրէն կապուած

կը յայտնուէր և քրիստոնէութեան դատը անկախութեան դատին: Արդարև մինչև Աղեքսանդրի աշխարհակալութեանց շրջանը, Հայաստանը Պարսից Պետութեան կը պատկանէր: Մինչև քրիստոնէութեան տիրապետումը, Պարսիկներն ու Հայերը շարունակած էին իրարու հետ շատ հաշտ ապրիլ, որովհետև իրենց կրօնքները իրարու կը նմանէին եւ որովհետև իրենց վեհապետները նոյն տոհմէն էին, այսինքն Արշակունի հարստութեան կը պատկանէին: Երբ Գրիգոր Լուսաւորիչ, քրիստոնէական հաւատքը Հայաստանի մէջ հաստատելու համար, վարդապետներ հրաւիրած էր, իր դիտաւորութիւնը Հայոց կրթութիւնը օտարներու ձեռքը ձգել չէր. պէտք էր ատոնք գործածել ատեն մը, մինչև որ երկիրը իրմէ իսկ ըլլած ուժեր պատրաստած ըլլար: Եթէ Բիւզանդական աղղեցութիւնը այդքան ուժով տեղի ունեցած չըլլար, պարսկական աղղեցութիւնը պիտի գործէր առանց ուէ հակակշռի: Ուրեմն է՛ն առաջ քրիստոնէայ մտաւոր է որ Հայութիւնը կրնար իրր ազգ պահպանել ինքզինքը: Գալով դրացի երկու ժողովուրդներէն մէկուն կամ միւսին տիրապետութեան տակ իշխալու վտանգին, ատիկա իր գոյութիւնը կը շարունակէր ամբողջապէս պահել: Նոյն ճակատագիրը որով Հայաստանին վիճակուեցաւ Բիւզանդիոնի ու Պարսկաստանի միջև բաժանումը, զայն առաջնորդեց ատեն մը ետքը՝ Պարսկաստանի, Թուրքիոյ և Ռուսիոյ միջև անդամատուելու: Խնդիրը՝ այսօր՝ գիտնալն է թէ անիկա վերջապէս անկախութիւնը պիտի գտնէ՞ մեծ պատերազմի հաշուեյարդարութեան մէջ:

Ժողովուրդի մը եղբրական ճակատագիրը՝ անոր պատմութեան ամէնէն սուր տաքնապներէն մէկուն միջոցին, ահա՛ մեծ նիւթը Սաւուել վէպին, այդ նիւթը չէ դադրած այժմէական ըլլալէ:

*
* * *

Բայց այս հոյակապ յետապատկերը վէպին խորքի կտաւն է միայն. Թատերարեմիւն յառաջամասին վրայ, կեանքով լի անձնաւորութիւններ կը խաղան հոգեցունց առամ մը որուն գործողութիւնը իրենց անհասական գոյութեան իրադարձութիւնները կը կապէ ազդային գոյութեան իրադարձութեանց: Այսպէս է որ արուեստի գործ մը կը հաւասարակշռուի երկու բեւեռներուն միջև որ անոր ճշմարիտ մեծութեան չափը կու տան, ճշտագծում մ'ասնաւոր ու թանձրացեալ ճշմարտութեան, մասնակցութիւն աւելի ճշմարտութեան մը ուր ան երեւակայութեան օրէնքներուն ու նոյնիսկ տիեզերքի շարժումին կ'ընկերակցի:

Արշակ Թագաւորը Պարսկաստան կը մտայ կայանաւոր: Գահա-

ժառանգք Պապ, Բիւզանդիոն վար դրուած է իր կնոջ ու զաւակներուն հետ. Ներսէս կաթողիկոսը, քրիստոնեայ Հայաստանին մեծադոր պաշտպանը, Պաթմոս անրնակ կղզին աքսորուած է Վաղէս կայսեր հրամանով. Հայոց սպարապետը, որ Արշակին կ'ընկերանար Պարսկաստան, կոչկոծաման եղած է: Հայ նախարարներն իրարու հետ անհամաձայնութեան մէջ են, ոմանց կարծիքն է Յունաց դերիշխանութիւնն ընդունիլ և անոնց հարկաւու ըլլալ, միւսները կը նախընտրեն պարսկական տիրապետութիւնը: Զանոնք հասկացողութեան մը բերելու համար, ոչ ոք կայ, ո՛չ կաթողիկոս, ո՛չ թագաւոր, որուն պարտաւոր ըլլան գլուխ ծռել: Եւ այսպիսի հանգամանքներու մէջ, դաւաճաններ, Վահան Մամիկոնեան և Մերուժան Արծրունի, երկու մեծագոյն դերաստաններուն ներկայացուցիչները, քրիստոնէութիւնն ուրանալով՝ Պարսից կրօնքն ընդգրկած են. երկուքն ալ օտար թագաւորին ձեռքը անեղ զէնք մը դարձած են քանդելու համար ինչ որ Հայաստանի մէջ կար նուիրական: Սամուէլ պիտի ցցուի փրկութեան համար իր երկրին:

Ինչքան գուրգուրանքով հեղինակը զձած է անկախութեան երիտասարդ ախոյեանին զիւցաղնական ու հմայիչ զէմքը, գեղեցկութիւն, քաջութիւն, յանդիշողութիւն, կրօնական հաւատք, հրավառ բարեպաշտութիւն, անդիշող յարուժ իր երկրին, այս բոլորն ունի ան Որդին է Վահան Մամիկոնեանի և կը սիրէ իր հայրը, բայց կը սիրէ նաև այն ամէնը որուն իր հայրը կը դաւաճանէ, այսինքն իր հայրենիքն ու իր Աստուածը: «Նա այնպէս էր կրթուած, որ նախ և առաջ Հայաստանի որդին էր»: Այս գիծերուն վրայ աւելցնենք իր սիրած լեցնող գորով մը, փափուկ զգացումներ, բուն յուզումներ որ զինքը կ'ընկճէին: Իր Ողականի ամբողջն մէջ՝ որ Մուշի դաշտին կ'իշխէ, կամայ կամաց գիտակ կը դառնայ անուելի ճշմարտութեան, այն է իր հօրն ու իր մօրեղբօրը դաւաճանութեան: Վահան և Մերուժան Պարսկաստանի նոր մայրաքաղաք Տիզրոնէն կը դառնան. ինքզինքնին արքայից արքային ծառայութեանը դրած են ու իրենց երկրին զէմ կը քալեն. մին սպարապետի տիտղոսն լտաքսած է, միւսը Հայաստանի թագաւոր պիտի անուանուի: Տաճատուհի, Սամուէլի մայրը, բոլորովին վաստակուած է Պարսից դատին. ան արդէն իսկ իր սրտին խորը քրիստոնէական կրօնքն ուրացած ու մաղղիզականութեան սնախողութիւնները ընդգրկած է: Առաջին դուռներէն սկսեալ, արդէն արեւելեան եկրիկի մը խորը կը գտնենք մեզ, մեր զէմն ունենալով արեւելեան եկրիկի մը խորը կը գտնենք մեզ, մեր զէմն ունենալով անձանօթը, խորհուրդը, պատգամաւորները: և այն բաները որոնց մասին հեղինակը մեզի տեղեկութիւն կու տայ, և այն բաները զոր կը զուշակենք, ու բարքերու բոլոր նկարագրութիւնը, և կացութիւն-

ներու բոլոր վիպականութիւնը, բայց նաև նկարագիրներու հարազատութիւնը:

Այսպէս պիտի ըլլան վէպին արժանիքները մինչև վերջը: Սամուէլ իր գործին ընկերակից առած է իր Մուշեղ զարմիկը, մտրթազերծ սպաննուած սպարապետին որդին, և Սահակը, աքսորուած կաթողիկոսին որդին: Իրենց հետ ունին այն Մեսրոպը, որ հայ ազգայնակա՛նութիւնը կը ներկայացնէ, այնքան հակառակ Յոյներուն որքան Պարսիկներուն, և որուն լուսաւոր յայտարարութիւնը վերև մէջ բերինք: Սահակ կը ներկայացնէ յունական ազդեցութիւնը, իբր քրիստոնեայ Հայաստանի յառաջդիմութեանց հարկաւոր մէկ հանդրուանը նկատուած: Այդ խումբին մէջ, Սամուէլ գործունէութեան մարդն է, որ ներկայ վտանգին առաջքն առնելու միայն կը խորհի. «Ինչ որ եղել է, ինչ որ կատարուել է, մենք այդ բոլորը պէտք է անցած համարենք և մտածենք գործերի այժմեան դրութեան վրայ, թէ ի՞նչ միջոցով կարող ենք հեռացնել վերահաս վտանգը»: Այո՛, գործունէութեան մա՛րդը. լսեցէք խրոխտ պատասխանը զոր կու տայ իր ընկերոջը, Սահակին, որ, այն պահուն ուր գործը մէջընդմիջ պիտի բաժնեն, կ'ուզէ ճշտել իրենց խումբին իրաւունքները, ուժերը, պատասխանատուութիւնները:

«Ո՞վ ենք մե՛նք, — գոչեց Սամուէլ բոցավառ աչքերով, — այդ հարցը, իրա՛ւ, մի շատ դժուարին հարց է: Ո՞վ ենք մենք: Մենք ամեն ինչ ենք: Իմ պատասխանը գուցէ չափազանց յանդուգն կը թուի ձեզ բայց ես կ'աշխատիմ պարզել իմ միտքը: Մեր աշխարհի կառավարութեան մէջ, երեք բարձրագոյն անձինք առաջնակարգ դեր էին խաղում, — թագաւորը, քահանայապետը և սպարապետը: Այդ երեք զըլխաւորները այժմ չկան: Թշնամին մեր դռանը կանգնած է, ներս մըտնելու վրայ է, ո՞վ պէտք է ընդդիմանայ նրան. ո՞վ պէտք է պաշտպանէ հայրենիքը կրակից և արիւնից: Ո՞վ պէտք է մաքրէ պարսկական պղծութիւնը որ սպառնում է արատաւորել մեր բոլոր սրբութիւնները: Արքայական գահը վտանգի մէջ է, եկեղեցին վտանգի մէջ է, մեր լեզուն, մեր դպրութիւնը, մեր աւանդութիւնները, մեր ազգային բոլոր նուիրական ժառանգութիւնները վտանգի մէջ են... Եթէ երեք պետերը մեր մէջ չեն, կան նրանց ներկայացուցիչները...»:

Եւ ձեռքը դնելով Սահակի և Մուշեղի ուսին վրայ, շարունակեց.

«Դուն Սահակ, քահանայապետին որդին ես և կարող ես փոխարինել քո հորը: Թէ՛ քահանայապետութիւնը և թէ՛ սպարապետութիւնը մեր աշխարհի սովորութեամբ ժառանգական են: Մէկը սեպհական է Լուսաւորչի տանը, միւսը՝ Մամիկոնեանների տանը: Դրան

ոչ ոք կարող է հակառակել: Մնում է թագաւորի ներկայացուցիչը: Թագաժառանգը այստեղ չէ, նա պահուած է Բիւզանդիայում: Բայց Հայոց Տիկիւնը, — Թագուհին, — մեր ձեռքումն է: Նրա անունով կարող ենք ամէն տեսակ հրամաններ տալ...: Ես հաւատացած եմ որ ժողովուրդը կու գայ մեր ետեւից: Նա սիրում է միայն հրամաններ լսել, իսկ երկար չէ մտածում, թէ ո՞րտեղից է գալիս հրամանը: — Այժմ, կարծեմ բաւական պարզ է թէ ով ենք մենք...»:

Իմադրութիւնը կազմակերպուած, բանակը Արտազերսի ամբարջին մէջ կեդրոնացած: «Արարատը, որ աշխարհի սիրտն է, պէտք է պաշտպանուի: Կորցնելով սիրտը կը կորցնենք և կեանքը: «Թագուհին իր զինուորներուն մէջ պիտի մնայ, Սամուէլ Ողականէն կը հեռանայ մեծ պատրաստութեամբ, բազմաթիւ շքախումբով մը. նոր սպարապետին ընդ առաջ երթալու համար՝ ինչպէս իր մայրը կ'ուզէ: Սամուէլ այլևս ճակատագրին գործիքն է. ոչինչ կարող է զայն կասեցնել: Մինչև ծայրը պիտի երթայ իր գործին, որ գործն է հերոսին, մինչև ծայրն իր առաքելութեանը, որ առաքելութիւնն է իրաւաբարին, քանի որ դաւաճաններ կան, անոնք իր ձեռքովը պիտի կորչին: Ոչինչ կը կասեցնէ ճամբայ ելած ճակատագիրը: Մենք յօժարակամ պիտի չընդունէինք այդքան բուռն արարքներ և սոսկումներ, — կրկնակ ոճիւրը Սամուէլի որ ետեւէ ետեւ իր հայրն ու իր մայրը կը սպաննէ, — եթէ այդ բուռն արարքներն ու սոսկումները այդ տհաւոր տրամաբանութեանն չստանային գրեթէ գերդժարկային մեծութիւն մը և եթէ միւս կողմէ անոնք կերպով մը փոխարինուած չըլլային նոյնքան հզոր հերոսականութեամբ մը: Կա՞յ աւելի մեծաշուք բան մը քան այդ մերտաւոր թագուհին, փակուած այն ամբողջին մէջ ուր ժանտախտն իր աւելը գործած է և որ, երբ իր բոլոր զինուորներն արդէն մեռած են ու վեց հազար կիներն անոնց հետ իրենց վերջին քունին մէջ ընկղմած, ու ամէն գիշեր կու գայ, ջանն ի ձեռին, այտարակները լուսաւորել, պաշարող բանակին կարծել տալու համար թէ իր տանը մէջ ամէն ինչ լաւ կ'ընթանար. «Այդ բարձրահասակ գիշերաչըլիկ կիւնը Հայոց թագուհին էր, — գեղաչեայ Փառանձեմը: Նա այժմ իւր ամբողջ թէ՛ գուհին է և թէ՛ նրա անքուն պահապանը, և իւր անսահման մեծութեամբ լցնում էր նրա խորին դատարկութիւնը»: Թերևս աւանդաւէտ մըն է աս, թէ և իբր պատմութիւն յիշատակուած ըլլայ Փաւստոս Բիւզանդացիի կողմէ, որուն վկայութիւնը Սամուէլի հեղինակը կ'արձանագրէ իբր մակագիր իր պատմուածքին: Բայց ի՞նչ փոյթ: Աւանդավիպային խորքի մը վրայ կրթընկելով, արուեստի գործը ալ աւելի խորունկ ու խորհրդանշանական ճշմարտութիւն մը կը ստանայ»:

Հայաստանի աւանդութիւններէն ու աւանդավէպերէն, ու նաև բնանկարներէն է որ Բաֆֆիի վէպը փոխ կ'առնէ իր հարազատութիւնը, զայն նկարագրելու համար կը ճօխացնէ, բանաստեղծութեամբ կը շքեղացնէ: Ան լեցուն է երկրորդական անձերով ու միջադիպային անսարաններով, որոնց նմանող ոչինչ ունինք ժամանակակից վէպին մէջ: Կարգացէք, օրինակի համար, երկրորդ մասին Բ. գլխուն մէջ, որուն տիտղոսն է Անյուս, աւանդավէպն այդ բերդին որ Եկրատանէն Տիգրան տանող ճամբուն եղերքը սեպ ժայռի մը վրայ կառուցուած է: «Այդ վիմափոր, կոփածոյ ապարանքը, որ պատրաստուած էր սիրոյ և յաւիտենական երջանկութեան տաճար լինելու համար, յետոյ դարձաւ արտասուքի և մշտական հեծութեան մի դժոխք», որովհետև հոն է որ Արեայ թագաւորը այժմ կ'աքորէր այն թագաւորները զոր գերի կը բռնէր: Զարմանալի դէմք մըն է Ռշտուհեացմանկամարդ իշխանուհի Աշխէնը: Սամուէլի խօսեցեալը, ռազմիկ կոյսը զոր օր մը կը տեսնէ «Արտասուքի Աղբիւր»ին մօտ, կանգուն և սպառազէն, ոսկեակար սաղաւարտը գլուխը զրած, մէջքը սեղմած պոզովատեայ զրահի մէջ, աջ ձեռքը թեթև նիզակի մը կրթընած, նման Պալլաս-Աթենէին՝ երբ եկաւ Նիորէի արցունքներէն կազմուած աղբիւրին մօտ: Եւ ինչքան սիրուն է Արքայից Արքային այդ քոյրը, մանկամարդ իշխանուհի Որմզդուխտը, երկրորդ կինը Վահան Մամիկոնեանի, որուն սիրտը իր ու Տաճատուհիի միջև բաժնուած է: Կը զուշակենք թէ ան շատ աւելի զգայուն է Սամուէլի գեղեցկութեան ու երիտասարդութեան հանդէպ, պալատին մէջ ուր ձանձրոյթէն կը հալի: Եւ ահա օր մը այդ մանրիկ Պարսկուհին միշտակ է սրածայր բոցին առջև որ իր սենեակը կը լուսաւորէ:

«Յանկանուժ էր խօսել, ցանկանուժ էր թեթևացնել ամբոխուած վշտերը: Դարձեալ ոչ ոք չկար: Միակ առարկան որ փոքր ի շատ կենդանութեան նշոյլ էր ցոյց տալիս, էր ճրագը որ վառուժ էր արծաթեայ աշտանակի վրայ: Երկար նայում էր նրա վրայ և մօքով խօսում էր նրա հետ: — Հուր, ջերմութիւն և նիւթ, — ինքն իւր մէջ այրուժ էր, ինքն իւր մէջ սպառում էր... Այդպէս էր և նրա սիրտը...»:

Մի թէ ասիկա գեղեցիկ գիծ մը չէ՞ բանաստեղծութեան և արևելեան գոյնի: Ասոր նման դեռ ա՛յնքան ուրիշներ կան: Ու կայ նաև բնութեան ամբողջ շնորհալի կամ վայրենի գեղեցկութիւնը Հայաստանի, զոր հեղինակը շատ լաւ կը ճանչնայ, որովհետև անոր ամէն կողմը պարտած է:

Գրագէտ դառնալէ պռաջ, Բաֆֆի, — իր ճշմարիտ անու-

նով Յակոբ Մելիք - Յակոբեան, — շատ ճամբորդած էր Մնած Պարսկական Հայաստանին մէջ, վաճառականներու ընտանիքի մը որդի, ուսական Կովկասի մէջ իր ուսումն ստացած էր և և ինքն իսկ ի սկզբան վաճառական եղած: Բասնէճինդ տարեկանին է, 1860ին, որ գրական ասպարէզին վրայ ոտք դրաւ: Սամուէլ լոյս տեսաւ 1886ին Հեղինակին ճամբորդութիւններն անոր թոյլ տուած էին այցելել այդ բոլոր պատմական վայրերը զոր կը նկարագրէ և շիման մէջ գտնուել այն աղբարնակութեանց հետ որոնց մօտ կը պահպանուէին հին աւանդութիւնները: Պատրաստ էր ուրեմն իր երկրին առաջին վիպասանը դառնալու:

Յայտնի է որ Բաֆֆիի համար պատմական վէպը առաքելութիւն մը ունի կատարելիք, դաստիարակչական առաքելութիւն մը: Երբ անցեալին քաջագործութիւնները կը պատմէ, կը զգանք որ իր նպատակն է ցոյց տալ այն առաքինութիւնները որոնց պէտք է հետեւիլ, այն սխալները որոնցմէ պէտք է խուսափիլ, մէկ խօսքով՝ այն դասերը զոր նախանայրերը կտակած են: Այդ ըմբռնումն իսկ զոր ունի վէպի մասին, կը բացատրէ իր աղբարնակութիւնը՝ ոչ միայն բարձր դասուն, այլ և ժողովրդական դասակարգերուն վրայ: Ինչպէս Հներիք Սենքիէ-վիշ Լեհացոց համար, ան երկար դարերէ ի վեր օտարին լուծին տակ ինկած Հայերուն հոգիին մէջ արթնցուց թմրած աղգային զգացումը, որովհետև ամէնքն ալ ինքզինքնին եղբայր զգացին իրենց ա՛յնքան մօտիկ եղող հերոսներուն, որոնք իրենց կը ներկայացուէին ոչ թէ միայն երևակայութեան մարդու մը, այլ և իրապաշտի մը կողմէ, որ հրաշալի կերպով ըմբռնելով իր ցեղին հոգերը, մտատանջութիւնները, գորովները, յոյսերն ու յուսահատութիւնները, գիտէր վանտնք ամենահարազատ գոյներով պատկերացնել:

Այն բոլոր յատկութիւններով որ զայն ուշագրաւ կը դարձնեն, Սամուէլ մասնաւորապէս կը յարմարէր ֆրանսերէն թարգմանութեան մը փորձին: Թարգմանութիւնը զոր կատարած են Ալթիար և Քիպարեան, — ֆրանսուհի մը և հայ մը, — ինքն իր մէջ նկատուած պատուական է: Չենք կրնար զայն բնագրին հետ բաղդատել, բայց անոր գնացքը, կրանգներն ու շեշտը կը գործեն՝ միասնաբար՝ տպաւորութիւն մը որ չի խարհր:

ՖԻՐՄԷՆ ԲՕՁ

Հ Ա Ի Ա Խ Օ Ս

Զրոյց՝ աւելս
Ա. Բլորիս հե՛ս

Շեփորաւա՛նք հաւախօսի ձայնիդ վստահ՝
Երբ զարթօնքի պատգամաբերձ քառէն կ'երգես,
Այգերգիդ մեջ կը փողփողի ու կը թնդայ
Պայրուցիկ բո՛ց մ'ալ իմ երգես:

Եւ հանանչին հե՛ս առաջին, ընդո՛ւս ու ժիր,
Կ'արփաթելեմ գիշերասանչ մղձաւանջես,
Դեպի պարտեգ՝ ուր դեռ բրգեգ մը չի շարժիր,
Այգորելու համար թգեգ:

Ոգջունելո՛ւ համար թգեգ, որ հինաւուրց
Ասպե՛սի գէն ու զարդերուդ փաղփիւնին մեջ,
Խինհրուն վրայ կը սես հոգիդ, մագիլ, կրտուց՝
Սուրբ պայքարին համար անվերջ:

Ու մինչ այգուն քմբիր դեռ մեղկանըւալ
Կը թեւածէ բունկալին մեջ, — յո՛յր կամանոց,
Ու չի՛ սեսներ յոյսն աւօտին ո՛չ մեկն, աւա՛ղ,
Դուն աւե՛սի՛ս կու սաս անոնց...

Ու քառէ քառ, իբրեւ կամուրջ անհիւրեղեն,
Կ'արձակես յար մարտահրաւերդ անեղավազ. —
Արձագանգել կ'իշխես կանչիդ, վարի քաղէն,
Վայբերան բերդ մը հազիւ հազ...

Ու վրիժաբիբ, սըրած մագիլ, կրտուց, հոգի,
Հին ռիսերու ռիսերի՛մ դու վա՛ձահասոյց,
Կը խոյանա՛ս հարեւանիդ վրայ վասոգի,
Որ վաղաժամ եեգ որբացուց...

Որ, երբ վառեակ էիր — կրնա՞ս մոռնալ երբեք —
Կրտուցիդ կերն ապուսիլով, քանի՛ անգամ,
Հալածեց մայրդ առաքինի, իր անաբէկ
Հուսերուն հե՛ս արիւնա՛մամ . . .

(Վա՛յ ինձ, եթէ անդունդներէն մինչեւ սահար,
 Զիս պարփակող նառագայքին դեմ կուրանամ...
 Փորձութեան ցուրտ գաւիթին մէջ գայքիմ անհար,
 Դալկահարիմ եւ ուրանամ...)

Երբ իբրեւ խի՛ղնն արեայոյսին, լիս կը փորձես՝
 Հրաշափառիդ գիշերաբանդ ուժին վստահ,
 Թո՛ղ քու ձայնիդ մէջ արձագանգ մ՛ալ իմ բոցես
 Փայլասակէ ու որոտա՛յ...

Արեւն 1938

Գ. ԿԱՌՎԱՐՆՅՑ

Թ Շ ՈՒ Ա Ռ ՈՒ Թ Ե Ա Ն

Հայկանու Մարտիին խոնարհաբար

Թռուառութի՛ւն, երբ դիպուածը չարախինդ
 Ուսիդ վրայ տեղաւորեց իմ հոգիս,
 Ինձ երկարեց յոյսն ալ իբր սանձ մը պինդ,
 Որ ինքզինքը բռնեմ ո՛ւր որ քրեսս գիս:

Ես չըվախցայ երբեք՝ բարձունքդ նսած,
 Թերեւասուն երբ սուրացիր կիրճէ կիրճ,
 Երբոր վիհեր առջէս եյան մեսաբաց,
 Երբոր բուսան դէմս առցունցներ լայնալիճ:

Ու ես մեծցայ մարզըւելով քու վրայդ,
 Մարտէ ի մարտ գրոնի սալով քաջագոր,
 Մերք իյնալով ու ելլելով ալ հրպարս:

Եւ դուն սակաւ եղար ներքէս ո՛ւժ մը նոր,
 Հաւա՛սք եղար, գիտակցութի՛ւն, հո՛ւր նուիրման
 Ու կը նախտեմ քեզմով ափեր յաղթական:

(1918)

Զ. ՊԼՊՈՒԼ

ՆՇԱՆՍԻՈՐ Մ Ա. Հ Ե Ր

Կ Ա Պ Ր Ի Է Լ Տ Մ Ն Ո Ւ Ն Յ Ի Ո Յ

1863 — 1938

Մեծ բանաստեղծ ու արի զինուոր, նման կեանքովը ու գործովը՝ հին յոյն բանաստեղծ՝ Ալկէոսին:

Նուրբ մօրուք, տարփոտ շրթներ, հրայրքոտ աչքեր, կանգնեղ հասակ և անդուսպ հոգի:

Յանդգնութիւնը՝ գործն էր ու կեանքը, զոր կը ծրագրէր երազներուն յորդութեամբը անսահման: Հէքեաթներ կապուած են անունին:

Դէմքը՝ ինքը քանդակեց կեանքովը: Նոյն ինք, երկերուն անձն է Կ'Անունցիոյ:

Խնջոյքներ կը սարքէր, որոնց պերճութեան շնայլը կ'առկայծի դեռ ժողովուրդին երեւկայութեան մէջ:

«Ասուածային Կապրիել» կը կոչէին զայն: Ժամերով, բանաստեղծը գիտէր սարսուռ պատճառող խօսքեր հոսեցնել:

Բայց, կիները, որ կը հրահրէին սէրը, կու տային ներշնչում, մտածումին ճառագայթ՝ բանաստեղծութիւն՝ կը չարչարէր:

Գեղեցիկ կը գտնէր՝ անոնց դէմքը՝ արցունքով: Կը չարչարէր՝ ամենասոսկալին՝ լոկ, պատճառած ցաւովը ասուսպիլու համար ինք ևս: Իր անթիւ սիրուհիներուն մէջ պատուոյ տեղը գրաւած է Տուչէն: «Անկէ սսացայ, կ'ըսէ, ամեն ինչ, հոգին, սիրք, մաւրկնք», հթէ ուզէր՝ պիտի ստանար կեանքն ալ: Եւ սակայն, լքեց...

Ուրիշ բանաստեղծութիւն մը՝ պատերազմը՝ որ յաղթանակներով կը պսակէ խիզախներն ու քաջերը, առինքնեց զայն:

Եւ սաւառնակը՝ այնքան նման հոգիին՝ շահատակութեանց մեծ պատեհութիւններ տուաւ իրեն:

Բանաստեղծ զինուորը, ասպարէզ կարդաց երկնքին, բարձր ամպերու վրայ հիմնած, ճակատեցաւ փոթորիկներուն հետ:

Ամենավառնագաւոր պաշտօնները կը ստանձնէր, կը հալածէր մահը:

անսահմանութիւնը կը գրկէր: Մինչև որ ամիսներով լոյսը մերժուեցաւ իրեն:

Բայց, պատերազմի աստուածն ալ կախարդուած է. խաւարը կը փարսափի Եւ փառքով ծիրանեւորուած, կը նայի գարձեալ՝ իր թագաւորութեանը՝ շանթերէն ահօսուած երկնքին, ինչ փոյթ՝ թէ մէկ աչքով:

Նուռը, բանաստեղծին սիրած պտուղն էր. կը պաշտէր այս խորհրդանշական, պսակակիր պտուղը: Յայտնական չէ՞ նուռին հանդէպ ունեցած սէրը, որ նման փառքին՝ պսակազարդ է: Եւ անոր պէս խածնողին կու տայ լեզրիսխառն պուշա մը անուշ միայն. փոխան արքայական կերպարանքին, փայլին, շքեղութեանը:

Քենեցաւ գրականութեան մէջ հակառակորդներ. ոչ միայն կեղծապաշտ դասակարգը, կղերականութիւնն ու եկեղեցին՝ թէեւ ինք Աստուծոյն տուաւ Աստուծոյ: Այլ նաև, յառաջապահ բանաստեղծներու փաղանգ մը, որուն կարապետն էր՝ ուրիշ մեծ բանաստեղծ մը՝ ձիան Փիէթրօ Լուչինին:

Ամպրոպ մըն է կեանքը տ'Անտունցիոյի՝ ի խնդիր փառքի, արուեստի, հաճոյքի, մեծութեան:

Քիչեր ունեցած են անոր յանդգնութիւնը, արկածայից կեանքը: Կը սոսկար ծերութիւնէն՝ «անարգ հիւանդութեանէն», մահուան ալ աննախընթացը կը փնտռէր՝ «Շառափնափայլ վիբրեով»:

Վերջապէս, կը հրապուրէին զայն բոլոր անոնք, որ կ'առաջնորդեն մարդը փառքի: Զի, ան է որ միայն կու զայ արեւն և ուժէն:

*
*
*

Քնարերգակը, քերթուածներովը՝ ոռանաւոր թէ արձակ՝ փառաբանած է ուրախութիւնը, անսահմ հաճոյքին տիրապետութիւնը: Գեղարուեստը՝ որուն մէջ կը խոկայ ցաւը, կը ցոլանայ հոգին, կը պատկերանայ իմաստը կեանքի, և որպէս հայեցում՝ կը վիրապրի երեւակայութեան մէջ: Գովքը հիւսած է ուժին գեղեցկութեան: Նաև ոգեկոչած պատմութիւնը, հետազոտուած՝ արուեստագէտի զգայարանքներով՝ տարեգրութեանց ու հին թուղթերու մէջէն:

Վիպազիր տ'Անտունցիոն, քննած ու ստորագծած է վէպերուն մէջ, բարդ կաթարկութիւնները մարդկային զգայնութեանց, որոշելով մարդուն տեղը՝ բարիին թէ չարին մէջ: Հագցնելով իր բարձրորակ ոճը, ստեղծագրեալ՝ մարդկային ու բնանկարային՝ պատկերները և լուսաւոր, անմրցելի կերպաւորութեանը:

Վէպերուն բարոյական աշխարհն է որ կը ձգտի տալ նաև տա-

մաներուն: Բայց իր ճարտարութիւնը ծրագրողի, չէ հասած հոս ստեղծելու կենդանի տեսարաններ ու դէմքեր՝ լեցուն մարդկային բնութեամբ: Ներհուն ներկայացումի մը, մտերիմ հոգեբանութեան մը չեն բարձրանար և ոչ իսկ ողբերգութիւնները, որ կը գերադանցեն բանաստեղծին տաժաները՝ իրենց ուժեղ տեսիլներով, մտացածին զգայական տուայտանքներով, սքանչելի պատկերներով, ընկերացած մի. դարու կեանքին ու տարադներուն:

Տ'Անունցիոյի լեղուն ունի իր մէջ իտալերէնի բոլոր ծածուկ հարստութիւնները, յանդուցիչ արտայայտութիւնները ասութեանց, հնչականութիւնը և կշռոյթը: Պակասը իտալերէնին՝ լրացուցած է լատիներէնէ ու յունարենէ: Տանթէյէն յետոյ, կը նկատուի ամենաբարենորոգիչը իտալերէնի:

Մեծագոյն հմուտն է ձեռի: Բայց ո՛չ, իր արտահանումները՝ հին յունականէն մինչև ալլազգի մեր օրերու հեղինակներէն՝ որովհետև իրեն կը պակսի բանաստեղծի ոգին: Զի այդ է ևս մէկ մասը, իր անսպառելի երազին՝ կենդանի և ըսբարիուն՝ գեղեցկութեամբ մեծ լալու:

Ոճը, գոհարական յղումով, ճոխութեամբը, հրապոյրով կատարեալ արուեստին՝ կը պայծառացնէ անոր շատ մը բնապաշտ էջերը, հերոսական արձակները, խորհրդական խոկունքները, և գործերը՝ ներշնչուած պատերազմէն ու յաջորդող դէպքերէն: Ներկայացուած՝ արտայայտիչ բանաստեղծութիւնով, բնութեան ներկայութեամբ համեմուած: Կենդանի զգայնութեամբ, բառերով հնչական, սլեսալիսուն կշռոյթով, նըրբութեամբ պատկերաւոր դաշնաւորումի մը և ճարտար ձեւաւորումով:

Անհատականութիւնը, որ չէ հասած նորօրինակութեան և զուրկ է պլակէ. տեսակ մը ներհունութիւն ու կաթողին հայեցումն է կեանքի առաջնակարգ ուժերուն: Եւ փոյթեանդ բնապաշտութիւն մը, որ կը ձգտի առաջնորդել մարդը հոլովոյթովը մտքին ու մարմնոյն, ոչ այլ բռնի պատշաճեցումովը:

Բազմաթիւ են գործերը: Մշակած է գեղեցիկ դպրութեան ամէն տեսակները. բոլորին ալ յօրինուածքը, էսպէս, սակայն կը մնայ քնարերգական:

*
* * *

Զինադադարէն յետոյ, կ'ապրէր Կարտանի Վիթորիալէ կալուածին մէջ, չինուած կէս ճամբուն վրայ բլուրի մը, որուն առջև կը պարզուի Կարտայի լիճը: Առանձնաշնորհայններ միայն կրնային մօտենալ:

Կ'անցընէր օրերը՝ գոհարներ յղկելով, ծաղկակարներով երան-

գաւորելէն կերպասներ, գեղակաղմելով գորգեր, թորիչներովը զտելով ամենանաղուազիւս բոյրեր և ուսումնասիրելէն հին իտալական երաժըշտութիւնը:

Կը սարքաւորէր պարտէզն ու տունը, վերածած էր՝ հէքիաթային աշխարհի մը, ուր ամէն բան գեղեցիկն ու հերոսութիւնը կը խորհրդանշեն: Կը հեղուր շրջապատին վրայ երազներն ու քմայքները:

«Ուզեցի որ, կ'ըսէ, այս տունն ու շրջապատը պարսեզը, աղբիւրի մը պէս՝ արտահոսեն ամենամաքիւր մտածումներս: Երազս հողին փչեցի. կը զգամ, ան կ'ապրի լայնասարած»:

Ամէն օր՝ եր հորիզոնը կը բոցոտի՝ կը բարձրանար բլուրը, օրհներդ որպէս կեանքի, Ֆիուլմէի իր քաջերուն նման պոռալու համար՝ «Էիա՛, էի՛ա, ալարայ»:

Իսկ գիշերները կը փակուէր աշխատանոցը, որ սիւնամբարձ վտղամի մատուռ մըն էր, աշխատելու՝ հազած միայն ճերմակ բուրդէ վերարկու մը ու բոպիկի Հեթանոսական հաճոյք մըն էր բանաստեղծին համար, հարցուկի այս սրբազան տարազը ևս:

Կը գրէր քանի մը տարիէ ի վեր՝ գրեթէ ամէն գիշեր՝ էջերը Գաղսնի Գրէին, 1390էն մինչև այսօր: Կեանքին յիշատակները, ամենահամարձակ անկեղծութեամբ, ոչ իրրե խոստովանանք, այլ, ծանօթացրնելու համար ինքզինքն իրեն իսկ:

Բանաստեղծական գործ մը ընել կեանքը. ապրիլ դայն ոչ իրրե սակական մարդ, այլ այնպէս, զոր կը պահանջէ բանաստեղծութիւնը: Փոխադրել երազը՝ հողին վրայ. յօշոտել իրականը, ահաւասիկ կեանքն ու գործը տ'Յնուէնցիոյն:

Մեռաւ զրասեղանին առջև, կաթուածահար: Ո՞րպիսի կտղանքով էր որ կը խողտար այդ պահուն անոր 75 ամեայ գլուխը. յիշատակներուն ո՞ր էջն էր գրածը:

Երազներն էին որ իրաւունք ունէին անոր կեանքին մէջ: Կ'ուզէր մեծ ըլլալ, ինքզինքը, ան որ ցարդ ոչ ոք եղած է:

Հասա՞ւ:

Մեռաւ՝ մեծ բանաստեղծ, հերոս զինուոր, իշխան Մոնթէ Նէվ-րոդայի նախագահը իտալիոյ կայսերական ակադեմիային. բայց ոչ՝ «Բոցանցոյ վերքերով»:

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ

1938 Բլովսիւ

Հ Ի Ի Ր Թ Մ Ն Կ Մ Գ Ի Ն

Հիւր քանկագին՝ ինձ կ'այցելէ մայրս յանկարծ՝
 Կապոյտ համբէ մ'իջած վար.

Կու գայ դիտել երբեմնի ծիւն իր լրբած,
 Որ այժրմ ծառ մէ խոնարհ:

Իր փայլածֆին երգէն յըսել ես կը գգամ
 Կարծես աշխարհ մը անհուն,
 Ու բոց կ'առնէ երակներուս խուրձն անգամ
 Իր նայուածֆէն երկնամոյն:

Կ'ըսէ.— Ես եմ, որ սարիֆիդ մէջ սրհաս
 Հեռացայ որ մը ֆենէ,

Ու շա՛ս կանուխ հանեցի ֆեզ, խեղն սրղաս.
 Ճակասագրին դեմ դժնէ:

Ուզեցի որ ոռոզէ վիշօք բզֆեզ,
 Եւ դուն մեծնաս Կեցասխայս.

Հակի'ս ամէն գլխու վրայ ու ձրգե'ս
 Միրգերդ հասուն ու առաս:

Ես անբաժան՝ եղայ ֆեզի հէտ, զաղտուկ,
 Երբ որք՝ լացիր մեկուսի,

Ու հրնուեցայ, երբ արցունքիդ մէջ սամուկ
 Տեսայ քրքռա'լը յոյսի:

ԲուՆ ու բորանն իջան գլխուդ, մերք, աւա'դ,
 Երաշօք վախ կու սար ֆեզ.

Եւ իյնալով ուսար ելլե'լն ալ խիզախ.
 Ու բարձրացար լոյսի պէս:

Եւ արդ հոգւոյդ մէջ կը տեսնեմ իմ հոգիս, ..
 Յարած՝ երազքս վրա'դ,

Դուն մեղեդին իմ արիւնիս, հաւասֆիս,
 Դուն իմ գաւա'կս անարաս:

Բայց կ'ուզեմ որ դուն ծածանիս դրօշի պէս,
 Ոստերուդ ֆնա'րք բանաս,

Եւ այլոց մէջ ամբողջ ինքզի'նքդ պարպես,
 Որ օրհնեմ ֆեզ, ո'վ սրղաս:

ԱՆՋՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ

(Մ Տ Ա Մ Ո Ւ Մ Ն Ե Ր)

«L'homme est né libre» (Մարդը ազատ ծնած է): Այս խօսքով կը սկսի Ժ. Ժ. Ռուսոյի «Du contrat social»-ը, որուն մէջ, ինչպէս յայտնի է, հեղինակը կը պաշտպանէ մարդուն անհատական ազատութեան բնականութիւնը՝ ընկերային ու քաղաքական իմաստով: Ռուսոյի համար ընկերութիւնը, հետեւաբար և ազգերը, մարդոց ազատ կամքով ու որոշումով կազմուած իրականութիւններ են: Մարդկային ընկերութիւնը, հաւաքական կեանքը՝ անհատներու միջև կնքուած տեսակ մը պայմանագրութեան արդիւնքներն են: Նախ անհատներ գոյութիւն ունեցած են, որոնք իրարու հանդիպելով, մղուած զանազան պահանջներէ ու ստիպումէ կարգ մը կեանքի պայմաններէ, որոշած են միասին ասորիլ: հիմնած են ուրեմն ընկերութիւնը՝ իրենց մէջ աշխատանքի բաժանում և պաշտօններու բաշխում կատարելով՝ ժամանակի ընթացքին:

Ռուսոյի գաղափարը յաղթանակեց ֆրանսական յեղափոխութեամբ:

«Les hommes naissent et demeurent libres» խօսքով կը սկսի մեծ յեղափոխութեան հռչակած «Մարդու իրաւունքներու յայտարարութիւնը» (Declaration des droits de l'homme, 1789): Այդ օրուէն սկսեալ կը տարածուի ամէն կողմ ու կը խորանայ անհատապաշտութեան գաղափարը՝ ընկերային-քաղաքական կեանքին մէջ, որպէս տեսակ մը զիտական ու նաև բարոյական ճշմարտութիւն:

Ժժ. դարուն համար մարդը անհատ մըն էր: Ֆրանսական յեղափոխութիւնը հռչակած և նուիրագործած էր այդ անհատ մարդու իրաւունքները:

Այդ անհատը սակայն իրապէս գոյութիւն չունէր. ան վերացական մարդն էր, ընդհանուր գաղափարը՝ զոր տրամաբանութեամբ կառուցեցին Էրն քանի մը երազապաշտ մտածողներ: Ամէն մարդ անհատ մըն էր, ոչ աւելի ոչ այ պակաս: Ժժ. դարու մարդ-անհատը աւելի քան պահանջ մըն էր քան իրականութիւն: Անշուշտ պահանջ մը նաև ընկերային արդարութեան զգացումի, որ խորապէս վիրաւորուած

ԺԸ. դարուն ամբողջ կարգերուն և միջնորդութիւն մէջ, զազափարական հիմնաւորումներ կը փնտռէր կազմակերպուած ձեռով պրոթէկայու համար: Ու անշուշտ որ պատմականօրէն կարելի չէ անտեսել այդ անհատականութեան զազափարին դերը՝ ընկերային-տնտեսական կեանքի զարգացման ու դէպի աւելի արդար յարաբերութեանց ստեղծման տեսակետէն: Թէ և խորքին մէջ, այս վերացական անհատի ազատութեան սկզբունքը օժանդակը եղաւ տնտեսական ազատական դրութեան (Liberalisme économique) ստեղծման որ համապատասխանեց՝ արդէն գրուի բարձրացուցած և տիրապետելու ձգտող դասակարգին՝ քաղքեցիութեան: Որովհետեւ ինչպէս ռուսէն ընկերաբան Շիթ. Զելեթին զիտել կու տայ «քաղքեցիութիւնը բոյան է որուն արմատները կը մեկնին փոխանակութեան յարաբերութիւններէ և որուն ճիւղերը կը զարգանան ընկերային ազատ միջնորդութիւն մը մէջ» (Տ. Zeletin „Nașterea burgheziei române“ 1925):

Տակաւ սակայն, կեանքի նոր պայմաններու և նոր երևոյթներու ճնշման տակ իրականութիւնը ինքզինքը պարտադրեց: Նոր մտածողութիւնը ու նոր գիտութիւնը սկսան պեղել իրականմարդը ու զանել զայն իր կենսաբանական, հոգեբանական ու ընկերային պայմաններուն մէջ: որոնց մէջ կ'ապրի ան դրապէս:

Յիրաւի մարդը միաժամանակ կենսաբանական, հոգեբանական և ընկերային էակ մըն է:

Կենսաբանական՝ որովհետեւ իր մարմնով ու խոր բնազդներով կապուած է անքակտելի կերպով, անասնական կեանքին:

Հոգեբանական՝ որովհետեւ մարդուն մէջ անասնականը գերազանցուած է նոր իրականութեամբ մը, ջղային դրութեան յեղաշրջումի մը հետեանքով, որով մարդուն բոլոր բնազդներն ու automatismները վերածուելով գիտակցական երևոյթներու, գիտակցական ապրումներու, կազմած են իր մէջ միաժամ մը ու առած են անոր ինքնութեան զգացումը, «ես»ի շարժումը: Մէկ ամբողջական ինքնութիւն, զգացող, գիտակցող ու գործող էակ մը ըլլալու զգացումը՝ ուրիմն հիմունքն է մարդու հոգեկան կեանքին որ ժամանակի ընթացքին ստացած բարդութիւններով ու վարդացումներով, կը ներկայացնէ մարդուն հոգին՝ իր խորութեան, իր տարածութեան և իր դէպի զանազանութիւն (différenciation) ձգտող յարատեւ վազքին մէջ:

Վերջապէս մարդը նաև ընկերային էակ մըն է: ընկերային իրականութիւն մը, որովհետեւ ան ի բնէ կ'ապրի հաւաքականութեան մէջ: Ի յառաջագունէ մարդը ընկերային է:

Իրապէս, մարդը իր անհատական «ես»ի զգացումը շատ ուշ դաս

է իր վայրենի վիճակէն իսկ, ան պառկանած է ընկերութեան մը, գլխին, ու երկար դարեր ապրած է իր գլանի հաւաքականութեան գիտակցութիւնը, նախքան իր անհատականութեան գիտակցութիւնը ունենալը: Հաւաքական «ես»ը միակ իրականութիւնը, միակ հոգեկան մթնոլորտն է եղած որուն մէջ ապրած են նախապատմական մարդիկ, ու այսօր ալ դեռ շատ մը վայրենի ցեղեր: Այսօր ալ դեռ այդ ցեղերը, ինչպէս կը վկայեն դանոնք ուսումնասիրող ընկերաբանները, զուրկ են իրենց սեփական, անհատական «ես»ի զգացումէն ու չեն գիտեր իրենք զիրենք զանազանել իրենց շրջապատէն*:

Այդ դանազանելու գործը կատարուած է շատ դանդաղ կերպով մինչև որ մարդը գտած է ինքզինքը, իր անհատականութեան զգացումը: Ատոր համար է որ նոր ընկերաբանները կ'ըսեն թէ նախ ընկերութիւնը գոյութիւն ունեցած է ու յետոյ անհատը:

Այսինքն Ռուսոյի տեսութեան ճիշտ հակառակը:

Իրապէս սակայն, մարդը գտած չէ դեռ ինքզինքը, գտած չէ դեռ իր ճշգրիտ տեղը այս կեանքին մէջ: Կարելի պիտի ըլլար նոյնիսկ քաղաքակիրթ ազգերու պատմութիւնը գրել, մարդկային իրականութիւնը ու անոր կեանքի բոլոր երևոյթները դիտելով այս ինքնաճանչումի աստիճանաւոր զարգացման տեսակէտէն:

Մարդը կը շարունակէ դեռ ինքզինքը փնտռել, ինքզինքը գտնել ու ճանչնալ:

* * *

ՇԱՏ մը ժամանակակից մտածողներու համար անհատական «ես»ի զգացումի ու գիտակցութեան կատարելագործուած վիճակը այն է ինչ որ իրենք անձնաւորութիւն կը կոչեն: Անձնաւորութիւնը պէտք է նկատել, կ'ըսեն, բնութեան իրականութիւններէն մին և ամենաբարձր նպատակը բնութեան բոլոր միւս իրականութիւններուն:

Անձնաւորութիւնը, որուն հասած է մարդկային ցեղը (espèce) յանձին աիպար մարդ անհատներու, կը ըզլի այն նիւթական և օրկանական պայմաններու զուգաւորումէն ու բարդացումէն որոնց մէջն անցած է օրկանական կեանքը ընդհանրապէս և մարդկային հոգեկան բարոյական կեանքը մասնաւորապէս:

Այսպէսով, անձնաւորութիւնը կը դառնայ կարծես տիեզերական

*) Այս խնդիրներու շուրջ գրող ժամանակակից գիտնականներէն՝ Ֆրանսուայի Lèvy Brühlը հռչակաւոր դարձած է իր «Les fonctions mentales dans les sociétés inférieures» 1920. «La mentalité primitive» 1923 և «L'âme primitive» 1927 գիրքերով:

ուժին գերազոյն նպատակը, ու գոյութեան բարձրագոյն գաղաթը:

Այս գիտական տեսակէտը, առաջնորդած է շատ մը մտածողներ դէպի փիլիսոփայական նոր տեսութիւններու և կառուցումներու, որոնց մէջ տեղ պէտք է տալ ուսմէն փիլիսոփայ Գ. Ռետուլէսքու-Մոզու-ին որ իր տեսութիւնը կը կոչէ իսկ «էներժետիք անձնաւորակա-նութեան փիլիսոփայութիւն» (Filosofia personalismului energetic):

Արեւմտեան մտածողներէն կարելի է յիշել Renouvier (Le personalisme 1903) W. Stern (Persönlichkeit als Wissenschaft 1930) W. Ehrlich (Stufen der Persönlichkeit 1930) և ուրիշներ: Կարելի է հոս աւելցնել նաև նորագոյն մեծ ընկերաբաններէն շատերը որոնք իրենց մտածողութեամբ մօտ են անձնաւորութեան գաղափարին, հակառուսոյական իմաստով: Այսպէս են Ֆրանսացի ընկերաբան Emil Durkheim, աւստրիացի O. Spann և գերմանացի W. Sombart: Այս վերջինը, մասնաւանդ իր վերջին գործով «Le socialisme Allemand», 1938:

Բոլոր այս մտածողները իրենց մտքերու գրութեանց մէջ, թէև կը տարբերին իրարմէ ու տարբեր ձևերով կ'ըմբռնեն անձնաւորութեան գաղափարը, և սակայն խորքին մէջ բոլորը կ'ուզեն գերազանցել ուսոյական, քաղքենիական անհատականութեան գաղափարը ու հասնիլ աւելի խոր կերպով, աւելի օրկանական, աւելի ֆունգցիոնալ կերպով ըմբռնուած մարդ անհատի տիպարին:

Այսպիսի ուսումնասիրութիւն մը հետաքրքրական կ'ըլլայ մանաւանդ անոր համար որ կարգ մը գիտութիւններ, մեկնելով տարբեր կէտերէ, ուսումնասիրելով կեանքի տարբեր բնագաւառներ, տարբեր երեւոյթներ և մարդկային կեանքին տարբեր երեսները, կը հասնին գրեթէ նոյն տեղը, կամ աւելի ճիշտը՝ իրենց եզրակացութիւնները իրարու կը համաձայնին, իրար կը լրացնեն ու կը տանին մեզ միևնոյն գաղափարին մարդկային էութեան մասին: մարդը և տիեզերքի մէջ անոր տեղը գտնելու ու հասկնալու միևնոյն ձևին: Այս գիտութիւններն են մանաւանդ նորագոյն կենսաբանութիւնը, հոգեբանութիւնը և ընկերաբանութիւնը. և նոյն իսկ բնագիտութիւնը:

Այս յօդուածին մէջ մենք պիտի բաւականանանք քանի մը գծեր ու մտածումներ ցալով միայն, առանց լրիւ բան մը ներկայացուցած ըլլալու յաւակնութեան:

Գոհ պիտի ըլլանք սակայն եթէ մեր այս քանի մը էջերով յաջողինք ինքնամփոփման ու խորհրդածութեան մղել հայ ընթերցողը, որ չօրախտարար այնքան կ'լանուած է անցողակի և ոգեւոր կեանքի համար ոչ նշանակալից հոգերով:

ՆՈՐ ձևով ըմբռնուած անձնաւորութեան զաղափարը ուրեմն պէտք չէ կարծել որ կը նոյնանայ անցեալ դարու անհատականութեան զաղափարին հետ: Այդ անհատականութեան զաղափարը կրնանք նկատել՝ պատմականօրէն կազմուած որոշ անձնաւորութեան զաղափարին զարգացման աստիճաններէն մին, սակայն ոչ նոյն բանը:

Անհատականութեան զաղափարը պոսիտիւ ինչպէս բնորոշեցին ֆրանսական յեղափոխութեան զաղափարաբանները ու կարծեցին առով զտաճ ըլլալ մարդուն «ես»ին կատարելագոյն ու բարձրագոյն վիճակը, չէր համապատասխաներ իրականութեան. չէր համապատասխաներ մարդու կենսաբանական, հոգեբանական ներքին պայմաններուն և ոչ ալ, մանաւանդ, ընկերային կեանքի պայմաններուն ու ձգտումներուն:

Կարելի չէր վերացական բնորոշումներով կամ զգացական ցանկութիւններով մարդկային «ես»ը կառուցանել: Պէտք էր նախ հաշուի առնել անոր բնութեան պայմանները. անոնցմէ մեկնելի ու անոնց հիման վրայ հասնիլ նոր իրականութեան մը որ «կառուցուած» չըլլար, այլ ըլլա՛ր բնական արդիւնքը, ծաղկումը և պտղաւորումը խորքէն և հեռուններէն եկող ուժերուն:

Մեր ժամանակները, այսպէս ահա սկսած են ըմբռնել մարդու հոգիին ու անոր «ես»ին կատարելագործուած վիճակը զոր կը կոչեն անձնաւորութիւն:

Անցեալ դարը հաւատաց որ մարդու ինքնաճանաչման ու ինքնակատարելագործման ուղին անհատական ազատութեան ուղին է և հետեւաբար, անհատի անկաշխանդ ազատութիւնը՝ մեծագոյն իտէալը կեանքին: Ազատ անհատը — տնտեսական-քաղաքական իմաստով — կը դառնար այսպէսով, բարձրագոյն նպատակը ամբողջ գոյութեան: Կար անշուշտ նաև այն հաւատքը որ տնտեսական-ընկերային ազատութիւնը բնականօրէն կ'ենթադրէ բարոյական-ոգեւոր ազատութեան ծնունդը ու զարգացումը:

Մեր դարը սակայն, իր գիտութեամբ ու մտածողութեամբ — որոնց արմատները անշուշտ որ անցեալէն ալ կու գան, — համոզուած է որ մարդ անհատը ինքն իր անհատի սահմաններուն մէջ, ի վիճակի չէ բարձրանալու ստեղծագործ գծի մը վրայ ու հետեւաբար ի վիճակի չէ մարդկային իրական ազատութեան հասնելու:

Սնհասք ինքնիրեն ու ինքն իր մէջ ձգուած, կ'ալլաւետի: Մ. Վանտեն Պրուք իրաւամբ կը նկատէ թէ անհատապաշտութիւնը՝ ընկերութիւնը կը վերածէ փոշիի կոյտի մը որ առաջին փոթորիկին կը վերածուի ցեխի:

Այն ինչ որ կը պատահի բոյսի մը երբ արմատախիլ ընես, կամ

կենդանիի մը երբ իր միջավայրը փոխես, նոյն բանը կը պատահի մարդ-անհատին՝ երբ սխալ հասկցուած ազատութեան մը դադարաբար արմատախիլ կ'ընէ զայն իր միջավայրէն, իր բնական հաւաքականութենէն, իր օրկանական հոգեկան աշխարհէն:

Ամէն իրական ազատութիւն տրուած է հաւաքականութեան մը սահմաններէն ներս: Անկէ դուրս, ազատութիւնը անկուժ է, այլասեռուժ է ու անանացում: Ընկերարանները առիթ չեն փախցնել ապացուցանելու համար թէ «Ազատութիւնը ընկերային իրականութիւն մըն է», իսկ կէօթէ դեռ անցեալ դարուն կ'ըսէր. «Միայն օրէնքը կրնայ մեզի ազատութիւն տալ» («Nur das Gesetz, kann uns Freiheit geben»):

Այդ «օրէնքը» կը բղխի մարդու կենսարանական, հոգեբանական ու ընկերա-բարոյական բնոյթէն:

Կարելի չէ ազատիլ՝ ժառանգաբար մարդուն փոխանցուած կենսարանական-հոգեբանական պայմաններէն. կարելի չէ այդ կեանքի ձեւ դարձած իրականութիւններէն խուսափիլ: Այս ճշմարտութիւնները լաւ ծանօթ են արդէն մանկավարժութեան, որ իր բոլոր գործելակերպերուն մէջ կը հիմնուի այդ իրողութեանց վրայ՝ ձեռքադատուած ըլլալով տղուն հոգին «չինելու» և գլուխը «լեցնելու» հին պատրանքներէն:

Վերջապէս կարելի չէ նաև ազատիլ հաւաքականութեան մը կեանքի ձևերէն, որոնք արդիւնքն են ընկերութեան մը բնավայրի, ցեղային և ոգեկան պայմաններուն ու անոնց դրսեւորման՝ այսինքն պատմութեան և մշակոյթին որոնք տուեալ ընկերութեան մը առարկայացած արժէք-իրականութիւններն են:

Բնավայր, ցեղ, ոգի և պատմութիւն ու մշակոյթ, այս բոլորը ահա, օրկանապէս կը կազմեն մարդ անհատին կեանքի աշխարհը (Lebensraum):

Պ. Ռուստ, ժամանակակից մտածող մը, կը գրէ. «Մարդը ազատ սաւառնող իմացականութիւն մը չէ, այլ ան ներգործող էակ մըն է որ իր ամբողջութեան մէջ և հետեւաբար նաև իր մասնաւոր գործունէութեանց մէջ ի սկզբանէ կապուած է իր աշխարհին հետ եւ անով բնորոշուած: Ամէն մարդ նոյն իրականութեան մէջ չ'ապրիր. մեր իմացականութիւնը կը կրէ զրոշմը այն իրականութեան որուն մէջ մենք կ'ապրինք: Մարդուն կապը՝ իր իրականութեան ամբողջութեան, իր արեան և պատմութեան համայնքին հետ պատահական չէ, այլ այդ մեր ճակատագիրն է՝ որուն առջև պէտք է ինքզինքնիստ զգանք խոնարհ և հպարտ միաժամանակ» (B. Rust: Nationalismus und Wissenschaft):

Այս բոլոր բնական պայմանները խորտակելու ամէն փորձ, կամ զուտ ցնորք կը մնայ՝ վերացական ու երեւակայական զոյւթեան մը մէջ, ու կեանքը իր զիացածին պէս, իրեն յատուկ քրամաբանութեամբ կ'ընթանայ, և կա՛մ եթէ ուղեւ անպայման կտրել այդ կապերը ու «փորձը» տանիլ մինչև «իրակոնայու՛մ», կը պտտանի անխուսափելին, այսինքն՝ այլասերում: Դուն որ կ'ուզէիր կեանքի կատարին հասնիլ, ու թեւր առած՝ դէպի բացարձակ ազատութիւն մեծ ոստումը իրականացնելու կը պատրաստուէիր, յանկարծ կ'իյնաս շղթաներուն մէջ քու իսկ սանձարձակած ուժերուդ, քու բնաղղներուդ ու կիրքերուդ, որոնք այժմ աննպասակ դարձած՝ իրենց վրէժը կը լուծեն, քեզ տանելով դէպի կազմալուծում ու անինքնութիւն:

Կը վերադառնաս այն վիճակին, ուրկէ մենք բոլորս ծնած ենք կ'ըսէ քրիստոնեայ ամենամեծ փիլիսոփան, սուրբ Աուրելիոս Առկուստինոս իր հռչակաւոր համարձակ խօսքով՝ «intra feces et urinam nascimur».

Որովհետեւ, կեանքին նպատակը օրէնքը միայն կու տայ, անհատական սանձարձակ ազատութեան մէջ նպատակ չկայ:

Իսկ առանց նպատակի՝ մարդկային կեանքը — մշակութային ստեղծագործ կեանքը հնարաւոր չէ:

Մարդը ինքն իր մէջ բաւարար ու կատարեալ էակ մը չէ: Մարդը միակ կենդանին է որ իր անկատարելութեան խոր զգացումը ունի ու այդ պատճառաւ կը ձգտի դէպի կատարելութիւն, դէպի գէթ յարաբերական ինքնաբաւարարում: Ահա ատոր համար է որ մարդը միշտ անկայուն է ինքն իր մէջ: Ան, իրմէ դուրս սկզբունք մը կը փնտռէ որուն կառչի ու ինքզինքը ամբողջացնէ, ինքզինքը անկատար զգալու զիտակցութենէն ազատի ու այսպէսով փրկուի:

Իսկ այդ սկզբունքը, որ մարդուն զիտակցութեան մեծ փրկութիւնը կը բերէ, կազմուած է այն բոլոր բարձր նպատակներէն զոր ընկերային հաւսքական կեանքը կու տայ:

*
* * *

ՆՈՅՆ այլասերումին կ'ենթարկուին նաև անոնք որոնք, թէև և նախ իրենց կամքէն անկախ արմատախիլ կ'ըլլան իրենց բնավայրէն, իրենց պատմական-հոգեկան միջավայրէն, սակայն նոր միջավայրի մը մթնոլորտի մը մէջ, փոխանակ իրենց հոգիին մէջ պահելու հարկնի, և ապրելու ցեղային մթնոլորտը որ բնական ու հարազատ է իրենց, և ապրելու անոնց մէջ, կ'ուզեն օտար կեանքը սև օտար հոգին ընդօրինակել ու

փոխադրուել այդ «նոր» իրականութեանց մէջ: Շատ մը օտարացող հայ անհատներու պարագան ճիշտ այս է, դո՛նէ առաջին սերունդին համար: Բոլոր անոնք որ կ'ուզեն դուրս ելլել հայու ցեղային միջնորդութեն ու ազգային արժէքներու աշխարհէն, կ'իյնան աննպատակ կեանքի մը մէջ ուր չկայ ողեկան «օրէնքը»: Շատ շատերը այսպիսիներէն — ազնիւները — շուտով կը զգան թէ ինչքան մինակ են, ինչքան օտար իրենց «նոր» կեանքին մէջ, ու իրենց սեփական հոգիի միջնորդութիւն մէջ իսկ Այդտեղ կը սկսի անբուժելի ու անյառակ ողբերգութիւնը այդ մարդոց:

Ուրիշներ սակայն այդ ողբերգութենէն — կրաւորականներքին ողբերգութենէն — դուրս կ'ելլեն: Ասոնց համար կը սկսի սուելի ծանր ողբերգութիւն՝ մը «հաճօքներու», հարօտութիւններու և զանազան անխոստովանելի «ղբաղումներու» ձևին տակ: Եւրոպայի և ամբողջ աշխարհի մէջ քիչ է թիւը միջազգային excoec-ներու, զեղծարարներու, մաքսանենգներու, հաշիշի «գործ» ընողներու, և լրտեսներու որոնց մասին յաճախ կը լսենք որ ծագումով հայ են: Այսպիսի «հայ ծագումով» այլասերածներու անուններ հասած են նոյնիսկ եւրոպական զրականութեան մէջ:

Այլասերումը կրնայ սակայն երբեմն ալ բարձր ձևեր ստանայ: Երեւի, այդ կախում ունի անհատի հոգեկան-բարոյական աշխարհի ուժերէն: Բացառիկ անհատականութեանց պարագային, այս ներքին ողբերգութիւնը կրնայ ամառնի հոգիի ուժերու բարձր զրսեւորումներու կեանքի բարձր արժէքներու իրականացման ըլլանք մը վրայ:

Հաւանաբար, շատ մը «հայ ծագում» ունեցող մեծ մարդոց պարագան այս է. այսինքն իրենց մեծութիւնը ծնած է այդ մեր յիշած ողբերգութենէն, կամ առնուազն, իրենց այդ ողբերգութիւնը ազգած է իրենց «մեծ»ութեան բովանդակութեան, խորքի կամ ձևի մէջ:

Երբ անհատը իրական պիտի ըլլար յատկապէս ուսումնարարիւ այդպիսի ծագումով հայ «մեծ» մարդոց կեանքը, ու Ֆրոյտան ալ օգնութեան կանչելով, երեան հանել մեր մատնանշած ողբերգութեան — գիտակցական կամ անգիտակցական — ստացած ձևերը — որպէս ազդեցողութիւն — անոնց կեանքին և մանաւանդ գործին մէջ:

*
* * *

Պատմականօրէն, ստորդ է որ մարդը աստիճանաւոր ազատագրում մը ապրած է իր միջավայրէն ու հաւաքականութենէն: Տեսանք թէ

ինչպէս այսօր ալ վայրենի ցեղերու մօտ անհառ զուրկ է իր զգացումէն, իր սեփական «ես»ի գիտակցութենէն:

Պարզ է ուրեմն որ, անհատականութեան գիտակցութեան հասնելը ու այդ գիտակցութեան աստիճանաւոր զարգացումը, անհրաժեշտօրէն պէտք է նկատել մարդկային կեանքի յառաջդիմութեան քայլերը:

Արդ, այդ մարդը որ հազիւ դարերու ճիշդէն յետոյ կրցաւ ինքզինքը գտնել, իր «ես»ը կազմել ու պատահրել իր գիտակցութիւնը, իր զգացումները ու կամքը հաւաքականութեան տիրապետութեան շղթաներէն, այսօր կրկին պէտք է ուրեմն վերադառնա՞յ իր նախնական վիճակին: Կրկին պէտք է ինքզինքը տարրալուծէ՞ ու կորսուի՞ հաւաքականութեան մշուշին մէջ:

Անշուշտ ո՛չ: Խնդիրը այսպէս պէտք չէ հասկնալ: Եւ արդէն այդ վերադարձը անկարելի պիտի ըլլար: Մարդկային բնութիւնը, իր դրերու ընթացքին անցած ճամբան, աստիճանական զարգացման հանգրուաններու հետքերը կը պահէ իր մէջ, սակայն այդ ճամբուն վրայ ետ չի կրնար երթալ:

Ճշմարտութիւնը այն է որ անհատի ազատագրում, «ես»ի ազատագրում ըսելով պէտք է հասկնալ գիտակցականացումը և բանականացումը այն յարաբերութեանց որ կան անհատի ու ընկերութեան միջև և ընաւ երբեք խզումը այդ կենսաբանական, հոգեբանական ու ընկերա-բարոյական կապերուն:

Հին մտայնութիւնը կ'ըսէր անհատին. «եղիւր ա՛յն ինչ որ պե՛տք է քիլլաս» ու այդ «պէտք է»ն կը կապէր վերացական գաղափարներու կամ զգայապաշտ ցանկութիւններու առանց նախօրոք ծանօթ եղած ըլլալու մարդկային կեանքի խոր արմատներուն և անոր բնութեան պայմաններուն:

Նոր մտայնութիւնը, հիմնուած գիտութեանց նորագոյն արդիւնքներուն վրայ, որ երկար ատենէ ի վեր կը պեղէ, կը քննէ ու լոյս կը սփռէ մարդուն կեանքին այդ՝ ցարդ թագուն իրականութեանց վրայ, նախ կ'ըսէ.

«եղիւր այն ի՛նչ որ ես». յետոյ կ'ըսէ «եղիւր այն ինչ որ կրնաս քիլլաս»: Եւ առկէ վերջ միայն կարելի կ'ըլլայ ըսել՝ «եղիւր ա՛յն ինչ որ պե՛տք է քիլլաս»:

Եթէ գործնականին մէջ այս պատուէրները կիրառել ուզենք, պէտք է նկատենք որ առաջին պատուէրին կը համապատասխանէ ինքնաճանաչումի հոգեկան գործողութիւնը. երկրորդ պատուէրին՝ ինքնաճանաչութեան զործողութիւնը, իսկ երրորդին՝ ինքնակերտումի գործողութիւնը:

Առաջին գործողութիւնը կ'ենթադրէ բացարձակ անկեղծութիւն մը, հերոսական անկեղծութիւնը ինքզինքդ ճանչնալու այնպէս ինչպէս որ իրապէս ես, և ո՛չ այնպէս ինչպէս կը սիրես կարծել որ ես: Որպէսզի կարենաս երկրորդ ու երրորդ գործողութեանց հասնիլ, այսինքն ինքնաքննադատութեան ու յետոյ ինքնակերտման, անհրաժեշտ է ուրեմն նախ այս անկեղծ ինքնաճանաչումը: Առանց անկեղծութեան ամէն բան կը ձախողի: Ու չկարծուի թէ այնքան զիւրիւրան է ինքզինքը ճանչնալու այդ անկեղծութիւնը ունենալը: այդ հնարաւորութիւնը, պիտի ըսեմ այդ հողեկան ուժը, կախում ունի մեծ չափով մտրդու ստացած դաստիարակութենէն: Մակերեսային դաստիարակութիւն մը, արտաքին փայլ ունեցող դաստիարակութիւն մը կը տանի դէպի ինքնակեղծում ու կը ցամքեցնէ ինքզինքդ ճիշտ ճանչնալու անկեղծութեան ազրիւրնորը: Յաճախ այդ ազրիւրները այնքան կ'անհետին որ այդպէս սխալ դաստիարակուած անհատը ինքն ալ չի զգար ինքզինքնին կեղծումը: Ինքն ալ անկեղծօրէն կը հաւատայ իր կեղծ վիճակին իրականութեան: Իրական դաստիարակութիւն մը պէտք չէ ծածկէ բնութիւնը և անոր իրական կողմերն ու թագուն ծալքերը: Աւելին՝ պէտք է զանոնք փնտռէ ու դուրս, լոյս աշխարհ՝ բերէ: Այսպէս միայն, բացարձակ անկեղծութեամբ միայն կարելի է իրականացնել ինքնաճանաչումը:

Երկրորդ գործողութիւնը, ինքնաքննադատութիւն, կ'ենթադրէ հողեկան ոյժ, քաջութիւն և սուր յստակատեսութիւն, ինքզինքդ քննելու ու դատելու, ներսիդ լաւն ու վատը իրարմէ դատելու:

Իսկ երրորդ գործողութիւնը, որուն քիչերը միայն կրնան հասնիլ, կ'ենթադրէ հողեկան մեծ ուժեր, կառուցանելու համար բնութեան իրականութիւններէն ամէնէն հոյակապը և ամէնէն գեղեցիկը՝ բարոյական կեցումը ինքզինքիդ մտալուրային արժեքներու ուղիով, հաւաքականութեան ծառայելու գիտակցութեամբ:

Ինքնակեցումը իսկական վաճառքեան վերածնունդ մըն է:

Ինքզինքը այսպէս կերտած մարդը, իր կեանքի վերջաւորութեան, հաւանաբար կ'ապրի Ֆառուստեան այն վսեմ պահը, երբ բաւարարուած իր սեղծած գործէն կրնայ գոչել ինքն ալ՝

«Կանք առ վայրկեան, քանզի դուն շատ գեղեցիկ ես»*:

Գրականութեան մէջ կը հանդիպինք երեք տիպարներու, երեք հանճարեղօրէն ստեղծագործուած հողեկան աշխարհներու, որոնք մեր կարծիքով կրնան ներկայացնել ու մարմնացնել վերև յիշուած երեք հո-

*) Ֆառուստին խօսքեր՝ «Verweile doch du bist so schön».

գեկան վիճակները, գիտակցութեան պայքարի այդ երեք հանգրուանները՝ ինքնակերտումին հասնելու ի խնդիր:

Առաջինը՝ Էօսիբն է որուն գիտակցութիւնը կ'երթայ մինչև ինքնաճանաչում առանց ինքզինքը այդ «ճակատագրէն» ազատել փորձելու: Էօսիբը մարդն է որ չարը կ'ընէ առանց գիտնալու, յետոյ սակայն իր մէջ ծնելով մեղքին գիտակցութիւնը — ինքնաճանաչում — կը սկսի իր հոգեկան կեանքին անդարմանելի ողբերգութիւնը զոր դատապարտեալ է ապրիլ որպէս ճակատագիր, մինչև մահ:

Երկրորդը՝ Գարամագովներն են (բացի Ալիօշաէն) որոնք սկիզբէն իսկ գիտակցութիւնը ունին իրենց մեղքերուն, որոնք ամէն վայրկեան ինքզինքնին պեղելու, քննելու ու դատելու մարմալը ունին, որոնք ինքզինքնին դատապարտելու և տանջելու իսկ հաճոյքը կ'ուզեն ապրիլ ի խնդիր իրենց հոգիի փրկութեան ու «նոր կեանքի» մը արշայրյսին: Եւ սակայն չեն յաջողիր ինքզինքնին տիրապետելու: Գարամագովները, անդադար գիտակցութիւնը ունին իրենց հոգիի այն երկու անդունդներուն որոնցմէ մին դէպի վեր կը բարձրանայ, միւսը դէպի ցածը կ'իջնէ:

Երրորդը՝ Ֆառուսն է որ կը յաջողի հասնիլ ինքնակերտումին՝ պայքարի ու իր ստեղծագործած «գործի» շնորհիւ: Ֆառուսը չ'ենթարկուիր ճակատագրին և ոչ ալ գոհացում կը ստանայ իր հոգիին սամամաններուն մէջ, տառապանքի միջոցաւ փրկութիւն փնտռելով:

Ֆառուսը մարդն է որ կը պայքարի ճակատագրին ու ինքզինքին դէմ: Ֆառուսը մարդկային գիտակցութեան և կամքի ուժերու միջամտութեան յաղթանակն է: Ան ինքզինքէն դուրս կ'իլլէ ու հասարակաց բարիքին մէջ, ընկերութեան երջանկութեան մէջ կը դառնէ փրկութիւնը:

Էօսիբ կը հպատակի ճակատագրին:

Գարամագովներ կը փնտռեն փրկութիւնը:

Ֆառուսը կը դառնէ ու կ'իրականացնէ զայն:

ԻՏԷԱԼ անձնաւորութիւնը այն անհատն է որ առանց իր բնական կապերը խզել ուզելու, ընդհակառակը, հերոսական անկեղծութիւնը կ'ունենայ լաւ ճանչնալու ինքզինքը, իր իրական բնութիւնը, իր հոգիին ծալքերը, իր ձգտումները, մէկ խօսքով իր բովանդակ «ես»ը, և կը զարդացնէ, կը մշակէ իր այդ «ես»ի ուժերը զէպի բարոյական-մշակութային ու իր հաւաքականութեան բարիքին տանող գործածութիւն մը տալով անոնց: Որովհետեւ չմոռցուի որ ամէն բնական հակում, բարոյական գծի մը վրայ կարելի է բերել ու դարձնել զայն իրական ուժ:

Ինչ կը վերաբերի իր ընկերային բնութեանը, անձնաւորութիւնը հնարաւոր կ'ըլլայ միայն իր հարազատ հաւաքականութեան մէջ. ան կը նոյնանայ հաւաքականութեան հետ. ան կը նոյնանայ հաւաքականութեան ապրումներուն հետ ու իր «ես»ը գիտակցօրէն կը ցոլացնէ, կը մարմնացնէ բիւրեղացած ու համադրական ձեով, ամբողջ այդ հաւաքականութեան գիտակցութիւնը, յոյզերն ու կամեցողութիւնը:

Մինչդեռ անքաղաքակիրթ մարդու ու նախապատմական ցեղերու պարագային «ես»ի գիտակցութիւնը հաւաքական գիտակցութիւնն իսկ է ու անհատը կը մասնակցի հաւաքական կեանքին առանց իր «ես»ի գիտակցութեան, անձնաւորութեան պարագային՝ անհատը հաւաքական կեանքին մաս կ'առնէ գիտակցօրէն, իր աղատ կամքով, հաւաքականը եսականացնելով:

Առաջին պարագային «ես»ը գոյութիւն չունի անհատը հաւաքականութեան գերին է ու իր դերը կրաւորական. երկրորդ պարագային «ես»ը իր հզօրագոյն ստտիճանին հասած՝ ընդգրկած է հաւաքականութեան բովանդակ հոգին ու իւրացուցած անոր յոյզերը, մտածումներն ու կամեցողութիւնը, գառնալով այդ հաւաքականութեան տիպար ներկայացուցիչը, անոր Ֆունկցիօնալ համադրական մեկ միաւորը ու անոր մղիչ, ստեղծագործ ուժն իսկ: Հետեւաբար անձնաւորութիւնը գերազանցապէս ներգործող ու ստեղծագործ է:

Փառաստեան անձնաւորութեան իտէալն է հոգեկան ուժերու խոյանքը զէպի ինքնաճանաչում մինչև խորը հոգիին, զէպի ինքնաիրականացում ու ինքնավերակերտում:

Նորագոյն մարդու այդ խոյանքը զմ'այլևի կերպով տուած է Ֆր. Շիլլէր իր հետեւեալ տողերուն մէջ. —

«Անյոզմաբեկ դեպի յառաջ պե՛տ է վազես
 Ու կանգ չառնես պիտի երբեք դուն պարսառուն,
 Երբ երբեք կասարեա՛լը տեսնել կ'ուզես:
 Պե՛տ է որ միտս դուն սարածուխ դեպի հեռուն,
 Մինչեւ աշխարհն հոգիիդ մեջ ամբողջանայ.
 Պե՛տ է իջնես դեպի խորունկը իրերուն
 Որ գաղտ իմաստը եուրեան քեզ երեւայ:
 Յարատե՛ւ,— նպասակին ա՛նց կը սանի.
 Լուրիքունց է որ կը յանգի պայծառութեան
 Ու խորն է որ նեմարտութիւնը կը նստի...»^{*}

*
* *

**ԱՅՍՊԷՍ հասկցուած անձնաւորութիւնը, մեր օրերու մեծագոյն
 իտէալն է:**

Անձնաւորութեան այս դաղափարը որ արդիւնքն է մանաւանդ
 Ժամանակակից հոգեբանութեան ու մանկավարժութեան, սկսած է
 արդէն իր այս զիտուութեանց սահմանները անցնիլ ու առաջնորդ
 դաղափար դառնալ նաև ուրիշ գետիներու վրայ, ինչպէս են ընկե-
 թային, քաղաքական ու նոյն իսկ տնտեսական կեանքը:

Նորագոյն աղգային-հաւաքապաշտ շարժումները և մեր կարծի-
 քով նաև տնտեսական-հաւաքապաշտ (սովիեթիզմ) շարժումները ան-
 կասկած որ իրենց սերմերը ստացած են անձնաւորութեան շուրջ նո-
 րագոյն դաղափարներէն: Որովհետեւ ակներեւ է որ մարդ անհատի
 անձնաւորութիւնը պայմանաւորող օրկանական հաւաքականութիւնը,
 ազգային համայնքն է: Իսկ աղգային համայնքը ինքն ալ տեսակ մը
 հաւաքական անձնաւորութիւն է:

Սակայն ոչ միայն այսպէս կոչուած «totalitaire» պետութիւնները,
 այլ դեմոկրատիք պետութիւններն ալ հետու չեն անձնաւորութեան
 դաղափարէն, և շեշտը անհատին վրայ դնելով, անոնք ալ իրապէս կը

*) „Rastlos vorwärts musst du streben,
 Nie ermüdet stille stehn,
 Willst du die Vollendung sehen;
 Musst ins Breite dich entfalten
 Soll sich dir die Welt gestalten;

In die Tiefe musst du steigen,
 Soll sich dir das Wesen Zeigen.
 Nur Beharrung führt zum Ziel,
 Nur die Fülle führt zur Klarheit
 Und im Abgrund liegt die Wahrheit“.

ձգտին ստեղծել ու ընտրուել իրենց սեփական ազգային-հաւաքական անձնաւորութեան տիպարը:

Ազգային-կարգապահութիւնը ըսուածը ուրիշ բան չէ երբ ոչ այդ հաւաքական անձնաւորութեան գիտակցութիւնը:

Այս իմաստով, բոլոր այսօրուան կեանքոտ ժողովուրդները կ'ընթանան դէպի բնական ազգայնականութիւն մը, մէջն ըլլալով դուրսէ նաև ինք. Միութեան ժողովուրդները (Ոչ սակայն «խորհրդային ազգ»ը որ գոյութիւն չսւնի):

Ուրախութեամբ-Մոզրու տեղ մը կը գրէ՝

«Ազգայնականութիւնը, քաղաքական, բայց իրաւունքային կը նշանակէ պետութեան կազմակերպումը համաձայն ազգի անձնաւորութեան:

Պետական ձեռք ազգին հողին հետ առնչութիւն չունեցող մեքենայ մը չէ որ կարելի ըլլայ ամէն տեղ կիրառելու. Ամէն ազգ իր պետական ձեռք ունի և միայն այդ մէկը իրեն յարմար է»:

Հաւաքականութեան մը մշակոյթն այլ արդէն պայմանաւորուած է այս ներքին կարգապահութեանն:

Ամէն մշակոյթ արդիւնք է հասարակութեան մը կեանքի ու ժերու ներքին ներդաշնակութեան ու հաւասարակչութեան:

Հաւաքական կեանքի մէջ այլ ինչպէս արուեստի մէջ, անհրաժեշտ է «միաւորութիւն զանազանութեան մէջ, և զանազանութիւն միաւորութեան մէջ» սկզբունքին իրականացումը:

Մեր ժամանակները, կը թուի թէ կ'ընթանան դէպի ընկերային-քաղաքական նոր հաւասարակչութիւն մը որ գտնուած չէ դեռ սակայն ոչ մէկ տեղ:

Թէ ո՞ր ժողովուրդը պիտի յաջողի առաջինը ըլլալ այս «նոր հաւասարակչութիւնը» գտնելու պայքարին մէջ, թէ ե՞րբ և ինչպէ՞ս պիտի իրականանայ այդ նոր կեանքը, հարցումներ են որոնց վերջնական պատասխանը անշուշտ որ միայն ժամանակը պիտի տայ:

Ակներև է սակայն որ կեանքը կ'երթայ դէպի զրութիւն մը որ պիտի ըլլայ հաւաքապաշտ-ընկերվարական և ոգեպաշտ:

* * *

Կը թուի թէ անհատ անձնաւորութեան և հաւաքական-ազգ անձնաւորութեան միջև կայ այն յարաբերութիւնը ինչ որ կայ ընդ-թեան մէջ միքորոքովի և մաքորոքովի միջև. կամ աւելի պարզ՝ բոյսի մը հունտին ու իր ամբողջութեան միջև:

Հաւաքականը զոյութիւն ունի ի յառաջագունէ անհատին մէջ:

ճիշտ այնպէս ինչպէս հունտին մէջ որպէս կարելիութիւն գոյութիւն ունի ամբողջ ապագայ բոյսը:

Այս տեսակէտները, իրենց խորքին մէջ, անշուշտ նոր չեն. տարբեր ձևերով կը գտնուին նաև անցնող դարերու մտածողներու գործերուն մէջ:

Այսպէս՝ հնագոյն փիլիսոփայութեան մէջ կը հանդիպինք Արիստոտէլին որ նոյն միտքերը կը յայտնէ իր «Քաղաքականութիւն»ը զբօքին մէջ: Ահա այդ նշանաւոր դարձած հաստուածը.

«Պարզ է ուրեմն որ իր բնութեամբ՝ պետութիւնը նախագոյ է քան ընտանիքը, քան մեղմէ ամէն մէկս, որովհետև մարմինը պէտք է գոյութիւն ունենայ նախքան իր մասերը, և ոչնչացնելով մարմինը, իրենց գոյութիւնը պիտի չպահեն ոչ ոտքը ոչ ձեռքը, այլ պիտի մնան անուշով միայն, ինչպէս որ ձեռք կարելի չէ անուանել քարէ ձեռք մը. ամէն բան կը յատկանշուի իր կոչումով և իր այդ կոչումը իրադրոծող ուժով. այնպէս որ եթէ անոնք նոյնը չեն մնացած, կարելի չէ ըսել որ այդ բաները նոյն բնութիւնը ունին, այլ կարելի է ըսել որ միայն անունը ունին: Հետևաբար պարզ է թէ պետութիւնը գոյութիւն ունի անհատէն առաջ, որովհետև տրուած ըլլալով թէ անհատն ինքն իրեն բաւարար չէ, ան հանդէպ պետութեան նման է մարմնի մը մասնիկին, իսկ միւս կողմէ եթէ չի կրնար կամ պէտք չունի մասնակից ըլլալու ընկերութեան, իր ինքնաբաւութեան պատճառաւ, այն ատեն ան անդամը չէ պետութեան, այլ՝ կամ՝ անասուն մըն է և կամ աստուած մը»:

Խորքով, նոյն հիմնական տեսակէտին վրայ կանգնած են մեր օրերու գրեթէ բոլոր մեծ ընկերութիւնները նաև դեմոքրատիք երկիրներու մէջ: Բնական է խոչը տարբերութիւններ ալ կան մէկէն միւսը:

Ահա քանի մը նախադասութիւններ, ժամանակակից ֆրանսացի մեծագոյն ընկերաբան Էմիլ Տիւրքէյմէն որ պատերազմէն առաջ դեռ նոյն տեսակէտները կը զարգացնէր՝ իր երկրին մէջ առաջ բերած ըլլալով արդէն ամբողջ հոսանք մը որ կը կոչուի «École sociologique française»:

«Ըսողներ պիտի ըլլան թէ քանի որ ընկերութիւնը կազմող միակ տարրերը անհատներն են, ուրեմն ընկերային երեւոյթներու ծնունդի պատճառները միայն հոգեբանական կրնան ըլլալ»:

Այսպէս դատելով, նոյնպէս շատ դիւրաւ կարելի է պնդել որ կենդանի բջիջին մէջ նիւթական մոլէքիւլներէ դուրս ուրիշ բան չկայ: Միայն թէ անոնք ընկերակցած են և այդ ընկերակցութիւնը, պատճառն է այն նոր երեւոյթներուն որոնք կը յատկանշեն կեանքը և որոնց սերմը անկարելի է գտնել ընկերացած տարրերուն որեւէ մէկուն

մէջ: Այսինքն ամբողջութիւնը նման չէ իր բաղկացուցիչ մասերու գումարին. ան տարբեր բան է ու անոր յատկութիւնները կը տարբերին զինքը բաղկացնող տարրերուն յատկութիւններէն»:

«Ընկերութիւնն ալ անհատներու պարզ գումար մը չէ. այլ ընկերակցութեամբ անոնց կազմած զրութիւնը ուրոյն (specifique) իրականութիւն մը կը ներկայացնէ որ իր մասնաւոր յատկութիւնները ունի»:

Անհատական հոգիները հաւաքուելով, իրար թափանցելով, ձուլուելով ծնունդ կու տան գոյութեան մը, հոգեկան եթէ կ'ուզէք, որ սակայն նոր տեսակի հոգեկան անհատականութիւն մը կը ներկայացնէ: Ուրեմն ա՛յս հաւաքական անհատականութեա՛ն մէջ և ո՛չ թէ անոր բաղկացուցիչ միւսերներու մէջ, պէտք է փնտռենք անմիջական եւ պայմանաւորող պատճառները այն երեւոյթներուն որ յառաջ կու գան այդ հաւաքականութեան մէջ: Հաւաքականութիւնը կը մտածէ, կը զգայ, կը գործէ բոլորովին այլ կերպ քան իր անդամները առանձին առանձին առնուած: Ուրեմն եթէ այս վերջիններէն մեկնինք, ոչինչ պիտի հասկնանք հաւաքականութեան մէջ պատահածներէն: Ուրիշ խօսքով հոգերանութեան և ընկերարանութեան միջև կայ այն նոյն խրամատը որ կայ կենսաբանութեան և բնագիտութեան ու տարրարանութեան միջև:

Հետեւաբար քանի անգամ որ ընկերային երեւոյթ մը բացատրուած է ուղղակի հոգեբանական երեւոյթով մը, կրնանք առաջուց վստահ ըլլալ որ բացատրութիւնը սխալ է:

«Ուրեմն, հակառակ այս մտածողներուն* մենք կ'ըսենք թէ ընկերային կեանքը բնական է, ոչ որովհետեւ անոր ազդիւրը կը զաննենք անհատին բնութեան մէջ, այլ որովհետեւ ան կը բղխի ուղղակի հաւաքականութեան էութենէն, որ ինքն իր մէջ sui generis բնութիւն մըն է. որովհետեւ ան կը բղխի այն մասնաւոր գործողութենէն որուն կ'ենթարկուին մասնաւոր գիտակցութիւնները, իրարու ընկերակցելով և որմէ յառաջ կու գայ նոր տեսակի գոյութիւն մը»:

* * *

ԱՆՀԱՏԸ ուրեմն երբ գիտակցական ձևով իր մէջ կը դառնէ այդ օրկանական կարելիութիւնները, կը մշակէ ու կը զարգացնէ զանոնք և այսպէսով կը դառնայ իր հաւաքականութեան ֆունքցիոնալ մէկ իրականութիւնը անա այդ ատեն ան հասած կ'ըլլայ «անձնաւորութիւն» մը կոչուելու վիճակին:

*) Խօսքը Ժ. Ժ. Ռոուսոյի. Հոպսի, Սպենսըրի մասին է:

Անա գաղտնիքը նաև այն իրողութեան որ մեծ արուեստագէտներու գործին մէջ կենդանի կերպով ներկայ են այն հաւաքականութիւնները որոնց ծոցէն ծնած են իրենք: Եւ ասիկա՝ անկախ արուեստագէտին կամքէն և յաճախ նոյնիսկ իր կամքին հակառակ:

Անա թէ ինչու կ'ըսուի թէ արուեստի բոլոր գլուխ-գործոցները անհրաժեշտօրէն «ազգային» են: Իրաւամբ ըսուած է որ եթէ պատահի որ Ֆրանսացիք կորսնցնեն իրենց ժէ-րդ դարու ամբողջ պատմութիւնը եւ անկէ մնացած բոլոր վաւերագիրներն ու հետքերը, միայն Մոլիէրի գործը բաւական պիտի ըլլար վերականգնելու համար այդ դարը: Եւ նոյն բանը կարելի է ըսել շատ մը մեծ արուեստագէտներու մասին: Մեծ արուեստագէտները եղած են միաժամանակ անձնաւորութիւններ, արուեստագէտ անձնաւորութիւններ: Որովհետեւ անձնաւորութիւն կարելի է ըլլալ կեանքի պմէն ասպարէզի մէջ, գործունէութեան ամէն գեանի վրայ:

Պէտք չէ սակայն կարծել որ անձնաւորութիւնը տաղանդի կամ հանճարի հետ կապուած է: Եթէ մեծ արուեստագէտը, մեծ գիտնականը, մեծ կրօնական դէմքը կամ մեծ փիլիսոփան ու մեծ քաղաքագէտը անձնաւորութիւններ կը գառնան իրենց հանճարի ու ստեղծագործ intuitionի ուղիով, շնորհիւ բայց մանաւանդ գիտակցութենէն անդին գտնուող ուժերու մղումով — ինչ որ բացառիկ պարագաներ են, ու մարդկային բացառիկ տիպարներ՝ կաղմուած հոգեկան շարժք սենքեզներու բլանի մը վրայ, որոնց գաղտնիքը գուցէ մարդկութիւնը երբեք պիտի չկարենայ գտնել — մարդկանց ստուար մեծամասնութիւնը սակայն, անձնաւորութիւններ կրնան դառնալ իրենց նկարագրով, իրենց ինքնակերտումի բարոյական ճիգով:

Նկարագիրը իր լիւ ու նումարիս իմաստին մեջ ուրիշ բան չէ երբ ոչ այն արահետը որ կը քանի մարդը դէպի անձնաւորութիւն:

Անա այն յատկանիշները զոր կ'ենթադրէ իսկական բարոյական նկարագիր մը. —

«Բարոյական նկարագրի մը գլխաւոր յատկանիշներն են՝ կամփ ուժ, դասողութեան յսակութիւն, զգացումի նրբութիւն և ոգեւորելու կրակ: Կամքի ուժ ըսելով չի հասկցուիր ընազդի կոյր մղումը, այլ այն ուժը որ ի գործ կը դրուի հարկ եղած պահուն: Կամքի ուժ չղենին ոչ յամառները և ոչ ալ յախուռները (impulsiv) այլ անվախ և յարածե գործողները: Դատողութեան յսակութեամբ, նկարագիրը կը ստանայ տեւականութեան և նախատեսութեան յատկութիւնները: Զգացումի նրբութիւն վառ կը պահէ մարդկանց հանդէպ սէրը և կ'ազատէ մարդը

ուղղինէ: Ոգևորութեան կրակը, վերջապէս կը փոթորկէ հոգին և կու տայ զոհարբութեան ուժը» (C. Rădulescu-Motru: Psihologie, 1929):

Հասուն ու կազմուած մարդուն մէջ տեղ մը, նկարագրի ու «անձնաւորութեան» յատկանիշները կրնան նոյնանայ իրարու հետ:

Աւելորդ է ըսել թէ ի՞նչ մեծ կարևորութիւն ունի ժողովուրդի մը կեանքին համար, նկարագրի կազմութիւնը. այն բարոյական, անհատական ու հաւաքական առաքինութիւններու մշակումը որ ազգին կու տայ ոչ թէ «անհատներ այլ «անձնաւորութիւններ»:

Որովհետեւ թէ արուեստի գեանին վրայ, թէ գիտութեան ու տնտեսութեան մէջ, ինչպէս պատերազմի դաշտին վրայ, յաղթանակները նկարագրով կը շահուին:

Պուրեք, Հոկտ. 1938

Կ. ՊԱՆՃԵԱՆ

Կ Ա Ր Օ Տ

Վ. Մ. ԻԳ

Հոգին կարօք ունի երկինքներու կայոյսին.
Որ յոգնաբեկ քեւերուսս ո՛ւժ տայ նորոգ, որ կրկին
Անեզուրբեանն իր ծոցին մեջ խոյանամ ես հրգօր
Ու լամենի սրլայցով ա՛յլ քեւածեմ խեղացնօր:

Չափեմ ակնարկն աստիճանն բիւրեղաւոզ ու անմար,
Չափեմ սահմանն անհունին, ուր կարօսեմ անհամար
Ու երազեմ ծարաւի երջանկօրէն արեցան,
Ու վերջապէս ալ մեռան յուսավրեպ. ցիրուցան..

Հոգիս կարօք ունի երազներուն հեզեխով. —
Յեղիս սրբէն փրբցուած վայրենական ձեռքերով. —
Անհունին մեջ քեւածող արցունքներուն ոսնանոս,
Ու մոլեգին Չայոյքին ու Անեճփին հեքանոս...

Ու ես այլերս արբէիս խորհուղներէն անաւոր
Երազներուն այգ վրսեմ, ու վիրաւոր ու հրգօր
Երգ մը ըլլայ ես կ'ուզեմ, երգ մը անլուր, սիրական
Երգ մ'Արցունքի ու Արեան ու Վրբէժի սրբազան:

Նիկոսիա

ՕՆՆԻԿ ՄԱՀՏԵՍԱՆ

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Մ Ի Ն Չ Ե Ի 1908)

Հետեւեալը փորձ մըն է կազմելու համար Կ. Պոլսոյ Հայ Գաղութին բոլոր մշակութային, մարդասիրական եւ բարեպաշտական ընկերութեանց ցուցակը սկիզբէն մինչեւ 1908 Օսմ. Սահմանադրութեան վերահաստատութիւնը:

Հեռու է ինէ յաւակնութիւնը թէ այս ցանկը անբերի ու լիակատար է, սակայն շատ մը առաւելութիւն ունի ասկէ առաջ կատարուած փորձի մը վրայ, որ բրած է *Սկսնակ բանասէր* (Տոքթ. Ն. Տաղաւարեան) *Արեւելք* լրագրին մէջ (1898 Տարի թ. 3853) միայն 1812—1875 տարիներուն համար:

Յուցակը կազմուած է ընկերութեանց կազմութեան բուսականները հիմ բռնելով ժամանակագրական կարգով: Աղբիւրներ նշանակել զանց առնուած է պարզապէս չլսնողելու համար:

Միայն անուճով ծանօթ ընկերութիւնները իբր յաւելուած առանձին նշանակուած են: Ամէն լրացումի եւ յաւելուածական տեղեկութեան համար շնորհապարտ պիտի մնամ:

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ

1. Գպրոց դաս Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ (1703—...) Հնօրեայ եկեղեցւոյն պայծառութեան համար դպիրներու կողմէ կազմուած մարմին մը որ բարեպաշտական նպատակով ընկերութեան մը հանդամանքը ունէր: Կ. Պոլսոյ հնագոյն ընկերութիւնը կրնայ համարուել: Յարգ կը պահէ իր գոյութիւնը: Առաջին բարերարը եղած է Սարաֆ Յակոբ Թաշճեան՝ որդին առաջին դպրապետ Սարաֆ Սարգիս Թաշճեանի: Ունէր իր կալուածները և վազրճը:

2. Գպրաց դաս Ս. Խաչ եկեղեցւոյ Սկիւսար Սեղամիյէի (1710—...) Նոյնպէս սոյն նպատակով կազմուած մարմին մը որ կը շարունակուի: Հնագոյն դպրապետները անյայտ են: 1765է յետոյ իրարու յաջորդող դպրապետներու անունները պահուած են: Բռնեցած է իր վազրճը, դպրապետներու անունները, որով իր միւթէվէլիները և գանձապետները:

3. Դպրաց դաս Մայր-եկեղեցւոյ (1719—...) Սոյն նպատակով կազմուած մարմին մը որ այսօրան տարիներէ ի վեր կը շարունակուի: Առաջին դպրապետը եղած է Ժամադործապետ Յովսէփ Զէլէպի Երևուսեան: Պէղծեան Ամիրա այս ընկերութեան ըրած է կտակ մը որուն հասոյթով կը վճարուի երաժիշտ ուսուցչին թոշակը: Դպրաց զասը ունի իրեն յատուկ վագրձ և կալուած, ինչպէս նաև «Ուսումնարան» կոչուած մասնաւոր հաւաքավայր մը Մայր-եկեղեցւոյ շրջափակին մէջ:

4. Դպրաց դաս Պալարու Ս. Հրեցակապետ եկեղեցւոյ (1730—...) Համանման մարմին և վաղեմի հիմնարկութիւն որ կը աւելցարդ: Աւանդապահ մարմին որ իր երէց հիմնարկութեանց հետ վառ պահած է նորահասներուն մէջ եկեղեցիին ծառայելու եռանդը և փափաքը:

5. Արեւուսեաց Ընկերութիւն (1812—1820) որ Կ. Պոլսոյ առաջին մշակոյթի ընկերութիւնը ըլլալ կը թուի: Հաստատուած է Յովհ. Զէլէպի Տիւղեանի (1749—1812) նախաձեռնութեամբ: Նպատակ «Հայոց մէջ գրականութեան ոգին զարգացնել հրատարակելով հին հայ մատենագրութեան երկերը»: Իր օժանդակութեամբ հրատարակուած է վեհնախկի Դիսակ Բիւզանդեանը (1812—1817) և Եղանակ Բիւզանդեանը (1815—1820):

6. Տնանկաց Մատակարարութիւնը (1832—...) հիմնուած է նախաձեռնութեամբ Յարութիւն Ամիրա Պէղծեանի: Մատակարար մարմինը կազմուած էր 36 անձերէ, որոնք բաժնուած էին վեց խումբի: Ասոնցմէ իւրաքանչիւրին զուրին էին Պէղծեան Յարութիւն, Փափազեան Ճանիկ, Երամ և Երկանեան Յարութիւն ամիրաները և Պետրոս աղա Բիւրճեանը: Արհեստաւորները ամսական աուրք կը վճարէին Տնանկաց Մատակարարութեան, որ կը հոգար որբերու, ծերերու և ամէն տեսակ աղքատներու պէտքերը:

7. Ուսումնական Ընկերութիւն (1841 Մարտ 1 —...) Կ. Պոլսոյ մէջ կը հիմնուի: Նպատակն էր գիրք տպել զուտ աշխարհաբար կամ պարզ գրաբար. ընկերութիւնը կազմուած էր վեց տարուան համար որմէ ետքը բաժնուող ընկերը իրաւունք ունէր առնել ինչ որ կ'իյնայ իր բաժինին, գիրք և զրամ: Անձնիւր բաժնեգինն էր 12 քսաննոց ոսկի ու կէս (250 զրու): Ընկերութեան վարիչ կ'ընտրուի Գէորգ աղա Փէշտիմալեան: Յայտարարութեան մէջ ըսուած է թէ «տեղ տեղ քանի մը անկանոն աշխարհաբար ու զուտ տաճկեւոր գրքեր շարադրուած են և ամմէն երկիր ամմէն քաղաք, և կրնամ ըսել ամմէն գիւղ մէկզմէկ տարբեր լեզուներ կ'արտադրեն»: Այս ընկերութիւնը շարունակած է

քանի մը տարի և տանի չափ գրքեր հրատարակած: Այս ընկերութիւնը տպած է Յովսէփ Թալուզճեանի (1808—1844 Մայիս 14 †) թարգմանութեամբ «Բարոյական պատմութիւններ ի պէս մանկանց» (1841) «Փոքր քաղաքներու մեծ սիւրս մարդիկը» կատակերգութիւնը (1841) և Պետրոսի Մեթաղթադիտոր «Մահ Աբէլից» և «Յովսէփի Գեղեցիկ» թատերգութիւնները (1841) և Տերոյէնցի թարգմանութեամբ իտալացի իմաստասէր Ճիոյայի «Քաղաքավարութիւն կամ ուսումն քաղաքակրթութեան» 4 հատոր գործը (1841—1843):

8. Միակամ Ընկերութիւն (1841 Ապրիլ 13—1841 Հոկտ.) կը հիմնուի Սկիւտարի Ճեմարանի տնօրէն Յակոբիկ Մանուէլեանի նախաձեռնութեամբ, Ճեմարանը փակուելէ փրկելու համար: Շատ կարճ, հազիւ վեց ամիս աւած է:

9. Պարբեւեան Ընկերութիւն (1842 Նոյ. 9 — ...) կը հաստատուի: Յովհաննէս Տերոյենց (նախագահ), Մկրտիչ Աղաթոն (ատենադպիր), Արթին Մոմճեան (գանձապետ), Սերփիլէն, Նիկողոս Զօրայեան, Յ. Ստեփանեան, Մ. Էքսէրճեան, Մկրտիչ Միւհէնտիսեան իր հիմնադիրներն են: Այս ընկերութիւնը նախապէս Բարիդ հաստատուած էր: Նպատակը դժբախտաբար ճշտուած չէ, սակայն ազգային մտաւորական վերածննդեան հետ կապ ունեցող ձեռնարկ մը ըլլալ կը թուի, հիմնադիրներէն դատելով:

10. Գրասիրաց Ընկերութիւն (...—1842—...) իբր թէ հիմնուած է Սկիւտար Եէնի-Մահալլէի մէջ, սակայն կ'երևի թէ շփոթութիւն մը կայ, վասնզի Ուսումնական Ընկերութեան (թիւ 7) շփոթուած է:

11. Արամեան Ընկերութիւն (1843 Յունվար 1—1857) կը հիմնուի Վիեննայի Մխիթարեան Միաբաններուն նախաձեռնութեամբ: Նպատակ՝ «Հայերէն բանասիրական աման գրքեր տպագրել»: Ունէր 37 բաժանորդ 100ական աստրիական ոսկի վճարումով: Մինչև 1857 հրատարակուեցաւ եօթը գիրք: Իր դրամագլուխը այսօր կը շահագործուի Վիեննայի Մխիթարեանց կողմէն, սոյն նպատակով:

12. Ս. Սահակեան Սանուց Ընկերութիւն Սամաթիոյ (1843—1890?) կազմուած վարժարանին նախկին ուսանողներուն նախաձեռնութեամբ: Օգնել զպրոցին հայթայթելով գրական պիտոյք, կէսօրուան ճաշ, զգեստ աղքատիկ ուսանողներուն: Հրատարակած է Բուրասան Ս. Սահակեան Վարժարանին հանդէսը (1851—53): Այս ընկերութիւնը շարունակուած է մի քանի անգամ վերակազմուելով, մինչև Համիտեան խտտութիւնները: Իր առաջին վերակազմութիւնը եղած է 1855-ին: 1864 Հոկտ. 6ին Սանուց Ընկերութեան կողմէ Եարութիւն Թիւրքիան, Թորոս Նազարեան, Աստուածատուր Թազուրեան և Օգսէն Սօ-

ճասարհան կը ներկայանան Ուսում. Խորհուրդին որ ընկերութեան երեք նպատակներէն մէկը՝ «Սահակեան Թանգարանին հսկողութեան և տեսչութեան պաշտօնը» կ'արտօնէր գործադրել, իսկ Բ. նպատակը՝ «վարժարանին հսկելու պաշտօնը», ուղղակի միջամտութիւն նկատելով Թաղ. Խորհրդոյ իրաւասութեան, կը յայտարարէ զանց առնել եւ գործադրել Գ. նպատակը որ էր «աղքատ աշակերտաց օգնել, դպրոցէն կլլող յաջողակ աշակերտաց ձեռնտու ըլլալ եւայլն»:

Ընկերութեանս ներկայացուցիչները կ'ընդունին այս առաջարկը, և այս հիման վրայ 1864 Հոկտ. 8ին ընկերութիւնը կը վերակազմուի: 1870ին Թատերական ներկայացուցիչներ սարքած է Սամաթիոյ մէջ եւ 1882ին յարաններ:

13. Հայկական Թանգարանի Ընկերութիւն (1843—...) Սամաթիոյ մէջ հիմնուած է, նպատակ զինելով «ընթերցման ակործակը տարածել Հայոց մէջ և անոնց մտաւոր մշակութիւնը զարգացնել»: Այս ընկերութիւնը ունեցած է բաւական ճոխ մատենադարան մը: 1853ին կը շարունակուէր, իսկ 1869ին յարան մը հիմնած է:

14. Լուսաւորչեան Ընկերութիւն (1844—...) կը կազմուի Գում-Գարուի մէջ: Նպատակն էր աշխատիլ Մայր-վարժարանի բարեկարգութեանը:

15. Սկիւսարի Ս. Կարապէտ Եկեղեցւոյ դպրոցի ընկերութիւն (1845-1851—...) 1851ին իր վարժարանը խորտուել և խիստ հին ըլլալը յայտնելով գերագոյն ժողովէն արտօնութիւն կը խնդրէ վարժարանը ձեւարան փոխադրելու, մինչև որ յարողի վարժարանը նորոգելու:

16. Արամեան Ընկերութիւն (1845—1847) կազմուած ի Պալաթ՝ Խորէնեան վարժարանին նպաստելու համար: 1847ին կը կազմալուծուի և Խորէնեան անունով կը վերակազմուի:

17. Ներսէսեան Ընկերութիւն (1845—...) կազմուած Խաղաղի Ներսէսեան վարժարանին օժանդակելու համար, գլխաւորութեամբ Մկրտիչ ամիրա ձէճայրեանի:

18. Ս. Թարգմանչաց Ընկերութիւն (1845—...) կազմուած Օրթա-ղիւղի համանուն վարժարանին իր օժանդակ:

19. Ասեվանուեան Ընկերութիւն (1845—...) Գանտիլլի Թաղային վարժարանին իր նպաստամատոյց կազմուած:

20. Կեսիկ փաշայի Ս. Յովնանէս Աւեսարանի Ընկերութիւն (1845—...) որուն նպատակն էր Թաղին Ս. Մեսրոպեան դպրոցին յառաջ-դիմութեան հսկել:

21. Հայկազեան Ընկերութիւն (1846 Յունվար 1—...) Սամաթիոյ մէջ կազմուած է մատենադարան մը հիմնելու նպատակով:

22. Նաբեկեան Ընկերութիւն Հայոց (1846 Մայիս 1) «Պէյողուի Հայազգի մանկանց կրթութեան համար» կազմուած: Հաւանօրէն Նարեկեան վարժարանին օժանդակած է:

23. Վերձանութեան Ընկերութիւն (1846—...) որ հիմնուած է Օրթագիւղի մէջ հիմնելու համար թանգարան մը, որ ցարդ կը մնայ եկեղեցւոյ շրջափակին մէջ և բաւական ճոխ մատենադարան մը ունի:

1861 Յունուար 17ին կը վերակազմուի Տիգրան Եռսուֆեանի ջանքերով: Մատենադարանը այն ատեն ունէր 750ի չափ տպագիր և 150ի չափ ձեռագիր մատենան որոնց թիւը յետոյ աճած է:

24. Ընկերութիւն Ազգային ձեռարանի Իւսիւսարու (1846 Հոկտ. 1—...) որ ձեմարանի վերաբացումէն յետոյ Մատթէոս պատրիարքի հրամանով և Ամիրաներու հաւանութեամբ կազմուած է հաստատութեան մատակարարութիւնը ինքն ստանձնելու պայմանով: Նախագահն էր Արղուման, ատենադպիրը՝ Մկրտիչ Աղաթոն, և ունէր 5 ներքին և 5 արտաքին տեսուչներ, 11 խորհրդական, նոյնքան գանձապետ և 40 այցելու և պատուոյ անդամ: Անդամներու ընդհանուր թիւը 80 էր: Մեծ ձիգեր ըրին ձեմարանը պահպանելու համար, սակայն չյաջողեցան: Մէկ երկու տարի միայն կեանք ունեցած է:

25. Խնամախար Ընկերութիւն (1846—1849) Սկիւտար Ս. Խաչթաղին մէջ կազմուած է: Ատենապետն էր Փիշմիշեան Նշան աղա: Թաղին վարժարանին հոգը ստանձնած էր:

26. Արամեան Ընկերութիւն (1846—1849) հիմնուած է լարախաղաց Յովհաննէս Գասպարեանի († 1867) կողմէ: Այս ընկերութիւնը հասարակութեան առջև թափոնի դաղափարին որմաքարերը կը դնէր: Յովհ. Գասպարեան Բերա, Ս. Յակոբի կից հրապարակին վրայ իր խումբով մնջկատակի ու ոյժի փորձեր կը կատարէր: Այս խումբին կը գործակցէին Յ. Գասպարեան (ոյժի փորձեր, մարմնամարզ, հոպիտ, շիւքազներգակ), Միքայէլ Բամպուքճեան (լարախաղաց, սիրահար, հոպիտ, մարմնամարզ ու ձիավար), Միլլըոն Գասպարեան (լարախաղաց, հոպիտ), Ալիքսան Սվաճեան (մարմնամարզ), Յակոբ Սվաճեան, Մարտիրոս Խանճեան (լարախաղացներ), Գէորգ Զիլինկիրեան (պարող, հոպիտ), Սերովբէ Պէրպէրեան (ձեռնածու), Աղասի Մինասեան (հայրական դերեր), Յարութիւն Պաղտատեան, Կարապետ Տէօքմէճեան, Հաճի Սահակ: Այս խումբը Կ. Պոլսոյ մէջ երկար ատեն մեծ ընդունելութիւն գտնելէ վերջ մեկնած է Կովկաս (1849): Արամեան ընկերութեան մնջկատակի ներկայացումները առնուած էին Ս. Գրոց պատմութեանէն երեկոյ զիպուածներէ: Ազգասէր (1847 Նոյեմ. 13 թ. 118) մուսթանէն երեկոյ զիպուածներէ: Ազգասէր (1847 Նոյեմ. 13 թ. 118) Կալկաթա հրատարակուող Ինցլիսեան լրագրի 4 Նոյեմբերի թիւէն

կը թարգմանէ հետեւեալ տողերը որոնք առնուած են Լ'օրգրվէիւն Ֆրանսիա լրագրին 7 Օգոստոս 1847ի թիւէն

«Եւ իմն երևի յարարս Արևելեաց ի Կ. Պոլիս, և այս հակամիտումս մուժանելոյ զքօսանս ի մէջ ժողովրդեանն՝ օգտակարագոյն է յոյժ տէրութեան թուրքաց: Զնորոյ թատրոնէն Հայոց խօսիմք, ընդ վերակացութեամբ պ. Յովհաննէսի Գասպարեան, չոր ինքնին անբարտակ իմն է ուժոյ, կամ նոր ոմն Հերքուլէս» և զդերասանաց նորա՝ ամբողջ ի Հայ որդւոյ:



ԱՐՇԱԿ Ա. ՊՅՅԱՃԵԱՆ

ժաղը հեղձուցանել: Ընդհանրապէս խօսելով՝ նիւթ կամ առարկայ այդ մնջկատակութեան են պատմութիւն Նապոլէոնի, Աղեքսանդրի Մեծի կամ թագաւորացն Հայոց: Եւս և նահապետք իսկ սուրբ գրոց՝ որպիսիք են Նոյ, Արրահամ, Յակոբ եւայլք, մեծաւ գերազանցութեամբ առեալ լինին ի Հայոց՝ (որք են ժողովուրդք ամենեւին բարեպաշտ, ի կենդանի օրինակս հաճելոյ և համողելոյ:

Պատկերք զանազան հանդիսանելի տեսարանաց տպագրեալ բաժանեն Կ. Պոլիս, որով ծանօթութիւն ստանան պատմութեան երեցուցեալ անձանց: Շահատակութիւնք պ. Յովհաննիսի Գասպարեան յոյժ հաճոյ ընծայի յաչս ամենայն թուրքաց, որպէս ի հանդիսին կատարելոյ ի քսան ամսոյս՝ աւելի քան զհազար հինգ հարիւր հոգիս ժողովեալ էին:

Թագաւորամայր կայսերուհին որ, և պաշտպանուհի թատերականացս այսոցիկ՝ ուր երբեք և դէպ եղև և նոցա կատարել զհանդէսն ի թատեր Արքունեացն՝ արձակեաց զնոսա յառուկ բարեհաճութեամբ իւրով. Ահմատ Յաթիհ փաշայ՝ որ գրեթէ երկրորդ զասի ի պաշտպանս հայ թաաերականաց, յառաջագրեալ է կառուցանել զթատրոն մի ի Սկիւտար, և զմեծ մի յիւրաքանչիւր գլխաւոր քաղաքս Օսմանաս-

տանի Ի վերջոյ ասեմք, զի յանդիմանութիւնք պ. Յովհաննիսի Գասպարեան՝ արդարեւ զմայլարարք են ի բարձրագոյն աստիճանի և յուսամք զի յայս մտաւորական շարժումն հայ ազգին՝ յորդորելոց է զընդհանուր կարեկցութիւն»:

27. Համազգեաց Ընկերութիւն (1846 Ապրիլ 1—...) կազմուած նախաձեռնութեամբ Մուրատ-Ռափայէլիան վարժարանի սաներուն: Հիմնադիրներն էին Մ. Սամանճեան, Յ. Տավութեան, Ա. Լուսթեան, Խ. Գաղաղեան, Յ. Վարդանեան, Կ. Թիւլպէնտճեան, Ա. Ասկէրեան: Կանոնագիրը մշակած է Վենետիկեան Հ. Պետրոս վրդ. Մինասեան: Ընկերութեան նպատակն էր 1. Ամէն ընկեր մէկ սիրտ մէկ հոգի ըլլալով միաբանութիւն ընել, 2. Օգտակար գիրքեր յօրինել, թարգմանել և տպագրելով ամէնուն տարածել, 3. Երկսեռ դպրոցներ հաստատել և սովորեցնել, 4. Երկրագործութեան արհեստը Ազգին մէջ ծաղկեցնել, 5. Հայրենի հնութիւններն ու սովորութիւնները քննել և փնտռել, 6. Հին ձեռագիրներ և դրամներ ժողովել, 7. Գիտութիւն և արուեստից ճատում տարածել, 8. Եւրոպական վաճառականութեան օրէնքները ազգին ծանօթացնել, 9. Մետաղագործութիւնը զարգացնել:

Ունեցաւ մինչև 600 բաժանորդ և Բերայի մէջ սեփական կեդրոնատեղի:

Անտոն Հասուն յուժեց զայն: Իր կեդրոնատեղին վերածուեցաւ Համազգեաց վարժարանի:

28. Խորէնեան Ընկերութիւն (1846—1895?) Պալատու վարժարանի «Հոգածու խումբերու» միացումով կազմուած Խորէնեան ընկերութիւնը կը վերակազմուի 1856ին նպատակ ունենալով ազգային վարժարանին թէ՛ բարեկարգութեանը համար այխատիլ և թէ՛ անոր հաստատ եկամուտներ հայթայթել: 1860ին կը շարունակուէր եռանդով և 1866ին կը յաջողէր գեղեցիկ շէնք մը կառուցանել իբր վարժարան: Այս ընկերութիւնը Կ. Պոլսոյ ամէնէն տեսական ընկերութիւններէն մէկը եղած է վասնզի շարունակուած է մինչև 1880ական թուականներու վերջերը, 1883ին երրորդ անգամ վերակազմուելէն յետոյ: Իր կեանքին վերջալոյսին սահմանափակուած է կարժարանին աղքատ աղաքներուն գրեհական պիտոյքն հոգալու հավաստ գերին մէջ: 1893 Ապրիլ 11ին կը վերակազմուի չորրորդ անգամ և կ'ընդգրկէ չորս նպատակ. Ա. Դարման՝ հիւանդաց, Բ. նպատակաւ քառաս, Գ. Խորէնեան վարժարանի աղքատիկ ուսանողաց գրեհական պիտոյք կը հայթայթէ, Դ. մատենադարան:

21. Անձնուէր Ընկերութիւն (1847 - 1890) կը կազմուի նպատակ ունենալով «չափահասներու ձրիարար դաս տալ»: Կեդրոնն էր Ղալաթիոյ վարժարանը: 1860ին զայն վերակազմեցին Յար. Մարգարեան

և Քրիստոստուր Ղազարոսեան որ Ղալաթիոյ կեդրոնին մէջ ամէն կիրակի անընդհատ դասախօսեց մինչև իր մահը (1890): Այս ընկերութիւնը ճիւղեր ունեցաւ նաև Բերայի՝ Նարեկեան 1862ին, Արեթիկ Նէվրուզեան նախաձեռնութեամբ, Օրթադիւղի Թարգմանչաց. Գում-Կարուի դուրսի՝ Պօղոսեան-Վառվառեան, Սկիւտար Եէնի-Մահալլէի ձեմարան: Եէնի-Գարուի՝ Հայկանուշեան և Գասըմ Փաշայի՝ Ս. Մեսրոպեան վարժարաններու մէջ:

30. Երկրագործական Ընկերութիւն (1849—...) կը հիմնուի Գր. Աղաթոնի նախաձեռնութեամբ որ 1848ին Այ-Սթէֆանոյի Երկր. արքունի դպրոցին տնօրէն անուանուած էր: Ընկերութեան անդամ եղած են նոյն վարժարանին 65 հայազգի աշակերտները: Գրիգոր Աղաթոն որչափ ատեն որ տնօրէն մնար վարժարանին նախազահ պիտի ըլլար ընկերութեան: Իսկ անդամները վարժարանին հայ ուսանողներն էին, որոնցմէ պիտի կազմուէր խորհրդականներու ժողովը: Իսկ զուրսէն պաշտպաններ պիտի առնուէին: Նոր կազմուած ատեն, «խորհրդականներն» էին Ճանիկ Սաչատուրեան (Ատենապետ), Սաչատուր Սինանեան, Չենոր Եկէնեան, Կարապետ Փանոսեան, Յովհաննէս Շիմչիրեան, Յար. Ս. Տէրաբեան, իսկ զուրսէն Աղաթոնի գտած պաշտպաններն էին, Յակոբ Կրճիկեան, Սերվիչէն, Յակոբ Մելիքեան, Գէորգ Սթեմարճեան, Մկրտիչ Աղաթոն, Նիկողայոս Զօրայեան, Յարութիւն Մումճեան, Միքայէլ Աղաթոն:

31. Մամիկոնեան Ընկերութիւն (1849—...) ի նպաստ վարդապետիկեան վարժարանի թալասու:

32. Ներսէսեան Ընկերութիւն Սասգիւղի (1851—1858) 1843ին նոյն անուն ընկերութիւնը կը վերակազմուի և եօթը տարի կանոնաւոր գործունէութիւն կ'ունենայ:

33. Սեմեմերիմեան Ընկերութիւն (1851—1915) հաստատուած միևնոյն պահուն թէ՛ Կ. Պոլիս և թէ՛ Աերաստիա: Նպատակ Աերաստիոյ և չըջակոյ գիւղերու վարժարաններ հաստատել: 1880ին իր հսկողութեան տակ կը գանուէին 13 աղգային վարժարաններ, և իր կալուածներէն ընկերութիւնը կը ստանայ 400—500 ոսկի եկամուտ: Արդիւնաւատ կեանք ունեցած է:

35. Մովսէս Խորենացի Ընկերութիւն (1851—1855—...) Նարյի Իարուի համանուն վարժարանին օժանդակելու համար նոյն թաղին մէջ կազմուած է:

«Արդեամբ և ծախիւք անդամաց սրբոյն Մովսէս Խորենացւոյն ըրբեկնախանձ ընկերութեան որ ի Նաուր Գարու», 1855ին Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանի աշակերտներէն Սարգիս Վոհազն Գ.

Շամլեանի աշխատասիրած «Համառոտ գուեակութիւն օրոց» գործը տպուած է Սամաթիոյ Ալլաօսիրական ընկերութեան տպարանին մէջ:

35. Ս. Խաչ ընկերութիւն Սկիւտար Սէլամսըզի (1852—1854) նոյն անուն վարժարանին օժանդակելու համար կազմուած:

36. Ընթերցասիրաց Ընկերութիւն (1852 Օգոստոս—1864), կը կազմուի Նիկողոս Զօրայեանի «Ընթերցասիրութիւն» (1852) հատորին ազդեցութեան տակ: Գուճ-Գարուի Թաղուճճի խանը փոքրիկ գրասենեակ մը այս ընկերութեան առաջին կայանը կ'ըլլայ: Դեկտեմբերին մեծ դժուարութեամբ Մայր-վարժարանի մէջ յատուկ տեղ մը կը տրուի իրենց: 1853ին հոս կը հաստատեն Ընթերցասիրաց Թանգարանը՝ իր յատուկ կանոնադրովը: Այս ընկերութեան նպատակն էր «հասարակութեան մէջ ընթերցման ախորժակ մը տարածելով անոր մտաւոր մշակութիւնը զարգացնել»:

Մատենադարանէն զատ ընկերութիւնն ունէր նաև ընթերցարան և հրատարակած է աման զինով զիրքեր: Այս ընկերութեան հիմնադիրներն են ժամանակին երիտասարդները: Ատենապետն էր և գլխաւոր աշխատողն՝ ղեկադորձ Համբարձուճ Ալթունճեան, փոխ-Ատենաւոր պետը՝ Մասիսի խմբագիր՝ Կաբապետ Իւթիւճեան, Ատենաղպիրը՝ Մանուկ Աղասեան (յետոյ րժիշկ) և փոխ-ատենաղպիր՝ Տիգրան Կիւմիւշ-կերտան: Անդամներուն մէջ էին Նիկողոս Զօրայեան, որ անոր կանոնագիրը կազմած էր, Գրիգոր Մարկոսեան, Մկրտիչ Աղաթոն, Միքայէլ Մոմճեան, Սահակ Փէշտիմալճեան, Մատթէոս Այվատեան, Յակոբ Ոսկան, Տիգրան Գարակէօզեան, Գրիգոր Թորոսեան եւ այլն: Այս ընկերութեան պաշտպան եղան Պետրոս Սորասանճեան, Պօղոս Այնան, Նիրութեան Հովեան, Ստեփան Արզուման, Սահակ Ապրօ, Մկրտիչ Մոմճեան: Կրողս Հովեան, Ստեփան Արզուման, Սահակ Ապրօ, Մկրտիչ Մոմճեան:

Ընկերութեան գլխաւոր մեկնեսաք եղած է Նիկողոս Պալեան, որ կը նուիրէ գեղեցիկ մատենադարան մը որ քիչ ատենէն կը լեցուի 1000ի մօտ գիրքերով:

Այս ընկերութեան կեդրոնը և գրադարանը 1859ին փոխադրուած է Մեծ նոր-խան և շարունակուած է մինչև 1864 և թերևս յետոյ ալ:

Ընթերցասիրացի անդամները 1860—1863 Սահմանադրական վեճերու ատեն կոտորելիյն կարեւոր դեր մը իբր լուսաւորեալ երիտասարդութեան ներկայայացուցիչներ: Տերոյենց՝ խաւարեալներու կուսակցութեան յառաջապահը, այդ վեճերուն ժամանակ «Ինքնախելան հերիսիկոսներ» կը կոչէր այս ընկերութեան անդամները, որովհետև ընկերութիւնը Մեծ նոր-խանի վերի դրան մէջ ընթերցարանի յատկաբար էր սննդակ մը որուն վարձքը ընկերութեան հասոյթներէն կը վճարուէր:

37. Օժանդակ Ընկերութիւն (1852—...) կազմուած Գում.-Գարուի մէջ, Մայր-Վարժարանի կրթական ծախքերուն օժանդակելու նպատակով:

38. Ազգասիրական Ընկերութիւն (1853—...) հիմնուած Սամաթիոյ մէջ, տեղւոյն Սահակեան վարժարանի ուսանողներու կողմէ: Ազգասիրական ընկերութիւնը որ հաւանօրէն պատենական եռանդով հաստատուած մարմին մըն է, հանդէսներ և զրքոյկներ հրատարակելով ծառայել նկրտած է ազգին: Այս ընկերութիւնը ունէր տպարան մը հաստատուած Ուղուէն Շարչըն էմիրլէր խան: Այս տպարանը կը թուէր ըլլալ Նոյեան Աղաւնիի սեփական տպարանը որ այս լրագրին դադարելէն (1853) յետոյ գնուած է ընկերութեան կողմէ և զործածուած է իր նպատակին, հոն հրատարակելով նախ «Ընկերութեան» անուն «օրագիր բարոյական ու մատենագրական կրթութեան» ամսաթերթ մը (1854 Ապրիլ 1 1855) որ կը խմբագրուէր նոյնիսկ ընկերութեան կողմէ: Ազգասիրական ընկերութեան տպարանէն անշուշտ ընկերութեան խրատոյցով լոյս տեսած են նաև հետեւեալ զրքոյկները, Հենրիկոս կամ անառակ սղան (1854 թրգ. ֆր. Գարբէլ Արամ Գայտէրեան), Բարի Ֆրիսօյեներ եւ Չար Բիեռից (1854 թրգ. ֆր. Պօղոս Ա. Կ. Արփածեան, աշակերտ Ղալաթիոյ վարժարանին), Անբեախառնութիւն (1854 թրգ. Յովհ. Կրճիկեան, աշակերտ Ս. Սահակեան վարժարանի), Հենրիկոս էլանՖել Բարոյական պատմութիւն (1855 թրգ. ֆր. Մ. Տ. Ա. Միլնասեան) և Համառոտ Գուշակութիւն Օղոց (1855 հեղինակ Սարգիս Վահագն Շամլեան, Սամաթիոյ Սահակեանի աշակերտ):

Ընկերութեան և իր տպարանին վախճանը յայտնի չէ:

39. Ուսումնասիրաց Միաբանութիւն (1853—...) Սամաթիոյ մէջ կ'սղմուած: Հիմնադիրները, նպատակը և կեանքը անծանօթ է: Կը կարծուի Ս. Սահակեան Սանուց Միութեան շարունակութիւնը:

40. Մեռոպեան Ընկերութիւն (1854—1856) կը հաստատուի Կ. Պոլսոյ մէջ. նպատակ «Բանաստեղծական գրուածներ և զանազան լեզուներէ թարգմանուած գիրքեր և տետրակներ հրատարակել»: Այս ընկերութիւնը հրատարակեց Աստղիկ Արեւելեան անուն ամսաթերթ մը (1855 Յունուար 1—1856):

41. Արարատեան Մեղուաց Ընկերութիւն (1854—...) հաստատուած է ի նպատակ Սկիւտարի Ս. Խաչ վարժարանին: Յաջողած է վարժարանը գնել շատ փայլուն վիճակի մէջ:

42. Բարեխրական Ընկերութիւն (1856—...) կազմուած Բերայի մէջ ի նպատակ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին: Կարճատև:

(Շարունակութիւնը յաջորդով)

Հ Ր Ա Շ Ա Լ Ի . . .

(ՏՊԱԻՌՈՒԹԻՒՆՆԵՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԵՆ)

Երբ կէս օրին ճաշարան մտայ, հին տիրոջ, պ. Պետիկի տեղ՝ մօր-
ուռք առս մը դէմս ելաւ: Քասսայեց ալ կը բացակայէր տիկին Պե-
տիկը, որուն տեղը գրաւած էր խարտեաչ կին մը:

Այս անակընկալ փոփոխութիւններէն զարմացած՝ կամացուկ մը
հարցուցի մանչուն որ մօտեցած էր սպասարկելու:

- Ո՛ւր է պ. Պետիկը:
- Ի՞նչ, չէ՞ք գիտեր:
- Ոչ, բնաւ խապար չեմ:
- Վլաթիփօստք մեկնեցաւ:

Մեր հայրենակիցը, որ Օտեսսա սպաստանած էր, կարճ ժամանակի
մէջ, իր ճաշարանին շնորհիւ, կոկիկ հարստութիւն մը զիղկլէ ետքը,
քաղաքէն կ'անհետանար առանց մնաք բարովի:

Նոյն ատենները, 1917ի Յուլիոսին, զաղթականներէն ամէնէն
յանդուգները, արագ ճամբորդութիւններ կ'ընէին Ծայրագոյն Արե-
ւելք, ուսկից կը բերէին ձեռքի պայուսակներ, զախարին, զանազան
դեղեր, և ուրիշ տեսակ տեսակ սուղ բայց զիւրատար իրեղէններ.
Գորս Օտեսսա կը ծախէին ասանապատիկ գիներով:

Նորանոր երկիրներ տեսնելու և դրամ ալ վաստակելու հեռապատ-
կերը չէր կարող չի հրապուրել պ. Պետիկի նման արթնամիտ և ձեռ-
ներէց մէկը: Զաւակ չունէին: Ինչո՞ւ ինքն ալ չպիտի երթար տիկ-
նոջը հետ, այցելելու Ծարագոյն Արեւելքը: Գէթ վերադարձին պատ-
մելիք յատ մը բաներ պիտի ունենար անչուչտ:

Այդ օրէն ամիսներ անցած էին, երբ յանկարծ, իրիկուն մը.
Նախկին ճաշարանապետը Օտեսսայի Ֆրանքօ-Ռօմըն ճաշարանէն ներս
մտաւ, իր ետեէն քաշելով նաև կողակիցը:

Կարծես երկինքէն կ'իյնային:

Ճիշտ ա՛յն օրն էր երբ Պուլշեվիկները գրաւած էին քաղաքը ա-
ռանց որեէ ընդդիմութեան, ըստ որում Ուքրայնական բանակը երկա-
թուղուոյ կայարանին ետեւը քաշուած էր առանց հրացան մը պարպե-
լու: (Փողոցի արիւնահեղ կռիւները քանի մը օր ետքը պատահեցան):
Ճաշարանին բոլոր միւս սեղանները գրաւուած ըլլալով, ամուր
իմ սեղանս հրաւիրեցի:

— Թա՛խ վլաթիփօստքէն կու գանք, ըսին մէկ բերան, նստե-
լով սեղանին շուրջը:

— Օ՛, բարի եկաք:

Ինքը շատ լաւ կը գուեցունէր, մինչդեռ տիկնոջ դէմքին վրայ յողնութեան հեռքեր կ'երեւային: Վերջէն իմացայ որ երկաթուղիին մէջ նուազում մը ունեցեր է խճողումի պատճառով:

Հանդիպումը մեծ հաճոյք պատճառեց ինձի: Շատ բաներ կրնայի իմանալ պ. Պետիկէն իր այցելած հեռաւոր և խորհրդաւոր տեղերուն վրայ:

Ուրիշ բարեկամ մը, որ երկու շաբաթ առաջ Օտեսա վերադարձած էր նոյն ճամբորդութենէն, ինձի պատմած էր շատ մը խիստ շահեկան անդեկութիւններ, որոնցմէ օգտուած էի հրատարակելով իմ ռումաններէն օրաթերթիս՝ «Տէրէշա»ի մէջ շաբթ մը յօդուածներ որոնք մեծ հաճոյքով կարդացուած էին:

Հիմա, յոյս ունէի վերսկսիլ շաբթը, օգտագործելով, այս անգամ, տպաւորութիւնները պ. Պետիկին՝ որ քիչ թէ շատ կարդացած ու սրամիտ մէկն էր: Եւ կը մտածէի հրճուանքի այն վայրկեաններուն՝ զորս պիտի նուիրէի ընթերցողներուս, նոր յօդուածաշարքովս:

Իբրև ճարպիկ լրագրող, նախ թողուցի որ կ'աղղուրուին և ստանան իրենց բարի տրամադրութիւնը: Արդէն առաջին դիմիի բաժակէն, տիկնոջ այտերը շառագունւած էին:

— Որքան գոհ եմ վերադառնալուս, կարծես թէ տունս եմ, սկսաւ պ. Պետիկ:

— Ես ալ յարեց տիկինը: Սարսափելի հեռու անդեր: Երբ կը մտածեմ...

— Կը յուսամ որ անախորժ դէպքեր չունեցաք, կ'ըսեմ, խօսք բանալու համար:

— Այո, այսինքն՝ ո՛չ, որովհետև վերջէն գտանք ըսաւ տիկինը: Երեւակայեցէք որ մեր պայուսակներուն մէկ մասը կորսնցուցած էինք Սիպերիայի կայարաններուն մէկուն մէջ: Ի՞նչ էր կայարանին անունը չեմ գիտեր: Առթիւն անուն մը, միտքս չի մնաց: Բայց գոյքերնիս բերին կարպին Պայուսակները բերողն ալ ռուս մըն էր, որուն հետ ծանօթացած էինք երկաթուղիին մէջ և որ մեր բախտէն, քանի մը ժամ մնացած էր նոյն կայարանը:

— Պարկեշտ մարդ, չիտակը. ուրիշ մը ըլլար...

— Իբրև, շատ պարկեշտ են Ռուսերը, մէջ բերաւ ամուսինը: Երեւակայեցէք որ կ'նոջս բոլոր գոհարեղէնները հոն էին:

— Կեցցէք, ըսել է ոչինչ անախորժ:

— Ոչինչ:

— Ուրեմն շատ գոհ մնացած էք ձեր ըրած ճամբորդութենէն և հարկաւ սքանչելի տպաւորութիւններով վերադարձած էք Օտեսայ:

— Վերին աստիճան ուրախ եմք:

— Ձեր տեսած տեղերը անշուշտ խիստ շահեկան են:

— Հրաշալի...

— Ամբողջ Սիպերիան ճեղքեցիք անցա՞ք:

— Ամբողջ:

- Որքան տեղեց ճամբան:
- Անընդհատ տասնեւեց օր:
- Ինչե՞ր չի տեսաք... Այն ընդարձակ տափաստանները...
- Հրաշալի:
- Առատ ձի՞ւն...

— Հոտը չի կար: Այս տեղի պէս տաքուկ: Հրաշալի...

Յաւելով նկատեցի որ աէր և տիկին Պետիկ իրենց ամբողջ ապա-
ւորութիւնները կ'ամփոփէին մէկ բառի մէջ հրաշալի: Այս բառն էր որ
կ'արտայայտէր, դեռ մ'թուլեան մէջ գտնուող այն դիւղիչ վայրերը:
Ու՞ր կը մնային ուրեմն իմ յօղուածներս... Պէտք ունէի նորանոր
մանրամասնութիւններու որոնք և ոչ մէկ կերպով չէին ցայտեր իմ
սակաւախօս սեղանակիցներուս բերաններէն:

— Պ. Պետիկ, ըսի, իմացած եմ որ դէպի Վլատիվօստոք ճամբոր-
դողները անհուն կոյս անտառներէն կ'անցնին և թէ ճամբան ամբողջ
օրեր կը տեէ ցերեկ ու գիշեր. թէ և երկաթուղին սրնթաց կ'արշաւէ
անդադար:

— Շիտակ է:

— Շահեկան պէտք է ըլլայ այդպիսի ճամբորդութիւն մը:

— Հրաշալի...

— ... Եւ թէ՛ երկաթուղին անտառներէն դուրս ելած ատեն, ինչ-
պէս փապուղիէ մը, հեալով ճամբան կը շարունակէ Պայքալի լճին
քովերէն:

Այս անունը իմանալով, պ. Պետիկի աչքերը խօնուռ արտայայ-
տութիւն մը ստացան: Վերջապէս, շնորհիւ թելադրութիւններուս,
Սիպերիոյ՝ իրենց վայրենիութեան մէջ չքեղ տեսարանները եկած դէմը
չարուած էին: Պահ մը մտածկոտ մնաց իր յիշատակներուն ծանրու-
թեան ներքև ընկճուողի մը պէս: Այս անգամ ապահովաբար բացած
էի իր տպաւորութիւններուն ծորակը և յօղուածաշարքս փրկուած էր:
Խորունկ շունչ մը առաւ, ուռեցնելով լանջքը: Ապա, ինծի դառնալով
հանեց հառաչանք մը, որուն մէջ կեդրոնացուցած էր իր ամբողջ հիւ-
ցումը Պայքալի լճին հանդէպ:

— Հրաշալի, եղբայր:

Այս կողմէն կորսուած էի: Դարձայ տիկնոջ, որքան ըլլայ,
կիները աւելի դիւրագոց կ'ըլլան: Անպատճառ բան մը քաշել պէտք
էր այս գողտրիկ գլխէն որ Սիպերիան տեսած էր:

— Տիկին Պետիկ, ըսի, իմացած եմ նաև որ Ամուր գետին ձո-
րերը ամենէի տեսարան մը կը ներկայացնեն. թէ այն պահուն երբ եր-
կաթուղին այդ տնայատային վայրերը կը թափանձէ, լեռները ու ձո-
րերը, կարծես ապշած և կատղած այդ երեւոյթէն՝ արձագանգ կ'առնեն
կու տան իրարու, և թէ վերջապէս, այդ գոռումները հարիւրաւոր
անգամներ կրկնուելով, և մէկ ձորէն միւսը ու մէկ լեռնէն միւսը
անցնելով, կը սարսափեցնեն ճամբորդները, թէ...

— Հրաշալի է, պարոն, կ'ընդմիջէ տիկինը:

— Հրաշալի է, տիկին...

— Ո՛հ, այո:

— Իսկ Վլատիվոստոօքը...

— Քաղաք մըն է:

— Կը կասկածէի, շահեկա՞ն:

— Յոյժ շահեկան:

— Իրա՞ւ է որ քաղաքը հիմնուած է բլուրներու իրայ և թէ դիշերները կը փայլի հրեղէն ծովու մը պէս, այն բլերաւոր լոյսերուն պատճառով որոնք կը հոսին ամփիթատրոնի ձեով կառուցուած չէնքերէն:

— Ճիշտ առանկ է, պարոն:

— Աղուո՞ր...

— Հրաշալի...

Ըսել է, տիկին Պետիկէն ալ ամէն յոյս կտրելու էր: Հրատալի՛ Ուրիշ ոչինչ: Եւ սակայն առաջ տարի հարցումներս առանց վհատելու:

— Կ'ըսեն թէ սոսկալի հովեր կը փչեն Վլատիվոստոք, իրա՞ւ է:

— Այո, սարսափելի հովեր կը փչեն հոն:

— Ընդարձա՞կ է նաւահանգիստը:

— Հրաշալի...

— Մեծ ոգեւորութի՞ւն...

— Ուղածնուդ չգաի:

— Կ'ըսուի թէ քաղաքին մեծամասնու թիւնը կը բաղկանայ նախկին աքսորականներէ և անոնց յաջորդներէն որոնք առևտու եղած են հոն:

— Բնաւ աքսորական մը չտեսանք, բայց եթէ ձեր ըսածին պէս է, հրաշալի է:

Այլևս ուրիշ բան չհարցուցի, տեսակցութիւնը վերջացած համարելով: Միայն թէ խնդրեցի սպասաւորէն որ զովացուցի խմելիք մը բերէ ինձի: Յօղուածաշարքս օղը ցնդած էր...

Պ. Պետիկ տեսնելով որ ա՛լ ձայնս չեմ հաներ և Մայրագոյն Արեւելք ըրած ճամբորդութեանը մասին հարցումներ չեմ ուղղեր իրեն, ինք խզեց լուռութիւնը:

— Ես բոլոր տեսածներս պատմեցի, ըսաւ հիմա, խնդրեմ, դուք ալ ըսէք թէ ի՞նչ կայ չի կայ այս տեղ. մենք բան մ'ալ չենք գիտեր:

— Այս աե՞ղ, ի՞նչ պիտի ըլլայ, այս առաւօտէն ի վեր Պոլշէվիքները գրաւած են քաղաքը: Այս օրէն սկսեալ, անոնց ռեժիմին տակ պիտի ապրինք:

— Եւ ի՞նչ պիտի ըլլայ վիճակնիս:

— Հրաշալի...

ԳՈՎԵՐԳ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ԽԱՒԱՐԾԻԼ, ԽԱՒԱՐԾԻԼ

Սա լերան նստուածքին նայեցէ՛ք, դաշտերու անեղբուսեան մէջ՝ ուր երկնակամարի կապոյտը կը խտանայ, կ'ըլլայ շօշափելի, ու վար կը սահի ստուերի մը մեղմովը, կը մտնէ կանաչ արտերու հունը, ապա կը հարի...

Գոռոզ՝ ինչպէս կ'ըլլան բարձր ու մենաւորիկ լեռները: Որոնց հասակին վեհութիւնը անբաղդատելի կը մնայ մարդկային ուղեղին՝ քարացած հաւատքի մը կարծրովը: Արեւին առաջին լոյսը հոն կը թափի: Աստղերը անոր վրայ իրենց արծաթալոյսը կը լեցնեն: Գիշերը անկէ քունի դանդաղովը սահ կու տայ, կը մտնէ մեր գիւղերը յոգնած, կը մազլցի պատերէն վեր, կը փաթթուի բուխերիկներուն, և խորհուրդին կարկամ լռութիւնովը կը ծեփէ երդիքներն ու ցուիքները...

Լերան ճնշող յիշատակին մէջ՝ ուրուրները բաժին ունին, և ցիւները՝ բզկառուած երգ մը: Բայց արծիւներուն բերած սրսրփանքը ամէնէն տխուրն է, անիկա՝ կը մտնէ լերան հնութեան փորը, ոտքը մօտ միուշին պէս... Ու լեռը՝ ինքն ալ կը զարհուրի այդ ճիշէն, ու խենթ կիրքի մը հանդոյն՝ անոր մեծութեան ցաւը կը ճաթի յաւիտեանական կեանքի մը սալարկին վրայ:

Վա՛յ այն լեռներուն՝ որոնք իրենց փառայեղութեան պարունաւին մէջ, չեն փայփայեր սաղմը տիրապետող ուժին: չըջանակուած բրնձիկներ, անմերձենալի հանգոյց մը վերջապէս, որ իրենն ըլլայ, անհաւորութեամբ ու քարացնող տագնապով: Լեռ մը՝ իր հեզ ու հետնկարագիրը պէտք է ունենայ: Բարի ու չարկամ: Այս զանազանութեան ակէն ու հակադիր ծայրերէն պիտի գայ լեռներուն շրջուած արուեստին զաղանիքը, որ պաշտուեցաւ մարդէն իբր գերադոյն կատարողանք: Այսպէս է որ ծովերու խորութիւնը և անոնց մեծութեան անչափելի չափը, լերան բարձրութեան և երփներանգ նկարին հեռակազմեցին արտակարգ քանդակը, որուն մեկնութիւնը ո՛չ մէկ հանճար կրցաւ յանձնել թուղթին: Զպիտի փափաքէի որ հունաւոր մարդուն կրցաւ յանձնել թուղթին: Զպիտի փափաքէի որ հունաւոր մարդուն փառքը սահմանաւորէր Նոյարնակ Արարատը ու Ջրհեղեղեան Աւան-

դուժիւնը, Սինա լեռը՝ և անկէ մեզի հասած քանակաբանեան, Պառնասը՝ և իր աստուածներուն քէնն ու ռխակալութիւնը: Թո՛ղ չձնի այդ արուեստը, մե՛նչի արուեստագէտն ալ, ու պատռի պատասառ որուն վրայ լեռան ուրուանկարը պիտի փռուի կեղծ պատկերի մը տգեղութեան մէջ...: Թո՛ղ անսպելի ըլլայ անիկա: Օտար՝ արուեստին իգացնող շունչին, որուն մէջ՝ գաղտնիքներու մեծութիւնը կը դասնայ մասշեյի խորք և բւեռնեյի ոն: Ո՛չ ոք պէտք է գիտակցի լեռան սկզբնաւոյսին, կ'ուզեմ որ Անիկա մեր գրարարին անխորտակելի չկամութեան յամառութիւնը ունենայ...

Լե՛ռ: Լե՛ռ: Հգօր և անառակ: Անկարգ, բիրտ և անկիրթ:

*
*
*

Մեր գիւղին լեռը իր յարկերը ունի հնդկական Պոկոսանիներուն պէս... Առաջին յարկը՝ ծալք-ծալք կախարդանքով, հարուստին կզակին տակէն կախուած միսին պէս, հոն՝ մեր սիրուոր աղջիկները իրենց սերերգն ունին, բռնուած երիտասարդութեան կրակէն: Այն տեղ՝ հարսերը հէքեաթի պայտաներն ունին արեւածոր դահլիճներովը: Այն տեղ է որ պարիկները՝ ծաղիկներուն գոյն ու բոյր կու տան, ու արահեաններուն վրայ՝ կը կոտրեն սափորները տարփանքին, կամ պատրանքովը կը բանին սիրովէսերը: Այս յարկին մէջ, մեր գիւղի տղաքը իրենց արուի հպարտութիւնը կը պատցնեն: Վերջապէս հոն է գիւղը, հարթ ու վէպի մը պարզովը, նոսր ու ողորկ սիրաբանութեան սալարկին վրայ, առանց սակարկումի և խարող ձեւերու:

Երկրորդ յարկին վրայ՝ կաղնիներ կ'աշտանակուին գորշ ցնորքներու պէս: Թեղիներն ու կաղամախիներն կը սլսյան: Հազորանիները մեղեղի կը կարդան, ու վայրի խնձորենիները «ղէմ» կը բռնեն: Մառերը կը վերածուին թռչուններու մեհեանի, պատարագ կայ ու մողեսները՝ խուսկ ու աղօթք կը շնչեն...:

Երրորդ յարկը եղնիկներունն է: Հոն՝ մայրութեան՝ Առեղծուածը կայ, վաղող ջուրերուն և կանաչ հովիտներուն մէջ, ծառերուն տակ ու քարանձառներուն խորք և ամայութեան մէջ: Հոս չայցելող աղջիկները հարս չեն կրնար ըլլալ:

Վերնախարկը՝ մանչերուն է: Աղջիկները չեն կրնար մինչև հոս բարձրանալ, վասն զի երկիւղը կը տիրապետէ հոս, կը տագնապեցնէ քարն ու ծառը, թուփն ու հողը, հեղեղատն ու պուրակները: Անդունդներուն վրայ՝ մահը իր ոտայնը կը հիւսէ ժրջան սարդին պէս: Մուկէն ու գորտէն վասնցող էգը կը յանգզնի՝ հոն ելլել, ճակատ ճակատի գալ մահուան սրսփուքին... Ես միշտ հեգնած եմ կրներու

մարդեղութեան բանուածքը, որովհետեւ չեմ հաւատացած անոնց արարչութեան լիակատար արուեստին, անոնք գողցուած են, երբ մարդը քունի մէջ էր... Բարերախտաբար Իրիստոսի կրօնքը կը հիմնաւորէ հողիս մշտնջող վարկածը, կնշ ծնունդը նեաեւով «գողութեան» վարչամակին մէջ:

Լերան այս մասը՝ հովերու ուսին տակն է: Կապոյտէն վեր կը բարձրանայ աշտարակի մը կլորութեամբ: Լուրթեան սարսափը այնտեղը կ'ուռի: Մրրիկները իրենց ուժին սլաքները կը նետեն ամայութեան արին մէջ: Արծիւներուն թուխսը՝ սերերգի մը մեղրովը կը տաքնայ ու կը հասուննայ: Արջերը կածաններուն տոպերուն վրայ՝ իրենց մարմնին վայրենի ծանրութեան լողաբը կը պտտեցնեն հանդարտօրէն և ծուլութեան անտանելիովը: Մինակութեան թեթևոտիկ ու ինքնապարծ քերթուածը՝ անդունդներու եղերքէն կը քայէ ասպետի մը անհոգութիւնովը: Մեր լեռը շատ բարձր է: Աւելի բարձր՝ Սինայէն, և յորդուն՝ իր զայրոյթը: Ատոր համար՝ անիկա իր Եհզէն ու Մովսէսը չունեցաւ: Դարերու խենթ ճիւղ կը ջրվէժէ անկէ յեղակարծ փլուզմամբ: Ու ժամանակը կը թարախտի անոր նայուածքին կոպերուն տակ...: Անոր սարսափը այնքան պաղ ու կճող է, որ հոն աստուածները չկրցան բնակիլ, ու բրդոտ մարգարէները հոն իրենց մօրուքին շուքը չպտացուցին, և անոր հմայքին մէջ՝ իրենց դերը չունին գիշերաշրջիկ մոգերը Արեւելքի իմաստութեան:

Որո՞ւնկ ձորերէն, հովերը անմշակ երգ մը կը փռեն ծառերու լարին վրայ: Անկշիռ ծանրութիւն մը, սա՛ լեռը, որուն տեսքը՝ յուշերու և երեւոյթութեան մէջ, կը վերածուի անհանդարտ ու գերհզօր մտապատկերի: Լերան այս յարկին վրայ՝ կիները ոտք չեն կրնար դնել: Խաւարծիլներ կը ծլին հոն: Ու խաւարծիլները կը ժպտին լերան բարձունքէն:

*
*
*

Այս գիշերը երազ մը տեսայ: Երազիս մէջ խաւարծիլ կերայ: Թթուըչե՛ղ, թթուըչե՛ղ՝ Օ՛խ, ի՛նչ հաճոյք, ես խաւարծիլ կերայ: Վա՛ղ՛ւց ակուաներս դպած չէին անոր կապոյտ միսին: Անկէ զգայնոտ սարսուռին կարօտն ունէի, չսանձուած ու յաճառ բաղձանքի մը կուղպ պատրանքին ցաւովը:

Ինչ կ'ըլար, երկա՛րէր երազս, խաւարծիլը մեծնա՛ր, ուտէի. կրկին ուտէի գիւղացի լաճու մը իմ շտետութեամբը, անոր միսը ուռեցներ այտերս, անոր թթու ջուրը խառնուէր թուքիս, շրթունքուցներ այտերս, անոր թթու ջուրը խառնուէր թուքիս, շրթունքներէս վազէր, լեցուէր կուրծքիս ու թեւերուս վրայ, կամ մտներ քթիս

ծակերը, աչքերուս խոռոչները, բիրս ասկն ու վրայ ընէր, յուզէր ար-
ցունքիս աղբիւրները, ու լայի, բայց ուտէի՝, անյագօրէն ուտէի՝,
բայց խաւարծիւս չհատնէր: Կ'ուզէի որ հին ու մոռցուած օրերու տղա
յական չարածձիւթիւնը՝ անձրեի կաթիլներու նման, և անոր ման-
րովը ցրցքնուէր խաւարծիւի խորդուբորդ կեղեկն վրայ, անոր գնդա-
սեղի գլխու մեծութեամբ ծաղիկներու երկչոտութեան մէջ: Հոգ չէ,
արկածներուն ամէնէն ահաւորը պայթէր գլխուս: Հաղարներով ցաւ
ու կսկիծ մտնէին ներաշխարհիս բաց դռնակէն, հասնէին մտքիս դար-
պանները, քանդէին ամէն ինչ, որ ես հոն դրած էի իրրե գեղեցկու-
թիւն ու արուեստ: Վերջապէս թուրքը՝ իր ոճիրին վաւերական
պատմութեան սրիկայութեամբը, անցնէր սրախ կանաչ անդաստան-
ներէն, հոգիիս տեսլահիւս մարգագեափիններէն, հոն սարքէր նոր Ապրիլ
24 մը, միայն թէ երազս երկարէր ու խաւարծիւը խոյս չտար ինձմէ...

Հաւաասացէ՛ք, կ'ըսեմ բարձր ու անվերապահ, թո՛ղ հայրս ու մայրս
մեռնէին: Քոյրերս ու եղբայրներս, եօթ-պորտ աղգականներս կրակի
մէջ իյնային, անոնց մօսն ճննճերահօտը կաթիլ՝, կաթիլ հայեցնէր զիս,
խենդենա՛յի, դառնոյի արգահատելի դիւահար մը և անկապանք սրի-
կայ մը: Ծնողքիս մահը յաւերժօրէն ապրող թռչունի մը պէս՝ իր բոյնը
կապէր զգացումներուս քիւնն, տանջէր ու հալածէր զիս, հայհոյէր,
գիշեր ու ցորեկ, անգիտակից տղու իմ անօրինակ ապերախտութեանը,
միայն թէ ապրէր երազիս խաւարծիւը: Ապրէ՛ր մէջս: Ապրէ՛ր հետս:
Ապրէ՛ր ինձի համար:

Սաւա՛րծիւ: Սաւա՛րծիւ: Երազիս չափ քնքուշ, մօրս կաթին պէս
քաղցրահամ խաւարծիւ: Ես հիմա յիշատակիդ հասակին կը փարիմ,
ու քե՛զ կը պաշտեմ, իմ պատրանախա՛ր սրիկան: Ինձի եկո՛ւր, երբ
որ կ'ուզես, կամ քովդ թո՛ղ ըլլայ: Երբ քուն եմ ու արթուն: Երբ ցաւ
ուռնիմ կամ կը մպտիմ: Երբ հարսնետունն եմ կամ մեռելտունն,
միայն թէ եկո՛ւր, ո՛վ իմ հայրենարաղձութեանս մօրենի... Եկո՛ւր
վեհափառ ասածու մը պէս, մարգարէներու գանկին մէջ կաթող յայտ-
նութեան պէս...: Ահա՛ ես, միշտ պատրաստ եմ քեզ պաշտելու, ինչ-
պէս հաւայտաւոր մը՝ իր արարիչը...

* * *

Տարիներէ ի վեր ես խաւարածիւնը փնտռեմ:
1917ին՝ Բօզանդիի բարձունքները: Դաւո-Տուրմազի լեռկ սեպերուն
արանքը: Խաչկիրի ձորին մէջ՝ և Ճակեղի հունն ի վար:
1918ին՝ Արմաշի կճատ լեռներու արտեւանին տակ: Քէլթէփէի

քղանցքներէն վեր, և Պարտիզակի հարսնարոյր և հայացած ըլուրներու թփուաքին մէջ:

1920ին՝ խաւարծիլի փնտռելու համար՝ ես Պանսրմա գացի, Էսիննիկ, Էրսեֆ և վերջապէս Քալիու Տաղ: Ու այսօր որ Յունաստան կը բնակիմ, տասնընկնդ տարիներէ ի վեր խաւարծիլը կը փնտռեմ: Թրակիոյ Ռասսփր, Մակեդոնիոյ Փանգէոնը, Տիլոսի կիրճերը, Փաթրասի լեռնանցքները և Պառնասի ամպածրար կառարները ինձի չտուին այդ կրանութիւնը: Տարազիրները թերթէ թերթ, քաղաքէ քաղաք, ու փողոցէ փողոց իրենց կորսուած ազգականները փնտռեցին, մինչ ես մտոցայ իմիններս, ես՝ խաւարծիլս փնտռեցի, ան՝ որ երազս եկաւ, ու պատրանքին պէս խոյս տուաւ ինձմէ:

Օր մը՝ ալ յոգնեցայ զայն փնտռելէն: Արամտեցայ: Որոշեցի մուշալ խաւարծիլը: Բայց, երկու օրէն կոտորեցաւ յամառութիւնս, ղըղջացի ու թուլցայ, վամնդի անոր սէրը լայնցա՛ւ, խորունկցա՛ւ, բարձրացաւ, ծածկեց հոգիս տանիքը, սիրաէս ներս խուժեց, ինկաւ մարդկային բոլոր բաղձանքներու վրայ, խեղդամահ ըրաւ զանոնք, հաւձագերը լափող կատուին պէս՝ նետուեցաւ անոնց վրայ, կերաւ ամէնքը, հիմայ՝ ներս ուրիշ զգացում չկայ, ո՛չ ալ ունէ կարօտ, սրտիս փեթակը իր բզոցը չունի...: Ինքզինքս ալ մոռցեր: Ես՝ իմ տէրս չեմ: Ինքզինքս յանձնած եմ խաւարծիլի տիրապետութեան ցաւին... Դժգո՞հ եմ: Ո՛չ ի հարկէ: Թո՞ղ օրհնեալ ու յառնական ըլլա՛յ անոր տիրապետութիւնը: Աքցանէ սիրտն: Ես՝ կը սիրեմ անոր լուծը, անոր պատճառած տազնապար կ'երջանկացնէ զիս:

Գարնան: Արևոտ օր մը խաւարծիլ ուտելու կարօտը զրգոնց բաղձանքիս ջիղերը: Գերագոյն տազնապար իմ անբուժելի հիւանդութեանս՝ ոռքի հանեց զիս, քչեց շէպի Փէնտէլի լեռան զառիթափները, ու հոն՝ փնտռել տուաւ խաւարծիլը:

— Փէնտէլի, Յունաստանի ազնուակապն ու մարմարաբիր լե՛ռ, ինձի...:

— Ո՞վ ես դուն, հարցուց Փէնտէլին:

— Անհայրենիք հայ մը, տարագիր մը, ըսի:

— Անհայրե՞նիք:

— Այո՛, հայրենիք չունիմ:

— Ուրեմն դուն չա՛տ ես տառապել:

— Տառապանքիս պատմութիւնը երկար է, անոր զրուագները յուզիչ են ու խենթեցնող: Պատմութիւնս լեցնող դաւը անկրելի է: Ա՛խ իմ սրբազան վէպտ: Զայն գրելու համար՝ Գեղամայ ծովակին չա՛մ մե լուն պէտք եղաւ, և հաղար օխայ պողպատէ զրշածայր...:

— Ի՞նչ կ'ըսես, ա՛յ օտարական, ո՛ւրկէ ես և ի՞նչ ազգէ:

— Ես՝ Արարատցի եմ, Արմէններէն: Քանդեցիին մեր եկեղեցիները, կամ ախոռներու ու բողոնոցի վերածեցին: Փշրեցին արուեստի ու գիտութեան բոլոր յիշատակարանները: Վառեցին բազմահազար գիւղերն ու քաղաքները: Ծերերն ու մանուկները ծովերն ու զետեղներն ստեղծեցին: Հարսերն ու աղջիկները առեւանգեցին, բռնաբարեցին ու չարչարանքներով մեռցուցին: Վերջապէս տարագրեցին ու սպաննեցին ամէնքը: Այսօր, Հայրենիքս պարապ է, կատարեալ մեռելնոց մը՝ անծի՛ր ու անսահման:

— Ո՞վ ջարդեցի:

— Ան՝ որուն ծանօթ ես: Վասն զի անոր խարազանը, օր մը, Յունաստանի կոնսակին վրայ ալ շաչեց:

— Հիմայ կը հաւատամ ըսածներսը...:

— Բայց, ո՞վ արուեստի ու հրաշքի լեռ, ես քեզի չեկայ պատմութիւնն պատմելու: Մենք հիմա մեր պատմութիւնը օտարին պատմելէ խոյս կու տանք, քանզի, ո՞վ որ կը պատմէ իր տառապանքը, կը թեթեւցնէ զանիկա, հետեւաբար կը պակսեցնէ զայրոյթի ու վրէժխնդրութեան չափը...: աններող ու վայրագ ճակատամարտը մղելու վճռականութեամբ: Յետոյ՝ մենք չենք հաւատար մարդկային խղճին ու արդարութեան, օտար բարեկամներու կեղծ բարեկամութիւնն ալ կը մերժենք, մենք, մենք անոնցմէ շատ ունեցանք, «Հայասէր» անունով որակեցինք զանոնք, սուրբի պէս պաշտեցինք, ու վայելեցինք անոնց հայասիրութեան արդիւնքը: Փնտռեցէ՛ք զիւրապարտական թուղթերը, Ազգային Դաշնակցութեան օրագրութիւնը և «ըլուլիսներ»-ու մէջ զաղտնի կատարուած խօսակցութիւնները, կարդացէ՛ք, ո՞վ Փէնտելի, պլաթի հաւատաք խօսքերու: Հայութիւնը չ'ուզեր սակարկութեան նիւթ ըլլալ: Ան հիմա վճռած է բոլորնոցի դէմ բոլորնոց հանել:

— Ուրեմն՝ ի՞նչ կ'ուզես, թուես տղա՛յ:

— Ես՝ հոս եկած եմ խաւարածիլ փնտռելու: Տո՛ւր ինձի այդ հաճոյքը:

— Մա՛յրդ է:

— Ո՛չ:

— Քո՞յրդ, հա՞յրդ, եղբա՞յրդ, ազգակա՞ն մը:

— Ոչ մէկը և ոչ միւսը: Ես զանոնք վաղուց մոռցած եմ: Իմ փնտռածս, թթուընդ միտով, կապոյտ ու հաճոյական տեսքով խորհուրդ մորթով, մօտ մէկ կանգուն հասակով բոյս մըն է...: Հայրենիքէն հեռանալէս ի վեր՝ չեմ կերած անկէ, անոր կարօտը զիս մինչեւ զառիթափներդ բերաւ:

ազգականներու սէրը: Վերադարձո՛ւր ինձի իմ տղայութեանս անառակութիւնները, մեր փողոցները և անոնց մէջ թափառող շուները, գետեզերքներու մեր աններդաշնակ կանչերը, պարն ու գզուըտուքը, հայրոջանքն ու քէնը...: Մանկացո՛ւր զիս, ըլլամ հի՛ն օրերու կռուազան, խլլոտ, տանձ ու ծիրան գողցող և աղջիկներու ետեւէն քարնետող մանչը...: Ըլլա՛մ անկիրթ ու կոպիտ, նստիմ արևուն տակ՝ կանաչ արտին մէջ, թքնեմ ամէնուն վրայ...: Բղէզներ բռնեմ, անոնց յետոյքը՝ շիւղեր մխրճեմ ու թռցնեմ ու վայրագօրէն հայրոյնս...:

Ո՛վ խաւարծիլ, տա՛ր զիս մանկութեանս անգիտակ ու խեղ օրերուն: Մանկական անառակութիւններս թերի մնացին, ասոր համար շատ կը ցաւիմ: Կ'ուզեմ պակասները լրացնել: Գիթս սրբեմ թեւովս: Իր ուլերը հովիտին մէջ արածող աղջիկը համբուրեմ: Գաղանի գացող կիներու հետքերը հոտոտեմ շուներու պէս: Ծառերէն կրկին ծաղիկ ու խակ պտուղներ փրցնեմ և բոյները աւելցնեմ: Տորենդէզերու կնիքները խառնշտեմ: Շապիկս վեր՝ մեծ ճամբուն մէջտեղը նստիմ ու արևուն տակ երգելով՝ կակաջի մը բաժակին մէջ ծրտեմ...: Չը՛րի, չը՛րի, խաչ որ չը՛րի, թէ որ սուտ կ'ըսեմ բերանս ծոխ: Ալմոյի խնձորիկ թուշերէն չբռնեցի: Սուտունի ստինքները չսեղմեցի: Անուշին ու Գեոյին մէկտեղած գիշերը՝ անոնց երդիքէն քար չնետեցի, կամ՝ անոնց հարսանեկան առագաստի ետեւ պահուըտած՝ սիրոյ հեծքը մտիկ չը՛րի: Երէցի ապակիները չկոտրեցի: Այս բոլորը չեմ ըրած...:

* * *

Երազիս լուսեղ ճամբաներէն խաւարծիլս փախաւ: Գարունը ծամող ուլին պէս՝ գանկիս ցանկապատէն անդին թռաւ: Հալեցա՛ւ: Հիմայ տեսիլքիս տախտակը մաքուր է, ոչ մէկ բիծ անոր վրայ:

Չեմ կրնար զիմանալ այս անակնկալ խարկանքին: Ա՛խ, ինչո՞ւ չկրցայ բռնել խաւարծիլին օձիքէս: Փախաւ, զիս միտակ ձգեց: Ո՛ւր փախար, խաւարծիլս...:

Ու քանի որ չեմ կրնար բռնել քեզ, Սուլմոնի «Երգ-Երգոց»-ին մէջ գտնուող գիրերուն տասնապատիկովը կ'ատեմ քեզ...: Ո՛վ իմ երազիս խենթ ու սիրական խաւարծիլ:

ՍՕՍ-ՎԱՆԻ



ԶԷՅԹՈՒՆԻ Ա.ՊՍՏՍԱՄԲՈՒԹԻՒՆ (1895)

Հայ ազատագրական երկար պայքարին մէկ փառաւոր դրուագր-կազմակերպուած Հնչակեան կուսակցութեան կողմէ, զեկամարութեամբ և գործօն մասնակցութեամբ արտասահմանէն ծածկարար Կիլիկիա մասած Հնչակեան գործիչներ Աղասիի, Ապահի, Հրաչեայի, Մլինի և այլոց, ինչպէս բովանդակ Զէյթունի և չրջակայից քաջարի մարտիկներուն, (որոնցմէ յիշենք Նազարէթ չավուչ, Կարապետ Ղըրփանոսեան (Չելլատ), Բարթողիմէոս վրդ. Թագաճեան, Հաճի Մէրկէնեան, Փանոս Շամքէ-չիշեան, Կարապետ Տ. Յակոբեան են.) թուով շուրջ 6000 անձ, որոնք 1895 Հոկտ.էն մինչև 1896 Փետր. ամբողջ հինգ ամիսներ հերոսավա-յել զիմադրութեամբ եւ մղեցին՝ Բէմզի փաշայի, Ալի պէյի և ի վերջոյ Էթէմ փաշայի հրահանատարութեանց սակ գտնուող և Զէյթունի վրայ արշաւող աւելի քան 110.000 թրք. կանոնաւոր և անկանոն վիթխարի բանակները՝ զանոնք չարաչար պարտութեան մատնելով:

Այս շարժման նպատակը ըլլալով պարտադրել Սուլթան Համիտը փութացնելու իր այսպէս կոչուած Մայիսեան բարեփոխումներու գործադրութիւնը, առաւելապէս կրթնամ օտար պետութեանց և համազգային օժանդակութեանց վրայ, չ'ուեննար ակնկալուած շօշա-փելի արդէնքը: Ազգ. պաշտօնական մարմիններն ու հայ ունեւոր-ները կը զլանան իրենց նիւթական թէ բարոյական աջակցութիւնը և Զէյթունի այդ փառահեղ ապստամբութիւնը, որ կոչուած էր պահ մը բովանդակ հայութեան ճակատագիրը այլ կերպ տնօրինելու, դժբախտաբար կը ստանայ տեղական ընոյթ, առանց երբեք կարենալ ոտքի հանելու բովանդակ Կիլիկիան (ինչպէս նախասահմանուած էր) եւ ռազմամթերքի և այլ կենսանիւթերու սպառման հետեւանքով, տեղի կու տայ զինաթափութեան:

Կ. Պոլսոյ «Երկաթեայ» երջանկայիշատակ պատրիարք Իզմիրլեանի թափած ջանքերուն շնորհիւ սակայն, կարելի կ'ըլլայ օտար պետութեանց Հալէպի հիւպատոններուն միջոցաւ պատուաւոր հաշտութիւն մը կնքել ընդմէջ Զէյթունցւոց և Բարձրագոյն Իրան (10 Փետր. 1896),

որուն շնորհիւ ապստամբութեան Հնչ. չորս պարագուխները իրենց երկու հայ թիկնապահներով, թր.ք. կառավարութեան ծախսով, և վեց մեծ պետութեանց երաշխաւորութեամբ, անվտանգ կ'անցնին արտասահման. Զէյթունի կը շնորհուի ներքին ինքնավարութիւն մը՝ քրիստոնեայ կառավարիչով, յետամնաց տուրքերու ջնջում՝ և նոր տուրքերու վրայ զեղջ, եւայլն: Ի՛նչ որ ալ ըսուի շարժման ղեկավարութեան թերացումներուն կամ Հնչ. Կեղրոնի մօտ ի նպաստ Զէյթունի ապստամբութեան հաւաքուպծ գրամներուն մտխուժին եւն. ան արժանացած է քաղաքակիրթ աշխարհի հիացումին և ցոյց տուած է չափանիշը հայ մարտական ուժին:

(Բաղուած Մալիս Պետրոսեանի «Քննական Պատմութիւն Զէյրունի 1895ի ապստամբութեան» անհիպ երկասիրութեան):

Դ Ա Շ Տ Ի Ճ Ա Մ Բ Ա Ն Ե Ր

Խաղաղ ամայի, դաւսի նամբաներ,
Փրուած էիք մեր արեւուն մեջ ծով,
Ինքնամփոփ ու լուռ, ի՛նչ անոյժ բան էր
Ման գալ ձեր վրայ, իրիկուան դեմ գով:
Ծաղկաւեհ, կանանչ դաւսի՛ նամբաներ,
Ձեր լըուրթեան մեջ՝ մեծանեմ, խոհուն՝
Միտքս ոսկեթել երա՛գ կը բաներ,
Մայրամուտէն վերջ, լոյսովն ասղերուն:
Մըսե՛իմ ու նեղ, դաւսի՛ նամբաներ,
Արեւուն լոյսին սակ կենսազրւարք,
Այգուն ունե՛իք՝ բանկազի՛ն բաներ
Ձեր կուրծքին վրայ, մարգարիտ ու վարդ:
Ձեր վրայէն միտ կ'անցներ դէպի տուն,
Ոսկի հունձներուն սայլը հրուրուն,
Կողով առ կողով, աղջիկներ ժրպտուն.
Մի՛րգ կը կրէին խաղո՛ղ քաղցրահամ...
Հիւսայ այս օտար բաւիղներուն մեջ
Երբ ծո՛ւխ կայ, աղմո՛ւկ, փռօ՛ի եւ արկած.
Ճամբանե՛ր շաղոտ եւ արեւաեջ,
Ձեզ կ'որոնեմ միտ, ետ կարօսալաց:

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

Ի՞նչ է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Ազատութիւնը բառը կ'ըմբռնուի երկու կերպով. 1. — Անձնիշխանութիւն, 2. — Ազատութիւն:

Անձնիշխանութիւնով կը հասկցուի այն կարողութիւնը որ մարդկային կամքը կ'որոշէ բացարձակապէս ինքնակամ, առանց ստիպման և առանց նոյնիսկ իր կամքէն դուրս պայմաններու: Հոն ուր որ ան կը կիրարկուի՝ պէտք է բացարձակ ըլլայ, միջին ճամբայ չկայ, կամ պէտք է կիրարկել, կամ՝ ոչ:

Ազատութիւնը ընդհակառակը սափճաններ ունի, ան կը փոխուի էակէ էակ և նոյնիսկ պարագաներու համեմատ կը փոխուի նոյն էակին համար: Ուրեմն ինչ որ ազատութիւն կը կոչուի, առաւել կամ պակաս և պատճառներու գիտակցութիւնով ընտրելու կարողութիւնը, յարմարութիւնն է: Այս պայմաններու տակ ոչ յիմարը, ոչ գինովը և ոչ ալ բուռն լուզումի ենթակայ եզոզը ազատ է: Նոյնպէս կարելի է ըսել որ տգէտը պակաս ազատ է քան լուսաւորեալը, որովհետեւ ան չի կրնար տեսնել բոլոր ընտրութիւնները:

Այս իմաստով առնելով ազատութիւնը, կարելի է ըսել որ մարդ այնքան աւելի ազատ է, որքան շատ ծանօթութիւն ունի և իր յուզումներուն տէրն է: Բայց մարդուն կարողութիւնները սահմանափակ են, կարելի չէ ամէն բանի մասին ծանօթութիւն ունենալ և տեսնել ամէն բան, ապա ուրեմն, իմաստունը, լուսաւորեալը և իր յուզումներուն տէր եզոզը ազատ է այնքան, որքան մարդ արարածը կրնայ ըլլալ:

Հոգեբանօրէն կամքը ազատ է, բայց ո՛չ միշտ, ո՛չ բացարձակ կերպով, մենք ամէն առան հաւասարապէս չունինք այդ կամքի ազատութիւնը, բայց իւրաքանչիւրիս կեանքին մէջ, ինչ ինչ պայմաններու տակ, պարագաներ կան, երբ կատարուելիք գործին համար բացարձակ ընտրութիւն կ'ընենք:

Կամքի ազատութիւնը 4 հանգրուաններ ունի. —

Ա. Հնարաւորութեան բնութեամբ. — Նախ առաւել կամ պակաս չափով խզմատութիւն և ուշադրութիւն ի գործ կը դնենք մեր կամքը Գործադրելէ առաջ, բայց յաճախակի յետոյ կը ստիպուինք խոստովա-

նիւ թէ մտածած չէինք այսինչ հաւանականութեան վրայ, կամ չէինք կրցած կշռել այնիչ հետեանքը: Բայց մինչև որոշ աստիճան մը մեզնէ է կախուած մտածել ու տեսնել հաւանականութիւնները և հետեանքները Բաներ կան որոնց մասին իրաւունք չունինք չմտածելու և զանոնք չտեսնելը ոճիր է:

Բ. Խորհրդածութիւն.— Դրդապատճառները հետզհետէ մէջտեղ կը դրուին: Բայց որոշումը կրնանք յապաղել, յաճախ նոյնիսկ պարտաւոր ենք, միևս կողմէ սակայն պէտք է գործել: Այն ատեն իւրաքանչիւրս կը կարծենք որ դրդապատճառները կշռելէ յետոյ պէտք է ընտրել գործունէութեան ձևը և գործել: Այս կերպով մեր ազատութիւնը կը գործադրենք:

Գ. Որոշումը.— Որոշումը ազատ է, որովհետև իրապէս պատճառարանեալ ընտրութիւնն է:

Դ. Գործադրումը.— Գործադրումին մէջ ևս ազատութիւն կայ, կը կարծենք որ բաւական չէ լաւագոյնը կամեալ, պէտք է զայն գործադրել, արժանիքը միայն մտադրութեան մէջ չէ, որովհետև առանց գործադրումի բան մը չ'արժեք: Շատ մ'արդիկ կան լաւագոյն մտադրութիւններով փոզորուած, բայց իրենց ազատ կամքովն է միայն որ անոնք ի գործ պիտի դնեն այդ իրենց մտադրութիւնը:

Ուրեմն ազատութիւնը կամքի 4 հանգրուաններուն մէջ ի յայտ կու գայ, ազատ ենք ըմբռնել հնարաւորութիւնները, խորհրդածել անոնց վրայ, որոշել ու գործադրել:

Տրամաբանօրէն.— Իսկական խորհրդածութիւններ գոյութիւն ունին հաստատելու համար մեր սրտին մէջ հաղարաւոր զգացումներ, մեր մտքին մէջ զանազան խորհուրդներ, մեր լեզուին մէջ բազմաթիւ բառեր, մեր էութեան մէջ ստոյգ երեւոյթներ, որոնք անհրաժեշտօրէն կը ներմուծեն կամքի ազատութիւնը:

Մենք կ'ունենանք խղճահարութիւն և պարտականութիւններ կատարած ըլլալու գոհունակութիւն: Այս զգացումները կատարելապէս անիմանալի և անհեթեթ պիտի ըլլային. եթէ մենք ազատ չըլլայինք, եթէ գէշ գործ մը ազատօրէն կատարած չըլլանք, ինչո՞ւ համար մենք զմեզ ամօթահար զգանք և խղճահարինք: Նոյնպէս, եթէ ոճիր գործող մը ազատ չըլլար, ինչպէ՞ս պատասխանատու պիտի բռնէինք զայն:

Հարց Թանք. Արդիօք ազատ ենք: Շատեր կը ժխտեն՝ առաջ բերելով ճակատագրականութիւնը և նախասահմանումը:

Ի՞նչ է ճակատագրականութիւնը.— Արեւելքի մէջ այս ճակատագրականութեան զաղափարը ծնած է ծուլութենէն, որ զայն կը մշտնջենաւորէ և կը ծանրացնէ: Առածի կարգ անցած են այլևս Արեւելքի

մէջ «ինչ որ պիտի ըլլայ ան կ'ըլլայ», «ճակատագիրը այսպէս է» խօսքերը:

Վերցնենք «ինչ որ պէտք է ըլլայ կ'ըլլայ» խօսքը, որ պարզ նոյնաբանութիւն մըն է: Որոշ է որ ինչ որ պէտք է ըլլայ կ'ըլլայ բայց խնդիր է զիտնալ թէ ի՞նչ պէտք է ըլլայ, և եթէ ինչ որ կ'ըլլայ, ինչ որ պէտք է ըլլայ՝ ճշգրտօրէն այն չէ ինչ որ մենք կ'ուզենք: Ինչ որ մեր ազատութիւնը պիտի ընէ կամ թողու որ ըլլայ՝ անա այն է որ կ'ըլլայ և մեր ուշածին մէկ մասը պիտի կատարուի:

Արեւմուտքի մէջ ճակատագրականութիւնը այլ կերպ ըմբռնուած է: Անոնք կ'ըսեն. «Աստուած բացարձակապէս կատարեալ է, այսինքն ըստ ամենայնի անթերի, ուրեմն ան գիտէ ամէն բան անսխալօրէն, անցեալը, ներկան և ապագան: Արդ երբ Աստուած գիտէ թէ այսինչ վարկեանին ի՞նչ պիտի ընենք, կամ ի՞նչ պիտի ըլլանք, ուրեմն մենք հակառակը չենք կրնար ընել, որով ազատութիւն չունինք»:

Այս կերպ ճակատագրականութիւնն ալ կը ժխտէ պատասխանատուութիւնը և նոյնքան վտանգաւոր է, որքան արեւելեանը:

20 դար առաջ էրիքթէթ ըսած է. «Ամէն բանի մէջ որոշէ ինչ որ քեզմէ կախուած է և ինչ որ քեզնէ կախուած չէ, ինչ որ քեզնէ կախուած են՝ են քու մտածումներդ, քու լուծումներդ, քու զգացումներդ, այս կէտերուն մէջ դուն չես կրնար ըլլալ ոչ բռնադատեալ և ոչ արգիլեալ, դուն բացարձակապէս ազատ ես, եթէ ուրեմն անոնց մէջ միայն քու բարօրութեանդ անհրաժեշտ գործքը դնես, բարօրութիւնը քեզնէ չպիտի խուսափի և եթէ խուսափի միայն քու սխալովդ է որ պիտի խուսափի»:

Ներկայիս արդէն իսկ աւելորդ է այս կերպ ճակատագրականութեան մասին խորհիլ, եթէ նոյնիսկ հիներուն պէս մտածենք՝ դարձեալ պէտք կ'ըլլայ ընդունիլ որ կան բաներ որոնք մեզմէ կախում ունին, ուրեմն և անձնիշխանութիւնը գոյութիւն ունի:

Ի՞նչ է նախասահմանութիւնը.— Ըսողներ կան, և ասոնք բազմաթիւ են, որ ամէն բան մարդուն մէջ որոշուած է ընդհանրապէս բնական օրէնքով: Այս աեսակէժը մէջտեղ դրուած է երկու կերպով, զիտական և հոգեբանական:

Գիտական կերպով կ'ըսեն. «Առանց պատճառի արդիւնք չկայ, ամէն բան պատճառ մ'ունի, ուրեմն ոչ մէկ բան ազատ է, ամէնը որոշուած է»:

Ի՞նչ է պատճառը: Երեւոյթ մը որ արդիւնք ըսուած երկրորդ մը նախընթացն է, կամ անհրաժեշտ և բաւարար երեւոյթ մը՝ ուրիշ մը երեւան հանող: Բնական երեւոյթներու յառաջացումին մէջ ոչ մէկ զիպուած կայ, ամէն բան կը հետեի ու կը հետեցնէ և այս պատ-

ճառի և արդիւնքի կապը անհրաժեշտ է: Արդ երբ աշխարհի վրայ մէն բան նսխասահմանուած է, ի՞նչ պէս կ'ուզուի որ անոր վրայ ազատութիւն գտնուի:

Ամէն շարժում, պռանց բացառութեան, կը բղխի մեքենականութիւնէն և իր օրէնքներէն, ուրեմն անոնք կը կատարուին ճշդուած նախասահմանութեան մը համեմատ: Եթէ ոչ միայն մեր Ֆիզիքական շարժումները, այլ նաև մեր ներսը եղող անոնց աղբիւրը՝ նկատի առնենք. ի՞նչ կը գտնենք: Դարձեալ շարժումներ, բայց ներքին շարժումներ, որոնք կը գործադարուին գործարանաւորութիւններսը և մանաւանդ ջիղերու կեղրոնին մէջ: Այս շարժումներն ալ մեքենայիան են և հետևաբար անհրաժեշտ, որոշեալ հաշուուած և լաւ ծանօթ ինչ ինչ պայմաններու մէջ անոնք անկարելի պիտի ըլլային, օրինակի համար առանց սննդաւորումի, որ կենդանական մեքենային վառելիքը կը մատակարարէ, առանց շնչառութեան, վերջապէս առանց բոլոր ընտանացական գործօններուն, որոնք բոլորն ալ բացարձակնախասահմանութեան մը մենաշնորհն են: Իհարկէ ներքէ կ'ըսեն. «Որքան մենք մեզ մօտէն քննենք, այնքան աւելի կը համոզուինք որ մեր բոլոր գործերուն մէջ ամէն ինչ նախասահմանուած է: Մեր գործերը բոլորովին տարբեր պիտի ըլլային, եթէ մեր գործառնութիւնները ուրիշ կերպով մը կատարուէին, եթէ մեր խառնուածքը, եթէ մեր սնունդին որակն ու քանակը փոխուէին»: Արտաքին պատճառներ կը հետապնդեն և ներքին պատճառներ կը հարկադրեն և կը նախասահմանեն մեր գործերը: Արտաքին պատճառներն են կլիման և միջավայրը: Այրեցեալ զօտիի բնակիչ մը չի կրնար հիւսիսային կլիմայի բնակիչի մը նախաձեռնող ոգին և կորովը ունենալ: Ներքին պատճառներն են անհատական խառնուածքը, ժառանգական նախաորամազրութիւնները, առողջական վիճակը, գործարանաւորութէն եկած առաւել կամ պակաս բուռն մղումները:

Ազատութիւնը գինովութեան կամ յիմարութեան մէջ չի՞ կորսուիր: Արդ, յիմարութեան և կարծեցեալ լիմաստութեան մէջ, մաքուր վիճակի և ախտաւոր վիճակի մէջ սահման դնել կարելի չէ: Այս աստիճանաւորեալ գործ է և լման ազատութիւնը. զուտ ազատութիւնը ո՞ր մէկ տեղ կայ:

Ասկէ կը հետեի որ Բասզալի (1623—1662) ըսածին համեմատ, մենք մեքենայ և ինքնաշարժ ենք, ինչ որ բարի կամ չար կ'ըսուի, անոնք են որ նպաստաւոր կամ փնասակար են, ինչ որ հաճելի կամ տհաճ են, բայց այս բառերը պարապ որակումներ են եթէ զանոնք ա՞

ղատ կամքի պատշաճեցնելու հետամտինք, որովհետեւ այս տեսակ կամք գոյութիւնն չունի:

Բնական օրէնքներու համեմատ, կ'ըսեն գիտունները, աշխարհի վրայ ոչ մէկ բան կը կորսուի, ո՛չ մէկ բան կը ստեղծուի, ուժի քանակը անփոփոխ է. միայն անիկա ենթակայ է կերպարանափոխումի եւ կը ստանայ զանազան ձեւաւորումներ, բայց միշտ ասոնք կը կատարուին կատարեալ համարժէքութիւնով, այսինքն թէ պատճառ եղող ուժը հաւասար է արդիւնք եղող ուժին: Ապրող էակներն ալ ենթակայ են այս օրէնքին: Ուրեմն մեր ամէն բոլոր ըրածը ուրիշ բան չէ բայց եթէ դուրսէն ընդունած ներգործութեան ճշգրիտ թարգմանութիւնը. այսպէս մեր առած սնունդին որակը եւ քանակը մեր մարմինին վրայ որոշուած անմիջական արդիւնքներ ունին եւ այդ կերպով կ'ազդեն մեր վարմունքին վրայ: Արդ, այս տեսակ աշխարհի մը վրայ ո՛ւր է աղատութիւնը:

Գիտութիւնը այնքան մեծ կարողութիւն մըն է, որ պէտք է խոնարհիլ անոր առաջ, բայց պէտք չէ միւս կողմէ իբր կուռք պաշտել, քանի որ դեռ անոր շատ մը ծալքերը մեզի անձանօթ են: Գիտուններուն համար գիտութիւնը ստոյգ և ապացուցեալ ծանօթութիւններու ամբողջութիւնն է թէև, բայց մինչև այսօր ալ դեռ ձգտում կայ կարգ մը հարցերու մէջ կարծիքներու վրայ հիմնուիլ և տեսութիւններ ընել:

Գիտապէս ապացուցեալ ուէ բանի առաջ պէտք է խոնարհիլ՝ երբ ան լրիւ է, բայց երբ ան դեռ սկզբնական վիճակի մէջ է և բնութեան գաղտնիքներու բոլոր ծալքերը անոր առջև բացուած չեն կատարելապէս և երբ այս պայմաններու տակ ան կը կանգնի ազատութեան, այսինքն մարդկային բարոյականին դէմ, մեզի կը մնայ տալ զկայսերն կայսեր և Աստուծոյն Աստուծոյ, կ'ընդունինք գիտութիւնը և կ'ընդունինք ազատութիւնը:

Միւս կողմէ, ընդունինք որ առանց պատճառի արդիւնք չկայ, բայց հարց է և պէտք է գիտնալ թէ արդեօք մեր կամքը չի՞ կրնար ըլլալ արդիւնքի մը իրական պատճառ:

Աղատութիւնը, անուրանալի է, սերտօրէն կապուած է շարք մը բնական երեւոյթներու, մարդուն կը մնայ հսկել և փոյթ ունենալ իր գտնուած տեղւոյն և պայմաններուն մէջ հնարաւոր առաւելագոյն չափով պահել իր ազատութիւնը:

Մարդուն մէջ բնազդական հաւատք մը կայ դէպի ազատութիւնը, ամէն ոք ազատութեան կը ցանկայ, ուրեմն կարելի չէ որ ան բնական օրէնքի դէմ ըլլայ:

Այսօր մարդիկ կը շղատանին յազատութիւնը՝ այս տարազով. «Մարդ ազատ է իր գործերուն մէջ, պայմանով որ այս գործերը չվտանգեն ուրիշի ազատութիւնը»: Իրապէս ցանկալի և ծափահարելի սահման, բայց միթէ գործնականին մէջ կարելի՞ է գործադրել զայն իր լայն առումով, կը տարակուսինք:

Ինչ որ ալ ըլլայ սակայն անցելոյն մէջ կամ ներկայիս ազատութեան ըմբռնումը, ոս որոշ է սր մարդս որոշ չափով ազատ է իր գործունէութեան մէջ, բաւական է որ ըմբռնէ, դիտակցի և հնարաւորութիւններ ստեղծէ լայնօրէն օգտուելու իր ազատութենէն: Միանգամ ընդ միշտ ձերբազատուելու է ճակատագրականութեան և նախասահմանումի կաշկանդումներէն: Մարդ պէտք է նախ ինքը իր մէջ ազատ ըլլայ: Հոս տեղին է կրկնել 20 դար առաջ էրիքթէթի խօսքը. «Ամէն բանի մէջ որոշ է ինչ որ քեզնէ կախուած է, քեզնէ կախուած են քու մտածումներդ, քու եզրակացութիւններդ, քու զգացումներդ, ասոնց մէջ դուս բացարձակէս ազատ ես, ո՛չ բռնադատեալ ես և ո՛չ արգիլեալ: 1862 թուականին Մ. Նալպանդեան իր «Յերկր. որպէս ուղիղ ճանապարհ» գրքին մէջ գրած է. «Վա՛յ այն ծառին. վա՛յ այն բուսականին, որին արմատը անընդունակ է իր յատակից ընդունելու և պատրաստելու իր հիւթը, իւրեան թարմութիւն պահող կենսական ոյժը և զօրութիւնը: Վա՛յ այն ծառին և բուսականին, որի յոյսը դրուած է միայն գիշերային և առաւօտեան, բարձրից գալու ցօղի վերայ: Յօղը դեռ հաղիւ հաղ նստում է նորա տերեւների վրայ, հաղիւ հաղ սկսում է զովայցնել նորա ծարաւը, դալարացնել նորա խորշակահար տեսիլը և անա սրեւը ծագեցաւ: Յօղի կաթիլները, հետզհետէ զօրոշանալով ցնդեցան, գնացին, իսկ տերեւքը մնացին այրող ճառագայթների աղբիցութեան ենթակայ: Մարդուն համար վերեւից եկած ազատութիւնը այն ցօղից աւելի չէ, եթէ մարդը, նախ ինքը, իր մէջ ազատ չէ, և երկրորդ, թէ ինքը այնուհետեւ պիտի բռնանայ իր ընկերի վերայ»:

Հայերուս ազատութիւնը ներկայիս սահմանափակուած է, բայց այս պայմաններուն մէջ իսկ դեռ շատ բան կախուած է մեզնէ, ունինք ազատ գործունէութեան ասպարէզ շատ մը մարդերու մէջ: Ազատ ենք զարգացնելու մեր մէջ ազգային զգացումները, ազատ ենք մշակել մեր լեզուն, ազատ ենք ուսումնասիրել մեր պատմութիւնը, ազատ ենք վերջապէս պատրաստուիլ ամէն կերպով օր մը դառնալու համար ազատ հայրենիքի մը ազատ քաղաքացիները: Միայն գիտնանք որ ազատ ըլլալու համար պէտք է ունենանք լայն ծանօթութիւններ եւ կարենանք իշխել մեր յուզումներուն վրայ: Ազատութենէն լայն չափով օգտուելու միջոցը այս է միայն: Մարդ այնքան պելի ազատ է, որքան շատ ծանօթութիւններ ունի և որքան աւելի տէրն է իր յուզումներուն: Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԴՐԱՄՆԵՐԸ, ԱՆՈՆՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ԵՒ ՄԵՆՔ

Դրամը իրր փոխանակութեան միջոց, երեւան եկած է Գրիստոսէ մօտաւարապէս 7 դար առաջ և կարճ ժամանակի մէջ ընդհանրացած է քաղաքակրթուած երկիրներու մէջ՝ շնորհիւ առեւտուրը զիւրացնելու իր յատկութեան:

Իսկ ներկայիս, զանց առնելով անցեալի մէջ կատարած իր դերը, մանրամասնօրէն կ'ուսուցնասիրուի, որովհետև պատմաբանին կը ներկայացնէ անսպառ և ճոխ նիւթ պատմական իրողութիւններու:

Պատմական աղբերէն շոտլմէացիք կրնան հպարտանալ որ աշխարհիս ժառանգ ձգած են ամենակատարեալ և բազմաթիւ դրամական շարք մը, որ կը բաժնուի երկու զլխաւոր բաժիններու՝ հանրապետական և թագաւորական:

Այս շարքը ունի անզուգական հետեւողականութիւն մը, սկսելով Ն. ք. Բ. 450 թուականէն և հասնելով մինչև 476 թուականը Յ. Բ. ի կը ներկայացնէ ինը դարերու պատմութիւն մը գրուած մետաղի վրայ:

Բոլոր պատմական դէմքերը, զիք և զիցուհիք՝ որոնք պաշտամունքի առարկայ եղած են, հոյակապ շէնքեր, արձաններ և պատմական դէպքեր, խօսուէն կերպով նշանակուած են դրամներու վրայ, իսկ ամենակարեօրը և հետաքրքրականը այն է որ՝ դրամներու վրայ քանդակուած թագաւորներու և թագուհիներու կիսանդրիները անոնց իսկական կենդանկարներն են, անշուշտ վարպետ արուեստագէտներու ձեռքի արդիւնքը:

Եւ այսօր, վարժ դրամագէտին ծանօթ են կեսարը, Օգոստոսը, Ներոնը, Կարակալան եւ այլն այնպէս ինչպէս ներկայիս ամէն ոք նկարէն կը ճանչնայ Էրիօն, Սթալինը, Հիթլերը եւ այլն:

Հետեւաբար պատմական պաշարէն զատ, որ կը պահէ իր մէջ, Դրամը արժանի է ուսուցնասիրութիւն և իրրե նմոյշ դասական գեղարուեստին:

Երբ որ կը խօսինք գեղարուեստի մասին, մեր ակնարկը պէտք է ուղղենք դէպի դասական Հելլադան: Դասական Հելլադան և գեղարուեստը անբաժան ամբողջութիւնը մըն են: Հին Յունաստանի ամէն մէկ արտայայտութիւնը շաղխուած է գեղարուեստի և գեղեցկութեան ոգիով:

Յունական դրամը նոյնպէս գեղեցիկ է, իբրև դարուն արտադրութիւնը:

Նշանաւոր քանդակագործ վարպետներ սիրով և ջանքով աշխատած են անոր վրայ:

Ֆիախասի, Բրակսիտելի և նման մեծ վարպետներու ստեղծագործած արձանները, ներկայացուած են դրամներու վրայ, գեղարուեստի շատ մը գլուխ գործոցներ, արձաններ, մեհեաններ, չէնքեր, որոնք այսօր կ'որսուած են գիտութեան համար, որովհետև փլած կամ քանդուած են՝ կը տեսնուին հին դրամներու վրայ:

Այսպէս, դրամը իր վրայ քանդակուած պատկերներով կը ներկայացնէ հին պատմական անցեալը իր բոլոր երևոյթներով:

Հին պատմութեան և գեղարուեստի սիրող մը ըլլալը դժուար է, անհրաժեշտ է գիտնալ պատմութիւնը և սիրել զայն: Իսկ հնութիւններու հաւաքիչ (collectionneur) մը ըլլալը աւելի դժուար է և կարօտ մեծ նիւթական միջոցներու:

Բայց հոս խնդիրը հայկական դրամներու մասին է. հայկական դրամներու հաւաքածոյ մը ընելը կարօտ չէ դրամական զոհողութիւններու:

Որչա՛փ դրամներ կը ծախսուին հնութիւնները այցելելու համար. Աթէ՛նք պէտք է երթալ անձամբ ելլելու Ակրոպոլի բարձունքը, Իտալիա եւ Յգիպոս տեսնելու համար մեծածաւալ պեղումներ, Լուվրը և կամ Բրիտանական թանգարանը՝ ուսումնասիրելու անհամար հաւաքածոները:

Այս քանի մը տողերով կ'ուզեմ բացատրել թէ ինչ նշանակութիւն ունին մեզի համար հայկական հին դրամները և ինչ էական արժէք կը ներկայացնեն:

Անկասկած շատ Հայեր կը սիրեն ուսումնասիրել ազգային պատմութիւնը, բայց դժբախտաբար պարագաները զրկած են հայ բանասէրը իր քաղաքակրթութեան արդիւնքը եղող կոթողները դիտելու, զննելու և ուսումնասիրելու բաղձանքէն:

Մինչև իսկ դարերու աւերիչ փոթորիկներէն կիսափուլ մնացածները, ամենավարագօրէն քանդուեցան, հրկիզուեցան համաշխարհային պատերազմի ընթացքին:

Չէ՞ որ ուղեցին ջնջել քաղաքակիրթ ազգ մը. աւերեցին անոր օճախները, հրոյ ճարակ ըրին ձեռակերտութիւնը. խողխողեցին անոր զաւակները, թուրանականութեան ասպարէզ բանալու համար:

Բայց պատմութիւնը մեծ և անողոք գիտութիւն մըն է: Անոր մէջ զրուածը և ներկայացուածը կը մնայ յաւիտեան, և սպաս կը դրուի մարդկութեան ու եկող սերունդներուն:

Իսկ դրամները, այս մանր նմուշները անցեալի փառքին, խորամանկօրէն պահուած են և կը նիրհեն մայր հողին մէջ բազմաթիւ նահատակներու հետ միասին, բայց իրենք անմահ են, որովհետեւ ըլլայ պատահմամբ, ըլլայ բանասէրին բրիչով՝ լոյս աշխարհ կու գան և կը պատմեն պերճախօսօրէն, հին պատմութիւնները, կը բողոքեն եւ զիմակազերծ կ'ընեն պատմութիւնը խարդախողները:

Ահա դանոնք է որ կը յանձնարարենք մեր նոր սերունդին, բանասէրներուն և ազգասէրներուն:

Անոնք որ կարողութիւն ունին՝ թո՛ղ մէյ մէկ գեղեցիկ հաւաքածոյ կազմեն անոցմէ:

Այդպիսի հաւաքածոյ մը կը զարդարէ հայ տունը աւելի լաւ քան նորածե կարասիները. պարսկական գորգերը և կամ դանազան անպետ նորածեութիւնները:

Դասական քաղաքակրթութիւն ըսելով կը հասկնամ յունական քաղաքակրթութիւնը, ճիշտ է որ Եգիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը, Պարսկաստանը ստեղծեցին իրենց քաղաքակրթութիւնը, բայց յունակսնը գերակշիռ, գերադաս է:

Նոյնը պէտք է ըսել և գեղարուեստի համար, մինչև իսկ յունականը կատարեալ է, աստուածային:

Յոյները ուսուցիչ եղան Հռովմայեցոց և այսօր ալ իսկական գեղարուեստի իբր բեմ և խարխիս կը ծառայէ Յունականը:

Բոլոր դրամները, հին պատմութեան շրջանին վերաբերեալ եւ որոնք որ յունատառ են, կը դասաւորուին իբրև յունական դրամներ: Այս մեծ շարքին մէջ կ'իյնան նաև Պարթեական, Պարսկական, Սուրիական, Եգիպտական (Ptolémée) և ուրիշ դրամներ, բացառութիւն չեն կազմեր նաև այն հայկականները որոնք կը վերաբերին հին պատմութեան:

Եւ իսկապէս բոլոր այս դրամները գիտուած գեղարուեստի ոճով յունական են:

Յունական դրամը գեղեցիկ և մեծ է, իսկ արուեստը սքանչելի: Անշուշտ մեծ նշանակութիւն ունի դրամին աշխատուած վայրը անոր գեղարուեստական արժէքին վրայ:

Կարելի չէ քաղաքակրթութեան կեդրոններէ զատ. հեռացած վայրերէ սպասել մաքուր և գեղեցիկ գործ. Այդ կեդրոնները յայտնի են: Հայկական դրամները բազմաթիւ չեն և չեն կազմեր անխղիլ պատմական եւ ժամանակագրական շարք մը. այս փաստ է: Բայց ա՛յն, ինչ որ ունինք՝ մե՛րն է և իր ուրոյն պատմական արժէքը ունի մեզի համար:

Ահա հայ թագաւորներու ցանկը՝ որոնք դրամ կտրած են իրենց անունով: Կը վերաբերին հին պատմութեան:

1. Արշամ	— Arsames	Ն. Ք. 245 կասկածելի հայկ.
2. Արդիսարէս	— Abdissa ès	» » 210-190?
3. Քսերքսէս	— Xerxes	» » 190-170?
4. Զարեհ	— Zariadrès	» » 190-165
5. Մորփիլիգոս	— Morphilig	» » 150-148?
6. Տիգրան Բ.	— Tigrane le graud	» » 94 - 54
7. Արտաւազդ Գ.	— Ardavazd III	» » 54 - 34
8. Տիգրան Գ.	— Tigrane III	» » 20 - 12
9. Տիգրան Դ. և Երատոյ	Tigrane IV et Erato	» » 12 - 5 և 2-1 Յ. Ք.
10. Արտաւազդ Դ.	— Artavazd IV	» » 5 - 2
11. Արտաւազդ Ե.	— Artavazd V	2- 11 Յ. Ք.

Այս դրամներու վրայ ա՛հենաէականն և յատկանշականն է, թագաւորներու կրած հայկական խոյրը, արքայական ապարօշով:

Այդ խոյրը ամենագեղեցկօրէն քանդակուած է Տիգրան մեծի եւ Արտաւազդի դրամներուն վրայ: Ժանիքաւոր, երկու արծիւներով որոնց մէջտեղը՝ աստղ մը:

Եթէ կ'ուզէք տեսնել 2000 տարիներու հեռաւորութենէն Հայոց արքային փառաւոր տեսքը, գիտեցէք Տիգրանի դրամը, պիտի տեսնէք զինքը իր անզուգական վսեմութեամբ:

Հայկական դրամներու մէջ, իրենց արուեստով և ծանրութիւնով առաջնակարգ տեղ կը գրաւեն Տիգրան մեծի դրամները (tétradrachme) 12 կրամէն սկսեալ մինչև 17 կրամ:

Վերը յիշուած հայ թագաւորներէն ոչ մէկը կտրած է ոսկի դրամներ: Նոյնպէս Տիգրան մեծն ալ կտրած չէ ոսկիներ: Եթէ գոյութիւն ունենային անշուշտ մինչև մեր օրերը գոնէ նմոյշ մը գտնուած կ'ըլլար:

Միթէ ոսկի դրամներու բացակայութիւնը իրաւունք չի՞ տար մեզի կասկածելու Տիգրան մեծի նիւթական կարողութեան վրայ: Միթէ Հռովմի այդ խիզախ հակառակօրդը, ստիպուած էր վարձատրել իր ան-

համար և զանազան ցեղերէ կազմուած բանակները, միմիայն արծաթովի չգոյութեան ոսկի զրամներու:

Իսկ զրացի պետութիւնները, այդ ժամանակէն, ունին ոսկի զրամներ, օրինակ.

Սուրիա — Անտիոքոս VIII 123-97 Ն. Ք.

Պոնտոս — Միհրդատ VI 125-62 Ն. Ք.

Բայց պէտք է աւելցնել որ Պարթևաստանի և Կապադովկիոյ թագաւորներն ալ ոսկի զրամներ չեն կորած:

Այս հայկական զրամները բացարձակապէս յունաառն են, երկրորդ կողմերը կան արծիւ, ձիազուլիս, դիցուհիներ. օրինակ՝ Յաղթանակը, Ասաղիկը եւայլն: Տիգրան Մեծի զրամին վրայ կը տեսնուի Անտիոքի բախտը, իբր նշան Անտիոքը նուաճած ըլլալուն:

Իսկ Արտաւազդի (Գ) զրամին վրայ Յաղթանակը վարէ քառաձի կառք մը:

Նոյնպէս հետեւեալ թագաւորներուն զրամներուն վրայ կը տեսնուին Յաղթանակը, կամ ձի, զինուոր եւայլն:

Ընդհանրապէս զրամներու երկրորդ կողմերը զետեղուած են կամ դիցարանական խորհրդանիշերը եւ կամ ալ պատերազմական կեանքի մէջ նշանակուած իւր ունեցող ստորոգելիներ:

Անցեալին մէջ նշանաւոր եղած է Հայոց և Պարթևաց այրուծին, միշտ սարսափի եւ պարտութեան մատնելով Հռովմէական լէգէոնները, այս պատճառաւ՝ ձին տեղ կը գրաւէ հայկական զրամներով չի փակ-

վերոյիշեալ 10—11 տեսակ զուտ հայկական զրամներով չի փակուիր այս ժամանակաշրջանը, կան եւ Հռովմէականներ, որոնք խիստ կապ մը ունին մեր պատմութեան հետ:

Պիտի յիշենք հետեւեալ Հռովմէացի զօրավարները եւ թագաւորները, որոնք զանազան առիթներով, իրենց կորած զրամներու վրայ, պատմական զէպքերու բերմամբ, յիշած են Հայաստանը:

1. Մարկոս Անտոնիոս — Marc Antoine Ն. Ք. 43-30
2. Օգտաւիանոս (Octave) եւ L. Anghuillius Florus 27-14
3. Գերմանիկոս — Germanicus 17—19 Յ. Ք.
4. Ներոն — Neron 54—68
5. Տրայիանոս — Trajan 98—118
6. Անտոնինոս Պիոս — Antonin le Pieux 138—161
7. Ղուկիոս Վերոս — Lucius Verus 138—169
8. Մարկոս Աւրելիոս — Marc Aurele 161—180
9. Կոմոդոս — Commodus 180—192

Այս Հռովմէացի զօրավարներու և թագաւորներու կտրած դրամներու վրայ կը տեսնուին հայկական թագաւորներ, զինուոր, Հայաստանը (մարդակերպ), հայ թագաւորներու ժանիքաւոր թագը եւայլն:



Marc Aurele

Միշտ անբաժան Armenia վերտառութեամբ: Այս դրամներէն ոմանք կը յիշեցնեն մեզի փսփոքի և ոմանք ալ պարտութեան օրեր:

Այս բոլորը, հայկականները և հռովմէականները, դասաւորուած ժամանագրական շարքով կը կազմեն Հայոց հին պատմութեան պատկանելի էջերը, գրուած մետաղի վրայ:

Իսկ ասոնց մանրամասն նկարագրականը ընել կը նշանակէ հայկական դրամներու պատմութիւնը գրել, բան մը որ դուրս է մեր նպատակէն:

Կ'ուզեմ հոս շեշտել թէ դրամագիտութիւնը անսկնկայներու գիտութիւնը մըն է, թէ և այս վերի երկու ցանկերով գոյցեցինք հայկական և Հայոց հին պատմութեան հետ կապ ունեցող դրամներու շարքը, բայց միշտ կարելի է սպասել որ պեղումներու ընթացքին և կամ ուրիշ պարագաներու բերմամբ գտնուին նոր դրամներ, յուշագրամներ և կամ շքադրամներ, որոնք ժամանակին իսկ շատփոքրաքանակ տպուած ըլլալուն կամ յաւիտեան կորած են մեզի համար և կամ գտնուելիք նմուշները նոր լոյս պիտի սփռեն մեր պատմական անցեալի վրայ:

433 թուին Հայաստան կորսնցուց կատարելապէս իր քաղաքական անկախութիւնը, իսկ դրամ կարելու իրաւունքը հայ թագաւորները կորսնցուցին աւելի կանուխ, այս կ'երևայ վերի ցանկերէն:

Հին դարերու մէջ դրամ կարելը կը նշանակէր քաղաքական անկախութիւն, իսկ դրամի բացակայութիւնը՝ ստորադասութիւն եւ կամ աւելի վաճը՝ գերութիւն:

Բագրատունեաց թագաւորութենէն (885—1045) չունինք դրամներ: Այս պատմական շրջանը որչափ որ ալ սիրելի է մեզի իր ասպետական երեւոյթներով, հարուստ գեղարուեստական կոթողներով, մանաւանդ ճարտարապետական մարզին մէջ, չունի դրամներ, հետեալաբար Բագրատունի թագաւորները չեն վայելած բացարձակ անկախութիւն:

Չունինք դրամներ նաև Վասպուրականի, Կարնոյ, Սերաստիոյ, Գուգարաց, Սիւնեաց եւայլն փոքրիկ թագաւորութիւններէն:

Այսպէս կը գոցուի այս շրջանն ար:

Բայց ինչպէս որ դարերը կը սահին այնպէս գեղարուեստն ալ կը փոխուի:

Միջին դարերու ընթացքին վերջնականապէս կը մեռնի յունական գեղարուեստը, այդ պարզ բայց կատարեալ գեղարուեստը:

Ժողովուրդները միշտ նոր ուղիներ կը փնտռեն կեանքի բարօրութեան և ազատութեան համար: Կու գան դարագլուխներ երբ կուտակուած անարդարութիւններու բուրգը պէտք է փլի: Գոռացող պահանջներու խուլ թնդիւնները կը ցնցեն հիմնովին աշխարհը:

Հին ժողովուրդներու հաւատքը խախտեցաւ Հելլենական և Հռովմէական իրաւանց, բարոյականի և գեղեցկութեան վրայ:

Յայտնուեցաւ նաև Քրիստոսի վարդապետութիւնը. առաքեալներ սկսան քարոզել նոր բարոյական, նոր փոխյարաբերութիւններ մարդկանց մէջ:

Հելլենական-Հռովմէական գեղարուեստը՝ իրրև արտայայտութիւն հին աշխարհին՝ պէտք էր մեռնէր:

Քրիստոնեայ հայրերը պաշտամունքի նիւթ ըրին հոգին, իսկ մարմինը պէտք էր անտեսել: Մարմինը, որ փորձութիւններով և ցանկութիւններով լեցուն է, սասանային կը պատկանէր:

Իսկ մարմարինէ գեղեցիկ Աստուածներուն մահավճիռը դրուած էր... անոնք կուռքեր էին, ուրիշ ոչինչ:

Եւ սկսան մուրճերը անխնայօրէն կտրել... ստեղծագործութեան մեծ կոթողներ փճացան, կորան: Անհետացան նաև մեծ վարպետները: Ստեղծեցին և կերտեցին միայն ճարտարապետները. ճարտարապետութիւնը չկորսնցուց իր թափը, բայց փոխեց իր ձևը: Մարդկութիւնը պէտք ունէր հոյակապ աղօթատուներու, եկեղեցիներու:

Արէն ինչ որ կապ ունէր մարդկային գեղեցկութեան հետ՝ ջնջուեցաւ իրրև ասպականող:

Արևելքի ազդեցութիւնը վանեց արևմտեանը: Միջին դարերու գեղարուեստը իր էութեամբ խորհրդապաշտ է, ճիշտ հակոստնեայ հին

դարերու իրապաշտ-րնապաշտ գեղարուեստէն, և կը կոչուի ընդհանրապէս՝ Բիւզանդական:

Կեանք առին խոժոռ և մռայլ եկեղեցական պատկերներ, այդ պատկերներու սոսկալի ակնարկը ճնշեց մարդկային ոգին:

Գեղեցկուլթիւնը անյայտացաւ և երևան եկաւ փարթամուլթիւնը, ճոխուլթիւնը:

Նոր վարպետները տպաւորիչ գործ մը ստեղծելու համար իրենց շինածը սկսան զարդարել ոսկիով և անգին քարերով:

Եկեղեցական պատկերները սկսան բեռնաւորուիլ ոսկիով և գուհարեղէններով, նոյնպէս հագուստները և կարասիները, բայց գեղեցկուլթիւն չստեղծուեցաւ, այլ անհամ և անկենդան ճոխուլթիւն մը միայն:

Դրամը, նոյնպէս կը նմանի դարու գործերուն: Գեղեցիկ քանդակազարդ դրամները անհետացան և երեւան եկան տափակ և տգեղ արծաթի և ոսկիի կտորներ:

Թագաւորին կիսանդրին այլևս դիմանկար մը չէ այլ չոր ուրուագիծ մը: Աչքերը, բերանը, քիթը եւայլն գիծեր և կէտեր են: Անկումի կատարեալ արտայայտուլթիւն:

Այսպէս է Բիւզանդական դրամը: Այսպէս նաեւ այդ դարու հայկական դրամը:

Անա և ցանկը Ռուբինեան դրամներու:

1. Թորոս Ա. (1099—1129 կամ Թորոս Բ. (1145—1169) իշխան
2. Լեւոն Բ. (1187—1169)
3. Լեւոն Ա. — Leon I 1196—1219 Թագաւոր
4. Զապէլ և Հեթում Ա. Zabel et Hetoum I 1219—1270
5. Լեւոն Բ. — Leon II 1270—1289
6. Հեթում Բ. — Hétoum II 1289—1305
7. Սմբատ — Smbat 1296—1298
8. Կոստանդին Ա. — Constantin I 1298—1299
9. Լեւոն Գ. — Leon III 1301—1307
10. Օչին — Ochir 1308—1320
11. Լեւոն Դ. — Leon IV 1320—1342
12. Կի կամ Կոստանդին Բ. Guy ou Constantin II 1342—1344
13. Կոստանդին Գ. — Constantin III 1344—1363
14. Կոստանդին Դ. — Constantin IV 1365—1373
15. Լեւոն Ե. — Leon V 1374—1375

Աւելորդ կը նկատեմ աւելի բան մը ըսելու Ռուբինեան դրամներու գեղարուեստի մասին, քանի որ խօսեցայ Բիւզանդական գե-

դարուեստի էութեան վրայ միայն հոս կը զնեմ Տիգրան մեծի եւ
Լեւոն Ա.ի դրամներու պատկերները, որ ընթերցողը գաղափար մը




ՄԵՆՆ ՏԻԳՐԱՆ (Ն. Ք. 94—54)

կազմէ երկու զանազան արմատապէս իրարու հակոտնեայ արուեստ-
ներու վրայ:

Ռուբինեաց դրամներու վրայ կարդացուող տիտղոսներն ալ բա-
ւական հետաքրքրական են:

Հին հայկական դրամներու վրայ կը կարդացուին.

«Թագաւոր», «Թագաւորաց Թագաւոր», «արքայի մեծի (Արտա-



Լ Ե Ի Ո Ն Ա. (1196—1219)

ւաղղայ)», «արքայի մեծի (Տիգրանայ) յունասերի» եւ կամ «Արքայի
մեծի Տիգրանայ Աստուծոյ»:

Իսկ Ռուբինեան դրամներու վրայ, այլևս հայատառ «Թագաւոր
Հայոց», «Ստոյ բերդին է Թագաւոր», «Թագաւոր Ամենայն Հայոց»,
«կարողութիւն Աստուծոյ է Թագաւոր», ու «կարողութիւնն Աստու-
ծոյ է», «չինեալ ի քաղաքն ի Սիս» եւայլն:

Հոս Թագաւորը խորհրդանիշ է ազգայնականութեան եւ ինքնու-

որչման, որովհետեւ թագաւորը «Հայոց թագաւոր» է, իսկ այդ «հայոց» կը պակսի հին դրամներու վրայ:

Նոյնպէս օտար աղբաց հին դրամներու վրայ երբեք նշանակուած չէ թագաւորին աղբուծիւնը:

Դրամներու երկրորդ կողմը կ'երեւայ գրեթէ միշտ, հայկական խաչակիր առիւծը: Սաչը պահպանիչ է, իսկ առիւծը՝ խորհրդանշիչ քաջութեան: Կայ նաև Սոսյ ամրակուռ բերդը...

Լեւոն Ա., Հեթում Ա., Լեւոն Բ. և Կոստանդին Ա. ունէին նաև սակի դրամներ:

Այսպէս շատ մը խորհրդածութիւններու կրնայ տեղի տալ դրամներու ուսումնասիրութիւնը և որովհետեւ դրամագիտութիւնը սերտօրէն կապուած է պատմութեան հետ, կը ստիպէ մեզի պրպատմներ ընել որոնք ընթացքին անդգայսրար կ'իւրացնենք թէ հայկական և թէ ընդհանուր աղբաց պատմութիւնը:

Ի՞նչ կը նշանակէ պատմագէտ մը ըլլալ: Սեւեռէ ակնարկը դէպի ետ, շատ հեռունքը դէպի 2500 տարիներ առաջ, ժամանակի խաւարը պիտի սկսի ցրուիլ և պիտի տեսնես որ Փռլուզիայի դաշտերէն, Պոնտոսի լեռնաշղթաներէն դէպի Արաքսի հովիտը կը շարժին, զինուած կարավաններ, այդ մարդիկը սեահեր են, հուժկու և զեղեցիկ, անոնք քեզի կը նմանին...:

Պիտի տեսնես Անիի, Բագայառինչի, Բագարանի, Արմաւիրի եւ Աշտիշատի հրաշակերտ մեհեանները, որոնց բազիններու վրայ անշէջ հուր մը կը վառի և այդ հուրը քու հոգիդ պիտի տաքցնէ...:

Պիտի տեսնես զրահապատ ըանակներ որոնք հեղեղի պէս դուրս կը թափին հայկական բարձրամարտական զինուորական փողերու դուշեղատրուէն տակ... այդ մարտիկներու որոտումը պիտի ամրապնդէ սիրտդ եւ մկաններդ...:

Պիտի տեսնես փայլուն մայրաքաղաքներ, Արմաւիր, Տիգրանակերտը. Անին գեղեցիկ պալատներով և հրաշակերտ եկեղեցիներով, ըիւրաւոր վանքեր եւ բարձրարեւոյճ բերդեր ամպերուն խառնուած... քու պապերուդ սրբազան իրաւունքները խորհրդանշող...:

Պիտի տեսնես... աւաղ... մարած օձախներ, կիսափուլ տաճարներ՝ ամայի բերդեր, խօսքան դաշտեր եւ դանկերու բուրդեր... որոնք քու մէջ սրբազան վրէժի կրակը պիտի բոցավառեն:

Պիտի տեսնես նաև սրբազան Արարտար, որուն կրանիթէ կողբրուն և աղամանդէ կատարին վրայ միշտ բեկուած են ամենի կայծակները և ինք մորթիկներու մէջէն անսասան Հայուն և քու աննկուէն կամքդ կը խորհրդանշէ...:

Ո՛վ սրբազան պատմութիւն իմ պաշտելի պապերուս...:

այս վիճակէն, անմիջապէս կը մեկնի Հնչկաստան բուժուելու համար՝ Կիսառողջ կը վերադառնայ Պաղտատ, ուր կը շարունակէ աշխատիլ իր բժշկական մարդին մէջ, ձեռնակառքի մը մէջ՝ հիւանդներու այցելութեան կ'երթայ և այդպէս կը կատարէ բուժումներ:

Կ'արժէ հոս յիշել այն պարագան՝ երբ Հրեաները կը տեսնեն, զինքը այդ ցաւալի վիճակին մէջ, կաղաղակեն բարձրաձայն և կ'ըսեն. — «ո՛վ դուն մեր հայր՝ հրաշագործ բժիշկդ Մուրատեան, մենք զուրպան ըլլայինք քու տեղդ, որովհետեւ դուն բնաւ արժանի չես այդ կարգի հիւանդութեան»:

Այս խօսքերը արդէն կը լաւեն փաստելու անոր հանդէպ ունեցած իրենց ջերմ համակրանքն ու գնահատանքը:

Կ'ըսուի թէ Տոքթ. Մուրատեան ընդ Պոլսեցի էր, և իր բժշկութիւնը Բարիդի մէջ ուսած էր, մօտաւորապէս 1878 թուին, և իր բաժնին մէջ լաւագոյնը հանդիսացած ըլլալով՝ շահած էր բժշկական կաճառին գովեստն ու համակրանքը:

Վերջապէս մէկ խօսքով, Տոքթ. Մուրատեան իրաքահայ Լոկմանն էր:

Պէտք է շեշտել միեւնոյն ատեն որ անհիկա հաւատացեալ քրիստոնեայ մըն էր, և կ'ըսուի նոյնիսկ թէ կուրծքին վրայ խաչ կը կրէր:

Ամուսնացած ըլլալով Պոլիս՝ ունէր միակ որդի մը՝ որուն բժշկական կրթութեանը համար, իր լաւագոյնը չէր խնայեր, բայց աւագ իր վաղահաս մահը պատճառ դարձաւ որդւոյն կրթութեան զըրկանքին:

Տոքթ. Մուրատեան վախճանեցաւ 1899ին, և մարմինը ամփոփուեցաւ Սբ. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ ի Պաղտատ:

Յարգանք և հանգիստ այս մեծ վարպետին անիւններուն:

Վ.Ս.Բ.Ս.Ն ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ե Ր Ն Ի Շ Ե Ր

Ներքին կեանքը փոթորիկի մէջ է. խաղաղութեան կեղծիքը պակտորդ է: Անգործութեան կը մատնենք ինքզինքնին. ու այդ ասպետական չէ: Սուգի ատեն հանդէսներ կը սարքենք, այդ ալ սրտի կերթութիւն չէ: Մատաղը այս անգամ էջմիածնի սեմին վրայ մորթութեցաւ. դիմակաթափ եղաւ ճիւղաղը. և դարձեալ ոմանց դատողութիւնը կը մատնէ ուղղամտութեան անհաւասարակչութիւն: Կեղծ ազգասիրութիւնը այսքան կարելի՞ էր շահագործել: Արժանապատուութիւնը կը կորսնցնէ իր բարձրութիւնը՝ ստորնացումէ անարեկող չկայ:

* * *

Ի դուր թնթանօթի բերանը ձիթենիով կը պսակեն: Լենինի գրակալին վրայ Աւետարան չի կենար: Բրիտանոնայ վարիչներ կը խայտան՝ անոնց ի՞նչ փոյթ որ հին ազգեր՝ կը մոխրանան Մուհամմէտի արեւին տակ: Գութ չկայ զիւանագէտ սրտին մէջ, ան կը ծիծաղի երբ կ'ըսեն թէ Նեկուսի կրակարանին մէջ փշուր մը անուխ չէ մնացեր: Ան նոյնպէս ծիծաղեցաւ երբ տեսաւ որ իր աչքին առջեւ մէկուկէս միլիոն Հայեր ջրամոյն եղան Եփրատի ալիքներուն մէջ:

* * *

Կոյր ըսողը նուշ աչքեր ունենար... Այսպէս կ'ըսէ արապը: Աջակողմեան մամուլը, մաղերը կը քաշէ, կը զայրանայ կը զարմանայ որ, պատերազմի պարէններ աւելի առատօրէն կը կրուին Սովիէթ սահմաններէն Սպանիոյ, ու կը ստեն թէ ուտեստ կը փոխադրեն: Անտարակոյս հակասովիէթ բանակները նման խախբութիւններ չեն գործեր... Կոյր ըսողը նուշ աչքեր ունենար:

* * *

Յորժամ տկարանամ յայնժամ զօրանամ: Ս. Գրքի այս խօսքը պարծանքով կը կրկնէ Վատիկանը: Ո՛չ մէկ հզօր պետութիւն համարձակեցաւ. «ալթ» ըսել չիթլէրի արշաւանքին, բայց եթէ, պետութեանց

մէջ ամէնէն տկարագոյնը՝ և ան սուր չունէր. «սուր աննողը սուրով կը մեռնի» ըսած էր մեր փրկիչը: Ան սուր չունէր, բայց իր խօսքը աւելի հզօր էր քան երկասյրի սուրը: Ան Վատիկանի թանգարաններուն բանալիները առաւ, դռները գոցեց Հիթլերի երեսին և քաշուեցաւ Գասթէլ-Կանտոլֆոյի դղեակին բարձունքը: «Կեռ» խաչին, ցոյց տուաւ «Ուղիղ» խաչը: Այ՛ն պարոն Հիթլեր, Վատիկանը որքան շատ տկարանայ, այնչափ աւելի կ'ուժոյնայ:

*
*
*

Դարձեալ կը խլրթի գաղանը. ակռաները կը սրէ. կը սրէ. գառնուկներ մորթել կ'ուզէ: Ու Եւրոպան անոր կ'ըսէ—Հայուն արիւնը քեզի թող դարձեալ հալալ լինի...

Ա՛խ, կը գոչէ գաղանը. չորս կողմ կը դառնամ քեզ կը փնտռեմ. հա՛յ, եթէ դուն չըլլաս... արիւնի ծարաւ լեզուս ես ի՞նչպէս յագեցնեմ:

*
*
*

Կարդացե՞ր էք Ղազար Փարպեցին, Արարաահան դաշտի ծաղիկները ինչո՞ւ աշխարհի բոլոր ծաղիկներուն մէջ գեղեցիկներէն ամէնէն գեղեցիկներն են: Թէ Փարպեցին Ղազար չի գիտեր, ես գիտեմ որ, հո՛ն, ուր հայ կոյսեր մորթուեր են, ու հոն անոնց բոսոր արիւնն է հոսեր. անոնց ամէն մէկ շիթ շիթ արիւնէն ծիլ ծիլ սիրուն ծաղիկներ են բուսեր:

*
*
*

Ամէն անգամ որ կը լսեմ «Քաջն Վարդան» երգը, ես կը յիշեմ Սիպիլի հայերէնի վարժապետ Ֆէլէկեանը: Արփիաը Արփիարեան չեմ գիտեր զայն ինչո՞ւ քննադատի խաչէն կը կտխէր:

Խեղճ Ֆէլէկեան բախտաւոր էր որ այս օրերուս մէջ չէր երգած: Ես պիտի չի մոռնամ հայ լեզուի մեր այդ սիրուն խաչակիրը, ան ձախէն ու աջէն չար աւազակներ ունեցաւ, և ասոնք իր աշակերտներն էին:

Ճորոտ հրեայ աննաման հոգերանը. լուծած էր հողեկան կարգ մը անլուծանելի գաղանիքներ, բայց չէր կրցած գիտնալ թէ ինչո՞ւ շատ սիրուած աշակերտներ մահացու կը խոցեն իրենց վարժապետը:

*
*
*

Սահմանադրութիւնը կաշկանդուած լեզուներու կապանքները արձակած էր: Մեծահուն Դաւիթ Դաւթեանը քսանըհինգ տարի պռաջ կու գար ուրախութիւն բուրոզ կը ջանկուութեամբ ինձ կ'աւետէր որ «Հայուն հոգին» բառերով արտասանած ու կըրգած էր, տեսիլքի պէս զեղանի օրիորդ մը, ձերուհի Պետրոս Վասիլեանի տունը: Դըսանը հինգ տարիներ անցեր են, այդ երգը «Ալիեանս Ֆրանսէզի» սայօնի մէջ համադգային խուռն բաղմականներէն կը խլէր շնթալից ծափահարութիւն. ու կան մտաւորականներ որ նոյն օրերուն տպաւորութիւնը սրտի թելով իրենց սրտին կապած են: Ինծի յիշեցուց այդ յուշիկը «Մուրատեան Ռափայելեան» Միութեան «Տեղեկատու» . ոչ մէկ բան էր գրեր այդ երգի կամ երգիչի մասին, միայն կանթեղներ վառած էր Վասիլեանի դագաղին շուրջը: Համեստ մեծերէն էր Մ. Ռ. վարժարանի այդ վեթերան սանը. որ իր մտերմիկ խօսակցութեան պահերուն ինծի երբեք ըսած էր թէ իր բոլոր կեանքը լծուած էր ցեղային դաստիարակութեան: Համեստ մանիշակը իր տերեւին տակ կը ծածկէ իր նաչխուռն հրապոյրը, բայց իր բոյրն անոյշ կը մատնէ իր մեծաքանչ ցնծութիւնը: Այսպէս էր նաև Վասիլեանը, ան իր երկտասարդ հասակի առաջին ժամէն մինչև ձերուհնազարդ վերջին արեւմուտքն ապրեցաւ իրել խաչակիր զինուոր և մտքի առաքեալ քարոզեց յոյս և յոյս բընաչխարհի գաւառներու մէջ, մինչև Վան՝ իրել հիմնադիր «Արարատեան կրթական Միութեան». խրախուսող և արծարծող «Աղքատախնամ Տիկնանց» մայրերու բոյներ պատրաստող ընկերութեան: Յիշատակարան մը եղաւ ան, անգիր յիշատակարան, բայց պատմութիւնը մարդուն ապերախն է, կը յիշէ ու կը նիշէ որ Ան եղաւ առաջին խըմբագրողը Մկրտիչ Պէշիկթաշեանի «Տաղերու», Ան եղաւ հայ գաւառբարոզը Մկրտիչ Պէշիկթաշեանի հիմնողը, և ան երբեմն պարզ որմնադրիներու մէջ կրթարաններ հիմնողը, և ան երբեմն պարզ որմնադրիներու «մանչուկ», ուսերուն վրայ աղիւս ու ու շաղախ բարձած՝ վարժարաններու որմերը բարձրացնող վարպետներու օգնութեան կը հասնէր: Սիրելի Վասիլեան դուն պիտի հրճուիս Շիշլիի երկու թիղ հողին տակ: Եթէ լսես քու սիրած Մ. Ռ. վարժարանի մէջէն քեզ հետեւողներ ունենաս: Երանի քեզ որ դուն հասկցար թէ «Տալու չափ մեծ երջանկութիւն չկայ» և տուիր Ազգին ինչ որ ունէր քո մտքէն ու քո սրտէն:

ԱՏՐՈՒՇԱՆ

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Ի Ն . . .

Հին փառքերու գեղեցկութիւնը ուսիս,
 Այսօր նորէն կը դեգերիմ, նման յոյսի մ'երջանիկ . . .
 Կը բռնկին բոլոր ջահերն երկնքիս . . .
 Լի՛ են. յի են սրահներս ծաղիկներու երգերով,
 Ու աղբիւրներս, դարձեալ,
 Կը ցայտեն կոյս եւ պսպղուն բիւրեղներ
 Աղջիկներու արձաք եւ ջինջ գուռերուն . . .

Ու վերստին կը հանդիպիմ ես ինձի
 Սուրերներուն սակ վեհափառ մեղէրու.
 Ուր չունէի սեւ սառապանքն ըլլալու,
 Ուր գարուններս կ'ընէին ասպետական տողանցքներ
 Պարտեզներու սարափին սակ ծափերուն . . .
 Ուր նորընծայ սեւերու երջանկութիւնն անգիտակ
 Կը մեղանչէր բոցավառ . . .

Երբեմն, ո՛հ — ի՛նչ օրեր — կը պաշտէի ծնրադիր,
 Կը սիրէի մերք վեհօրէն, հայրաբար,
 Մերք ջերմօրէն, անողո՛ւ՛ք, սակայն երբե՛ք վասօրէն . . .
 Ասուածայի՛նքէ Անցեալն . . .

*
*
*

Արդ լուրքեան մ'ահաւոր, ու մեհուրիւն մ'անյասակ . . .
 Ողջո՛յն ո՛վ մահ. ո՛վ խորհուրդ,
 Ո՛վ պորտաբոյծ յաղբանակ, ո՛վ անժառանգ պարտութիւն,
 Ո՛վ, ո՛վ եք դուք որ մեր կեանքին կը ծեփէք
 Գեհեհեհական մո՛ւրք բիրտ:
 — Անդնդախո՛ր Գաղսնիք, Օրէնք հրատ՛ն.
 Բայց կը կրկնեմ յանուն կիրքին, երազին՝
 Գարնանային անկումներս են աւելի՛ գեղեցիկ
 Քան ցաւասանջ աւնանային վերելքներս.
 Որովհետեւ, անկումին մեջ ես հպարտ եմ ու հերոս,
 Յաղբանակին մեջ՝ հիւլէ . . .

*
*
*

Ու փառք քեզի եւ օրհնութիւն, ո՛վ Արեւ,
 ես կը պաշտեմ գրութեանդ եւ բոցերուդ ծայիւներն,
 Օրհնէ՛, օրհնէ կողերուս եղերական ցնցումներն
 Ու շոյէ սար, զեփիւռի մը մայրութեամբ:
 Բիւսութիւնն ու պաղասանքն հոկտեմբերեան գիծերուս ...
 Չեւերս անա կը գալարուին ոյժիդ սակ,
 Ու կը խայտա՛ն երջանիկ, ու կը խայտա՛ն srsdorէն.
 Համբոյրներուդ անհունին մէջ ոսկեբոյր...
 Ու խորհուրդի մը անկումին նման վեհ,
 Թող մերկութիւնս նորէ՛ն նետուի, ո՛վ արեւ,
 Լսյսերդ հօգօ կիրքերուն...

* * *

Ո՛վ գարուններ, գարուններ,
 Ի՛մ գարուններս, իմ գեղաբիբ որդեակներս,
 Ահա դարձեալ կը գրկեմ ձեր հողակոյսն անբառամ
 Ու շքուններս կ'երկարեմ ձեր միամիտ խաչերուն . . .

ՀՕՐԻՕՆ

Կ Ա Ր Ե Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն . . .

Օր մը գուցէ ինձ համար, պիտի ըսեն քե եղայ
 Տբրտում սրղայ մը միայն, ես ինձի հե՛ս, առանձին.
 Թե՛ իմ երգերս ինքնեկ, կրեցիին շեշք ցաւին,
 Ու սքիւրաշուք եւ քալածոս, լոկ՝ մահերգակ մը եղայ:

Պիտի ըսե՛ն սակաւին, քե՛ ես եղայ շա՛հ մըքին...
 Ու չի կըրցայ ըմբռնել. կեանքին խորհուրդը շքեղ,
 Գոց աչքերով քալեցի, նամբաներէ լուսայեղ,
 Խարխալեղով հոս ու հոն, ուղեկորոյս ու լըռին:

Պիտի ըսե՛ն, եւ կարծես, արդէն այժմէն կը լրսեմ,
 Մարդոց հեզնանքը անմիտ, կեանքիս համար ու գործիս,
 Ու ոմա՛նց ալ, անգիտա՛կ արհամարհանքն երեսիս:

Ա՛յս բոլորին համար ես, գայրոյք չունիմ մարդոց դէմ.
 Կարեկցութիւն մը միայն, եղբայրական եւ անհուն,
 Զոր կ'ուզեի շնորհել անկեղծօրէն ամենուն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

1938 Ա.թ.հ.հ.

ԷՋ ՄԸ ՅՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԵՆԷՆ

Սկիզբը ամէն ինչ քառս է, մութ ու անորոշ, կոշտ ու կոպիտ՝ նոյն այդ տարտամ թոհուրոհէն, խառնաշփոթ քառսէն կը ծնին Ուռա (Երկինք) և քոյրը Էսդա (Երկիր), որոնց կենսակցութենէն կը սերին Տիտաններ (հսկաներ) և Կիկլոպներ (միականիններ): Ասոնք նիւթական ըմբռնելի բաներ չեն երբեք, այլ արտայայտիչը՝ ոյժի հսկայ և զօրաւոր գաղափարին:

Կիկլոպները կը գործեն երկրին խորը, օրինակի համար հրարուելի մը կամ անկէ առաջ եկած քարայրի մը մէջ, յորս կը խառնեն տարբերը, կ'աւրչտկեն ամէն բան ու ծուխ և լաւա դուրս կը պոսթկան:

Բիւրաւոր Տիտաններէն է Կոռնոս (ժամանակ) որ խորախոր հորդ և հեռատես միտք ունի: Փափաքելով թաղաւորութիւնը ձեռք անցընել կը սիրաշահի Տիտաններէն մաս մը ու մարտնչելով հօրը դէմ կը յաղթանակէ և զայն գահազուրկ հռչակելով կը հաստատէ իր աստուածային՝ ոսկեղէն աթոռը:

Կոռնոս կը ցանկայ իր տիրապետութիւնը յաւերժացընել, ու որ պէսզի իր զաւակներն մի օր չխլեն գահը ձեռքէն՝ կը կլլէ զանոնք ծնածնուն պէս: Ասկէ ելած է «ժամանակը ամէն ինչ կ'ուտէ» ժողովըրդային աստութիւնը:

Եւ որովհետեւ ճիշտ այս զարհուրելի մտածումով կուլ տուած էր արդէն Կոռնոս իր անդրանիկ աղջիկը՝ Վեստան, ինչպէս և Դեմետրը, Հերան, Պղուտոնն ու Պիսիգոնը այդ իսկ պատճառաւ կինը՝ խնայելու համար ստոյգ մահէն իր նոր ծնելիք մէկ զաւակը, կը քաշուի ամայի վայր մը, ուր ծնունդ տալով Զէսի = Արամազդ, կը յանձնէ զայն՝ Ամալթէա այժին խնամոցը, ապա դառնալով Կոռնոսի՝ իբրև իր նորածին զաւակը քար մը կը ներկայացնէ անոր, որ ըստ սովորութեան կը կլլէ զայն ևս:

Զէս = Արամազդ՝ իր չափահասութեանը ցանկալով եղբայրնել սեննալ, իր հօրը՝ Կոռնոսի տեսակ մը ըմպելի կը խմցնէ, որուն հետեւանքով, ան՝ վերջին կլլած քարը, ապա Վեստան, Դեմետրը, Հերան, Պղուտոնն ու Պիսիգոնը դուրս կը փսխէ:

Կոոնոսի մէկ եղբայրը՝ Տիտան, ձեռք անցընելու համար գահը՝ կը պատերազմի եղբորը դէմ ու կը յաղթէ անոր և ապա կը բանտարկէ զայն իր կնոջը՝ Ռէայի հետ: Չես սակայն, որ մեծցած և զօրացած էր կաշատէ բանտէն Հայրն ու մայրը, որուն համար ուրախացած Կոոնոս կը ներէ իր կնոջը որ իբրև իր ծնունդը քար մը ներկայացուցած էր իրեն:

Եւ որովհետև խիստ կասկածոտ էր Կոոնոս կը մտածէր որ Չեսն ալ՝ միացած մի օր իր եղբայրներուն, պիտի յարձակէր վրան և ասպալէր իր իշխանութիւնը: այդ պատճառաւ կը յարձակի Չեսի վրայ ուրկէ կը պարտուի չարաչար: Ուրկէ յառաջ կու գան բնական երեւոյթներ, տարբերու խառնաշփոթութիւն և ապա կը փրապետէ հանգստութիւն:

Չես բոլոր Տիտանները՝ կը զրկէ դժոխք, ու Կոոնոս կ'անցնի իտալիա ուր մեծ պատիւներու կ'արժանանայ Յանոսէ և որուն փոխառն Կոոնոս կը շնորհէ Յանոսի իմաստութիւն որով նա կ'ունենայ իր Յանոս ընդհանրապէս մէկ ձեռքը գաւազանով և միւս ձեռքը որ Կոոնոս ընդհանրապէս, բանալին որպէս խորհրդանշան դռներուն ալիով մը կը ներկայացուի, բանալին որպէս խորհրդանշան դռներուն կարգը դասուած է և որովհետև երկար ատեն խաղաղութեամբ ներու կարգը դասուած է և որովհետև երկար ատեն խաղաղութեամբ ներու կարգը դասուած է երկիրը, նկատուած է խաղաղութեան աստուածը: Ակառավարած է երկիրը, նկատուած է խաղաղութեան աստուածը: Ասոր ի պատիւ Նուժա Պոմպիլիոս կանգնեց պղնձէ տաճար մը որուն դռները խաղաղութեան ատեն գոց և պատերազմի ատեն բաց կը ձգուէին: Յանոսի տաճարը բացուեցաւ գրական ակնարկութիւնը կը նշանակէ պատերազմի յայտարարութիւն: Տարւոյն առաջին ամիսը Յունվար՝ կոչուած է Յանոսի անունով, որովհետև այդ ամիսն է որ կը բանայ տարւոյն դռները:

Կոոնոս կը նկարագրուի մէկ ձեռքը մանգաղով՝ խոփած ձերուսի մը կերպարանքով: Ինքն է ժամանակ — աստուածը:

Չես = Արամազդ՝ մինչ իր բոլոր գործերէն հանգստացած կը տիրապետէր երջանկութեամբ, Տիտաններէն մին՝ Պրոմէթէ կը շինէ աստուածակերպ մը, բայց տեսնելով որ կը պակսի անոր մէջ մտքի լոյսը՝ ուսածակերպ մը, բայց տեսնելով որ կը պակսի անոր մէջ մտքի լոյսը՝ երկինք երթալով՝ Տիեզերքը կենդանացնող աստուածային հուրէն կայծ մը գողնալով կը բերէ իր շինած աստուածակերպին մէջ կը զեկեղէ ու զայն կը կենդանացնէ, որով յետ այնորիկ տեսակ մը կ'իտաստուած կը դառնայ մարդը:

Չես և միւս աստուածներն մոլորեցնած՝ կը հրամային Հեփեստոսի՝ Պրոմէթէն շղթայակապ՝ Կովկաս լեռան վրայ բանտարկել ուր իբրև

պատիժ անգղ մը ամէն օր կու դայ անոր լեարդը յօշոտել, ամէն գիշեր սակայն այդ լեարդը կ'ամբողջանայ, որպէսզի ամէն օր ալ անգղը ուսուցու գայ լեարդը: Այսպէս Պրոմեթէ կը զրուի յաւիտենական տանջանքի տակ: Ժամանակ մը վերջ Հերքլիւլէս սպաննելով անգղը կ'արձակէ Պրոմեթէն: Ըստ Յունական Դիցարանութեան մարդը այս կերպ ստեղծուած է աշխարհի վրայ:

Զևս չի դոհանար միայն Պրոմեթէն պատժելով, կ'ուզէ պատժել անոր շինած աստուածակերպն ալ, ուստի վերջնոյն կը զրկէ Եւան կիներ առաջին, տալով ձեռքը տուփ մը որ կը պարունակէր իրրե թէ անոր օժիտը: Պրոմեթէ դժարով մարդուն կը թելադրէ չրանալ զայն, մարդը սակայն անհամբեր կը բանայ տուփը ուրկէ ամէն տեսակ ցաւեր, դժբախտութիւններ դուրս կը պոսթկան: Այսպէս Զևս իրրե պատիժ մարդուն՝ ստեղծած է կինը, որուն տուփին մէջն են պարփակուած մեծ քանակութեամբ վիշտեր, տառապանքներ և ձախողութիւններ: Մարդիկ իրենց ըրտը ջանքերով կը ճգնին փակել տուփը՝ ուր կը մնայ միայն յոյսը:

Այսպէս Պրոմեթէի ձեռքով կը ստեղծուի մարդը: Ի հեճուկս Ոլիմպեան պատուածներուն, ասկէ մարդուն կը վերագրուի աստուածային ծագում. դիւրին է մակարերել ուրեմն թէ մարդը կ'ունենայ երկու աստորոգելիքներ՝ աստուածայինը, որ բարի ցանկութիւններով թաթաղուն է և երկրայինը որ մարդկային զգացումներով ազդորուած է:

Մարդիկ աստուածներու խօսքին չեն հնազանդիր, կը տարուին զգացական հաճոյքներէ, աստուածները կը զայրանան և կը պատժեն զանոնք ջրհեղեղով:

Դեկալիոն՝ որդի Պրոմեթեայ և թագաւոր Թեսալիոյ, տապան մը շինելու հրաման կը ստանայ՝ փրկուելու համար անով աշխարհի փրկուող մէն: Տեղի կ'ունենայ աննախընթաց ջրհեղեղը, որոշուած ժամանակին կը քաշուին ջուրերը, երկիրը կը չորնայ. ողջ մնացած մարդիկ և կիներ պատուէր կը ստանան կանգնել և ուղիղ և մէջքի վրայ միայն ձուլով քարեր նետել որուն հետեանքով էրիկ մարդոց արձակած քարերը այր, իսկ կանանց կողմէ նետուածները կ'ըլլան կին: Վերտին կ'ընծիւղի մարդկային կեանքը հակառակ աստուածներու զայն անհեա կորսնցնելու. բնաջնջելու որոշ փափաքին:

Աստուածները թէև անթիւ, անհամար են, բայց գլխաւորները կը տիրապետեն երկնքի ու երկրի՝ տասներկու հատ են, ու կը բնակին Թեսալիոյ Ոլիմպոս լեռան երկնամերձ կատարը:

Ամէն անոնք որ տեսած են Ոլիմպոսը տարակոյս չկայ որ անոր ձիւնափառ և ամպածրար բարձանց վրայ՝ պատրանքը ունեցած են բեակայելու միշտ Զևսն ու կաճառը աստուածներուն որք երկնքի

երկրի կապոյտ սահմաններուն ընդմէջէն անդուլ կը դիտեն Գեղեցիկն
 Հելլադան և կը պահպանեն զայն:

Յունական նուրբ միտքը որ գլած անցած է երեւակայութեան
 հրավառ սահմաններն, որ վերացական ամէն խնդրոյ խորը թափան-
 ցած, տւելի ևս լուսաւորուած է, գիտցած է սակայն նոյն ժամոյն
 կոխել հաստատուն, թանձրացած կռուաններու վրայ ևս: Բնադան-
 ցական ոչինչ կարելի է գտնել անոր ասուածներու պատմութեան մէջ:
 Տուած է անոնց մարդկային դրոշմ, մարդու զգացումներ՝ որոնցմով ի
 վիճակի ըրած է զանոնք ըմբռնելու մարդ էակին ձախողութիւնն ու
 լաջողութիւնը, պատրանքներն ու յոյսերն, ցասումներն ու ուրախու-
 թիւններն: Աստուածները հետու չե՛ն, աշխարհէն, կը կռուին մոլեգ-
 թիւններն: Աստուածները հետու չե՛ն, աշխարհէն, կը կռուին մոլեգ-
 թիւններն, կը պաշտպանեն դիւցադնօրէն, կը սնուցանեն մայրաքար
 ու կը պատժեն սաստկաբար:

Ձեռն ու անոր ընտանիքը կ'ապրին Ոլիմպոսի կատարը ա՛յնպէս,
 ինչպէս կ'ապրի Յոյն ընտանիք մը երկրի վրայ: Աստուածները կ'ու-
 տեն ու կ'ըմպեն և իրենց վայելած հաճոյքի կեանքը շատ չեն գտներ
 տեն ու կ'ըմպեն և իրենց վայելած հաճոյքի կ'եղեն, որսի կ'եր-
 կրեք մարդոց համար ալ: Կը խաղան, զրօսանքի կ'եղեն, որսի կ'եր-
 թան, վէճի կը բռնուին, կռիւներ կը մղեն, մարդոց մէջ կը մտնեն.
 Թան, վէճի կը բռնուին, կռիւներ կը մղեն, մարդոց մէջ կը մտնեն.
 Կը կատակեն անոնց հետ, կանանց հետ սերարկածներ կ'ուեննան, ա-
 մէն բանի մէջ են, ամէն ինչով կը հետաքրքրուին և իրենց արքե-
 թիւնը մարդ էակէն՝ կը կայանայ իրենց անմահութեանը մէջ
 միայն:

Կան երկրորդական աստուածներ ալ որոնք զարձեւալ անմահ են:
 Դանայեկներ, Տանտաղոսի ոգիներ կը ներկայացուին սովորաբար կէս
 մարդու և կէս նոխազի ձևի տակ: Գետերուն և լիճերուն մէջ կ'ապ-
 թին կիսամարդեր, յուշկապարիկներ եւայլն որոնք անմահ են ու հնա-
 զանդ գերադոյն աստուածներուն, մանաւանդ Ձեռի:

Ձեռ կը ներկայացնէ երկինքը, ինքն է Հայրը՝ իսկ Հերա քոյրն
 է, միեւնոյն ատեն կ'ընր անոր, կը ներկայացնէ երկիրը՝ մայրը: Ասոնց
 ամուսնական խրախճանութեանց Բէլլօնէ Յաւերժանաբար ներկայ
 չգտնուելուն համար՝ Հերմէս իրրեւ պատիժ զայն իր տնակովը գետին
 կը նետէ ուր անմիջապէս կրիայի կը փոխուի:

Ձեռի եւ Հերայի* զաւակն է Արէս = Մարս մարմնացումը փո-
 թորիկի: Հիւսիսային քամին է՝ որ կը փչէ ուժգնութեամբ, կը յարու-
 ցանէ բուռն մրրիկներ ու կը կռուի մոլեգնօրէն: Սպաննած է նախան-
 ձայնողութեամբ Պոսիդոնի Ալիքոտիոս անուն տղան՝ որուն վրայ ինքը

*) Ձեռ սաւ կիներ ունէր:

Ատտիկէի մէջ դատի քաշուած ըլլալուն ի վերջոյ նոյն դատաւայրը կոչուած է Արիսպագոս՝ Արէսեան ժայռ։ Արէս կը նկարագրուի էրիկ մարդու զիմօք, գլուխը դրած սաղաւարտ, ձեռքը նիզակով եւ սովորաբար նստած երկու ձիերով լծուած հրափայլ կառքի մը մէջ։ Ինքն է պատերազմի աստուածը։ Կռուի ժամանակ ամէն ոք անոր կը դիմէ։ Հռովմայեցիք իրեւ պատերազմիկ ժողովուրդ զիրենք Արէսէ սերած կը համարին։

Զեւսի եւ Հերայի երկրորդ որդին է Հեփեսոսս։ Զեւս անգամ մը Հերան երկինքէն վար կախած էր։ Հեփեսոսս գլխով մօրը՝ Զանաց ազատել զայն, որուն համար Զեւս սաստիկ զայրացած՝ երկինքէն վար նետեց Հեփեսոսսը որ ինն օր միջոցին մէջ գլորուելէ ետք լէմնոս կղզին ինկաւ եւ իյնալու ժամանակ այ ոտքը կտորելով կազ մնաց։ Հեփեսոսս կը ներկայացնէ ստորերկրեայ հրային անսանձ ուժը։ Կ'երեւակայուի տարիքը առած մարդ մը, աշխատաւոր դարբինի հագուստով։ Կ'ըսուի թէ էտնա լերան խորը զէնքեր կը դարբնէ։ Մեծ վարպետ է, ինքն է կռած ու դարբնած Զեւսի Գայիսոնը, Պոսիդոնի եռաժանին։ Հեփեսոսս արտաքինով տգեղ, անշնորհք ու կաղ է, հակառակ ասոր սակայն ունի գեղեցիկ կին մը՝ Ափրոդիտէ, գեղեցկութեան զիցուհին։

Հերմէս՝ Զեւսի Մէա կնոջմէն ծնած է, չար հակումներ ունէր սա։ Անգամ մը Ապոլոնի քովի Ատմէթինի կովերը գողցաւ, ուրիշ ատեններ այ գողցած է Պոսիդոնի եռաժանին, Աստղիկի զօտին, Արէսի սուրը, Զեւսի գաւազանը, Հեփեսոսի ունեկիները ու մուրճը։ Զեւս տեսնելով Հերմէսի ճարպիկութիւնները զայն իրեն սուրհանգակ նշանակեց, բայց օր մ'այ ձանձրացած անոր պատճառած տաղաուկներէն ու գողութիւններէն՝ վտարեց Ոլիմպոսի վեհաշուք կատարէն։ Հերմէս այս միջոցին իր սե բաղդը քաղցրացնելու համար հնարեց քնարը։

Հերմէս իր հողանման արագութեանը եւ ճարտարախօսութեանը համար կարգուած էր աստուածներու պատգամաւոր։ Գլխաւոր ու երկրորդական աստուածներն աշխարհի չորս ծագերէն խորհրդակցութեան կը կանչէ։ Զեւսի հրամանները կը հաղորդէ կայծակնաթիւ առ ո՞ր անկէ։ Աստուածներուն կամքը կը յայտնէ մարդոց երազի միջոցաւ, երազը ուրեմն Հերմէսի այցելութիւնն է։ Հերմէսն է մարդոց եւ աստուածներու միջև յարաբերութեան կապը ամբապինդ պահողը, ինքն է նաեւ մեռնողներու հոգին տանողն ու ներկայացնողը աստուածներու Դատական Ատեանին։ Այս կերպով Հերմէս եղած կ'ըլլայ Հովի, Հաղորդակցութեան, երազներու եւ հոգիները առնող աստուածը։ Իր կեանքը կ'անցընէ սովորաբար ճանապարհներու գլուխները, է միեւնոյն ա-

տեն խնամակալ ուղեւորներու եւ գողերու: Երեւակայուած է կիսամերկ գանգրահեր գեղատիպ երիտասարդ մը դրած է թեւաւոր գըլխարկ մը:

Զեւսի եւ Լաթօնի որդին էր Ապոլոն՝ Արեւի աստուածը որ կոչուած է Ֆէպիւս՝ լուսաւոր: Օժտուած կը նկարագրուի գեղեցկութեամբ, իմաստութեամբ, քաջութեամբ եւ յաւիտենական երիտասարդութեամբ: Կ'երեւակայուի նստած ոսկեղէն կառքի մը վրայ զոր կը քաշեն երեք հրեղէն ձիեր: Ասոր ծառայութեան մէջն են ինը Մուսաները՝ Գլիօ, պատմութեան աստուածուհին, Կալիոպէ՝ պերճասօսութեան եւ զիւցաղներգութեան շիցուհին, Մելիպոմէն՝ ողբերգութեան, Տալի՝ կատակերգութեան, Բոլիսնիա՝ տաղերգութեան, էրասօ՝ սիրային նուագի, Եւսերպէ՝ երաժշտութեան եւ հովուերգութեան, Ուրանիա՝ աստղաբաշխութեան, Թեփսիգո՝ պարի շիցուհիները, որոնք մարմնացումն են Ապոլոնի ինը կարողութեանց:

Ապոլոն դժտուելով Զեւսի հետ, ջարդեց կիկլոպները, որոնք շինած էին Զեւսի շանթերը, բան մը որ արժեց իրեն Ոլիմպոսէ ժամանակաւոր վտարում:

Պան՝ գեղջկական աստուածը հնարած է Սրինգը: Սա՛ իր սրինգով մրցումի ելաւ Ապոլոնի քնարին հետ Երկուստեք դատաւոր նշանակուեցաւ Լիւթիոյ թագաւոր Թմօլիւս՝ որ գնահատեց եւ նախընտրեց Ապոլոնի քնարը, եւ ըստ այնմ ալ վճռելով պահը պարզեց Ապոլոնի Միտաս՝ Փռիւզիոյ թագաւորը՝ անիրաւ գտաւ Թմօլիւսի վճիռը որուն համար Ապոլոն դայրանալով իշու ականջներ տուաւ Միտասի, որ չյայտնելու համար այս անարգանքը իր կակուղ եւ երկար ականջները կը ջանար ծածկել զլխանոցին մէջ: Սափրիչը սակայն հասկնալով զայս կը ջանար ծածկել առ աճի՝ հաղորդել ուրիշին. պարտեղին մէջ հողը որ գաղտնիքը հողին ծոցը պիտի մնար. մինչդեռ նոյն անգղէն եղէգոր անեցան որք զիշեր ու ցորեկ կը կրկնէին «Միտաս, Միտաս իշու ականջներ ունի՛...»: Ասկէ ելած է «գետինը ականջներ ունի» ժողովրդային աստութիւնը:

Զեւսի հինգերորդ զաւակն է Աթենաս—Պալլաս, որուն մայրն էր Մէթիս: Զես խորհելով որ Մէթիսի ծնելիքը՝ իրմէն աւելի չնորհալի ու խելացի պիտի ըլլայ կլլեց զայն, որուն վրայ սաստիկ գլխացաւ մը ունեցաւ: Հեփեստոս գաղբեցնելու համար անոր այդ ցաւը, սակրի հաւոր եւ անմիջական հարուածով մը պատռեց Զեւսի գլուխը ուրկէ դուրս խուժեց Աթենաս—Պալլաս զինուած վիճակի մէջ:

Աթենաս ատեն մը նկատուած է կօիւրի, պատերազմի աստուածը,

բայց ի վերջոյ հռչակուած է խորագիտութեան, հնարամտութեան և խորհուրդի աստուածը: Սովրեցուցած է մարդոց մանկ, հիւսել, մշակել հողը, ոսկերչութիւն, ասեղնագործութիւն եւ այլն: Լիւթիացի ազգիկ մը՝ Արաքնէ անունով ձեռագործի մէջ ա՛յնքան յառաջ գնաց որ ուզեց Աթենասի հետ մրցիլ: Աթենաս՝ Արաքնէի այս առաջադրութենէն զայրացած իր մագոզը անոր գլխուն նետեց: Արաքնէ յուսահատութենէն կախեց ինքզինքը բայց աստուածները զայն սարդի վերածեցին: Արաքնէի ասեղնագործութեան նմոյշն է սարդի ոստայնը իր նախնական ձևին մէջ:

Զևսի աղջիկն է Արտեմիս, քոյրը Աթենասի, յուսնի աստուածն է որ ունի իշխանութիւն՝ Չուրերու շարժումին վրայ: Զուրերու օրական մակընթացութիւնն ու տեղատուութիւնը անկէ առաջ կու գայ, մարդոցմէ չ'ախորժիր. կ'ապրի առանձնացած: Սիրուն, աշխոյժ աղջիկ մ'է, կը թափառի երկնքի կապուտակ դաշտերուն մէջ, յաւերժահարսներով աստղերով շրջապատուած, ընկերներով եղջերուի որսորդութեան կ'ելլէ, մի՛շտ կոյս մնացած է: Կուսութեան աստուածն է:

Ուրիշ աստուածուհի մըն է Ափրոտիդէ՝ ծնած ծովու փրփուրներէն, բոլոր աստուածներուն ալ նախանձու առարկայ եղած է սա: Զևս ամուսնացուց զայս շանթի հնարիչ Հեփեսոսի հետ որ Ոլիմպոսի մէնէն ազեղ աստուածն էր: Ափրոտիդէ զգո՛հ իր ամուսինէն սիրահարած էր Արէսի: Պարիս անունով հովիւը Աթենասի, Հերայի եւ Ափրոտիդէի միջև բացուած գեղեցկութեան վէճը կարգադրեց ի նպաստ Ափրոտիդէի արձակելով վճիռը: Ափրոտիդէի որդիներն էին Երեք Շնորհքները՝ Ակաէ, Դայիս և Էֆրոսինէ, ասո՛նք՝ օժտուած անթառամ ու անմեռ գեղեցկութեամբ՝ միշտ կ'ընկերանային իրենց մօրը: Կը բաշխէին զուարթութիւն, լեզուանիւթիւն և և իմաստութիւն: Միջնադարեան ասպետներուն նախատիպն էին: Ափրոտիդէ կը նկարագրուէ աղաւնիներով, և ճնճուկներով լծուած կառքի մը մէջ նստած: Կիպրոս կղզւոյն մէջ մեծցած ըլլալուն համար կոչուած է նաև Կիպրոսեան: Այդ կղզին ժամանակաւ կը պատկանէր Փիւնիկեցիներուն. որոնցմէ հաւանտար Ափրոտիդէի յարգանքը մտած է Յունաց մէջ: Եւ իրօք Փիւնիկեցիները ունէին Աստարդէ աստուածուհին որ Ափրոտիդէի նման աստուածուհին էր սիրոյ, գեղեցկութեան, տափանքի, Հրայրքի, ծնունդի առատութեան, ծաղիկներու, բոյսերու, այգիներու, ի մի բան Գարունի:

Յիշուած այս աստուածները սերունդն են Զևսի, որոնք միանալով կը կազմեն երկնային թագաւորութիւնը: Կան նաև աստուածներու երկրային և Զրային թագաւորութիւնները որոնք կը գտնուին Զևսի եղբայրներու ձեռքը:

հարստութիւնները՝ հանքերը՝ Պղուտոն այելաօս՝ անժպիտ կը կոչուի, կը նկարագրուի խոփու զիմօք, նստած դժոխքին կեղրոնը Երենտը գահու մը վրայ:

Չեւսի երեք որդիները դժոխքին դատաւոր կարգուած էին ասոնք կը դատէին շերմէի բերած հողիները, ձայներու հաւասարութեան ատեն վերջնական վճիռը կու տար Մինովս՝ մին երեք դատաւորներէն: ասոր ձեռքը կը գտնուէր թագաւորական մական մը, նաեւ սափոր մը ուր ամփոփուած էին մահկանացուներուն դատակնիքները:

Գեշերուան՝ խաւարի աղջիկն էր Մահը որ կը նկարագրուէր սեւ տղու մը զէմքով, ձեռքով ուռկան մը բռնած: Նկարագրուած է նաեւ կմախքի կերպարանքով բռնած սուր ու մանգաղ:

Գերեզմաններու վրայ կը հսկէին Ուրուականները, կը սիրէին լոյսը, վառուած ճրագները: Ասոր համար է որ հինները գերեզմաններու մէջ վառուած ճրագներ կը պահէին:

Եղիւսեան դաշտը բարի մարդոց հողիներուն ընկալվայրն էր, հոս կը տիրէր մշտադալար գարուն, լուսաւորուած էր պայծառ արեւով և մշտավառ աստղերով, հողիները կը յածէին հոս վարդենիներու և այլ անուշիկ ծաղիկներու ածուներուն մէջ. Լէթէ՝ մոռացութեան գետը կը պարգեւէր հողիներուն քաղցր մոռացութիւն մը: Արդարները առանց ծերանալու կը մնային իրենց կիանքի ամէնէն քաղցր տարիներուն մէջ:

Երկրի երեսին թագաւորն էր Չեւսի քոյրը Դեմետրէ, որ էր նոյն ատեն մշակութեան, հունձքի կենդանարար աստուածը: Դեմետրէ ունէր Պերսէֆօնէ անուն գեղեցիկ աղջիկ մը, Պղուտոն տեսնելով որ ոչ մէկ աղջիկ իրեն կին ըլլալու կը յօժարէր, յափշտակեց գեղուհին, Դեմետրէ փնտռեց զայն ամէն կողմ. Արէթուսա յաւերժահարսէն լսելով իր աղջկան ուր գտնուին Չեւսի ոռքը ինկաւ և աղաչեց ամէն միջոց գործածել Պերսէֆօնէն վերադարձնելու համար, Չեւս անտարբեր գտնուեցաւ, որուն համար Դեմետրէ իրրե վրէժ չորցուց երկրին երեսը: Չեւս մտածկոտ երաշտութեան և չորութեան առթած դժբախտութեան առջև, կը հարկադրուի միջամտել, Պերսէֆօնէ կ'արձակուի մասնաւոր կարգադրութեամբ մը: Դեմետրէ ի պատիւ և ի յուշ իր աղջկան վերադարձին կը ծաղկեցնէ ամէն կողմ, կը տիրապետէ գարունը բնութեան թատերաբեմին վրայ: Ասիկա տարւոյն չորս եղանակներուն յաջորդական պատմութիւնն է այլաբանական երեւոյթի տակ: Դեմետրէ կը նկարագրուի գեղանի կնոջ մը կերպարանքով, զլուխը ցորենի հասկերով և որթատունկի ճիւղերով պսակուած, ուռած ստինքով, բռնած մէկ ձեռքով մանգաղ ու հասկեր և միւսով՝ վառուած ջահեր:

Դիոնիս կամ Բագոս նախապէս մեծ յարգ կը վայելէր Մակեդոնիոյ մէջ. ըլլալով ծառերու աստուածը՝ է՛ նաև ինքնին որթատունկի խաղողի, գինիի, ուրախութեան և խնճոյից աստուածը: Ուրախութիւններու և խնճոյքներու մէջ զայն կը կանչեն: Ասոր ի պատիւ դաշտկերոյթներ կը սարքուին որոնք ծանօթ են Սպանդարամետական կամ Բագոսեան անուէնով: Բագոսը կը ներկայացուի զեղին մազերով, զուարթ ու ժպտաշուրթն՝ նստած տակառի մը մէջ որ լծուած կ'ըլլար վագրերով:

Կրակի պստուածուէին էր Վէստա որուն անուան չուով մէջ կանգնուած էր տաճար մը ուր կը գտնուէր մշտավառ կրակ մը: Վէստայի ի պատիւ սարքուած տօներուն շէին կրնար մասնակցիլ այլ մարդիկ: Վէստեան կոյսերուն պարտաւորութիւնն էր միշտ վառ պահել նուիրական հուրը, չուովմայեցիք մարած կրակ մը. մարած օճախ մը չարագուշակ կը համարէին: Վէստա ընտանեկան սրբութեան զիջուէին էր. Քրիստոնէական տաճարներուն մէջ ներկայիս գիշեր ուցորեկ մշտավառ կանթեղ մը պահելը հեռաւոր մէկ արձագանգն է նուիրական հուրին միշտ վառ պահուելուն:

Ոլիմպեան աստուածներուն, գլխաւորներն են ասոնք, որ ունին իրենց իշխանութեան տակ երկրորդական, երրորդական այլ աստուածներ:

Յոյները ինքզինքնին մարմնացուցած էին հեթանոսական իրենց կրօնքին մէջ, այդ է պատճառը որ տակաւին այսօր խոր նշանակութիւն մը ունի անիկա իրենց համար: Հեշտ չէր ուրեմն՝ իրենց հոգիէն ու սիրտէն բխած սոյն կրօնքէն, որ կ'ընդգրկէր անհատական, ընտանեկան և ընկերային կեանքը, հրաժարիլ, բաժնուելով և մէկ օրէն միւսը յարիլ այլ դաւանանքի:

Թեալունիկէ

Յ. Ա. ԱՂՈՃԵԱՆ

ԱՆԿԱԽ ԽՈՅԵՐ ԵՒ ՄՏԱՏՈՒՄՆԵՐ

Նպատակի մը իրագործման համար պայքարիլը աղնիւ գործ է, ըսած են մեր իմաստուն պապերը: Անոնք աւելի խելացի խրատ մը տուած պիտի ըլլային մեզի, եթէ պայքարելէ առաջ սորվեցնէին՝ նպատակը ընտրելու եղանակը: Այն ատեն պայքարը և նպատակին իրագործումը աւելի հեշտ պիտի ըլլար:

Ի՞նչ օգուտ, եթէ ես փարիմ հսկայ ժայռի մը կտորին, դայն օղին մէջ վերցնելու նպատակաւ. և կամ կեանքիս կէտ նպատակ ընեմ լուսինը ելլելը: Միթէ աւելի լաւ չէ՞ որ ես ինծի ընտրեմ նպատակ մը, որուն իրագործումը կարողութեանս սահմանին մէջ ըլլայ:

Բայց միայն ընտրանքը չի բաւեր: Հարկ է զիտնալ նա՛նք ժամանակի պայմաններու համեմատ՝ նպատակը փոփոխութեան ենթարկելը:

Նպատակի մը իրագործումը երբեմն տասնեակ տարիներ, երբեմն ալ դարեր կ'առնէ—մանաւանդ եթէ ան հաւաքականութեան մը նպատակն է: Կրնայ ըլլալ որ, ճամբայ ելած ատեննիս առոյգ ըլլանք, բայց դեռ մեր նպատակին չհասած՝ ուժասպառ իյնանք: Պէ՛տք է, այն ատեն մեր նպատակը յարմարցնել ժամանակի և միջավայրի, որպէսզի անոր իրագործումը սոսկ ըզձանքի մը սահմանին մէջ չմնայ:

*
*
*

Ոմանք կը պախարակեն փոփոխութեան քաղաքականութիւնը՝ փոփոխամտութեան հետ շփոթելով զայն: Փոփոխութիւնը տիեզերքին մէջն իսկ է: Անհունօրէն մեծ մոլորակներէն սկսեալ՝ մինչև անհունօրէն պզտիկ հիւլէները ամէն երկվայրկեան ենթակայ են յարատե փոփոխութեան: Մենք՝ մարդիկս, աննշան մէկ մասնիկը տիեզերքի ամբողջ շականութեան, չենք կրնար զուրս մնալ անոր ընդհանուր օրէնքներէն:

Մեր գլխուն մազը չէ այն, ի՛նչ որ տարի մ'առաջ: Նոյնպէ՛ս մեր եղունգը, նոյնպէս մեր մորթը, և մեր բոլոր ներքին ու արտաքին գործարանները: Ամէն վայրկեան միլիոնաւոր բջիջներ կը հիննան և կը թափին մեր մարմինէն. անոնց տեղ նորեր կը հասնին, և այսպէս անդալարար կը փոխեն մեր ուղիղը, ջիղը, ոս՛

կորը, արիւնը, վերջապէս մեր ամբողջ էութիւնը, — նման աւազանի ջուրին, որ մէկ կողմէն կը լեցուի, միւս կողմէն կը պարպուի, միշտ լեցուն պահելով աւազանը, բայց միշտ չըլլալով նոյն ջուրը:

Գործարանը փոխուելով՝ շատ բնական է որ փոխուի նաև այդ գործարանին մեզի տուած խորհուրդներն ու զգայութիւնները: Տօնավաճառներու մէջ կը նշմարենք հայելիներ, որոնց մէջ նայելով ինքզինքնիս կը տեսնեմք երկար կամ կարճ: Յանցանքը մերը չէ, այլ՝ հայելիին, որ զմեզ այդպէս կը ցոյացնէ: Նոյնն է պարագան, եթէ ես այսօր տարբեր կը տեսնեմ, տարբեր կը լսեմ, տարբեր կը խորհիմ, քան այն ի՛նչ որ կը տեսնէի, կը խորհէի տարիներ առաջ:

Պզտիկ եղած ատենս՝ չափազանց կը սիրէի շաքարը. այսօր րեւրանս չեմ դնել դայն. փոխուած է քիմքա: Քսան տարի առաջ պատրաստ էի հոգիս նուիրել Ծրանսացի մեծ ազգին. այսօր քանի կը յիշեմ Կիլիկիոյ աղէտը, մազիս թինն իսկ չեմ տար անոր. փոխուած է մտածելակերպս:

* * *

Տիեզերքի մէջ ամէն իր շնչաւոր թէ՛ անչունչ, եթէ կ'ուզէ իր գոյութիւնը պահպանել, ստիպուած է ժամանակին և միջավայրին յարմարելու:

Ժամանակ և միջավայր՝ թէև տեսականին մէջ տարբեր են, բայց իրականին մէջ այնքան զուգորդուած են իրարու, որ կարելի չէ հասկնալ մէկը, առանց միւսը օգնութեան կանչելու: Անոնք կը նմանին նոյն մարդուն՝ դիտուած երեսէն և կռնակէն. ճիշտ է որ տարբեր կ'երևին, բայց իրականութեան մէջ նոյնն են:

Կարելի չէ արգիլել բոյսը, որ չաճի: Ան ստիպուած է ժամանակին յարմարելու, ուստի պիտի աճի ու պիտի փոխուի: Սակայն միայն ժամանակին յարմարելը չի բաւեր. ան ստիպուած է յարմարելու նաև միջավայրին, ըլլա՛յ ան սառուցեալ կամ այրեցեալ գօտի մէջ:

Մարդիկ երբ ծառը կը յօտեն, ուրիշ նպատակ չունի, այլ՝ դայն յարմարցնել ժամանակի և միջավայրի: Իրա՛ւ է որ ծառը կը կորսնցնէ իր նախկին տեսքը, բայց գոյութիւնը պահպանելու սիրոյն՝ ան ստիպուած էր այդ փոփոխութեան ենթարկուելու:

Հայրը եթէ ուզէր միայն ինքզինքին նման էակ մը ստեղծել աշխարհի մէջ՝ պիտի չի սերնդագործէր: Ան կը հանդուրժէ պզտիկ փոփոխութեան, իրմէ տարբեր էակի մը գոյութիւնն ու կ'ունենայ իր յարմարը. որպէսզի անոր մէջ ապրի, իր գոյութիւնը շարունակէ դարէ դար:

Սկզբունքներ, նպատակներ, իտէալներ, ուխտեր ալ այդպէս են:

Եթէ կ'ուզեն իրենց գոյութիւնը պահպանել՝ աեզի կու տան տարբեր սկզբունքներու, տարբեր նպատակներու, տարբեր իտէայններու, տարբեր ուխտներու: Այդ տարբեր սկզբունքներն ու իտէայները ուրիշ բան չեն, եթէ ոչ՝ առաջիններուն շարունակութիւնը, միջավայրի և ժամանակի յարմարելով՝ քիչ մը զիմազիծնին փոխած, բայց միշտ նոյն հօր, նոյն դաւակը մնացած:

Իտէալը, ուխտը, նպատակը կենդանի է միայն այն ատեն, երբ ժամանակին հետ համընթաց կը քալէ: Երբ ժամանակը կը քալէ, եւ ուխտը անփոփոխ կը մնայ իր տեղը. ան այլևս իր գոյութեան իրաւունքը կորսնցուցած մեռեալ տառ մըն է:

Մեր ուխտը և նպատակը ի՞նչ որ ալ ըլլայ, պէ՛տք է որ զայն յօտենք, փոփոխութեան ենթարկենք և օրուան պահանջներուն յարմարցնենք որպէսզի անոր իրադրո՞ծումը միշտ մեր կարողութեան սահմանին մէջ ըլլայ:

Ահա՛ այսպէս է որ կը պահանջէ տրամարանութիւնը, ահա՛ այսպէս կը հրամայեն արեւելեական անյեղլի օրէնքները:

Տիրոյիք. Ամբիկա

Վ.Ս.ԼՐԱՄ ՏՍՏՐԵԱՆ

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Ն Ք

Պասկերիդ դեմ, ահա, սե՛ր, երեսանկեա՛լ կ'աղերսեմ,
—Օ՛, գրքուրիւն, մոռցա՛ծ եմ պատճամուճքի կերպըս հին—
Մեկէն այնքան հեռացայ, շրջանակեղ երկնային,
Որ՛ արդ սրդու մը նրման կակազելով կ'աղօթեմ:

Տուր ինձ շնորհ, օրհնութիւն, կը պաղաւսիմ, սե՛ր քեզի,
— Խոսովանի՞ր, ա՛հ, ինչպե՛ս կը տառապիմ ու՛ժգոճեմ —
Սի՛ն հաճոյքները կեանքին, զիս ոռոգած եմ արդեմ,
Անբաւելի՛ մեղքերով, եւ վիշտերով դառնալի:

Մեղանչեցի՛ շա՛ս անգամ, բազմագո՛ւր սե՛ր, ներե՛ յիս..
Տո՛ւր հոգիիս մաքրութիւն, ու մեղքերուս քողութիւն,
Շրմուրհե՛ ինձ վերբսի՛ն, դառնա՛լ ի յոյսճնաւսքի՛ն:

Կայծն հրաւրեղ դի՛ր իմ մէջ, լեցուր հուրգովրդ հոգիս,
Ըրե՛ որ ես կարենամ ապաշխարե՛լ հիմնովին,
Հրաժարի՛լ սասանեմ, եւ աղօթել ջերմագին:

1938 Արեւմ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Կենսասնիւթ Բ. (Vitamin B), կը գտնուի առ հասարակ գարեջուրի, թթու խմորի մակարդակին, արմատիքի, ընդեղէններու, ընկոյզներու, կանանչ բանջարեղէններու, հաւկիթի ղեղնուցին, պանիրի ձկնկիթի, երիկամունքի և լեարդի մէջ: Այդ նիւթին պակասութիւնը կը պատճառէ՝ ախորժակի կորուստ, վատթար անուժ, տկար մարսողութիւն, աղիքի դանդաղութիւն, սրտի անկարգութիւն, յոգնութիւն, ջղախուժութիւն, ջղատապ, վրդովեալ կաթնառութիւն և անդամազօսութիւն (Beri-beri):

Կենսասնիւթ Գ. (Vitamin C), կը գտնուի կիւրոնի և լեմոնի եւ թարմ պտուղներու, ինչպէս նաև ահաս բանջարեղէններու, կարմիր պղպեղի, թարմ կաթի և լեարդի մէջ: Այս նիւթին պակասութեամբ յառաջ կու գան՝ արիւնահոսութիւն, մորթի դուրսաբերութիւն, ակռաներու տձև կաղժութիւն, ոսկորներու դիւրարեկութեան ենթակայութիւն, յոգնածներու ուռեցք, վատառողջ լինտեր, որովայնա-լնդերային անկանոնութիւն և ընդհարութիւն (Scurvy):

Կենսասնիւթ Դ. (Vitamin D), կը գտնուի ձկան լեարդի իւղին, հաւկիթի ղեղնուցին, կարագի, լեարդի և երիկամունքի մէջ: Այս նիւթին պակասութենէն կը ծագին՝ ոսկորներու և ակռաներու անկատարելագործութիւն, ոսկորի թեքութիւն կակղութիւն, և ոսկրային աձևութիւններ, ատամնափտութիւն, պրկախօ, (Tetanus, Lockjaw) մկանային տկարութիւն, ձմեռնակ եւայլն:

Կենսասնիւթ Ե. (Vitamin E), կը գտնուի մասնաւորապէս ցորենի ծիլի յիւղին, արմտքի, հաղարի, ջրկոտեմի, ոռուփի և բանջարեղէններու մէջ: Այդ նիւթին պակասութեամբ կը պատահին ամլութիւն, սաղմնական մահ, և սովորական վիժում:

Կենսասնիւթ Զ. (Vitamin G), կը գտնուի գարեջուրի, թթու խմորի մակարդին, կաթի, կանանչ բանջարեղէններու, վտիտ մսի, լեարդի և երիկամունքի մէջ: Այս նիւթի պակասութեամբ յառաջ կու գան աձևմի խափանում. լեզուի և բերանի վէրք, մորթի վրայ խոցեր, որովայնա-լնդերային ըրործքումներ և վարդախտ — տեսակ մը մորթային հիւանդութիւն — (Pellagra):

Ուրեմի շտապէնք կանոնաւորելու մեր առօրեայ կերուխումը որպէսզի ապրինք պռողջ, երկար ու երջանիկ:

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ՏԻՐԱՆ ՉՐԱՒԵԱՆԷՆ

Դէմքով միայն կը ճանչնայի զինք՝ մինչև 909, երբ աղգային հարցերու մասին մեր մտածմանց հանդիսութիւնը օր մ'ալ իրարու քով բերաւ զմեզ՝ Սկիւտարի Ռամկավար Ակումբին մէջ, որուն անդամ արձանագրուած էր ան ալ ինձմէ քիչ յետոյ:

Օր մը, քանի մը հոգիներ միայն մնացեր էինք սրահին մէջ՝ ժողովէ մը յետոյ, երբ չորս հինգ երիտասարդներ ներկայացան անդամագրուելու, և ստորագրեցին մասնաւոր տուժարին մէջ:

Նորագիրները հեռացեր էին արդէն. երբ Չրաքեանի բարեկամներէն մին՝ առիթէն օգտուելով՝ փափագ յայտնեց լսել անոր կարծիքը Ակումբի անդամներու նկարագրին մասին. նախապէս ծանօթ ըլլալով անոր հմուտ գրածանայի կարողութեան: Զարմանալի յտակատեսութեամբ ու ճշտութեամբ բոլոր անդամներն ալ կարգաւ ենթարկուեցան անոր դատաստանին, մինչև որ ան կանգ առաւ իմ ստորագրութեան առջև, առանց երբէ'ք մտքէ անցընելու՝ թէ հոն ներկայ կը գտնուէր նաև անոր աէրը: Ան, իբրև թերութիւն կամ առաւելութիւն, ի վեր հանեց հոգեբանական այն բոլոր մասնայատկութիւնները, զորս կը ներշնչէր իրեն՝ ստորագրութեանս գիրերուն ձևն ու գիրքը: Ներկաները ջանացին պահել իրենց զսպուած լրջութիւնը՝ մինչև վերջ, բայց երբ ծիծաղը յորդեցաւ մէկէն շրթներու վրայ, ինտրա հասկցաւ խնդիրը և գոցեց տետրակը:

Այդ օրէն արդէն բարեկամներ դարձած էինք իրարու, և սկսած էին յաճախադէպ ըլլալ նաև մեր հանդիպումները:

Մեր շփումները հետզհետէ խորացուցին իմ յարգանքը անոր հանդէպ. ո՛րքան կրցայ մօտէն ճանչնալ զինք՝ իր հոգւոյն բովանդակ ազնուութեամբ, իրազեկ եղայ անոր ձեռք բերած հմտութեան՝ գիտութեանց և իմաստասիրութեան մէջ, և հասկցայ մանաւանդ՝ թէ ինչ փայլուն տաղանդ մ'էր ան գրականութեան ու նկարչութեան մէջ:

Անոր արտակարգ միտքը չէր կրցած պարփակուիլ մասնագիտական ո՛րևէ մէկ ճիւղի մէջ, ուր վստահարար պիտի հասնէր ինք՝ գերա-

դանց բարձրութեան: Անոր հսկայ տաղանդը փորձած էր կարծես տիեզերական ծանօթութեան, թէև անոր նախասիրութիւնները հսկած կը մնային աւելի՝ զբաղանութեան ու նկարչութեան:

Չափազանց հետաքրքրական ու հրահանգիչ էր լսել իր հասուն կարծիքը հայ գրողներու մասին, որոնց բոլորին գործերն այ ուսումնասիրած էր ինք՝ խզճմտորէն: Այդպիսի առիթով մ'էր որ, անգամ մը երբ ան բաղաժառնութիւնը կ'ընէր Պէրպլէրեանին ու Թէրզեանին, այս վերջինը գերադասելով առաջնոյն, հարցուցի իրեն՝ թէ ի՞նչ կը խորհէր Սիամանթոյի մասին, որու գրութիւնք անհասկանալի կը մնային ինձ՝ մեծաւ մասամբ:

— Ես գրականութեան ուսուցիչ եմ, և մի՛ զարմանար եթէ ըսեմ՝ թէ ե՛ս այ չեմ հասկնար զայն, պատասխանեց ան, և աւելցուց: Եթէ կ'ուզես մերձաւոր կարծիք մ'ունենալ անոր գրականութեան մասին, երկար ժամանակ մտիկ ըրէ յիմարի մը խօսքերը, որոնց անկապակից յորգումին մէջ իմաստութեան փոքրիկ փշուրներ այ պիտի կրնաս գտնել երբեմն, և՛ այսչափ:

Չեմ գիտեր՝ թէ ճշմարտութեան հետ որքան համաձայն էր Չրաքեանի չափազանց խիստ թուող այս արտայայտութիւնը:

Իր սէրը՝ հայ գրի և գրականութեան հանդէպ՝ կը հասնէր ասակ մը պաշտամունքի, և այս պարագան էր որ երբեմն անաւան առնել կու տար իրեն նո՛յն իսկ կեանքի առօրեայ անհրաժեշտութիւնները, պատճառ դառնալով ընտանեկան վէճերու:

Կը յիշեմ որ, անգամ մը, թուրք հեղինակ մը անոր յանձներ էր իր մէկ գործը՝ պատկերազարդելու համար, և փորձեր՝ անոր մասին կարգ մը թելադրանքներ այ ընել իրեն: Չրաքեան հաւանած էր պայմանաւորուիլ պատկերներու թուին մասին միայն, ազատ մնալով ինք որոշելու անոնց նիւթերը՝ ձեռագրի ընթերցումին հետ:

Բայց գործը կը դանդաղէր շարաթներով, ամիսներով, հակառակ հեղինակի ստիպումներուն և իր կնոջ այ թախանձանքին, վասնզի ինտրա աւելի կը սիրէր զբաղիլ գրաբարի թարգմանելով Հիւլօյի կարգ մը բանաստեղծութիւնները՝ ընագրին չափով, քան թէ լրացնել պատկերներու գործը և գանձել փոխարմէքը:

Իրրև արտակարգ յիշողութեան տէր, զարմանալի կարողութիւն մ'ունէր ան՝ նկարելու ո՛րէէ դէմք, նո՛յն իսկ տարիներ յետոյ, և այ՛ն մասին է որ պիտի պատմեմ հոս հետաքրքրական դրուագ մը:

Ատանայի վարժարանին անօրէն եղած ժամանակ Չրաքեան կ'ունենայ փոքրիկ աշակերտուհի մը, տգեղ, անհամակրելի դէմքով:

զոր չի կրնար սիրել ան, և այդ պատճառաւ գրեթէ զայն չի յիշեր՝ Պոլիս դարձէն յետոյ:

Օր մը սակաւն նամակ մը կը ստանայ անոր հօրմէն, որ աղջնակին մահը ծանուցանելով կը ցաւի անոր ո՛նէ նկար չունենալուն համար, և կ'աղաչէ որ ի՛նք դձէ հատ մը, զոր պիտի դար առնելու՝ մօտ ատենէն իր Պոլիս ճամբորդութեան առթիւ: Չրաքեան քանիցս կ'ուզէ փորձել. բայց իր յիշողութիւնը կը դաւաճանէ իրեն: Օրեր կ'անցնին այսպէս, մինչև որ նամակ մ'ալ կը ստանայ անկէ՝ թէ մէկ երկու շաբաթէն պիտի հասնի Պոլիս, և անա, իր անձկութեան մէջ, դիշեր մը, յա՛նկարծ կ'ուրուագծի ան՝ իր երեակայութեան առջև, տարտամօրէն: Չրաքեան սեղանին զուսը կ'անցնի անմիջապէս, և մատիտի քանի մը հարուածներով կը գծէ զայն թուղթի վրայ: Առաւօտուն երբ իր կիներ կը տեսնէ զայն, կը ճանչնայ, և անունը կուտայ մեռնող աղջկան: Չրաքեան վերհպում մ'ալ կը կատարէ անոր, և յաջողութիւնը կ'ըլլայ ա՛յնքան կատարեալ որ, երբ աղջկան ծնողքը պատին վրայ կը տեսնեն զայն՝ իրենց այցելութեան առթիւ, կը սկսին արտասուել իրենց կրած յուզումէն:



ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆ

Անգամ մը Սկիւտարու Ռամկավար Ակումբին կողմէ իրմէ խնդրեցի դասախօսութեանց շարք մը, իրեն յարմար դատած ո՛նէ նիւթին վրայ: Չրաքեան այն ատեն ընտրեց հոգեբանութիւնը, ուր ի յայտ կու գար խոր հաւատացեալի իր խանդավառութիւնը, երբ այդ կերպով առիթ կ'ունենար խօսելու հոգւոյ անմահութեան և Աստուծոյ հետ անոր ունեցած յարաբերութեան մասին: Բայց այնպիսի շրջանի մը մէջ, երբ ուսուցիկ ու սնամէջ խօսքեր շա՛տ աւելի արմէքաւոր կը թուէին սահմանադրութեան զինովութեան մէջ ընդարմացած մըտքերու, և «յեղափոխական գործիչներ» ներու կողմէ նորոյթի կարգ էր անցեր ընկերային անմարսելի կարգ մը տեսութեանց տարփողանքը, ինտորայի ա՛յնքան օգտակար ու շինիչ բանախօսութիւնները հարկ կ'ունենային ցանցառ ունկնդիրներ, և ան ալ Սկիւտարի նման ուսումնասէր ճանչցուած հայաշատ կեդրոնի մը մէջ: Եւ տակաւին չեմ սուսնասէր հայ տառերու մասին իր կատարած հետաքրքրական և հրմտալից մէկ բանախօսութիւնը, ուր ան Այբ ու Բենքի տառերու ար-

դի ձևին մէջ կը դռնէր հայ ցեղի նկարագրին որոշ մէկ արտայայտութիւնը:

Ինտրայի հոգեպաշտ հակումները իրեն համար սիրելի դարձուցեր էին արդէն Ոգեհարցութիւնը, որու փորձերուն կը նուիրէր յաճախ՝ երկար ժամանակ, և անոր արդիւնքին յաջողութեան համար երբեմն կը դիմէր նաև մէտիոսներու օգնութեան: Այդ փորձերուն հետեանօք էր որ ինք համոզում գոյացուց հոգիներու վերամարմնաւորութեան, ստուգութեան, և հաւատաց միանգամայն՝ թէ նախորդ կեանքին մէջ ինք ծնած էր Եգիպտոս, և եղած՝ դրաւաճառ ու հեղինակ: Ոգեհարցական այդ փորձերուն մէջ ինք անձնապէս աստիճան դիւրութիւն ձեռք բերած էր վերջերս որ, երկրորդի մը հետ հազիւ իր մատը դրած գաւաթին վրայ, ան կը սկսէր արդէն շարժումներ կատարել ղէպի Այդ ուրեմնքի տառերը, հետզհետէ իրարու կապելով զանոնք և կազմելով բառեր ու նախադասութիւններ, հոգ չէ՝ թէ շատ անգամ անիմաստ ըլլային անոնք և անկասկած:

Չրաքեան կը հաւատար ասկաւ ին հոգիներու հետ հազորակցութեան աւելի կատարեալ և ուղղակի միջոցներուն, բայց ատոր համար թափած իր ճիգերուն յաջողութեան զեռ հասած՝ տեղի ունեցած ճակատագրական զէպք մը, որ բոլորովին յեղաշրջեց զինք՝ զարմանալի դիմադարձութեան մը ենթարկելով զայն, և այս պարագան էր որ յետոյ պատճառը դարձաւ գոնցէ՝ իր եղբրական ցաւալի մահուան:

913ին էր կարծեմ, երբ Պոլիս եկաւ շարժապահ գերման քարոզիչ մը, և հայ թարգմանի մը միջոցաւ մի քանի բանաստեղծութիւններ ըրաւ սրահին մէջ Սկիւտարու Յառաջդիմական Միութեան, որուն Չրաքեան ատենապետն էր երկար ժամանակէ ի վեր:

Այդ բանաստեղծութիւնները և նոյն քարոզչին հետ ունեցած մի քանի մասնակի տեսակցութիւնները հիմն ի վայր փոխեցին իր գաղափարներն ու համոզումները, և շարժապահ մի քանի դորձերուն թերցումին հետ հակեցաւ վերջնականապէս անոր վարդապետութեան:

Երբեմնի Տարուիսեան կոյր և անձրագիր բնաշրջութենէն ղէպի նուրբ ոգեկանութիւն իր թեքումէն յետոյ, ուր պաշտումի չափ սէր կը ցուցնէր նաև իր մայրենի եկեղեցւոյն հանդէպ, Չրաքեան, հիմա, նոր ոստումով մը, կ'ընդգրկէր շարժապահ վարդապետութիւնը: Ան հակելով կէս մը բնապաշտ տեսութեան, կ'ուրանար նոյն իսկ հոգիներու գոյութիւնը և յետ մահու անոնց անմահութիւնը, սատանաներու զրդումին վերագրելով բովանդակ մարդկութեան մէջ արմատացած անդրդիւրի այդ համոզումը, զանոնք մեղանչումի առաջնորդ

համար հեշտիւ Այս կերպով ան կը մոռնար բոլորովին՝ թէ ինք ինչ-պէս երբեմն խնդրած էր ողբացեալ Պէրպէրեանէն փոխադարձաբար երեւի իբարու՝ լուսաւոր մարմնով, իրենցմէ միոյն մահէն յետոյ:

Իր Խղատախոհ իմաստասէրի հզօր միտքը. աւա՛ղ, կորսնցուց հետզհետէ իր լայն հորիզոնները, և շղթայուեցաւ աղանդաւորի նեղ-միտ մոլեռանդութեան, հաւատալով նո՛յն իսկ՝ թէ Ս. Գրքին ամէն մէկ բառը գրուած էր աստուածային ներշնչման տակ, և հետեւաբար թոյլատրելի չէր մարդկային մտքին այդ մասին կատարել ո՛րէէ քննադատութիւն: Այս համոզումը հետզհետէ ա՛յնքան խոր կերպով արմա-տացաւ իր մէջ որ, իրբե նոր Հիմննոս մը Փիղետոս մը ի՛նքն ալ տարացաւ ճշմարտութենէն, և բոլոր եկեղեցիներու հետ «ներձուածող» վրիպեցաւ ճշմարտութենէն, և բոլոր եկեղեցիներու հետ «ներձուածող» ու «կռապալտ» նկատեց նաև իր մայրենի եկեղեցին, ամբաստանելով՝ թէ ա՛ն ալ միացած էր Շարաթը Կիրակիի փոխելով Աստուծոյ հրա-մանին զէ՛մ ըմբոստացողներու, և տակաւին կը թոյլատրէր պատկեր-ներուն ալ պաշտամունքը, ընդոտնելով տասնարանեայ պատուիրանը:

Ծննդոց գիրքը, տիեզերածնական իր պատմութեամբ, այլևս խորհրդակալ կամ աւելի ճիշդ խորհրդագիտակալ ո՛չ մէկ իմաստ ու-նէր իրեն համար, և երբեմնի քննական այդ մեծ միտքը զարմանալի քարացումով մը կը հաւատար հիմա տիեզերքի վեցօրեայ արարչու-թեան, անոր տառացի բոլոր մանրամասնութեամբ, անկէ դուրս ա-մէն տեսութիւն նկատելով որպէս զրգումը աստանային:

Այս համոզումն ալ այնքան խորացաւ իր մէջ որ, ինչպէս կ'ամ-բաստանեն էօմէր Սալիֆան, ան ալ ներկայի և ապագայի բոլոր գի-տութիւնը, իմաստասիրութիւնն ու գրականութիւնը ամփոփուած նկատեց միայն Ս. գրքին մէջ: Եւ եթէ էօմէրի նման պատենութիւն չունեցաւ բոցերու մատնելու Ազեքսանդրիոյ հռչակաւոր մատենա-դարանը, անոր բովանդակած բիւրաւոր հատորները կամ համաձայն և կամ հակառակ նկատելով Գուրանի ուսուցման և հետեւաբար ան-պէտ, սակայն ինքն ալ արհամարհեց այնուհետև գիտութիւնը, զրա-կանութիւնն ու արուեստը, և ամենատիկնչ գնով ցրուեց իր մատե-նադարանին արժէքաւոր հատորները, զորս երբեմն իր աչքերուն ըի-ռին չափ կը սիրէր, և զանոնք ձեռք անցուցած էր նիւթական ի՛նչ գոհողութեամբ ու զրկանքներով: Տակաւին կարճ ժամանակ մ'ալ պահեց ան իր դասերը Պոլսոյ գլխաւոր վարժարաններուն մէջ, բայց անոնք զուրկ մնացին այլևս օգտակարութենէ, վասնզի ո՛չ աշակերտք նախկին յարգանքն ունեցան անոր հանդէպ, և ոչ ալ շարունակեցին ունկնդրել զինք՝ երբեմնի հետաքրքրութեամբ:

Չրաքեան զպրօցը լքած ու քարոզիչ դարձած էր Պոլսոյ շաքաթապահ բեմին, երբ ծագեցաւ ընդհանուր պատերազմը:

Իր երբեմնի աշակերտները երախտագիտական աղնիւ զգացուժով մը առաջարկեցին իրեն՝ հայթաիթիլ զինուորական փրկանքը, եւ զերծ պահել զինք զինուորական ծառայութենէ: Չրաքեան սակայն մերժեց այդ առաջարկը, և զրկուեցաւ Թէքիր տաղ՝ իրրև հասարակ զինուոր: Հոն, բախտի դարմանալի բերուժով մը, իրեն հանդիպեցաւ բարի և աղնիւ սպայ մը, որ հաւանեցաւ զիջիլ անոր խնդրանքին՝ անդէն ո՛րէք ծառայութեան մէջ գործածուելու համար, և զայն կարգեց վաշտին գրագիր:

Այդ չըջանին էր որ Չրաքեան կ'իմացնէր՝ թէ վաշտին մէջ հանդիպած էր մեր նախկին աշակերտներէն հայ երիտասարդի մը, որուն մէջ պատրաստ հոգի մը գտած էր Աստուծոյ խօսքն ընդունելու համար: Մօտէն ծանօթ ըլլալով նո՛յն երիտասարդին՝ առաջին առթիւ դարմանալի թուեցաւ ինձ անոր տուած տեղեկութիւնը, և ստուգիլ երբ յիշեալը դարձաւ զինուորութենէ, ինձ յայտնեց՝ թէ Չրաքեանի քարոզութեանց մասին իր ցոյց տուած հետաքրքրութիւնը կեղծիք էր պարզապէս:

Շատ երկար չտեք սակայն Ինտրայի զինուորական ծառայութիւնը, զոր նկատած էր իրրև «առաքելական» կոչում, Տիրոջ խօսքը քարոզելու թուրք բանակին մէջ: Կ'երևի՝ թէ ան փորձով տեսաւ զինուորական խստութեանց անհանդուրժելի հանգամանքը, և հեռուաբար իր «առաքելութեան» ալ ձախողանքը, և անսալով ամէն աղէք երեսուն և հինգ հոգինոց բարեյոնեան իր փոքրիկ հօտին թելադրութեանց, ստիպուեցաւ ընդունիլ իր աշակերտներուն կողմէ հաւաքուած գումարով փրկանք տալու առաջարկը, և վերադարձաւ Պոլիս:

Այդ օրերուն էր որ իրեն հանդիպեցայ Ալիւտարու շոգենաւին մէկ անկիւնը. անութիւն տակ տեղաւորուած Ս. Գիրքով մը, որուն գրեթէ բոլոր էջերուն վրայ կային դոյնզդոյն մատիւներով ենթագծեալ հատուածներ, և անոնք ըստ իրան ալ առնչութիւն ունէին քրիստոնէական գանազան վարդապետութեանց հետ:

Ոչ ի՛նչ փոխուած էր իր արտաքին երեւոյթին մէջ: Նո՛յն սյացիկ նուրբ հասակը՝ երկայն ռեհեմկոթի մը մէջ սեղմուած, և նոյն դեղեցիկ գլուխը՝ իր արտասովոր, պառկառազգու գանկով, առատ մազերով, ակնոցին ետև իր խոշոր, իմաստուն աչքերուն արտայայտիչ նայուածքով ու սրածայր մ'օրուքով:

Չափազանց մտերմական վերաբերում մ'ունեցաւ հետս, հրաւիրեց զիս ներկայ ըլլալու իրենց հոգեւոր ժողովներուն Ալիւտարու մէջ:

իր «Նոճկաստան» հատորէն՝ չունէի ես, և խօսակցութեան ընթացքին հարցուցի՝ թէ իր քով կը գտնուէ՞ր անկէ աւելորդ օրինակ մը:

— Ինձ հետ եթէ տուն գաս՝ հաս մը կրնամ տալ քեզ պատասխանեց ան, և ընկերացայ իրեն մինչև Սելամարզ:

Ճամբուն վրայ իր խօսքերը ո՛չ մէկ առնչութիւն ունէին այլևս աղղային հարցերու հետ, և ան ընդհանուր պատերազմի աղէ՛տն իսկ կը ջանար բացատրել շարաթապահ տեսութեամբ:

Պիտի չկրնամ մոռնալ երբէք այն խղճալի վիճակը, որուն հետ դէմ հանդիման գտնուեցայ իր՝ տունէն ներս իմ մուտքին հետ:

Կինը՝ իր մէկ հատիկ զաւակին հետ՝ արդէն հեռացեր էր անկէ, չուզելով համակերպիլ իր ամուսնոյն պնդումներուն՝ Շարաթապահ դռնալու համար: Ծւ տակաւին չեմ գիտեր՝ թէ ո՛րքան ճամբարիտ էին այդ պատճառաւ իրեն վերադրուած անհաւատալի խտուրթիւնները, որոնք բերնէ բերան չըջան կ'ընէին այդ օրերուն: Սա ստոյգ է սահայն որ աղանդաւորի մը մտայնութիւնը նո՛յն իսկ անտես առնել տուած էր իրեն իր սիրած Պօղոսին սա բացորոշ պատուէրը, «եթէ կըրայր կին ունեցի անհաւատ... մի՛ թողցէ զնա»:

Տան մէջ սամէն ինչ խառն ի խառն էր, երկար առնէ ի վեր զրկուած ըլլալով կնոջական ձեռքի մը խնամքէն: Այն սենեակը մանաւանդ, ուր առաջնորդեց զիս Չրաքեան, կը պարզէր վիճակը անխնամ ամուրիի մը ննջարանին Մէջտեղի սեղանին վրայ բրգացած էին զուռաւոր կողքերով շարաթապահ գրքոյկներ ու թուղթեր, որոնց վրայ կարծես խաւ էր կապեր հետզհետէ դիզուող փոշին: Աւարի տրուածի երեւոյթը կը պարզէր իր երբեմնի ճիս մտանադարանը, ուր կը մնային տակաւին սակաւաթիւ լքուն հատորներ, իրարու վրայ պառկած: Անոր դարակներէն մին քաչեց Չրաքեան, դուրս հանեց պնակով չամիչը՝ ուրկէ մեծարեց ինձ, և օրինակ մ'ալ նուիրեց իր «Նոճկաստան» հատորէն:

Գրքին կողքին վրայ նկարուած էր զեղեցիկ նոճկաստան մը. այս կամ այն կողմ ծած թրքական դերեզմանաքարերով, և ես հեռաքրքրուած երբ հարցուցի իրեն՝ թէ ո՛ւրկէ առած էր անոր նախատիպը, ան զիս մօտը տարաւ պատուանին, և անկէ ցոյց տուաւ իմ առջեւ պարզուող տեսարանը: Հիացումս յայտնեցի իրեն այն ճշգրիտ նմանութեան մասին, զոր նկարն ունէր ընականին հետ, բայց ան դժգոհանքով ցնցեց զլուսը, յայտնելով՝ թէ չէր յաջողած նոճիներուն ընծայելու հարկ եղած գոգաւորումը:

Իր արամադրութիւնը փորձելու համար յիշեցի «Ներաչխարն»ին

հրաշալի մասերը, զորս մոռցած կը թուէր հիմա, և երբ ընդհատեցի խօսքս, ան հազիւ թէ պատասխանեց չոր կերպով. — «Պարա՛յ աշխատանք»: Զգուշացայ ո՛ւրէ բան հարցնելու իր կնոջ ու զաւակին մասին, որոնցմով կարծես չէր հետաքրուեր այլևս, և քիչ յետոյ երբ ինքն ալ պատրաստուեցաւ տունէն դուրս ելլել ինձ հետ, րաժանուամէն առաջ խօսք առաւ ինձմէ՛. օր մը անպատճառ ներկայ գտնուելու իր քարոզութեանց:

Յարգեցի խոստումս, և փոխան մէկի՛ երկո՛ւ անգամ ներկայ եղայ անոնց, Արապ Զատէ, տանը մէջ «քոյր էվանթիա»ի, որ թրքախօս կին մ'էր՝ իր ամուսնոյն նման, և այս վերջինը շարաթապահ իր հայ քեռայրին հետ դատի մէջ էր տասնեակ տարիներէ ի վեր՝ դրամական խնդրոյ մը առթիւ:

Շարաթական այդ հաւաքումներու համար «քոյր էվանթիա» յատկացուցած էր իր տանը սենեակներէն մին, ուր հաւաքուած էին տասնեակոթէն քսան ասորիկան վեց հօթը հայ աղջիկներ, բոլորն ալ մայրենի եկեղեցւոյ զաւակներէն և մեծամասնօրէն ինձ ծանօթ ընտանիքներէն, որոնց ինտրա կը մեկնարանէր Ս. Գիրքը:

Կրօնական քարոզութենէ մը աւելի ուսողութեան դասի մը ներկայ ըլլալու տպաւորութիւնը ունեցայ՝ Զրաքեանը կանդնած տեսնելով սև դրատախտակին առջև, ուր սնն հատուած մը կը մեկնէր Յայտնութեան գրքէն, թուարանական մանրազննին հաշիւներով: Բոլորին ձեռքերուն մէջ ալ անպակաս էր Ս. Գիրքը, և Զրաքեան՝ իր մեկնարանութեանց հետ՝ մարգարէութեանց զանազան գլուխներու կը զրկէր յաճախ իր ունկնդիրները, աւելի՛ համոզիչ դարձնելու համար անշուշտ իր փաստերը: Տան օրիկներ դուրս կ'ելնէր երբեմն, առանին անհրաժեշտ պէտքերէ զրոգելով հաւանաբար, բայց երկու անգամ ալ Զրաքեանի կողմէ ներս կ'անշուեցաւ ան՝ քարոզի վերջաւորութեան ժողովը փակելու համար իր թրքերէն աղօթքով:

Պիտի չկրնամ բառ առ բառ կրկնել հիմա, ինչ որ կ'արտասանէր «քոյր էվանթիա» իր կարծ աղօթքով, աջ ձեռքը ճակատին տարած և կիսովին զոցած իր աչքերը: Բայց տակաւին մտքէս ջնջուած չէ տրպաւորութիւնը սնոր կոշտ թուրքերէնին ու պաղ, հասարակ խօսքերուն, որոնց զարմանալի երկիւղածութեամբ մը կ'ուռնկնդրէր ինտրա, միւսներուն նման յոտնկայս, մոռցած բոլորովին, աւա՛ղ, իր մայրենի եկեղեցւոյն հոգեղմայլ աղօթքները, հրեշտակային քաղցրութեամբ...

Երկրորդ անգամ, երբ միտասին դուրս ելանք Զրաքեանին հետ, երկար վիճարանութիւն մը տեղի ունեցաւ. մեր մէջ հոգիներու զոյւթեան ու Շարաթու մասին:

Իմ փաստերը կը յենուին աւելի տրամաբանութեան տուեայներուն, քան՝ Ս. Գրքի համարներուն վրայ, թէ և յիշել չմոռցայ իրեն Շարաթու մասին Բրիտտոսի խօսքերը՝ երեք համարարառ Աւետարաններու մէջ, ուր աշխարհի Փրկիչը այնքան պարզ ու որոշ կերպով կը յայտարարէր մարդուն գերազանց արժէքը Շարաթու վրայ, անոր երջանկութեանը սահմանելով դայն, և ո՛չ թէ մարդը գերի դարձնելով Շարաթու թալմուտական բռնապետութեան:

Անկեղծօրէն ըսեմ՝ թէ իր ս. գրական հմտութիւնը չէր կրնար երբէ՛ք համեմատութեան գրուիլ այդ մասին իմ թերի ծանօթութեան հետ: Բայց ո՛չ ապաքէն ևս ալ Ընդհանրական Եկեղեցւոյ փաստնունէի ինձ հետ: Մեր վիճարանութիւնը չյանգեցաւ այդ օր ո՛նէ եղբակացութեան, զի եթէ ևս փաստերուս մէջտեղար մնացած, բայց համոզուած ալ չէի երբէ՛ք, իսկ ան մինչև վերջ կը պնդէր ինձ՝ հոգւոյ գոյութեան և անմահութեան ու Շարաթու փոփոխութեան մասին ցոյց տալ Ս. Գրքէն ո՛նէ փաստ և կամ յիշատակութիւն:

Մեր բախանուժը շատ սիրալիր չեղաւ այս անգամ, և այս՝ հակառակ իմ ճիշդերունու Չրաքեանի ցոյց տուած հիանալի հանդարտութեան ու եղբայրական ժպտին, և կրկին ժողովի գալու համար ինձ ըրած իր ջերմ յանձնարարութեան: Հայ եկեղեցւոյ ազատականութեան դէմ իր յարձակումները խռոված էին զիս, և ևս ճամբուն վրայ, այդ տպաւորութեան տակ, որոշեցի զիմում կատարել հոգեւոյս Տէր Եղիշէ Արք. Իուրեանի, որ ընդհանուր պատերազմի հայաջինջ ազգէտէն հրաշքով խուսափած, կը մնար իր եղբոր, փաստաբան պ. Ազրիսպասի բնակարանը: Այս որոշումս յայտնեցի նաև հանգուցեալ Լ. Քիւրքճեանի, որ Քաղաքական ժողովոյ իրրև քարտուղար ծանօթ էր Արքազանին, և ան հաւանեցաւ ընկերանալ ինձ:

Ամառնային կէս օրէ մը յետոյ ճամբայ ելանք անոր հետ՝ դէպի Գառը գիւղ, Սէյիտ Անմէտի գերեզմանատան նոճեղարդ ուղին բռնելով արևի ջերմութենէն պաշտպանուելու համար, քանի որ այդ օրերուն փոխադրութեան միջոց գրեթէ վար, պատերազմի պատճառաւ շոգնաւերու երթեկին նուազութեան և կտոք քաշող ձիերուն պատերազմական նախարարութեան կողմէ զբաւուած ըլլալուն պատճառաւ:

Գառը գիւղի մէջ գտանք Արքազանին բնակարանը, և առաջնորդուեցանք անոր աշխատութեան սենեակը:

Հոն հայկական ազգային և ընդհանուր պատերազմին վրայ տեսակցելէ յետոյ՝ Լ. Քիւրքճեան բացատրեց Արքազաղին մեր այցելութեան զրդապատճառը: Քիւրքճեանէն յետոյ ևս տուի մանրամաս-

նութիւններ՝ Չրաքեանի հետ մեր վիճարանութեան նիւթին մասին խնդրելով Սրբազանէն՝ որ ինձ ծանօթացնէ ուղղափառ եկեղեցւոյ այն մասին ունեցած փաստերուն:

Գուրեան Սրբազան, զիս ունկնդրելէ յետոյ ցաւ յայտնեց Չրաքեանի մասին, աւագելով որ հանձարի մօտեցող անոր հազուադիւր տաղանդը փոխանակ հոն հասնելու՝ ցաւայի ախտանիշը կը պարզէր հիմա անհաւատարակութեան ու վատասերումի:

— Հոգիներու դոյութեան և անմահութեան հաւատքը, ըստ անի հիմն է բոլոր կրօններու, և անոր վրայ հաստատուած է նաև տիեզերական փիլիսոփայութիւնը: Ս. Գիրքը չի կրնար ըստ ինքնեան բացառութիւն մը կազմել: Իսկ Կիրակիին համար հարցո՛ւր իրեն թէ ի՞նչ կը նշանակէ Յայտնութեան գրքին Ա. դիտուն 10 համարին մէջ յիշուած Կիւրակի բառը: Այդ խնդիրը առաջին դարերու մէջ ստացած էր արդէն իր լուծումը, և ընդունուած՝ բոլոր եկեղեցիներու կողմէ՛: Այնպէս որ երբ շատ մը հարցեր վիճարանութեան նիւթ դարձան յետոյ՝ եկեղեցիներու մէջ, և խորացուցին հեազհեաէ ցաւայի պատակաւ տուժները, եկեղեցական պատմութիւնը չի յիշեր սակայն պարագայ մը, ուր վէճի առարկայ դարձած ըլլայ Շարաթու խնդիրը:

Այս անգամ բաւական լաւ զինուած էի վիճարանութեան մը ներու Չրաքեանի հետ, և այդ առիթը չուշացաւ:

Օր մը կրկին հանդիպեցայ իրեն Սկիւտարու շոգենաւին մէջ, ուր անկիւն մը քաշուած կը թղթատէր իր Ս. Գիրքը: Զինքը նեղր դնելու համար նուէր ուզեցի զայն՝ որ չտուաւ, բայց խոստացաւ իր պարագայ ժամերուն պատրաստել անոր յար և նմանը, և ընծայել ինձ: Իրեն հետ ե՛ս ալ Սկիւտարու նաւամատոյցն ելայ, փոխանակ շարունակելու ճամբաս մինչև Գուղգուենձուք, և երբ ամայի ճամբու մը վրայ մնացինք առանձին, այս անգամ ես րացի վիճարանութեան նիւթը, և Շարաթու և հոգիներու դոյութեան մասին կրկնեցի այն բոլորը, ի՞նչ որ սորված էի Գուրեան Սրբազանէն:

Չրաքեան կուսնեց թերևս նոր դէնքերուս միջերանոցը, բայց առանց լքելու իր հանդարտութիւնը՝ դարձեալ շանաց զիս տարհամո՞ղ զել, և պապականութեան վերագրեց Շարաթը Կիրակիին փոխելով «աստուածադիր» օրէնքը խափանելու և Ս. Գիրքը ուղածին պէս աղաւաղելու փորձը, և սատանային բեռցուց կրկին՝ հոգիներու անմահութեան գաղափարին տեղաւորումը մարդոց մէջ, հարթելու համար անոնց առջև մեղանշումի ճամբան:

— Ուրիմն երբ եկեղեցիներ չեն պահած Շարաթը, արդեօք այն պատճառաւ փրկութենէ զրկուած են նաև երկիւղած ու բարեպաշտ հաւատացեալները ինչպէս նաև յայտնի սուրբերը, հարցուցի իրեն:

— Խնդիրը աստուածադիր ո՛րեւէ օրէնքի քակտումն է, ըսաւ ան, որիկէ յետոյ կարելի կ'ըլլայ շա՛տ դիւրաւ այլայլել բովանդակ Ս. Գիրքը: Հետեւաբար բոլոր անոնք որ հաւանած են Շարաթու փոփոխութեան, ատո՛վ իսկ ըմբոստացած են Աստուծոյ դէմ, և հեռացուցած զիրենք՝ փրկութեան հնարաւորութենէն:

— Ուրեմն զուք համողուա՞ծ էք որ Նարեկացոյ և Շնորհալիի նման հրեշտակաիրօն անձեր ալ կորսուած են Շարաթու պատճառաւ:

Կ'երեւի՝ թէ Հայ եկեղեցւոյ ոգին վերագարթում մ'ունեցաւ իր մէջ: Վասնդի ան չկրցաւ մէկէն պատասխանել ինձ, հաւանաբար խղճանարութենէ զրդուած, և պահ մը լուռ կենալէ յետոյ դժուարաւ կրցաւ ըսել:

— Այո՛:

— Թող այդպէս ըլլայ, ըսի ես ալ և աւելցուցի, սակայն ես աւելի պիտի նախընտրեմ կորսուիլ Նարեկացոյն և Շնորհալիին հետ, քան թէ փրկուիլ՝ աշխարհի բոլոր Շարաթապահներուն հետ:

Վշտակրած էի խորապէս բայց իմ ցաւը չէր բխեր մայրենի եկեղեցւոյ հանդէպ անոր ունեցած անարգալի վերաբերումէն միայն, և վայրկեան մը աչքիս առջև պատկերացան իրարմէ բոլորովին տարբեր երկու Չրաքեաններ: Մին անցեալին ինտրան էր, իր քննական մտքով և հմտութեան լայն պաշարով, այժմ անհետ դարձած բոլորովին, իսկ միւսը հասարակ աղանդաւորի աստիճանին իջած Չրաքեանը, մտասուեւորուն իր նեղմիտ վաքդապետութեան:

Մեր առաջին բաժանումն եղաւ ան, պաղ և գրեթէ բռնի ըսուած «մնաք բարով»ի մը հետ, որ, աւա՛ղ, վերջինն ալ եղաւ անոր Գոնիա մեկնումով, իբրև շարաթապահ քարոզիչ, ուրկէ խեղճ Չրաքեան սքսորուեցաւ որպէս «կիրիկեան գործիչ և յեղափոխական», և երկար ու ասժանելի ճամբու մը վրայ հիւանդանալով ու մեռնելով գրեթէ մերկ զրուեցաւ ի գերեզման՝ Տիարպէքիրի մօտ, գետի մը եզերքը, իրմէ անբաժան մնացած Ս. Գրքին հետ:

ԳՐ. ՆՇԱՆԵԱՆ

ՕՏԱՐՆԵՐԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ

Վ Ե Ր Զ Ի Ն Պ Ո Վ Տ Ա Ն Ե Ա Ն Ը

Գրեց՝ ՉՈՅՄՈՒՇ ՃՈՒԼԱ*

Երբ Գարրիէլ Պոկտանեան իմացաւ թէ իր ազգատոհմը բոլորովին փճացած է բարբարոս Քուրտերէն, և իր ընտանիքին վերջին անդամն իսկ սպաննուած է՝ այլևս իր ծննդավայրը չզարձաւ, այլ մեծ աշխարհի մէջ իբրև անհայրենիք գտնուելաւ մը մնաց:

Մէկ գիշերուան մէջ յանկարծ ճերմկած էին մաղերը, ա՛յնքան ճերմակ ինչպէս լուացուած ոչխարի բուրդը: Միայն աչքերը մնացած էին սև ու արցունքոտ, ինչպէս սովորական է իսկական Հայուն:

Երկրէ երկիր կը շրջէր այն պահուն, երբ սկսան հայկական հարածանքները, և այդ ատեն առևտրական պայմանագրութիւններ կը կնքէր, որոնք իր հայրենիքին զարգացման պիտի ծառայէին: Բայց երբ հայկական հարածանքները սկսան, արևելքէն փչող հովերու ընդ մէջէն լսեց փճացող ցեղին լացի ձայնը, և հողւոյն մէջ զգաց ընտանեկան սրբութիւններու ոտնահարումը և անմեղ մանուկներու դիակներով լեցուած կառքերուն զրդբիւնը:

Արևելքէն դէպի երկինք դարձուց նայուածքը, և անկից ի վեր Գարրիէլ Պոկտանեան դագրեցաւ հարստութիւն զիգելէ: Կեանքը իրեն համար այլևս իմաստ չունէր, որովհետև աշխարհի վրայ մէկը չունէր: Ծերացաւ և սարսուռ մը զգաց, մահուան ցուրտ սարսուռ մը. ա՛յնպէս կը զգար, թէ այլևս երբեք պիտի չտաքնար: Առանձնացած կեանք մը կ'ապրէր, և միայն ա՛յնքան կը խօսէր՝ որքան անհրաժեշտ էր: Փաքրիկ բնակարանը, որ վարձած էր Ս. Յլորիանիար՝ ձանին ետև՝ բլուրի մը կողքին կծկուած էր. իր մէջ բնակողին պէ՞

*) Հունգար գրագէտ մրն Է Չոյմուշ Ճուլա, որ ծանօթ հայ կեանքին գրած է այս պատմուածքը. հրատարակուած Օռասեայի «Մահառ Կարօք» (Magyar Lapok) օրաթերթին մէջ, 1938ի սկիզբները:

երկու փոքր պատուհաններէն ներս երթեք մուտք չէին գործեր արեւուն շողերը: Նոյնպէս դուրս չէր ցոլանար ներսը պլպլացող լամբին լոյսը: Միայն ձմեռը, նուրբ ծուխ մը կը բարձրանար ծխնիէն, ու այս էր միայն կեանքի նշոյլը որ Գարրիէլ Պոկտանեանի աշխարհէն կու գար:

Մարդիկ, որ զինքը կը տեսնէին մերթ ընդ մերթ, երբ տուներու առջեւէն կ'անցնէր, շատ մը բաներ կ'ըսէին անոր մասին: Բայց իրական բան մը ո՛չ ոք գիտէր: Թշնամի չունէր, ինչպէս բարեկամ՝ ալ չունէր: Մարդոցմէ բան մը չէր սպասեր այլևս:

Ինչ որ դեռ մնացած էր անցեալի կեանքէն, այդ տակաւ առ տակաւ փչրուեցաւ ա՛յն գիտակցութեամբ՝ թէ ամէն օր աւելի կը մօտենար երկնից արքայութեան, որուն այնքա՛ն կը բաղձար, որովհետեւ հաստատապէս գիտէր թէ իր սիրելիները, որոնք սպաննուեցան իրենց հաւատքին համար՝ հո՛ն պիտի գտնէր ամէ՛նքը, որոնք իրե՛ն կը սպասէին, վերջին Պոկտանեանին:

Թէև մարդիկ չէին ճանչնար իրենց խաղաղ դրացին, բայց զիտէին որ գաղտնիք մը ունէր՝ զոր չէր ուզեր ուրիշին մասնել: Ունէր շաղանիքներ, այո՛ւ, բայց անոնք միայն այն պահուն իմացուեցան, երբ այլևս ուշ էր, երբ Գարրիէլ Պոկտանեան զերեզմանատուն առաջնորդուած էր:

Առտուները, երբ Պոկտանեան պտոյտի կ'ելլէր՝ ոչ ոք կը կասկածէր թէ գրպանին մէջ պահած զրամ ունի, և կամ այդ զրամը անյայտօրէն տեղ մը ծախսուած էր:

Երբ զրամի պէտք ունենար՝ իր սնտուկէն դուրս կը հանէր ժպիտով մը, և անոնց տեղ կը դնէր արցունքի քանի մը կաթիլներ, արցունքներ՝ որոնք խինդով ու տառապանքով իրարու շաղախուած էին:

Բայց ո՛ւր կարելի էր գտնել ու գնել ուրախութեան արցունքներ — Որովհետեւ գիտենք թէ արցունքները ընդհանրապէս ցեխի կը վերածուին և ցեխէն փոշի: Ըստ հովը առնելով կը տանի, կը ցրուէ աշխարհի չորս դին:

Այս ալ իր գաղտնիքն էր, որուն ոչ ոք կրցաւ տիրանալ: Որովհետեւ մահէն ետք, երբ պաշտօնական անձինք իր սնտուկը բացին ու քննեցին՝ հին ոչինչ գտան, բացի ամբ մը փոշիէ, որ սնտուկին յատկը մնացած էր:

Ափ մը փոշի՛ . . . , և այս ամբ մը փոշիին մէջ էր ամբողջ կեանքի մը վարձատրութիւնն ու տառապանքը: Ես այդ ամբ մը փոշին աւելցի՛ ձեռքովս ու պահեցի բեւերեղեայ շիշի մը մէջ:

Որովհետեւ գիտէի, կը զգայի որ այդ ամբ մը փոշիին մէջ Գար-

րիէլ Պոկտանեանի սրտէն մասնիկ մը կար, այն սրտէն, որ հիմա հոն վերը աստղերուն մէջ պիտի ըլլայ: ուր հրեշտակներ սպիտակ ծաղիկներով կաղմուշած անթառամ պսակ մը կը դնեն վրան:

Գարբիէլ Պոկտանեան մարտիրոս մը չեղաւ, թէ և մարտիրոսութեան արժանի ըլլալ կը բաղձար, և այդ բաղձանքին արժանացաւ:

Անոր մահէն վերջ սկսան ի յայտ գալ անցեալի մէջ ըրած բարիքները, որոնք ծածուկ, գաղտագողի և անանուն ըրած էր:

Դպրոցական պատանի մը ճանչցաւ զինքը զագաղին մէջ, և պատմեց ինչ որ պատահած էր իրեն: — Դպրոցին առջև կեցած տեսայ զինքը կարծես հանրակառքի կը սպասէր և մերթ ընդ մերթ կը դիտէր չպրոց մանող և ելլող աշակերտները:

Յուրտ էր և ես ձմեռուայ վերարկու չունէի: Ուշադրութեամբ զիտեց զիս, և երբ ետիս գարձայ տեսնելու համար թէ ինչու ինձ կը նայի այս աղբարիկը, ան դեռ կը դիտէր զիս: Երբ դասէն վերջ զըսրոցէն ելանք՝ դարձեալ նոյն տեղը կեցած գտայ զինքը:

Ինձ մօտենալով նամակ մը գրաւ ափիս մէջ, խնդրելով որ բարի ըլլամ մօտակայ վաճառատունը տանելու: Ես նամակը առնելով վազեցի ցոյց տրուած վաճառատունը, որ ճամբուս վրայ էր: Վաճառականը նամակը կարդալէ վերջ գեղեցիկ հագուստ մը և ձմեռուայ վերարկու մը տուաւ ինձ և նամակը դարձեալ փակելով ուրիշ վաճառականի մը խանութը զրկեց: Հոն կօշիկ և գուլպայ տուին ինձ: Ի վերջոյ երբորդ վաճառատուն մը հասայ նոյն նամակով, ուր նոր գլխարկ մը զրին գլխուս:

Մայրս կասկածի մէջ ինկած էր ուշանալուս պատճառաւ, բայց վախը ուրախութեան փոխուեցաւ՝ երբ զիս տեսաւ: Հարցուց, բնտոեց, բայց ես այդ խորհրդաւոր օտարականի մասին այն ատեն ալ այժմէն աւելի բան մը չէի զիտել: Ի զո՛ւր բնտոեցի, հետապնդեցի, սպասեցի, այլևս չկրդայ հանդիպիլ իրեն կեանքիս մէջ:

Ուրիշներ պատմեցին յետոյ թէ յաճախ կ'այցելէր հիւանդանոցները՝ կէսօրէ վերջ՝ այցելութեանց ժամերուն: Ինք ալ ներս մտնելով ծայրէ ի ծայր կը չրջէր հիւանդներու սենեակները՝ հանդարտ քայլերով: Երբեմն կը կենար այս կամ այն մահճակալին քով, կը խօսակցէր հիւանդներուն հետ, և ապա ժպտաղէմ կ'անցնէր ուրիշ սենեակ մը ընդհանրապէս հոն կանգ կ'առնէր՝ ուր կը տեսնէր թէ հիւանդի սնարին մօտ գաւաթ մը ջուրէն զատ ուրիշ բան չկար դրուած, կամ այն հիւանդին մօտ կը կենար՝ որ այցելու չունէր, որոնց ոչ ոք բան մը կը բերէր: Ինք գիտէր թէ ինչ դժուար է հիւանդ և լքուած ըլլալ ու նստիլ փխուր ու ձանձրանալի մահճակալի մը մէջ:

— Գրուն այցելու չունի՞ս հարցուց երիտասարդ հիւանդի մը, որուն աջ ուսը կապուած էր և դէմքը մեղրամոմի պէս գունատ:

— Ոչ ոք:

— Ծնողք չունի՞ս:

— Գաւառ կը բնակին, հայրս պահապան է և զրամ չունի ճամբորդելու համար:

Գարրիէլ Պոկտանեան այլևս չհարցաքննեց, քաղցր ժպիտով մը մահճակալին եղերքը շոյեց և անցաւ ուրիշ հիւանդի մը մօտ, ուր շարձեալ միայն մէկ գաւաթ ջուր կար դրուած:

Երեկոյեան ինքնաշարժ մը կիցաւ հիւանդանոցին առջև, որուն մէջէն ծրարներ դուրս հանեցին: Մէկ գաւաթ ջուր ունեցող հիւանդները չէին կրնար երեակայել թէ ո՞վ էր զիրենք այդպէս ուրախացնողը:

Կարկանդակ, ժամպոն, օշարակ և գլանիկ դուրս եկան ծրարներուն մէջէն: Ուրիշներ տաք մուճակներ ալ ստացան, որոնցմով քալել շատ հաճոյալի էր:

Ուրիշ առթիւ պասպարաններու կ'այցելէր ու կը նստէր ցնցոտիներով պլլուած անառակներու քով, որոնք շատ անգամ կը ծաղրէին զինքը: Բայց երբ այլևս իրենց քով չէր՝ կը զգային թէ այս այնպիսի մէկն էր, որուն սիրտը ոսկի էր:

Տեղաւորման գրասենեակներու ալ կ'այցելէր. ու կ'ընտրէր ծառայելու ստիպուած տխրադէմ կիւն մը և ժամանակաւորապէս կ'ազատէր զայն ծանր մաածուճներէ:

Կամ կը կինար քաղաքի մը ծայրամասերուն մէջ գտնուող գրաւատուներու առջև, իւ երբ կը նշմարէր ամօթխած այտերով աղջիկ մը կամ պատանի մը, որ ծրար մը թեւին տակ՝ անորոշ քայլերով կը մօտենար գրաւատան, որ թերևս վերջին ճերմակեղեմներն էր ծրարած թուղթի մէջ, կը մօտենար, և բան մը սեղմելով անոր ափին մէջ՝ կ'ըսէր. —

— Ե՛տ տար ծրարդ և մէկու մը բան մի՛ ըսեր:

Շատ անգամ դեղարան կը հանդիպէր, և երբ աչնան աւելի շատ էին հիւանդները, թշուառներու դեղագիրը ինք վճարէր: Հնարադէտ էր բարեգործութեանց մէջ:

Բայց ամէն ինչ իր վերջաւորութիւնը գտաւ: Չմեռ էր և անողորմ ցուրտ մը, ձիւնը ամէն ինչ ծածկած էր, մինչև իսկ պատուհաններու ապակիները:

Գարրիէլ Պոկտանեանին մէկ ֆիլլէրն իսկ չէր մնացած: Դատարկ սնտուկը սենեակին անկիւնը կը կենար: Դուրսից սուրը Ս. Ֆլորայի արձանը կը մտարկէր: Վառարանին մէջ վերջին փայտը կը ճարճատէր. և Պոկտանեան հայրը թիկնաթոռին մէջ նստած իր առջևը կը նայէր: Այնպէս կը թուէր իրեն թէ շուրջը քալողներ կան և բոլորովին մտեանալով իրեն կը հպին: Բայց ի զուր կը նայէր շուրջը, պլպլացող լամբի մը լոյսին մէջ ո՛չ ոք կը տեսնէր. լամբը միայն զինքը կը լուսաւորէր, միայն և միայն զինքը:

Չայներ ալ կ'իմանար. կասկածելի շուրջներ, այնպէս կը զգար թէ իրեն կը քսուին ո՛ւր կը սարսեն զինքը:

— Գարրիէլ Պոկտանեան, Աստուած օրհնէ քեզ, որովհետեւ հիւանդ աղջիկս ուրախացուցիր:

— Աստուած օրհնէ քեզ, որովհետեւ տառապող որդւոյս յաւերը մեղմացուցիր:

— Աստուած օրհնէ, որովհետեւ հիւանդ մօրս դեղորայք տուիր:

— Աստուած օրհնէ քեզ, որովհետեւ ցուրտ ձմեռուայ մէջ զիս հագուեցուցիր:

Ո՞հ օրհնեալ ըլլաս որովհետեւ շոյցիր:

Եւ բարի ծերը չէր կրնար ազատիլ դազանի ձայներէն, բայց հրճուանք մը կը զգար, որովհետեւ իրեն այնպէս կը թուէր թէ այդ ձայները երկնքէն կու գային. և դուրսը կարծես հովնայր կը մրմնջէր:

Երախայի մը փափուկ ձեռքը եւ ջերմ արցունքի շիթեր զգաց այտերէն վար սահող: Յանկարծ կարծեց թէ կ'երազէր՝ երբ փափուկ ձեռք մը արթնցուց զինքը:

Ոսկեհնր մանչուկ մը կը նստէր ծունկերուն վրայ ու կը շոյէր իր այտերը: Ծիշտ քովը թուլն վարսերով և կապոյտ լաշակով կին մը ծնրադրած էր ու կը զիտէր զինքը այնպիսի նայուածքով մը՝ որ Պոկտան կը զգար թէ ուղղակի սրտէն կը կարգար:

— Ո՞վ էք դուք, հարցուց զողացող ձայնով մը, ի՞նչպէս մտաք հոս՝ երբ բոլոր դուռները գոց են:

— Մենք հողիներու դռնէն մտանք հոս, պատասխանեց մանչուկը, և նոյն ճամբով պիտի մեկնինք:

— Ինչո՞ւ եկաք:

— Ետեէդ եկանք, Գարրիէլ Պոկտանեան, որովհետեւ օրերդ այլևս վերջ գտած են: Մայրս բերաւ զիս հոս, երջանկայիշատակ մայրս դրաւ զիս քու թեւերուդ մէջ՝ որպէսզի ես քու կողքովս եւ դուռն իմս՝ Պոկտանեան հայրը մինչ այդ վայրկեանը՝ դեռ չզգացած երջանկու-

թիւն մը պատեց, թիւեր առաւ, թիթեւացաւ ամպի մը սլէս եւ ըն-
րանը քաղցրութեամբ լեցուեցաւ:

Այսպէս մեռաւ ծեր հայր իրիկուն մը: Եւ երբ ասն դուռը խոր-
տակելով ներս մտան՝ թիւերը ծալուած էին կուրծքին վրայ, կարծես
մէկը պինդ կը սեղմէր կուրծքին, բայց թիւերուն մէջ այլևս մէկը
չկար:

Եւ այս պատմութիւնը այն ատի մը փոշին ըրաւ ինձ, որ բիւ-
րեղեայ անօթին մէջ առջևս էր, գրասեղանիս վրայ, լամբիս լոյսին
տակ:

Թարգմանեց հունգարեհէն՝
ԱԻԵՏԻՍ ԷԺՏԱՀԱՐ

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ամեն քար որ կ'իյնայ, դարձեալ իր տեղն ունի.
Քարը կը մնայ միտ, իր զիւրքը լոկ կ'անցնի.
Կորսուած ոչինչ կայ՝ բացի հրեւոյթէն:
Երեւոյթներու կոյտ չէ՞ տեղերքն արդէն:

Հանճարէն մինչ զառամուրիւն երջանակ մը կայ լոկ գծուած,
Ինչպէս ծառին հունտէն մինչեւ վար գլորոյ պտուղն աստ,
Ինչպէս կտրին մանուկէն մինչ խոնջած քամակ մը գետնամած,
Բաբէ՛, միտքն ալ երջանակ մ'է, առարկաներն են փոխուած լոկ:

Երկրագունդը միտք կը գծէ երջանակ մը շուրջն արեւուն.
Բաբէ՛, կարծես կը յիշէ իր մեծ գերօն յաւիտենեան.
Ի՞նչ բրուունցեմեր ալ կը կանգնին, ի՞նչ հեծեմամբ օդը լնուն,
Ամենքն ալ այդ գերօյին մեջ պիտի իսպառ անհետանան:

Ե. Գ.

Ե Ռ Ը Բ Գ Ա Հ Ա Յ Ս Ե Բ Ո Ւ Ն Գ

Ե Ր Ե Ք Ք Ն Ա Ր Ա Կ Ի Ր

«ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾ» ՆԵՐՈՒ ՈՍԿԵՇՂԹԱՅԷՆ

Ե Ղ Ի Շ Է Չ Ա Ր Ե Ն Յ

(«Խորհրդային գրականութեան ողնայար»)։

Այսպէս կ'արտայայտուէր դժբախտ իմանջեանը՝ 1935 Օգոստոսի Գրողներու Համագումարին, երբ միանգամայն կը շեշտէր «խոսուողոյն պոէս Բակունցի թեմումներ», առհասարակ Պորհրդահայ գրողներու հակումը «դեպի անցեալ», Ալազանի յարումը՝ Չարենցի հերձուածող խմբակին», ու «լեզուական աղբասութիւնը»՝ ընդհանուրին մօտ։

Այդ գերադրականը՝ («ողնայար գրականութեան») պաշտօնական բեմէ ու հանդիպաւոր ցոյցերով, չափազանցուած համակրութենէ մը կը բխէր անպայման, ինչպէս Չարենցի «հերձուածող խմբակ»ի ամբաստանութիւնը կը բխէր մարտաշունչ տաղերգուն պրոլետար դիրքերու արժանաւոր առաջապահի գծին վրայ տեսնելու արդար մտահոգութենէ մը։ Այլպէս, Չարենց, հակառակ իր անուրանալի տաղանդին, կու գայ Բակունցէն վերջ, ու նաև՝ իրբեւ բանաստեղծ, Մահարիէն կամ Սարհանէն յետոյ, — Տարօնցիի կամ Ալազանի կողքին։ Անոնք որ, ներշնչուած դիւրահաւանութեամբ մը, Պորհրդահայ Գրականութիւնը կ'ըմբռնեն Չարենցի անունով կամ ստեղծագործութեամբ, զգայարանախար ջերմութեամբ մը տարուողներ են, մասնաւորաբար անոր երգերուն խուժանաժար կամ հրդեհուած ձեւերէն։

Արդարև Չարենց, «Պոլիս Գրողներու Նոյեմբեր Կոլլեգիային»

սկսած (1927) մինչև «Գիբ ձանապարհի» (1933)*, կը պահէ խիզախ, դիւցազնական ու մարտաշունչ հոգիի մը եռեւեփը, իր քերթուածներուն տակ:

Հոգիի՛ մը՝ որ «Ամբոխները խելագարուած»ի (1918) իմաստութիւնը կամ ջիւջ երկինքը չունի, այլ օտար շրջապատի մը սահմանափակ որմերուն միջև բարձրացող հայրենիքի մը գալարող այլ «սիրելի» միջավայրը: «Եպիֆանիան Լուսաբացը (1930) այդ «սիրելին» կը նուերադործէ, դիւցազնական-քնարական լայն ակօսներով: «Երկեր»ուն մէջ (1932), Չարենց տեսական պատկերներ է գծած, իր հայրենական հիւն ու նոր կարօտները, — անցեալի կամ ներկայի նշխարները պարեզօտելով, միաձուլելով, վերածելով լուսապսակներու:

Մէկդի ձգելով «Ամբոխները խելագարուած»ը (1918), որ պրոլետարիատի արեւէն ո՛չ մէկ ճառագայթ կը գրկէ, ու անկիւն մը թողլով «Երկիր Նայիրի», «Կոմմունարների պալատը» և «Ելեգիա» անուններով յիշուող գործերը, զորս չունինք կամ չենք տեսած, — Չարենցի գրականութեան պատմութիւնը կրնանք տեսնել իր գործերու հետեւեալ շարքին մէջ:

Ա. «Լեռնեան պոեմներ» (1927), Բ. «Եպիֆանիան Լուսաբաց» (1930), Գ. «Երկեր» (1932), և Դ. «Գիբ ձանապարհի» (1933):

Այդ քառուղիէն՝ (որովհետև իւրաքանչիւրը անոնցմէ՝ առանձին շիմագիծ ունի). Չարենցի պատմանդանը՝ Խորհրդահայ Գրականութեան դաշտին վրայ, կարելի է սահմանել՝

Ա. — Ամբոխային հասարակ տրամադրութեամբ մը, որով կը գրգռուին զանգուածները, կարմիր և արիւնոռչտ աստուածներու երկրպագութեան ի խնդիր: 1927ին, ուրկէ կը սկսի պրոլետ գրականութեան առաջին ուժեղ թափը, (և, այդ «ուժեղ»ին համեմատութեամբ՝ ցամաք ու անարուեստ յորձքը), գրական միջնորոտը ա՛յդ կը պարտադրէ, ու անկէ կը մեկնէին առաջադրութեանց բոլոր՝ ձեւերը:

* «Գիրք Ճանապարհի»ի կափարիչին վրայ նշանակուած է MCMXXXIII բուսկանը (1933): Այդպէս ալ պէտք է ըլլայ, որովհետեւ 1933ի Օգոստոսին էր, որ, Երեւանէն Բարիզ ուղղուած նամակով մը, Խանգեան կ'իմացընէր Չօպանեանի, թէ՛ «Չարենցի Գիրք Ճանապարհին»-ի նոր գագաթի է հասցնում Խորհրդահայ գրականութիւնը: Զարմանալի է, սակայն, որ էջ 172-312՝ «Արուեստ քերթութեան եւ «Գիրք Խանգեան» բաժիններու սկիզբ նշանակուած է 1933-1934 բուսկանը: Մ. Թ.

«Առաջինը՝ որ նկատու՛մ է մեր միութեան անդամների գրուածների մէջ, դա երկիրն է: Ա՛յն երկիրը՝ ուր ապրում է՛ւ սեղծագործում է գրողը: Նա միանգամայն հարագաս լինելով պրոլետարական իդէոլոգիային (գաղափարաբանութեան, Մ. Թ.) եւ բանուր դասակարգին, այդ դասակարգի նուանումներն ու յաղթանակներն աշխատում է սեսնել նո՛յն այդ երկրում, այդ երկրի իրականութեան մէջ: Տեսնե՛լ պրոլետարական յեղափոխութեան յաղթանակի արդիւնքներն այստեղ, այս երկրում, — դա մեր բնկերների ամենակարեւոր խնդիրն է եղել»: («Պրոլետարական գրողներ», էջ 231, Նախաբան Հ. Պ. Գ. «Նոյեմբեր» միութեան խմբ. կոլլեկիայի՝ որուն կ'անդամակցէր Չարեանց 1927ին, «Լենինեան պոեմներ»-ը շարակարգած շրջանին):

Աւելորդ է մեկնութիւնը:

Ստեղծագործական բոլոր ուղիներու վրայ ա՛յս էր կարգախօսը՝ Մա՛նսէլանդ գրական գեանի վրայ:

Ազմուկէն ու սպառնական այդ ցուցանակէն խրտչած, այդ երկ՛չոտ, չըջանի բոլոր գրողներու գործին մէջ կ'երեւին ջղագարութեան և անդիտակից անհաւասարակչութեանց զծեր: Նոյնը՝ ե՛ւ Չարեանցի «Լենինեան պոեմներ»-ու երեսին, — յաճախ գռեհիկ, տափակ, արգասատելի: Բանաստեղծի ստուերը, այնտեղ, այլանդակուած է, ե՛ւ յղացումներու, ե՛ւ միտքի, ե՛ւ լեզուի, ե՛ւ պատկերներու ճամբով: Երկինք մը՝ որ կը ճնշէ կապարի՛ պէս, ու «երկիր» մը՝ ուրկէ ջնջուածքչուած են հայրենական բոլոր մասունքները: — Հասարակ ու զլուելի ծաղկեփուռնջ մաղթանքներու, գովերգութեանց, «հանճարափայլ» տեսիլներու, որոնց մէջէն «Ալիներու» կամ «Լենին»ներու կերպարանքներ կը յառնեն...

Բ. — Բնարական պայրուցիկ ու յանկարծանոս խառնուածքով մը՝ որով կը յատկանշուի ի՛նքը, բանաստեղծը՝ Չարեանցի մօտ: «Եպիփական Լուսաբաց»ի կարմիր կափարիչէն ներս, Եղիշէ կ'ապրեցնէ բոլոր քերթուածները՝ իր խոր իրականութեամբը, — հազուադէպ սայթաքումներով, որոնք մեղքեր չեն միշտ: Արուեստագէտը՝ (գոյնի կամ զգացումներու), այնտեղ կը գծէ համակող ու գաղջ պատկերներ, լոյսի ցայտքեր, գիշերային օրօրուն ու առկախ կամուրջներ, որոնց մէջ թիմուած խորհրդային երիզներն ու քուրջի կտորները, կը վերածուին խորհուրդի թելերու: Հազուագիւտ բնականութեամբ մը, Չարեանց կը կենդանացնէ նայիրեան պատկերներ, երբեմն զգալի «քեփուումներով» պոռալով իր եսը, իր թաքուցուած իղծերը, եւ պայթեցնելով լոյսի գանակներ:

Գ. — Գիւցազներգական աղաղակող շունչով մը, որով ծնած է բա՛

նաստեղծը: եւ որով ցողուած են իր բոլոր գործերը՝ «Ամբոխները Խելագարուած»էն սկսեալ: «Լեւոնեան պոեմներ»ուն մէջ, այդ «ունջ»ը... փո՛ւք մըն է միայն՝ զարշահոա: «Եպիփական Լուսաբաց»ի մէջ, — միաւորուած քնարական զեղումներու հետ, — այդ հոգեցունց ալիքը կեանք է տուած է կտորներուն: Իսկ «Երկեր»ու պատկանելի հատորին մէջ, (ուր հասուածներ կան ամփոփուած իր ցիրուցան էջերէն), հասունցած է և յորդուն:

Նշեմ, անմիջապէս:

Չարենցի հանդէպ կասկածի առաջին շեշտ ակնարկութիւնը «Երկեր»ու հրատարակութեան կը զուգադիպէր:

«Գրողներու Միութեան» 1932 Յունիսի հաւաքոյթներուն, Չարենց ձեռով մը կը փորձէր ծառանալ այն դիտողութեան դէմ, թէ «անցեալ»ի հանդէպ հիւանդագին տրամադրութիւն մը կը տեսնուի Չարենցի, Մահարիի, Ալազանի, Բակունցի Թոթովենցի կամ Արմէնի մօտ: (Աղկէ՛ հերձուածողի պիտակը, զոր սա՛ ձեռով կը փակցնէր Սանջեան:

— «Այլազան եւս մոլորուեց, իբրև յարող Չարենցի հերձուածող խրվակից» (Տե՛ս «Խորհրդ. Հայաստան», 5 Օգոս. 1934).

1927—1932, («Երկեր»ով) արգէն իսկ ամբողջ է Չարենցի ստեղծագործութեան պարունակը: Աւելի՛ ճիշդ՝ որոշ է այդ ստեղծագործութեան նկարագիրը:

«Գիրք Ճանապարհի»ն, իր գլխաւոր բաժանումներով, («Պասմութեան Բառուղիներով») — էջ 6էն 162. («Արուեստ Քերթուքեան») — էջ 175էն 184 —, («Գիրք Իմացութեան») — էջ 187էն 228 —, («Տաղեր եւ Խորհուրդներ») — էջ 233էն 265 —, («Զանազան Բանաստեղծութիւններ») — էջ 269էն 312 —, երանդապանակն է Չարենցի ստեղծագործութեան զրեթէ բոլոր գոյներուն, այն երեք արտայայտութեանց գծերով, որոնցմով սահմանեցինք՝ քիչ անդին, իր պատուանդանը:

Այս բոլորէն վերջ, կրկնենք որ՝ Չարենց, հակառակ իր ինքնասպողութեան կամ բացառիկ խառնուածքին, «ողնայար» չէ՛ Սորհրդահայ գրականութեան, ինչպէս կ'եզրակացնէ Սանջեան, ու ինչպէս կը հաւատան շատեր:

Այս համոզումը՝ գեղարուեստակա՛ն մտահոգութիւններէ, և առաջնորդուած իր մայր հատորներու ակունքէն:



ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

Ա Ղ Ա Ջ Ա Ն

(Խորհոյ. գրականութեան պատեմն. ներկայացուցիչը)

Մերկացնելով քաղաքական իր պատմութեանն, և խօսարձակ ձգելով հոգին՝ հայրենի հողի վրայ, — Ալազան՝ Խորհրդահայ Գրականութեան մէջ, առանձին հող ու արօտ կը պեղէ:

Հասարակական հովանաւորողի ու պաշտօնական ներկայացուցչի հանգամանքով, Ալազան փորձութեանց դետնի մը վրայ եղաւ միշտ՝ Աւելի՛ն, — իբրև «Գրական Թերթ»ի պատասխանատու խմբագիր եւ գրողներու Միութեան մէջ ատենաբան, սփիւռեցաւ՝ հինգէ աւելի անգամներ, քննադատել իր ընկերները, կամ ուէ կարծիք յայտնել աշխատութեանց ու ստեղծագործութիւններու ընթացքի մասին: Նորենցի հետ անցաւ շարժումի մը գլուխ, «Արեւմտահայերու» շուրջ շահագրգռութիւն ստեղծելու և Խորհրդահայ գրականութեան աւելչ ներարկելու խանդավառութեամբ: Այս բոլորը՝ սրբազան կրակի մը ու մաքուր խանդաղատանքի մը բռնկումէն թելադրուած, անշուշտ Եւսակայն, Մոսկուայի ականջին տակ, օր ցորեկով ու հանգիստաւորապէ՛ս բնագորուած այս իրարանցումը, անխուսափելիօրէն պիտի ունենա՞ր ներկայի անդրադարձումը:

Շփացուած ու փայփայուած լոկ չըջանի մը համար, Ալազան աղայամտօրէն վերաբերուեցաւ: Այս իմաստով, թեթեօրէն տրամաբանեցին նաև միւսները, կեղեւէ դուրս ցաակելու, լոյս-արեւ տեսնելու բնական մղումով: Կարմիր դժոխքի մէջ զով անկիւն մը ստեղծելու այս պահանջը, — որ, անտարակոյս, հոգեբանօրէն, հակազդեցութիւն մըն էր ճնշումին և սահմանափակումին դէմ —, սեղմուեցաւ սաղմին մէջ, պտղաւորուելու և կենսութեան դառնալու ժպիտը աչքերուն:

Ու զիրքը Ալազանի, այս խոսնակութեանց մէջ, կ'ըլլար «Երկիրեսուրբիւն», «մագսանեմգուրբիւն», «ղաւանանուրբիւն», դէպի անցեալ լաւ վերաբերում», «ազգայնականութիւն», «դաւանակցութիւն»:

Այլապէս իրերու և պայմաններու բնական թաւալումով, ազատ ու հոսուն երկինքի մը տակ, Ալազանի նախածեռնութիւնը նախախնամական և փրկարար դեր կատարելու կոչուած էր:

*
*
*

Երբ կը բանաս Ալազանի բանաստեղծութեանց երկու հատորները, — «Երկիր կառուցման եւ յաղթանակի» և «Մաքառումներ» —, կ'ը տեսնես որ, ենթագիտակցօրէն, «փրկարար» այդ բնաշրջումը, (ա՛

ուեմտահայ բանաստեղծութեան խորքին հետ հաղորդութիւն մը) ինքնին խմորուած է ու տրձագանգած՝ բնութեան վերարեբեալ իր բոլոր երգերու մէջ:— Այդ տողերուն տակ, մասնաւորաբար կը շնչէ Մեծարեցը (քնարական ղեղում), Տէրեանը (զգացական շիղ): Պիտի ըսեմ՝ բաժին մըն ալ Սիպիլէն. Դուրեանէն: Եւ սակայն, այս բոլորը մարտուած, զտուած, հաղուաղէպ կարկտաններով:

«Երգեր կառուցման եւ յաղբանակի»ն մէջ 1928—1930 շրջանի քերթուածներ կան ամփոփուած: Աւելորդ է մատնանշել այդ «կառուցումներ»ու և «յաղթանակներու» հանգամանքը:

Այսպէս չէ՛ր որ բացառութիւն պիտի կաղմէր: Ընդհակառակն, էր կարգին, 1927ի «Պրոլետարական Գրողներ» մեղքերու մատնանին մէջ ունի իր տեղը, ըզգմթիւ անհաւասարակչիւ էջերով: «Մաքառումներ»ը (1933), նո՛յն ոգիէն ներշնչուած, այլ գոյնի տարրեր երանգներով, տափաղութենէ փրկուած երգեր կ'ամփոփէ:— Մաքառումներ վերնագրի սակ, հեղինակը նպատակ է ունեցել, զլխաւորապէս՝ քնարերգոսէն դիտել բանուոր դասակարգի հերոսական մաքառումների առանձին բնագաւառները, որոնք ի մի են ձուլում, նոր կեանք, սոցիալիստական աշխարհ ստեղծելու ուղղութեամբ: Նաեւ մաքառումներ՝ նոր յոյգերի, նոր տրամադրութիւնների եւ նոր երգերի համար»: (Տե՛ս «Մաքառումներ»ու մուտքը):

Այսպէս հատորներու կարգին, ոմանք կը յիշեն, նաև, «Տարիների խաղը», «Հրաբխապոեզիա», «Աւստրալիական», «Ճանապարհից», «Դասալիք»ը եւ այլն, եւ այլն:

Իրականութիւնն այն է որ, բացի առաջին երկուքէն, որոնք երկար երգասացութիւններ են, միւսները հաջողոր բաներ են կամ առանձին էջեր, հրատարակուած ղէս ու ղէն, եւ, օրինակ «Պրոլետարական Գրողներ»ու մէջ, ոմանք՝ 1924 և 1925 թուականով:

Այս պայմաններու տակ, Այսպէս գործերու վերջնական դասաւորումը կ'ըլլայ՝

Ա.— Առաջին քալով ստորագրուած էջեր, մինչեւ 1927: — Պրոլետար «Նոր» կեանքը վերլուծելու առաջին փորձերը: Գոյնէ կամ բնութենէ զուրկ, ընդհանրապէս խօսակցական կամ մենախօսական կառուցումով: Կը պատմէ երկրորդի մը, և կամ՝ կը խորհրդածէ: Այս կարգէն է «Ղեկավար» (Պր. Գրողներ) էջ 27—50. գրուած 1925 Յունիսէն 1926 Ապրիլ): «Ընկերներ»ու կամ նոր սրտակիցներու կը պատմէ զաւրց «արեւալառ» կեանքի մը էջերը: «26 Կամուճարների»ն նուիրուած էջեր՝ «Արիւնոս գիւտեր» խորագրին տակ, և նո՛յն թուեաւորութիւնով, քանի ասանակ ուրիշներ: էջեր՝ որոնք «Բանուոր դա-

սակարգի ներուսական պայքարները» կ'անմահացնեն, զառանցանքի եւ թաւ ճիչերու արձակումով:



Ա. Լ. Ա. Զ. Ա. Ն

Բ. — «Երգեր կառուցման եւ յաղթանակի» (1927—1930). — Հաւասարակշռուած, հիմնական թէ խախուտ մտահոգութիւններէ առաջնորդուած երգեր: Խորքին պղտիկ յուզումներ: Ծրջանակը՝ բնութիւն. — Երկիր, հող, կառուցում, «Երգեր Բանդական» եւ շինարարական աշխատանքի: Հին ու նոր Երեւաններու յուրջ տաղերգութիւն մը, ուր բարախուն էջեր չեն պակսիր:

Գ. — «Մախառումներ» (1930—1933): Բանաստեղծը հուշ մըն է գտած արդէն իր երգերուն համար: Մուկէին ցրտութիւնը՝ անցեալի հանդէպ, առիթ չի տար, այս գրքին մէջ, նուիրականութիւններ է կոխկռակուել, շնականօրէ՛ն: Կայ անշուշտ, դժգոհութեան շեշտը, որ անձնական չէ սակայն, չի սահմանուիր անհասուլի ստորագրողին: Պարտաւրանքի շեշտն է ան, աւելի՛ քան: Կ'ամփոփուին «Երեւանեան երգեր», «Մախառումներ», «Մարդ եւ Բնութիւն», «Խառն Երգեր», եւ, ուշադրաւ շարք մը՝ «Պոեմների հետ» խորագրուած:

Այս վերջին բաժինով, բանաստեղծը «սեսակցութիւն» մը կ'ունենայ Վարուժանի, Սիամանթօ-ի, Թումանեանի, Մեծարեւցիի եւ Գուրեանի հետ, որոնք, հիասքանչ՝ ի տես Հայաստան աշխարհի նոր դիմագծութեան, զարմանահար մտիկ կ'ընեն: Ու Այսպան անոնց դործերուն էջերէն փոխազրութիւն մը ընելով «ներկայ»ին (խորհրդային շրջան) կը գտնէ, թէ իւրաքանչիւրի հրազը իրականութեան է, «այսօր»...

Դ. — «Վարսուկերորդ հորիզոնում» (վէպ, 1935): Ծինարարական կեանքէ: Զեւով մը հրկրորդ մասը «Ճանապարհից» վէպին: Ինչ որ է՝ սոստ է բանաստեղծութեանց ճամբով, կը կրկնէ վէպով: Այս է պատճառը, որ Ալազանի ստեղծագործութիւններու շարքին, յաճախ կը մտնում վիպագրի բաժինը: — Հեւ ի հեւ աշխատանք: Գրեթէ ընդօրինակութիւն, առանց ինքնատուութեան մը նոր մէկ շնորհին:

Ե. — «Արեւմտահայ Բանաստեղծներ»: — Հաւաքածոյ մը, ուր բաժիններ կան թրքահայ սերունդի բոլոր ներկայացուցիչներէն: Առաջարան՝ Գ. Վանանդեցիի: Խմբագրուած՝ Ալազանի եւ Նորեւցիի կողմէ: Ընդհանրապէս խեղութիւրուած է գրական խառնուածքը բոլոր անոնց որոնք էջեր ունին այդտեղ: «Բանաստեղծութեան» այդ տուրքակին մէջ

Թխմուռած են ամենն ու չափեմք, տափակ Մ. Աճէմեանէն մինչեւ ազդեցական Ն. Արշակեանը...:

Այսպէս այս աշխատանքը շարունակեց մինչև 1936, երբ պալարը հասունացաւ, ու պէտք եղաւ պայթեցնել Իրեն և Նորենցի կը պարտինք Մեծարենցի, Սիպիլի, Գուրեանի, Պարոնեանի և ուրիշներու ամբողջական գործերու հրատարակութիւնը: Երանի չընէ՛ր այս լսերը, ի՛ր և իրեն գործակցողներու կեանքը չվտանգելու համար: — «Պեսական Հրատարակչականը քայքայիչ աշխատանք է կատարել», կ'ըսէր ու կ'ըսէ «Նորհրդային Հայաստան», և կը յամառի թելադրել, որ «խսիւ պատմուից յանցաւորները»:

Տարակոյս չկա՛յ: Այսպէս՝ «պատժական» բանաստեղծի իր աւանձնաշնորհներով ու նախաձեռնութեամբ, ու միւսները՝ իրենց գործակցութեամբ, անպայման որ՝ կարմիր քուրջի կտորով մը՝ ո՛ւղղակի կատաղութեան նոպայի մղեցին յաւիտենական արիւնստաբաւը, — Մոսկուա՛ն:

Գ Ո Ի Ր Գ Է Ն Մ Ա Հ Ա Ր Ի

(Քննարար բանաստեղծը)

Խորհրդահայ անդամատանէն ներս, 1927ի սկզբնաւորութեան, կ'ուրուագծուէր սլացիկ հասակը՝ ճակատագրորէն հալածական այլ «աշխատաւոր»ի մը:

Գուրգէն Մահարին էր ան: «Ներկայումս գնդակահարուած»ներու տակելիթայէն քնարաւոր մը, որ իր ստեղծագործութեանց առջինեկը կու տար «Բաւթիներ» խորագրուած քերթուածներու շարքով մը:

Նո՛յն շրջանին, «Նոյեմբեր» գրական կոլլեգիայէն Մկրտիչ Արմէն կը գրէր «Երկարաւորուող երկրի երգեր»ը, Բակունց՝ արձակներ եւ պատմուածներ Խորհրդահայ առօրեայ կեանքէ: «Պոլեսար Գրողներ»ու կոլլեգիայէն Այսպէս «Ղեկավար» պոէմը, Լենին ի փառս: Չարենց՝ «Լեհիցն ու Ալիցն»: Թշուառական սրիկան՝ Չարեան Նայիրին «Նոյեմբերեան օրերին» անարիւն քերթուածները, եւ, ուրիշներ՝ նո՛յն ոգիով խմորուած ու նո՛յն բեւեռէն արձակուած գործեր, «չաւուր պատշաճի»...

Տարօրինակ ու սրտազրաւ ջերմութեամբ մը, Մահարի մաս չէր կաղմբր ընդհանուր ազմուկին կամ հանդիսաւոր մեղանչումի փորձերուն, զորս կաղմակերպելու պատրանքը կը զգային ուրիշներ: Անսովոր ու պարուրող իր գուսաներգութեան իւրաքանչի՛ւր էջը, մասնաւորաբար խորհուրդի ու հոտերու լայն ալիքներով էր բարախուէն: Այդ խառնուրդը, իր քերթուածներուն մէջ, անմիջապէս մտքիդ կը բերէ

յիշատակը իր լուսեղբոր՝ Մկրտիչ Արմէնի բռնկուէն երեւակայութեան, ու շօշափելի տողանցը՝ Բակունցի հրթիռ պատկերներուն: Մահարիլ ոճը, այդ երկու շէտուած առաքիլութիւններէն անկախ, ունի իր



ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

ներքին ներդաշնակութեան անհրաժեշտ բոլոր տարրերը,-- գոյնի և բուրումի շաղակցութեամբ՝ տողերու ներաղին բարախող սիրտը, նրբերանգներու փարթամութիւն մը՝ զոր չես գտներ միւսներուն քով, հոգեկան հանդարտ սեւեռումներու և ուղեղային խօսումներու ակօսներ, քնքոյշ եւ օրօրուն մեղեգիներու անհրաժեշտ ջերմութեան այն մթնոլորտը, որ եկեղեցիներ կը բանայ հողիէջ ներս, ու թրթռումներ, անակնկալ բեկորներ լոյսի, յոյսի, արտօմութեան կամ երջանկութեան:

Արհրդահայ գրողներու շարքէն՝ Գուրգէն Մահարի միակն է, որ քերթուածներու

ճամբով կը բանայ սիրոյ և պակուցումի կախարդող պատկերներ, «պրոլետարիատ» ի մայր սկզբունքներէն շեղելով, ու քաղքենիի մը բերնով տաղերգելով ներքին յուզումներ, մորթի կամ ջիղերու տագնապը, կամ պայքարները՝ մտքին ու հոգիին հետ, կարօտի քառակներ, եւ այլն: Յատկանշանական է, այս առթիւ, «Մրգահաս» ի մուտքին գրած իր մէկ երկտողը:

«Ինչ խօսք. որ այս գրի մասնաւորաբար բանաստեղծութիւնների բաժնում կան բազմաթիւ գրուածքներ, որոնք ոչ մի կապ չունին իմ ԱՅՍՕՐՈՒԱՅ գրական որոնումների հետ: Այնուամենայնիւ արեւորդ չհամարեցի յիշեալ բանաստեղծութիւնների գիտելի ժողովածուի մեջ, մօտաւոր կերպով բնորոշ կը լինելու համար իմ անցեալ գրական նախապարհը»: (Տե՛ս «Մրգահաս» էջ 5. 1932 Յունիս 28, Երեւան):

Պիլատոսական այս փութկոտ դժուշտութիւնը՝ անշուշտ «խալֆենի (Պուրժուա) հակայեղափոխական» չղառնարու մտահոգութեամբ: «Բարդիներ» քերթուածներու շարքէն դուրս, որոնք 1923—1927 շրջանի իր փորձերն են, անոնցմէ կարեւորները կ'երեւան 1927ին հրատարակուած «Պրոլետ. Գրողներ» հատորին մէջ, ու 1932ի «Մրգահաս» ի առաջին բաժանմունքով: Գուրգէն Մահարի իր ստեղծագործութեանց մայր երեսները կու տայ՝

Ա.— «Պասմուածներու ժողովածու» ու մը (1929):

Բ.— «Մանկութիւն եւ պատանեկութիւն» վէպով (1930):

Գ. — «Մրգահաս» բանաստեղծութեանց հաստիքով (1932):

Այդ երեք մատեաններու կողքին, արձակի քանդակներ է տուած՝ «Սիրոյ, խանդի եւ Նիցցայի պարսիզպանների մասին» ընդհանուր խորագրին տակ:

Մահարի իր տաղանդի խոր անդրադարձը կու տայ մասնաւորաբար բանաստեղծութիւններով, այլ սակայն, հասունութեան նոյն շեշտն ու միտքը դոյ է ե՛ւ պատմուածքներուն մէջ: «Մանկուքիւն եւ պատանեկուքիւն»ը իր անհատականութեան ձիւղ եւ ուժեղ մէկ արտայայտութիւնն է, երբ անոր էջերուն վրայ կը գտնես մանաւանդ հնօրեայ ու փթթուն մտասուզումները՝ պատանեկան ու մանկական իր անցեալի մասին: Այդ «անցեալ»ի ոգեկոչումը շատ սուղի նստաւ բանաստեղծին, որ «ի նմին պատժի կաս» անյեղի սկզբունքով իր նմաններու բախտին արժանացաւ:

Վէպի մը դասական ձեւէն անկախ, Մահարի իր քրքէն ներք կը վերստեղծէ իր կեանքը այնպէս՝ ինչպէս կ'ուզէր որ ըլլար ան անցեալին մէջ, ու ՇԱՐՈՒՆԱԿՈՒԷՐ ՆԵՐԿԱՅԻՆ ՄԷՋ: Առկէ՝ «անցեալին հանդէպ քույրացումն ու սկարացումը», զոր կը տեսնէին Երեւանի քննաչատները իր իւրաքանչիւր տողին մէջ, ու, ստորուկի՝ հաւասարմութեամբ, կ'արձանագրէին, կամ՝ կը դարձնէին բանադրանքի զրգպատճառ: Ու Մահարի, երկու անգամ բացատրութիւն տալու հարկադրուեցաւ, հրապարակաւ «պախարակելով ինքզինք, ու խոսովանելով իր քեֆումները»...:

«Պատմութեան ժողովածու»ն նոյն խմբին է որ կը պահէ՝ մոխրի կամ տակաւին գոյ կրակի մը տակ: Իր արկարները հոգեպէտքայնաւորութեան կամ դժբախտներ են ընդհանրապէս, կեանքէն հալածական, անյոյս, «անցեալ» մը փակած իրենց ներսիղին, ու, — անշուշտ փրկելու համար երեւոյթը —, տպաւինած մերօրեայ «հանճարափայլ»ին... Այս կարկտանը սակայն չի մշտներ անոնց խորքին, ուր մայր յորձքը կը թնամ է միտքին, հոգեկան հաւասարակչութեամբ ու ներդաշնակ յաճումներու կամ ջղային տագնապներու:

«Մրգահաս»ը վերջին հանգրուանն էր բանաստեղծին, ուր զրկուած են՝ սիրոյ, կեանքի ու երազի բաժինները, ընթացեալն ու միջավայրին անմիջական շրջապատովը:

Մահարիի «սեղի բնակելոյ»ն է ան իր կեանքն ու զորձն իսկ:

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

(Արագրուած՝ Խորհրդանայ Գրականութեան շուրջ ընդարձակ ախտանութեան վր)

ԱՐՓԻԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մ Ո Լ Ո Ր Ա Տ Ը

Կը խարխարէր ան իր թարմ հասակին՝ մուժին ու մտտախուղին մէջ, կորսնցուցած ճանապարհը ճշմարտութեան, թափառելով մուրաճի մը պէտ, հանդիպելու համար բեղմնաւոր գանկի մը՝ որը պիտի տապալէր գետին՝ որպէսզի անոր անկեղծ սիրտը ա՛լ չբարախէ, ա՛լ չապրի:

Մուրաճ երիտասարդը 1903ին Արփիար Արփիարեանը կը փնտռէր անոր կեանքը խլելու համար:

Եւ ինչո՞ւ: Այսպէս հրամայած էր կուսակցութեան մը վերին մարմինը այդ տասներինը տարեկան երիտասարդին, համոզելով միանգամայն թէ Արփիարը դաւաճան մըն էր, վառ մը, զեղծարար մը. ապրելու անարժան մէկը:

Ու այդ տասներինը տարեկան երիտասարդը վեցհարուածեանը ծոցը՝ կտրած էր երկիրներ և ծովեր Արփիարեանը սպաննելու համար՝

Արփիարը սակայն տաղանդաւոր հայ մըն էր, երզնիքարան դրագէտ մը, անչպհախնդիր տեղիւ մը, որ գիտէր տրկալ թշուառութեան, տառապանքին, հալածանքին և նոյն իսկ մահին: Եւ կ'ուզէր ապրի՛լ չարչարանքի ճամբուն վրայ, իր գրիչը սպաս դնելու իր աղզին համար, մէկն էր ան ապրելու արժանի ո՛չ թէ միայն զինքն հալածող աշխարհի վրայ, այլ մահէ՛ն ալ ետք:

*
*

1922ին այնան, իրիկուէն մը Պուքրէշի Մոշիլոսպողոտայէն կ'անցնէի. այս այն փողոցն է՝ ուր հայ մը ամէն քայլափոխին հայ բարբառը կը լսէ: Կը քալէի ես մառախլապատ մուժ իրիկուան մը մէջ՝ երբ փողոցի լոյսերուն ճառագայթները ջարդուփշուր եղած՝ հաղիւ կը ցուցնէին ճամբաս:

Գարեջրատունի մը ապակին զարկին, ներս նայեցայ. ծանօթ ո՞-

անծանօթ դէմքեր փոքր սեղան մը բոլորած՝ արդէն իրենց դարեջուրի
դաւաթնեուն կէսը պարպած էին:

— Հրամմեցէք, հայր Պոտուրեան, — ըսաւ իմ ծանօթը՝ աթոռ
մը ցուցնելով իրենց սեղանին մօտիկ. ու ես
դեռ չբարեւած՝ տարտամ նայուածք մը
տուրի անծանօթի մը՝ որ ճիշդ դիմացս էր:
Չեւքն երկնցուց ան ու ինքզինքը ներկա-
յացուց:

— Ես X ն եմ*:

Չէի ուզեր նստիլ:

— Հրամմեցէք խնդրեմ — խնդրեց

պ. X:

Ու ես հմայուած այս անծանօթին ձայ-
նէն, դիմադծին մաքուր արտայայտութե-
նէն՝ փափաքեցայ նստիլ այս ծուխով լե-
ցուն դարեջրատունին մէջ, ուր կլեքտրա-
կան լոյսերը ա՛յնքան նուազ էին ինչպէս
դուրսի լոյսերը մառախուղին մէջ:

— Դարեջուր մը — հրամայուեցաւ

կառասօնին:

Բայց ես խօսիլ կը սիրեմսա նորեկ Հայուն հետ՝ որ X կը կոչ-
ուի, Կ'երեւի ինքն ալ այդ կը փափաղէր:

— Շատ ատենէ ի վեր հոս էք. — կը հարցնէ ինծի պ. X:


— 1920էն ի վեր, 1913ին Վենետիկէն Դրանսիլվանիա եկած եմ
և զինադադարէն ետք հոս փոխադրուած:

— Ի՞նչպէս, գո՞հ էք ձեր ապրելակերպէն. ձեր աշխատանքը զնա-
հատող կա՞յ:

Ցնցուեցայ: Տարօրինակ հարցում մը որը դեռ ոչ ոք ըրած էր
ինծի:

— Նիւթապէս կրնա՞ք ապրիլ. գիտեմ որ հոս ժողովուրդ չունիք:
Գարեջուրին կէսը կ'ըմպեմ:

— Ես այն առնն գո՞հ եմ իմ ապրելակերպէս — կը պատասխա-



Արփիար Արփիարեան

*) Չեմ մերժեր պ. X ի խնդրանքը որ կը խնդրէ ինձմէ իր անունը
անծանօթ պահել. թէև ըստ իս ո՛չ թէ նախատինք այլ պատիւ մ'ըրած
պիտի ըլլայ եթէ իր բարձր ոգին ցոյց տուող պատմուածքիս մէջ
զինքը յանուանէ յիշէ:

նեմ — երբ լաւ մարդոց կը հանդիպիմ, և ես կարծեմ անդիւտ երջանկութիւնը գտած կ'ըլլայ մարդ՝ երբ լաւ մարդոց կը հանդիպի: Պուքրէշի մէջ ես դո՛ս եմ առհասարակ ամէնքէն: Զիս օր մը հարուստի մը, երկրորդ օրը համեստ ընտանիքի մը սեղանակից կը գտնես: Երէկ Ռիկկերն էի, այսօր այս խեղճ գարեջրատունին մէջ:

— Դուք Վենետիկի վարդապետ էք, չէ՞:

— Այո՛: Բայց այնպէս մը հարցուցիր որ՝ կը գուշակեմ թէ եղած ես հոն:

— Այո՛, եղած եմ այդ եղական քաղաքը և ատոր համար է որ ուղեցի քեզ ճանչնալ. հիմակ կարծես այդ հին օրերուն մէջ կ'ապրիմ երբ զիտեմ մանաւանդ որ զուն ալ կեցած ու դիտած ես Ս. Մարկոսի հրաշալի մողայիքները, Տօմերու քանթիլայի պէս պալատը, Հառաչանաց կամուրջը մանաւանդ... ա՛խ... կը զգացուիմ. քիչ մը լուռ մնալէ ետք:

— Հապա Ս. Ղաղարու մեր վա՞նքը...:

Պ. X կրկին երկա՛ր մը հառաչեց ու յետոյ պատասխանեց.

— Ո՛չ, հոն չեմ եղած:

— Ի՞նչպէս. Հայ մը Վենետիկ երթայ և իր վանքը չայցելէ՞...:

— Ո՛չ, յիրաւի չեմ գացած այդ վանքը, կամ աւելի ճիշտ հրա՛

ման չունէի հոն երթալու:

Սկսայ հետաքրքրուիլ:

— Գացի բոլոր կղզիները, — շարունակեց — գացի Լիտո, տեսայ Խեթերու կղզիները, ու հեռուէն տեսայ կարմիր շէնքերով Ս. Ղաղարը, կանաչներով չրջապատուած: Երանի կու տայի բոլոր այն օտարներուն՝ որոնց կոնտոլները դէպի մեր վանքը կը սահէին. ու ես դատապարտուած էի չտեսնել այդ մեր պարծանքն եղող և աւելի լոյս տողող մենաստանը:

Գարեջուրիս կէսն ալ խմեցի: Ծատ հետաքրքրուեցայ այս տարօրինակ մարդով որ անշուշտ բան մ'ըսելու համար կանչած էր զիս: — Ո՞ր թուականին հոն էիր, ես 1897ին գացած եմ և հոն մնացած մինչև 1908ը:

Կը յիշե՞ս Հ. Պոտուրեան այն ասարին՝ երբ Արփիարը վերաւորեցին՝ Այս հարցումը ցնցեց զիս:

Զկրցայ «Այո՛»ն ըսել իսկոյն: Քանի մը բույլէ ականջներս խլացած մնացին ու աչքերս կուրացած կարծես: Մոռցայ Պուքրէ՛շն ալ, Մօշիլո՛ւն ալ, գարեջրատունն ալ, մուխերը թանձրացան ու գեղեցիկ Վենետիկոյ Տօմերու պալատին դիմացի ծովափը գտայ ինքզինքս, ու՛ր

Ս. Ղազարու նաւակը կը հասնի, որուն կը սպասէ քովս, ողորմելի Արփիարը, իր օրապահիկ հացին ու կերակուրին...

*
*

Կարճահասակ, Ակնցի թղուկ հասակով, խառնափնդոր մազերու մէջ թաղուած գլուխ Արփիարն է որ քովս կեցած է հին զգեստով՝ աչքերը քարափին մօտեցող կարմիր Ս. Ղազարէն հասնող սև նաւակին՝ բանի մը կը սպասէ:

Ամէն օր, տաքին ու ցուրտին, հոն էր ան, կը սպասէր, մինչև որ հեռուն աչքերը հանդէ՛ն սև կէտի մը երևցող նաւակին, որ կամայ կամաց, կը մեծնար, սև հաւու մը չափ, յետոյ նաւակի մը ձեւ կ'առնէր, կը ճանչցուէր. երբեմն կը սահէր սև կարապի պէս հայելանման ջուրին վրայ, երբեմն ալ կատաղի ալիքներէն զարնուելով կ'ուշանար ցամաք հասնիր: Ու Արփիար պիտի սպասէր որ վանքի նաւավարը նոյն օրուայ իր կերակուրը բերէր:

Ս. Մարկոսի պատմական գմբէթը, կարծես վեր ելած ինչպէս հետաքրքիր մարդ մը որ գլուխը բարձրացնելով ոտքերուն մասներուն վրայ ալ կը բարձրանայ, այդ գմբէթին ծայրը խաչին դամուող Յիսուսը, իր առջևի Տոժերու պալատէն վեր բարձրացած ամէն օր հանստես կ'ըլլար թէ տաղանդաւոր հայ մը ի'նչպէս կը տառապի, կը ստորնանայ իր օրուայ հացին համար: Կամ թէ Ազգ մը ի'նչպէս կը չարչարէ իր գրագէտը: Խեղճ Արփիար...

Նւ անդին մարդիկ, Թիֆլիսէն մինչև Մոսկուա, Գահիրէէն—Բարեկ. հաճոյքի ժամերը կ'ապրէին այս մեր ողորմելի տաղանդաւորին «Հողուըրտիք»ը կամ «Կարմիր ժամուց»ը կարգալով:

*
*

Բարեկենդանի օրերուն էր, երբ Ս. Ղազարու վանականները վեհեհեհիկ որբանոցի մը տնօրէնութենէն հրաւիրուած էին ներկայ ըլլալ Թատերախաղի մը:

Հոն էի, քանի մը երիտասարդ վարդապետներու հետ և ես, վանքին ու Մ. Ռափայելեան աշակերտները:

Առաջին Արարուածի վարագոյրը դեռ չէր իջած, երբ մեր վարդապետներէն մէկը ներս մտաւ, և առանց սպասելու որ վարագոյրն իջնէ և սրահին լոյսերը վառին՝ գուժեց Արփիարի սպաննուելը:

Մեղմէ շատերը թողուցին Թատերասրահը. անոնց հետ ես ալ շապուկի դէպի այն հիւանդանոցը՝ ուր փոխադրուած էր Արփիար:

Արփիար թաղուած էր խոր քունի մէջ. քովը գթութեան մայ-

րապետ մը կը հսկէր: Վէրքը մահացու չէր բարերախառարար և անշուշտ դժբախտարար՝ զինքը սպաննել տուողներուն համար:

Ապասեցի որ արթննայ:

Ժպիտը դէմքին արթնցաւ կէս ժամ ետք:

— Անցած ըլլայ. պ. Արփիար Երա՞զ է թէ իրականութիւն: Ո՞ր զինովին հարուածը փոխադրեց քեզ հոս:

— Նորավէպդ տպեցի՞ր. դէշ չէր տպէ:

— Զգէ՛ հիմա հին վիպակները, այս նորավէպը նայինք: Ի՞նչ կը նշանակէ այս դէպքը:

— Զիս սպաննել ուղեցին, բայց չյաջողեցան. ուրիշ ոչինչ: Ես գիտէի՝ գրած էին ինձի Եգիպտոսէն. բայց մոռցած էի:

— Ժամը քանի՞ ժամ պատահեցաւ:

— Տասնին. երբ տուն կ'երթայի. հրացանի հարուածի մը ձայնը լսեցի, համ մ'ալ ետեէն, չորս կողմս նայեցայ ո՛չ ոք կար. քեզ մ'առաջ գացի. զգացի որ վզէս քրտինք կը վաղէ: Քրտինքս սրբեցի փողոցի լամբին տակ. թաշկինակիս նայեցայ ու նշմարեցի որ վիզէս վաղածը արիւն է եղեր... Խեղճ մոլորածի մը քաջագործութիւնը...

* * *

Գարեջրատան մուտը փարատած էր. դէմքերը կամաց կամաց երևան եկան. աղգակիցներովս սեղան մը բոլորած ենք. գաւաթս պարապ է:

Պ. X ինձմէ պատասխանի կը սպասէ:

— Այո՛ պ. X, 1907ին էր, լաւ կը յիշեմ. Բարեկենդանն, Ղեւոնդեանց կամ Վարդանանց օրը, երբ Արփիարը սպաննել փորձեցին:

— Ես այն տարին հոն էի, ո՛րքան երիտասարդ, ո՛րքան տաքարիւն: Երբ Արփիար գետին ինկաւ՝ մութին մէջ էր, ամէն անկիւնէ Իտալացիները հոն հասան, մինչև որ Արփիար գետին ինկաւ ու շաթափ. օտարները զինքը չըջապատեցին. ետ ալ հոն էի դիպուածով. ապուշ մը այն ատեն կամ կոյր մը. Երբ անձանութիւնները կը տխրէին որ այդ անձանօթը կը գալարուի սալայատակին վրայ՝ ես նոյնպէս կը տխրէի տեսնելով որ ընդունուած հարուածները մահացու չէին:

— Տարօրինակ բաներ կ'ըսես պ. X, եղաւ պատասխանս, և սա՛ կայն դուն ա՛յդքան չարասիրտ չես երևիր:

— Այդպէ՛ս էի. կոյր մը, մոլորած մը:

— Յետո՞յ, դուն շատ մնացի՞ր Վենետիկ:

— Նոյն գիշերն իսկ արգէն շոգենաւ մտայ. փասարօրդս վիզս եղած՝ գրպանս էր: Յունաստան գացի:

* * *

Արփիար առողջացաւ, տակաւին ապրեցաւ, յետոյ ինքն իր քայ-
լերով իր գերեզմանը գնաց. Գահիրէ, ուր վերջապէս մահացու գնդակը,
կուսակցականներէ թուճակորուած՝ զինքը փոս մը նետեց: Հայը սպան-
նեց զինքը. և Հայը կանգնեց արձան մը անոր հողակոյտին վրայ:

Պ. X իր պատմութիւնը առաջ տարաւ.

— 1908ին Պաւլըրէշ եկայ. վերջապէս լսեցի Արփիարի մահը.
«գաւաճան»ին, «վատ»ին, «մատնիչ»ին:

«Համաշխարհային պատերազմին Ռուսաստան թափառելէ ետք
երբ Պոլիս դարձայ. հոն նշանաւոր ղէմքերէն մէկը գանգատելով ինձի
Յեղափոխական կուսակցութեանց ըրած կեանքի աւերներու մասին՝
աւելցուց.

«— Գիտե՞ս պ. X թէ ո՞վ սպաննեց խեղճ, անմեղ Արփիարը:

«— Այդ վա՞ցը, մասնօրէն, դաւանա՞նք եղաւ հարցումս:

«— Այն տաղանդաւոր փոքրիկ մարդը՝ որ մեր մեծ գրագէտնե-
րէն մէկն է, անկաշառ, արդարախօս, ուղղամիտ:

«Ու թէ ողիկի Տարեցոյցները տուաւ որ կարդամ Արփիարի մա-
սին գրածները: Յնցուեցայ Հ. Պոտուրեան, կարդալով սա տողերը.
«Երբ Արփիար սալայատակին վրայ հոգին պիտի աւանդէր՝ վերջին
անգամ մը գլուխը վերցուց և զինքը յըջապատող օտարներուն ըսաւ.
Հայ եմ. և հայ մեռաւ»:

Այս վայրկեանին երբ պ. X կը խօսէր ինձի՝ կարծէք խոստովա-
նանք կ'ըլլար. իմ մօտ նստող քոյրը հայ ականջները դէպի իր բերանը
երկարեցան:

Գարեջուրի գաւաթները լեցուած էին:

— Հա՛յր Պոտուրեան, շատ ուրախ եմ որ Արփիարը քեզի ան-
ձամբ ծանօթ եղած է. կրկին ուրախ և երջանիկ եմ որ հիւանդանոց
այցելած ես: Անհունօրէն երջանիկ եմ որ իմ յիմար խելքով ուղղուած
գնդակով չմեռաւ այդ մեծ մարդը: Ես այն ատեն մոլորած մըն էի:
Կեցցէ՛ Արփիարը:

Ու գաւաթները բարձրացան, իրարու զարնուեցան. մեր սեղա-
նակիցները, որոնք X ի խոստովանանքէն բառ մը լսած չէին՝ իրենք
ալ «կեցցէ» ըսին մեղի հետ «կեցցէ Արփիարը» գոչեցին, թերեւս ա-
ռանց ճանչնալու անոր արժանիքը:

Ես աւելի երջանիկ էի որ Xի պէս մաքուր հոգիով մարդու որտի՞ն
վրայ ոճրագործի արատը չէր ծանրանար:

*

Գուրսի մշուշը կարծես փարատած էր և մենք առանց խարխարե-
լու մութին ու մառախուղին մէջ՝ մերընտանեկան յարկերը մեկնեցանք:

Xի հոգին թեթեւացած էր, ան խաղաղ հոգիով քնացաւ այդ գիշեր,
ինչպէս մեղաւոր մը խոստովանանքէն ետք: Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՂԱՂԱԿԸ

Հայորդին տեղահան իր ծննդավայրէն կը թափառի աշխարհէ աշխարհ, ջախջախուած անդամներով, շնչասպառ՝ հանգրուանէ հանգրուան, միշտ չարարաստիկ և տանջուած կը տեսնէ արթնութեան մէջ իսկ խռով երազներ, սիրատարի իր հայրենի երկրի և անոր հրապոյրներուն սեւեռուն, անոր պատկերը իր սիրտը կը զրաւէ հառաչներ խի լով անկէ: Այս զգացումը փոխանցիկ է ամէն հայրենակցի հոգիին, հաղորդուած ըլլալով նոյն սիրելութեամբ և անոնց սրտեր աշխարհի աղմուկին մէջ կը լսեն միայն հայրենիքի աղաղակը, որդեկորոյս սգաւոր մօր մը կեղերջին նման, այդ աղաղակը սիրոյ փոթորիկ կը յարուցանէ զգայուն սրտերու մէջ: Բայց կան մարդիկ անաարբերութեան պատուարներու մէջ փակուած՝ ակնախեց չեն լսեր, անոնց հոգիներ գրաւուած ըլլալով մեղապարտ հաճոյքներով, որով մեր հայրենիքի արձանագրութեանց դիւանի քարտուտար, Արամազդի դպիր, Հայ պանթէոնի զարդ Տիր աստուածութիւնը ջնջած է անոնց անուէները՝ խորտակելով անոնց հարազատութեան կնիքը, այնպիսիներու համար հայ կեանքի պայմաններ յեղաշրջուած են, հազար ափսոս անոնց, իսկ բիւր երանի՛ զտարիւն Հայերու՝ որոնք Հայրենիքի սրբութեան երկըր՝ պագու՝ զայն կ'երազեն ցվերջ և քաղաքակիրթ հռչակուած կեղրոններու ակնյայտնի շքեղութիւններ չեն մոռցներ իրենց բնաշխարհը՝ չեն ստրկանար, այլ ցոյց կու տան Հայութեան պաշտելի ոգին, մըր՝ ցակից օտար գերազանցութիւններու՝ աղգային ժառանգական ձիրքերով:

Իմ սիրելի եղբայրներ և քոյրեր, սիրենք Հայութիւնը, ան է մեզ պարծանք, գիտնանք թէ Հայը ո՛ւր որ նստուած է, արժէք մը ներկայացուցած է, մինչև ամենարարձր աստիճաններու արժանացած, կարգացէք Տարօնի Ծաղիկ, Մշեցի վարդապետ, նահատակ Մխիթարեան Հ. Կ. Տէր Սահակեանի Հայ կայսերէ Բիւզանդիոնի գործը, պիտի հասկնաք թէ Հայը մինչև Բիւզանդեան կայսերական գահոյքը բարձրացած է: Իջնենք անկէ վար պետական բարձրագոյն կաղմին, ահա երեւելի նախարարներ կ'ընդառաջեն մեզ, անոնք բազմաթիւ են, նու-

պար մը ֆէլահներու հայրենիքին փրկիչ, Լօրիս Մելիքով Չարական կայսրութեան նեցուկ, երբ ոչնչական մը մահափորձ կատարեց անոր անձին սպաննիչ գնդակ արձակելով, ան հերոսաբար խոյացաւ չարախօսին վրայ, և կուրծքը բանալով գոչեց. «Այս կուրծքին գնդակ չի՛ բռնիր»:

Հայը սթանձնած ամէն պաշտօններու մէջ հաւատարիմ, բարոյանուէր, ուղղամիտ է եղած, պաշտօնի նուիրում՝ իր առաքինութիւնն է: Հաս փոքրիկ օրինակ մը ասպացուցանէ Ձեզ ճշմարտութիւնը:

Մեծ պատերազմէն առաջ Պոլսոյ մէջ քանքարաւոր պաշտօնեայ մը, Ոսկան Մարտիկեան կը կոչուի Օսմանեան թղթատարական նախարարութեան, իւր իբր հաշտագէտ, ճշտագահ, ուղղամիտ և նախանձախընդիր պաշտօնի պարտականութեանց կիրառման՝ թղթատարութեան նոր թռական մը կը սկսի բարեշրջումը անոր պաշտօնի ձեռնարկած օրէն կը յայտնուի, ընդհանուր պաշտօնէութիւնը ամէն կերպով պարտաւոր կ'ըլլայ յարգել անոր հրահանգները, նամակագրոյններ մինչև այն ատեն անձանօթ եղած փայլով կը տպագրուին:



ՄԻՄՈՆ Գ.Ս.Ս.Մ.Ս.ՃԵՍՆ

Անգլիոյ մէջ բացառիկ ճաշակով, այնպէս որ մինչև ցարդ այ կը փնտռուին անոնք: Առաւօտ մը պ. Մարտիկեան առանձին կ'երթայ վերին Վոսփոր թարապիոյ թղթատարական մասնաճիւղը, Շիրքէթի շոգենաւը մինչև հոն 1,5 ժամէն կը հասնի, երբ արդէն իսկ պաշտօնեաներ իրենց պաշտօնի պէտք է ձեռնարկած ըլլան, կը տեսնէ որ գեռ ոչ ոք եկած է, միայն սպասաւոր մը մաքրելու զբաղած է, կը հարցնէ անոր, — պաշտօնեան եկած է: — Ոչ, կը պատասխանէ ծառայողը: Ոսկան կը մեկնի, ժամէ մը դարձեալ կու գայ, այս անգամ պաշտօնեան եկած է: Ոսկան առանց ինքնութիւնը ծանօթացնելու կ'ըսէ թէ «ստիպողական հեռագիր ունի, անգամ մը եկայ, բայց պաշտօնեայ չգտայ, հիմայ դարձեալ եկայ»:

Այն ատեն պաշտօնեան զայրոյթով կ'ըսէ. «մենք այ մարդ ենք, հանգստի պէտք ունինք, գերի չենք, տո՛ւր հեռագիրդ»: Այն ատեն Ոսկան կը գրէ կեղրոնի Հեռագրատան Տնօրէնութեան, «Թարապիոյ հեռագրատան պաշտօնեան... էֆէնտին հրաժարեցուցուած ըլլալով, անմիջապէս ուրիշ մը խրկուի: Ոսկան»: Այս հեռագիրը կու տայ պաշտօնեային, որ կարգալով կը սարսափի, աղաչանք, պաղատանք անօ-

գուտ: Այսպէս է Հայն, պաշտօնի նուիրականութեան գիտակից, իր գտնուած միջավայրն օգտակար, իր արժանիքներով եղական:

Որքան որ եղած ենք ներկայիս դժբախտ տարագիրներ, բայց ներելի չէ մեզ մոռնալ աղգութիւն, հոս Ֆրանսա գիտակից մեծարժէք Ֆրանսացիներ իսկ կը զգացնեն մեզ աւագ պարտքեր, ինչպէս Ֆրանսացի բարի եկեղեցական մը Հայր Հիւէզ երկիցս բանաստեղծ հայ լեզուով, հայրենասիրական նուիրումով, նոյնպէս Գերերջանիկ պատրիարք կաթողիկոս Հռովմէական Հայոց Կիլիկիոյ Լիոնի մէջ պատարագած ատեն Ալիշանի «Բամ փորոտան»ը ձայնատիււով լսելի ըրաւ հայ սրտեր խանդավառելու, իմ սիրելի աղքատէր բարեկամ բժիշկ Վահրամ Թորգոմեան հաղորդեց ինձ թէ Աղաջանեան Գերապոյժաւ Նօղր-Տամի մէջ պատարագելուն՝ Սրբազան պապի յիշատակութեան հետ յիշած է նաև էջմիածնի ընդհանուր կաթողիկոսը, եղական իմաստութիւն, իր կաթողիկոսութեան արատ մը չէ, այլ միայն յարգանք իր երակներու մէջ չըջան ընող արիւնի ձայնը լսելու ազնուարար, կրնար չըսել, երբեք մեղադրելի չէր, ինչ պիտի մտածէր մոլեռանդ կաթողիկ վարդապետ մը, Աղաջանեաններ ամէն ձիրքերով հարուստ, միեւնոյն ատեն փափկազգած կենցաղադէտներ են Ապրին:

Արեան ձայնը անլուելի է, աղգութեան, հայրենիքի ձայն է այն: Որքան իրաւունք ունին հայրենասիրական միութիւններ իրենց բնաշխարհին նուիրուելու, անոր կարօտը երգելու. մեր տարագիր եղբայրներու միտքերը ալպոմներ եղած են իրենց ծննդավայրի պատկերներով լեցուն, անոնց մէջ նկարուած են իրենց ապրած անակը, փողոցը, դաշտը, առուակը, լեռը, ձորը, պուրակը, այս ամէնը կը խօսին իրենց սրտերուն: Ո՞վ է այդ պատկերներու ճարտար նկարիչը. երեակայութիւնը վարպետի երանգապնակով վառ գոյներով կը ստեղծէ սիրուն պատկերներ հայրենիքի որոնցմէ ձայն մը կը բարձրանայ անուշ նուագերգութեան պէս: Մարդ ո՞ր աստիճանի ալ հասնի, իրմէ անբաժան է այդ տալագրութիւնը: Բացէք հայ պատմութիւնը, տեսէք հայ թագաւոր Արտաշէս Բ. խաղաղիկ իշխանութենէ մը վերջ երբ հնչեց օրհասի ժամը, ահա զգաց խորապէս իր սիրտը ալեկոծող սէրը հայրենիքի եւ աչքերը մահուան թիւրիբով ծանրացած երգեց Գողթան երգիչներու բերնով կարօտը հայրենիքին, մինչև իսկ ծխանի ծուխի ամպիկներ, Նաւասարդի առաւօտը, երբ ամբողջ Հայաստան ամանորական տօներուն շքեղ խրախճանքներով կը հրճուէր, եղնիկներու և եղջերուներու վաղքեր, արչաւներ, երբ հայորդիներ փողահար և թմրկահար կ'ըլլային, ահա նոյն երգը:

«Ո՛ր սայր ինձ զծուխ ծխանի,
 Եւ զառաւօսն Նաւասարդի,
 Զվագելն եգանց եւ զվագելն Էդշերւաց,
 Մեք փոյ հարուաք եւ քիւրկի հարկանեաք»:

Մեր հայրենակցականներ հայ թագաւորին իրական նպատակներն են, երբ իրենց իրական նպատակ կ'ընտրեն իրենց զբախտ կորուսեալը երգել, այսպէս Վասպուրականցին, Եղեւիացին, Շապին Գարահասարցին, Մալաթիացին, Տարոնցին, Ղարապաղցին, Սալոմոնորցին, Կիլիկեցին, վերջապէս Ատաբաղարցին, Պարտիզակցին իրենց բնաշխարհի համար կը հառաչեն ուր որ ալ ըլլան, կը խաբեն իրենք զիրենք թէ կ'ապրին իրենց հայրենի երգիքին տակ իրենց տեսած դաշտը, ձորը, լեռը, պուրակը իրենց մտքերուն մէջ կը նորոգեն յիշատակներ հայրենիքի վայրերու, անոնց սրտերուն մէջ կը բոցավառի սիրոյ ատրուշանը և յաւիտեան չեն մոռնար Հայրենիքը, երբեք և երբեք չհրապուրուելով օտար շքեղութիւններէ:

Շատ ու շատ ուրախ եմ որ մեր հայրենակիցներ իբրև իրենց ազատիրութեան ապացոյց և ազգային իտէպի պատկու՞մ՝ ուրոյն ուրոյն նուիրում մեր նոր հայրենիքին, զժբախտաբար այժմ անոր պատկերը տոգուեա՞ծ է, բայց մեր սէրը անորնուիրուած շիջելափառ չ'անհետիր, կրնանք իրականացնել մեր ազատագրութեան երազը, երբ խուժուժ պայմաններ փոխուին, միշտ մէկմէկէ անբաժան ըլլանք, առելովառ խոժոռ նայուածք չարձակինք և զբայր՝ և զորօր, հայրենակից՝ հայրենակցի, գաղափարի պայքարը անհրաժեշտ է, խնդիրներ լուսարանող, հարկ է փաստացի արտայայտուել, այնպէս որ արտաքին ունկնդիր նմը իսկ իրաւացի գտնէ պարզուած պատճառաբանութիւններ: Չնմանք ամիւնակղակ Մակեդոնացիներու, որոնց համար նուիրական է Պեսոն, որ է վրէժ լուծել հակառակորդին ընտանիքին ամէնէն վերջին անգամը մահացնելով, զարնուրելի ոճիր: Պէտք է միայն մրցիլ օտարատիրութեան չարիքները արմատախիլ ընելու, իսկ կուսակցական արմատ հակամարտութիւնները անհետացնելու գործը հայ աիկնոջ աջակցութիւնը հարկ է, անոր քաղցրութիւնը կրնայ ջնջել չերտաւորումներինչպէս Տիկին Էլլէն Բիւղանդ, թունդ Դաշնակցական, ազնուարար արմատարհելով ամէն հակառակութիւն հաճեցաւ բանախօսել Ռամկալար Արշակ Զօպանեանի Յորելեանին, մենք ամէնքս և զբայրակից ենք մէկ մէկու, պէտք է հաշտ ապրինք ցվերջ և սիրենք մեր ազգը, ոգի ի բռնի կռուինք օտարատիրութեան դէմ:

Ահա մեր ամէնուս յորդորական օրինակ մը:

Գրիգոր Օտեան, որ մը երբ նիսի մէջ բարեկամներով չըջապատուած ատեն, խնդիր կ'ըլլայ թէ իրենցմէ ամէն մէկը ո՞ր ազգէն ըլլալ պիտի ուզէր եթէ ծնելէն առաջ խորհուրդ հարցուէր: Մէկը Անգղիացի, ուրիշ մը՝ Ֆրանսացի. երրորդ մը՝ Գերմանացի կ'ուզէր ծնիլ. կարգը կու գայ Օտեանի, անհամբեր են ամէնքը գիտնալու թէ ի՞նչ պիտի ըսէր, ան մեղմ ժպիտ մը չըթուենքին վրայ:

— «Ո՛չ Ֆրանսացի, ո՛չ Գերմանացի, ո՛չ Իտալացի, ո՛չ Անգղիացի կ'ըսէ, այլ պիտի ուզէի Հայ ծնած ըլլալ, եթէ հայ չծնէի, որպէսզի աշխատանք ունենամ»:

Այսպէս և արտայայտուած է Օտեան իր ժամանակակից Խաչատուր Պարթիզպանեանի դամբանականին մէջ, ահա մի քանի տողեր նոյնէն, «Լաւ ուշ զրէք, հայրենիք մը կայ, որ իր փառքին մէջ կը փայլի, սիրելը զիւրին է, իսկ Պարթիզպանեան նուիրուած էր այն հայրենիքին, որ ինկած էր և անփառուեակ»: Գրիգոր Օտեան աղնուական շառաւիղ, ի բնէ ազգասէր, այդ զգացումը ժառանգած էր հայրիկէն, Եազըճը Պօղոսէն, արքունի պալատին շինուածոց քարտուղար անոր հոգւով սնած, ցվերջ պաշտած է զանի, միշտ կրկնելով. «Ա՛ն հայր իմ, աշխարհիս վրայ իմ միակ սէրս և միակ պաշտամունքս»: Իր հայրիկն էր, որ տանը մէջ մասնաւոր զպրոց հաստատած էր իմ Գրիգոր և Նշան զաւակներուն, որոնց հետ ուրիշ մանուկներ ևս կ'օգտուէին, անոնցմէ էր Սաղոյեան Աբրահամ, վերջին նշանաւոր նկարիչ Պօղոս Օտեանի պաշտպանութեամբ Փարիզու Գեղարուեստի փարժարանի աշակերտած, Պօղոս աղայ իր կրթասիրութեան ապացոյց ընծայեց, խոստովանարար Մատթէոս պատրիարքի յանձնելով գաղտնօրէն 50000 դրուշ Գարակէօմրիւքի ազգային վարժարանի կտակադրամ այս գաղտնիքը կը հետաքրքրէ ձեղայիրլեան ամիրան և կ'ուզէ գիտնալ նուիրատուն, բայց պատրիարքը կը ծածկէ զայն իբր խոստովանութիւն, որ պատճառ կ'ըլլայ պատրիարքի հրաժարումին:

Ա՛րդ, հարկ է օրինակել ազգասէր հայորդիներու հոյին, անոնց նման նոր նոր տիպարներ տեսնելու հայ չըջանականերու մէջ. անտէր ժամանակներ իսպառ խոյս տուած են, հարկ է մեր ազգասիրական զգացումներուն հպատակիլ, անկորուստ պահելու հայ յեզու, հայ պատմութիւն, հայ կրօն, այս կը հրամայէ մեզ հայրենիքի ազազակր, նոյնը կը կրկնուի մեր սրտերու խորէն, նուիրում նոր աստուածութեան մը որ է ազգասիրութիւն, ան պիտի պսակէ մեր ճակատները ազատագրութեան դափնիներով: Այն ատեն պիտի ծագի նոր լոյս արտակարգ պայծառութեամբ հարազատ հայ հոգիներու բերկրանք: Ի՛նչ երանի այն օրնամ ժամուն, երբ հայրենիքի ազազակը ցաւատանջ հառաչ մը չպիտի ըլլայ, սաստկաշառաչ բողոք կամ հոգեվարքի հռնդիւն, այլ անուշակ քնարերգութիւն երջանկաւէտ կեանքի: ՍԻՍ ՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՉԵՌԱՐՈՒԵՍՏԸ ԿԵՍԱՐԻՈՅ ՄԷՁ

Ա. Ե Ա. ՉՄ Ա. Յ Ա. Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ե

Վարչամակ = (Եազմա-Եալիբգ) կ'անուանէին քեկզիւՅի ու քիւլ-պեկեճի վրայ մանրատերեւ ստուերադժուած ու սպուած Եազմաները, շորս դարերէ ի վեր Փոքր Ասիոյ իսլամ թէ քրիստոնեայ անխափր երկսեռ դասակարգը կը գործածէր իբր զլիսու ծածկոց կամ ապարօշ: Այս Եազմաները մինչև 1730 թուականը կը գնուէին Թօգաթի հայ վաճառականներէն, որոնց մենաշնորհն էր վաճառման գործը: Օսմանեան կայսրութեան գրեթէ բոլոր կողմերէն սկսելով՝ Պուլկարիոյ և Սերպիոյ ներսերն իսկ արտածումներ աեղի կ'ուենեային: Անուանի էր Թօգաթի Եազման:

Կեսարիոյ Տէրէվանք զիւղէն մեծանուն ճարտարապետ Սարգիս Գալֆա, 1727 թուականին Սուլթան Ահմէտ Գ. ի գահընկէցութեամբ իր դիրքը վտանգի տակ տեսնելով, Կ. Պոլսէն իր ծննդավայրը Տէրէվանք կու գայ: Երբ Կեսարիա կը հասնի, Թօգաթի Եազմաներու առուծախը մեծապէս կը շահաւորուէ զինքը: Կը սկսի այդ Եազմաներու տեսակները, պատրաստութեան եղանակները ու ստուերադժուած ու սոււմնասիրելի յետոյ կը մտադրէ սոյն արհեստը կատարելագործել Կ. Պոլսոյ մէջ:

Արդարև 1829ին, Պոլիս դարձին, իր առաջին գործը կ'ըլլայ Գուգ-գուենճուքի մէջ Եազմայի գործատուն մը հիմնել. քեկզիւՅի ու քիւլ-պեկեճի, սկոնիայի ճանճեա խաւայի: Մահուճի վրայ երկիրներանգ ծաղկենկարներով կը յաջողի հրապարակ հանել խիստ ճաշակաւոր Եազմաներ, վարազոլրի ու սեղանի ծածկոցներ ու եկեղեցական սպասներ, որոնք մեծ ընդունելութիւն կը գտնեն: Յետ մահա. Սարգիս Գալֆայի զաւակներուն կողմէն գործատունը կը փոխադրուի Սկիւտար, ուր պւելի լայն գործառնութիւն աեղի կ'ուենայ: Ինչպէս այս մասին կը զրէ շ. Դ. վրդ. Ինճիճեան իր Ամառանոց Բիզանդեանի պարբերաթերթին մէջ. (1794 Մայիս 10 էջ 189):

«Տեղս է գիւտի՝ Հայկազուն ազգին,
Նոր գործարանի բնօր ներկողին
Նկարակերտի՝ գործոց բենեգին
Բոլորից այլոց՝ ընտելագունին:
Որ քեպէս փախեալ ի Սկիւսարին,
Այլ ստրայս կոչի՝ անուն հրնաւչին,
Բանայ զիւր ծաղիկ՝ ոչ սոսկ զարնային
Այլ զարնան յաշնան՝ զանբառամելին»:

Սարգիս Գալֆա իր Կ. Պոլսոյ գործատան մէջ կ'աշխատոցնէ հայրենակից կեսարացիներ, որոնք արհեստին վարժուելէ ետք կեսարիա վերադառնալով 1845ին կը սկսին եազմայի գործարաններ հաստատել ու հետզհետէ այն աստիճան կը յառաջդիմեն, որ կեսարական եազմաները շուտով առաջնութիւն կը շահին թէ՛ արտասահման, թէ՛ բոլոր կուսակալութեան մէջ:

Ահա այս կերպով Սարգիս Գալֆայի շնորհիւ առաջին անգամ կեսարիա մուտք գտած է եազմայագործութիւնը. մինչ ցարդ ալ կը շարունակուի եազմայի պատմանիւրիւնը:

Բ. Ա. Լ. Ա. Ճ. Ա. Չ. Ի. Թ. Ա. Ր. Ը

Այլճան բամբակէ գծաւոր հիւսուածոյ մըն է, որ կը բանուի Գամակոս-Հալէպ-Մարզուան-Արարկիր-Ակն և այլ տեղերու մէջ, գաւառացիները տպածոյի տեղ կը գործածեն տոկունութեան համար, երբեմն շատ ճաշակով կը բանուի որու գոյնը անեղծ և իսկատիպ նկար կ'ունենայ:— Անուանի են Խուրճիսիյեու Մեյսանի, Գարակեօզ-Հինգիյեի Ալթր-Բարմա նկարէնները, ասոնց մետաքսէ տեսակները Հալէպէն-Շամէն-Համայէն և այլ տեղերէն կու գային ու կը ծախուէին:

1854 թուականին Արարկիրցի Յարէթ անուն 25 ամեայ երիտասարդ մը իր հարեան թրքուհիներէն մէկուն հետ սիրային յարաբերութիւն կը մշակէ. երթալով ինչդիրը տարբեր գոյն կը ստանաչ, տեղացիները կռահելով այս սիրարանութիւնը՝ կը մտադրեն դարանակալ սպասել և Յարէթը սպաննել իր տարփուհիին տանը մէջ*: Վերջապէս օր մը Յարէթը կը պաշարուի ազլկան հետ. 7 հողիէ յարձա-

*) Այս դուազը մեզի կը պատմէ 78 տարեկան ծեր Հանի Գեորգ Աղա Գասարեան՝ որ այժմ ողջ ու առողջ կ'ապրի կեսարիա, որդին Հանի Բարսեղ աղայի, որ իր հօր բերեան լսած եւ 1905էն մինչեւ 1915 սոյն գործասան Տեր եւ Տեօրեան եր:

Անա 1854ին մուտք գտած սոյն մանուածանիւթը 1915ին ընդհանուր պատերազմի պատճառաւ պատմութեան անցաւ:

Գ. ԳՈՐԳԱԳՆՐԾ ՈՒԹԻԻՆԸ

1880 թուականին Նիկողոս Նալպանտեան անուն հազիւ 25 տարեկան երիտասարդ մը, որ կը բնկէր Կեսարիա Չուխասար փողոցը՝ մետաքսէ դորգ շինելու խորհուրդը կը յղանայ. լաիկ մեջիկ Գըր Շէհիր կը մեկնի. հոգ բուրդէ դորգ գործողներու հետ գործ կ'ունենայ, 6-7 ամիսներ լաւ մը արհեստը ուսումնասիրելէ և իւրացնելէ յետոյ կը վերադառնայ Կեսարիա, առաջին անգամ դադանապէս իր տան մէջ, Պուրսայի զուտ Սուզանի մետաքսէն 750 հանգոյցով (իմէ) թէզկեան (հոր) մը կը բանայ դորգ մը շինելու համար, մինակ իր քրոջ աղջկան ալ սորվեցնելու շիտուժով իր քով կ'առնէ, ինքն անձամբ կը սկսի բանիլ և Փաս. ձիվԱՆ ԱՇԸԳԵԱՆ կատարելապէս հրապարակ հանել մետաքսէ գորգը: Այս յաջողութիւնը ուրիշներուն ալ ախորժակը դրգռելով, գործի կը սկսին՝ Մկրտիչ Եազըճեան Գըր Շէհիրէն մեկնելով հոն մանիֆաքթուրայի խանութ կը բանայ, և առեն մը ետքը կ'ամուսնանայ Կեսարացի հայու մը աղջկան հետ, որ լաւ գորգագործութիւն գիտէր. տարին չաւարտած կը վերադառնան Կեսարիա. կը սկսի իր տան մէջ րրդեղէն թելերէ գորգեր գործել և դրացի հայուհիներուն ալ վարժեցնել. իրենց ծանօթ բարեկամ Սարգիս Գըզըլեան որ արհեստով հնազէտ էր միանգամայն սեղանաւոր, միշտ հետաքրքրուած հին գորգերու վաճառումով, կը փորձէ մետաքսէ գորգ բանեցնել տալ. այն ժամանակ հին մօտէներու նոյնութիւնը ձեացնող Դամիանոս Բօլատեան անուն երիտասարդ մը կը ներկայանայ և կ'առաջարկէ ընկերակցարար գործել. և յիշաւի մասնազէտ և փորձառու արուեստաւորի դադանիքները ճանչցող անձ մ'ըլլալով՝ իր մօտեկադործութիւնը կ'արժեցնէ Դամիանոս և կը սկսին մեծ յաջողութեամբ մետաքսեայ գորգերու հորեր բանալ. 1884ին առաջին անգամ Կեսարիա մետաքսէ գորգագործութիւնը կ'ընդհանրացնէ, 1886ին Եգիպտոս Գրիգոր Մելքոնեան էֆ.ին Կեսարիայէն Գասարճեան եղբարց միջոցաւ կը գնէ քսան հնչուն թրք. ոսկինոց փոխարժէքով սէճճատէ մը՝ իր



իր հայրենիքին առաջին յիշատակը՝ որ մեծապէս զնահատուած Երիպտոս. այս գործառնութեան մեծապէս ուժ տրուելով՝ սկսան հետըզհետէ արհեստը կատարելագործել, անեղծ ու իսկատիպ բնական գոյներով խնամուած ու բանուած սէճճատէչներ-հակնոց (հէյպէ), բարձրերես, բաճկոն, նրբամուճակ. մահճակալի ծածկոց, պատի պատկերազարդ թապլոցու, և կենդանիներու, հովիտներու տեսարաններով գորգեր պատրաստել տալ, նա մանաւանդ մեծ գեանի գորգերն ալ հրապարակ հանեցին. անհաւատալի կերպով գործառնութիւններ յառաջ բերին. գորգագործութիւնը կեսարիոյ Հայութեան մենաշնորհը դարձաւ. թէզ-կեահ-հորերու թիւը 7—8 հազարի հասած էր ու, գրեթէ հազարաւոր ընտանիքի ապրուստն ապահովուած կը նկատուէր. բայց ընդհանուր պատերազմը վերջ տուաւ:

Ահա 1880ին սկսաւ գորգագործութիւնը կեսարիոյ մէջ Հայերու նախաձեռնութեամբ:

ՃԻՎԱՆ Յ. ԱՇԸԳԵԱՆ

Փաստաբան

14 Յուլիս 1938 կ. Պոլիս

(Փրցուած էջ մը «Կեսարահայոց ծագումը եւ զարգացումը»
անիսպ երկէս)

Ս Բ Բ Ո Ւ Հ Ի Գ Ա Լ Ֆ Ա Յ Ե Ա Ն

Սրբուհի Մայրապետ Գալֆայեան ծնած է 1822 Փետր. 17ին Գարթալ (Պոլիս), 1840ին հանդիսաւոր ուխտով կը հազնի մայրապետութեան վերակուն. 1850ին Խասգիւղի մէջ արհեստանոց մը կը բանայ ձեռագործի: 1865ին կը հիմնէ Խասգիւղի մէջ Գալֆայեան սրբանոցը որ մինչև իր մահը անխոնջ գործունէութիւնով վարած է զայն և կարողացած հոգալ անոր պիւտճէն:



Մայրապետը ազգին կտակած էր իր սրբանոցը կալուածներով ու գոյքերով:

Սրբուհի մայրապետ վախճանած է 1889 Յուլիս 4ին և թաղուած իր հիմնած սրբանոցի մատուռը:

ՍՐԲՈՒՅԻ ՄԵԾ ՄԱՅՐ ԳԱԼՖԱՅԵՆ

Ա. Մ Ա. Ս

Տերունական օրերու առաօտեան պահերէ
Յիշատակ մը մանկական,—կեանքիս էջէն նուրբ զանակ,—
Իր ցոլքն ունի սակաւին պելորուած գրլխուս մեջ՝
Հին փարոսէ յոյս սրփռող հայելիի նրմանակ:

Նորածագ յոյսն արփենի: Իր սրլացիկ հանանչով.
Ոսկեգօծած կը սաներ միտքը, կանխաւ, դեպի Հապիւղ.
Ուր որ ապա կ'երբայինք բերելընքաց նաւակով.
Կամ նաւով մը շոգեշարժ, Ոսկեղջիւրի յոյժ նամբին:

*

* *

Նաւավարը ինձ քրէք ձիւնասպիտակ մի կարապ
Ու, ջրլացիքի բեւերուն քափհարմամբը կրճաւոր,
Յառաջանար հեզասահ, ուղիէ մը պաղպաղուն
Եւ մերք ընդ մերք, աջ ուձախ ակնարկ կամ շեշտ արձակեր:

Շոգեմուն ալ կարծես թէ, հրակայ կարգ մ'էր երկանիւ:
Ու, ծրխաշունչ սուլարձակ, ընթացքին մեջ օձագին,
Հանգրբուանէ հանգրբուան. Ոսկեղջիւրի ավիամիր՝
Անցորդներու հոծ շարքեր կու սար կ'առնէր անձանձիր:

Նաւարանը, մեր աջ դին, ցոյց սար երախ լայնաբաց.
Թիկունեմովը կորընքարդ, ընդերովը մրքասսուեր՝
Ծովաբլանակ, կարծես. դեւ՝ թեպէտ նընջէր հանդարտիկ,
Բայց, վախնայի մի՛չ գուցէ շարժեր յանկարձ խըլլրէր:

*

* *

Երանուրեամբ հրբնուէի, երբ մեր նաւը կամ նաւակ
Հալըճ-Օղլու, ծովափին, կը մօտեմար անվրսանգ.
Ուրկէ ուղիղ դիմէինք եկեղեցին հոյակերտ,
Լեցուած արդէն, կանուխկեկ, հաւասաւոր բազմութեամբ:

Լեցուած նաե բուրվառի քանձր ծուխով խրնկաբոյ
 Զոր արեւուն յուսեղէն նառագայքներ, առ ի շեղ,
 Ակօսէին հոսելով յուսանցներէն խորանին,
 Ու կազմէին սրբազան մրրնոյրս մը երկնային:
 Եւ խորանին վերելք, կիսաբոյր կրկնաւար
 Թառած կոյսեր դեռաւի. պատմունանաւ ձիւնաբոյր,
 Կը քրւէին երկինքէն իջեւանած հրեշտակ,
 Լոյսերու մէջ քեւապար, սաղմոսերգել նեշտալուր:
 Շարականի զուգածայն, ծրնծղայ, զանգակ հրնչէին.
 Բարեպաշտօն ժողովուրդ, միաբերան երգակից,
 Փառաբաներ, պաղատեր, բազկասարած աղօթք.
 Ու հոգեկան յոգումով յափրօտակուած. քսփոփուեր:
 Մինչդեռ ժամու աւարտին «Տէր ողորմիա»ն համերգուեր.
 Ամէն յուգումնք, ինքնաբեր, միահաղոյն ձուլուէին
 Աղետարկու կողի մէջ. երկնից զուրքէն հայցելու
 Ազատութիւն Հայ աղգիւն, խաղաղութիւն աշխարհի:

* * *

Եկեղեցւոյ կամարէն առուահոսող սուրբ Ոգին,
 Նըւիրական յարկէն դուրս, կը գրտնէինք վերքսին
 Այն Տունին մէջ ուր մի կին, հոգւով մարմնով Սրբունի.
 Իր ասեղով կանգնած էր սափուկ բոյն մը որբուկի:
 Կիրակիներ, շաքտ անգամ, այց կ'երթայինք այն Տունին,
 Որ՝ բարձրագիր՝ լայն բազմած պարտեղի մէջ՝ յարդարուն
 Գարափներով ծաղիկի, ածունեով բանջարի,
 Ունէր աղբիւր մրտահոս, Արհեստի յարկ մեկուսի:
 Կորովամիտ, առիւննող հիմնադիր Մայր Սրբունին
 Սրբանին մէջ ծովհայեաց կ'ընդունէր մեզ խրնկազին.
 Համբոյր տալու իր ձեռաց, երբ վագէի ընդառաջ,
 Ողջագուրէր գիտ, գրգուրէր վերարկին սակ լայնարձակ:
 Ա՛ն, այն զրգուանք սիրակաթ կը քափանցէր սրբիս խոր,
 Իր հոգիէն հաղորդուած, քափ կ'առնէի՝ քրոնիչքի,
 Կը տեղայի ելնել վեր, սորվիլ, մեծնալ, զարգանալ,
 Խօսուով, հոգւով ու գործով նըման ըլլալ այն Մեծ մօր:
 Երբ աղջկանց զուարթուն նըուողիւնը եւ աւխտով,
 Անոնց երգեր դաւանաւոր. շար շար գիրքեր ոսկեգօծ,
 Սրբանին գարդ նըկարներ նըշանաւոր դէմքերու
 Հըրահրէին իմ հոգիս, կայծ կու տալին եռանդիս:

Բ. Մ Ա Ս

Տունին վերեւ թեւածող Գուրի ոգին սիրասած
Յանախ իրեն կը ձրգեր այրեր, կիներ բարեպաշտ.
Գերահրաւ եակներ չէի՞ն արդեօք այն անձեր
Որ կրնային կասարել ասուլիսներ ինձ անհաս:

Անհասը* միշտ ըղձայի մանուկներու աւխարհին՝
Կախարդական հրմայիով գրգիռ սար ինձ որ սորվիմ.
Ըմբռնելու բացօրո՞ւ բառի, խօսքի բո՞ւն խմաստ,
Եւ հասնելու մեծ մարդոց յանկուցանող արժանեաց:

Գրպորոցական գիրքերը ա՛լ գրքների շատ վրսիս
Հեսաբրբիր իմ մրսիս ընծայելու հոխ օծիս.
Կը վազէի լրսարան. եկեղեցի՝ ըստնալ
Բանախօսեան, քարոզչեան հիւքալից ջամբ բաւարար:

Առաս պաշար քաղէի հանդեսներէ, ժողովէ.
Եւ, օր մըն ալ ուղեգծէն դրպորոցիս,
Մրսեր էի այն Տանար** ուր Երեցփոխք ազգային
Կը ջանային լուծելու բարդ խնդիր մը դրժուարին:

Կը խօսէին փոխն ի փոխ երկայնաբա՛ն, շարունա՛կ...
Կարգն եկած էր վերջապէս ձեռամբարձիկ փուէ սալ:
Ես ալ, յայնժամ՝ իմ ձեռքս վեր կ'առնէի գոն, հրպարտ
Գաւառացի միամիտ մանուկի մը պարզութեամբ:

* * *

Իսկ քաղցրագոյն վայելքը ինձ կը սրուէր ըմբռնել
Երբ Մեծ մայրք, երբեմն, կու գար մեզի ազանել.
Ընթրիքէն ետէ, համախումբ ընտանիքը դաս կ'առնէր
Ընթերցումէս՝ կասարուած Սրբուհի մօր ընտանեօք,

*) Անհաս = անհասանելի:

***) Մայր եկեղեցին ի Գուր-գալու, փոխանակ էր.
քալու Հիսար-Տիպի ուր կը գտնուէր դպրոցը (Մեզպուրեան)

Ընթերցումի նիւթ կ'ըլլար բեղուն կեանքը Պեզնեանի
 եւ կամ գիւտը Հայ գրիին, ձեռամբ Սահակ-Մեսրոպի.
 Ի՛նչ րդձական հառաչներ արձակէր Մայրն այն պահուն,
 եւ, ընդհասամբ ընթերցման, ի՛նչ խանդ յայտներ հոգելին:

* * *

*Միջավայրը՝ գործակից ժառանգական զբոսովի,
 Յայտնէ և կամ կը նիւթէ գիծեր ձիրքի, արատի:
 Երանի՛ տանք այն տըղոց որոց ծընունդն ու կենցաղ
 կը պարուրուին չողերով միջավայրի բարեբաղդ:*

Ծրնո՛ղք են բուն աղբիւրներ ժառանգական փոխանցման.
 Անո՛նք են որ պատաստեն հողն ու հունքը մբակման.
 Անո՛նց անկ են անեծք, փառք դու Ապագան բաւխե հուսկ
 Ըստ այնրմ որ գաւակը դառնայ փուռ կամ մոլեխ* մուշկ:

*Օրհնեալ՝ ըլլայ յաւիտեան յիշատակը ծընողաց
 Որ բարձրագոյն կեանքի մը տեսականի ջրբեղով
 Սերտիւ կ'օծեն բողբոջը իրենց զաւկին բընութեան,
 եւ աչալուրջ կը հըսկեն անոր անեղծ զարգացման:*

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

26 Նոյեմբեր 1932

Անվերս

(Յիշատակ 1872—1875 տարիներու)

*) Մոլեխի = մոլեխի, Մոլուս = տունկ մը որ կը գործածուի իբրեւ կակղացուցիչ դեղ, եւ որուն մեկ տեսակէն կը հանեն մեկանոս իւղ մը (huile tirée de la mauve musquée):

Ն Ե Ր Ք Ն Ա Թ Ա Ղ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ներհաճխարհ մը ունիմ՝ փարբամ գունագեղ,
 Ուր կեանքն է մերք երազին ու շքեղ,
 Հոն կ'ապրին վէս բընակիչներ անհամար,
 Այնքան խօսուն, սակայն, մերք լուռ՝ գերդ մարմար:

Ոմանք կարի՛ մըսերիմ են իմ սրբիս,
 Ու կը նրնջեն շրթունքներն ինձ վարդ շուրթիս:
 Երբ քախմոս եմ այս վրժաբեր օրերէն,
 Կու գան ու զիս կախարդօրէն կ'օրօրեն:

Բայց, չըբաւեր կարծեք սուգերն այս երկրի,
 Որպէս զի հե՛ք անձրս երկար չըբերկրի
 Ո՛րքան ներքին անձկութիւններ կ'ունենամ:
 Բընունօ մահեր ու քաղումներ՝ լրուելան:

Ու կը ժրպշիմ: Վիճարս ո՛չ ոք չ'իմանար,
 Զի արցունքներս կը հոսին քներս անդադար:
 Կը դողանջեն ներքին զանգերս բօբաբեր,
 Ու ձայնն անոնց, դուրսէն ո՛չ ոք չի լսուր:

Ես կերտիչք ներհաճխարհիս, ամենուն,
 Մերք ալ կ'ըլլամ մեռելաքաղ մ'անանուն,
 Ու կը քաղեմ իմ սրբիս մէջ կարեվեր,
 Յոյս ու կարօս, խանդ ու երազ, սենչ ու սեր...

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

ՎԱՐԱԶԴԱՏ ՏԱՔԷՍԵԱՆ

Իբր լրացում Վ. Տաքէսեանի ինքնակենսագրութեան, կու տանք հետեւեալ տեղեկութիւնները:

Վ. Տաքէսեան եղած է Հ. Յ. Դաշնակցութեան Պուլկարիոյ կարկառուն ղեմքերէն և իբր պատուիրակ մասնակցած 1915ին Կարինի մէջ զուժարուած Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովին, ուր որոշուեցաւ չեղօք մնալ ընդհանուր պատերազմին մէջ, այս որոշումը Թիհաա Թէրաքքըրի զիւր չդալով նախքան ընդհ. տեղահանումը նահատակեց այդ ընդհ. ժողովին մասնակցող պատգամաւորները: Վարազդատ Տաքէսեան այս առթիւ նահատակուած է բանտին մէջ:



ԱՆՏԻՊՆԵՐ ՀԻՆԵՐԷՆ

Վ.Ա.ՐԴԱԶԱՐ ՏԱՔԷՍԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒ ՅՈՒՇԵՐԸ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ծնած եմ Կ. Պոլսոյ Խաազիւղ թաղը: Նախնական ուսումս առնելով տեղւոյն Ներսիսեան վարժարանին մէջ, 1891ին ընթացաւարտ եղած եւ Ազգ. Կեդրոնական վարժարան ընդունուած եմ: 1896ին, աւարտելով Կեդրոնականի շրջանը՝ հարկադրուած եմ, Օգոստոս 14ի ջարդին հետեանօք Պուլկարիա ապաստանիլ: 1896էն մինչև ցարդ, կը զբաղիմ ուսուցչութեամբ: Պաշտօնավարած եմ Վառնա, Սիլիստրէ, Ռուսճուք, Շումլա, և Ֆիլիպէ: 1906ին Վառնա գումարուած «Պուլկարահայ Ուսուցչական Միութեան» որոշմամբ՝ խմբագրապետ կարգուած եմ Ռահմիլիայ անունով մանկավարժական պարբերականին, որ երկու տարի միայն հրատարակուեցաւ: Աշխատակցած եմ պուլկարահայ թերթերէն Հայեկիի, Հայաքերքի և Ռազմիկի: Այժմ, վերստին կը պաշտօնավարեմ Ռուսճուքի Ազգ. երկսեռ վարժարանը:

ՅՈՒՇԵՐ

Պատանեկան հասակէս՝ անզուսպ հրայրք մը կը զգայի Կեդրոնականի աշակերտելու: 1891ին, երբ Խաազիւղի Ներսիսեան վարժարանի հոգաբարձութիւնը, պիւտճէի անձկութեան հետեանօք, ստիպուեցաւ Չ. զասարանը փակել, մեր երախտաւոր տնօրէնը՝ պ. Նդիշէ Տուրսունեան՝ յորդորեց զիս և իմ քանի մը ընկերներս որ Կեդրոնական մտնել ջանանք: Երկու ամիս Պատրաստուելէ յետոյ, յաջող քննութեամբ մը, կրցանք այդ նուիրական յարկէն ներս մտնել:

Հինգ տարուան կեանք մը՝ Կեդրոնականի մէջ, կեանք մը՝ յաճախ վարդազոյն, երբեմն՝ մոռալ լի է այլազան յոյզերով ու յուշերով:

Առաջին օրէն, ա՛յն անձնաւորութիւնը որ լաւ տպաւորութիւն թողած է վրաս, մեր անմոռանալի տեսուչն է, Պ. Յարութիւն Մոստիշեանը: Համակրելի, ժիր, եռանդոտ երիտասարդ մըն էր, ճերմակ կլորիկ դէմքով, չեմ գիտեր ի՛նչ հովմը կար վրան, որով, յարգանք և պատկառանք կ'ազդէր վարժարանին ամէնէն ապերասան աշակերտին վրայ իսկ: Կարի՛ նախանձախնդիր Կեղորնականի հմայքին ու պատուոյն՝ Պ. Մոստիշեան միակ յարմար մարդն էր այդպիսի բարձր հաստատութիւն մը վարելու համար: Հա՞րկ է շեշտել թէ ան, իր վարպետ նաւապետ, կրցաւ, ա՛յնքան փոթորիկներու մէջէ, իրեն յանձնուած նաւը հասցնել դէպի որոշ նպատակակէտ, անքոյթ նաւակայքը...

Երախտագիտութեամբ կը յիշեմ մեր գրաբար հայերէնի ուսուցիչն՝ ողբացեալ Միհրան Ասքանազ, որ մեզի արմանք զարմանք կը պատճառէր մայրենի լեզուի մէջ ունեցած ներկուռ հմտութեամբն ու մանաւանդ բառադիտական վիթխարի՛ պաշարովը: Ի զո՛ւր կը նըկրթէինք երբեմն նեղը ձգել զայն շինծու կամ հակադարձ բառերու նշանակութիւնը խնդրելով: — Ատանկ հայերէն բառ չկայ, իսկոյն կը վճռէր մեր պատկառաղջու հայկաբանը: Զափաղանց խստապահանջ էր ոսկեղարեան լեզուի կանոններու ի բերան ուսման մասին: Անգամ մը խոստացաւ մէկ տարուան իր խմբագրութեամբ հրատարակուած Ծաղիկ նուիրել ա՛յն աշակերտին՝ որ պիտի կրնար ընդ և բս նախագրութեանց բոլոր կիրառութիւնները յիշել...: Մեր դասարանի գրաբարագէտ աշակերտները վայրապար տընեցան գիշեր ցորեկ՝ ուսանելու համար կնճռոտ կանոնները: Մրցանակը խլեց գրաբարի մէջ ամէնէն տկար այլ հօր յիշողութեամբ օժտուած աղայ մը:

Գայով աշխարհաբարին, ա՛յն աշխարհաբարին, սակայն, զոր Հայրենիք օրաթերթը ծաւալեց, մեզի կ'աւանդէր Հրանդը: Սոսկալի՛ բժախնդիր նորոգ լեզուին հարադատութեան մասին՝ անկա երբեք թոյլ չէր տար որ մեր շարագրութեանց մէջ սպրդի հին լեզուի կալ ուսածէն ո՛ր և է նշանախեց մը իսկ: Օր մը, ընկերներէս մին, իմ մէկ գրութեան մէջ, գործածած էր «ձեռք կարկառ ի մայր» բացատրութիւնը: Տեսնել պէտք էր Հրանդի դէմքի արտայայտութիւնը՝ ի լուր այս սրբապղծութեան... — Վերցո՛ւր, պարո՛ն, շո՛ւա վերցուր ատ հին քուրջը, կը պոռար Պանդուխտի կեանքէն հեղինակը՝ ակնոցը շտկելով քիթին վրայ: Իսկապէս, չոր դասաւանդող մը չէ եղած: Երանդի չէինք բնաւ տեսներ կանոններ սորվեցնող աւանդամոլ պատուելի մը, այլ անկեղծ դաստիարակ մը որ բնական ըլլալու կը զրդէ աշակերտը: Անո՛ր միջոցաւ ճանչցանք Արտիկանը, Նազարեանը, Նալբանդեանը, Գամառ Բաթրիպան, Բաֆֆին, Արծրունին և

ծէր գրահաշուոյ կամ եռանկլւնաչափութեան ամենակնճոտ խնդիրները: Դասաւանդութեան միջոցին, գաղտուկ Մովսասան կարդացող աշակերտն անգամ պահ մը գլուխը վեր կ'առնէր և հիացիկ ակնարկ մը կը նետէր պ. Պոյաճեանի վրայ: Մաթեմաթիքի յարմարութիւն չունեցող հէք տղաքը որքա՞ն կը սարսափէին և ո՞րքան ճիգ կը թափէին՝ գոնէ միջին թիւ մը շահելով՝ դասարան փոխելու...:

Տիեզերական լեզուն, Ֆրանսերէնը, որու համար իրաւամբ մեծ տեղ կը տրուէր կեդրոնականի մէջ, կ'աւսնդէին մեզ կարգ մը ուսուցիչներ, հայ թէ օտար: Անոնցմէ ամէնէն օգտակարն եղած է պ. Նշան Սիմոնեան, որ միանդամայն կ'աւանդէր Ընդհ. Պատմութիւն և աշխարհագրութիւն: Ահա՛ տիպար մըն ալ բաղմամբուտ և խղճամիտ ուսուցիչ, որ ամէն հարցումի կը պատասխանէ և դիմացինին լիութի զոհացում կու տայ: Ա՛յնքան դիւրազրգիռ էր, սակայն, որ կը զայրանար՝ եթէ անզգուշութեամբ գետինը մատիտ մը ձգէինք...

Բարձրագոյն դասարաններուն մէջ՝ բախտ ունեցանք աշակերտելու Մատթաթիա Կարաղաչեանի, Թովմաս Թէրզեանի, Արշակ Զօպանեանի և Փիէր Քիլիարի:

Կարաղաչեան... հոյակապ անձնաւորութիւն մը: Մտքիս առջև է միշտ այդ հրաշայի անձնաւորութիւնը, մինիսիկ ծերուկ մը տոտիկ տոտիկ քայլուածքով, ծրարիկ մը անութիւն տակ: Կը մտնէ դասարան, կը նստի հանդարտիկ, և ահա՛, իսկոյն, բոլոր աշակերտները շուրջը կը հաւաքուին խնդագին: Խեղճ ծերունիին ականջները շատ ծանրացած էին, ստիպուած էին մօտենալ: Արդէն դաս ալ չէ՛ր աւանդեր, այլ թղթիկներու վրայ գրածները կը յանձնէր մեզ որ օրի՛նակէինք: Ի փոխարէն, մեր ամէն տեսակ հարցումներուն կը պատասխանէր անձանձրոյթ, Երբեմն, ծրարիկը քակելով, Ֆրանսերէն Տեղեմաքը կը հանէր, կը կարդացնէր և ոսկեղարեան լեզուով թարգմանել կու տար: Ո՛րքան կը հրճուէր՝ եթէ ճիշտ բառերը գտնէինք: Յափըշտակութեամբ, խանդադատանքով կը խօսէր իր սաներուն՝ Սահակի, Մեսրոպի, Եզնիկի վրայ: Մեզի համար շատ շահեկան էին իմ խօսքերը, կենդանի խօսքերը՝ հայ լեզուի, հայ դպրութեան և մանաւանդ հայ իրականութեան վրայ (1895ի հայ իրականութիւնը): Հէք ծերունի, ո՞րքան կը մորմոքէր սիրած՝ ամէն օր կոտորածի լուրեր առնելով, ինչպէս կը տառապէր հոգեկին, երբ կը լսէր որ Սահակի և Մեսրոպի ցեղը սիսթեմաթիք կերպով կը սրածուի մարդակերպ գաղանի մը հրամանով: Երբեմն, ղէմքը ցնծութեամբ շողարձակ, կու գար, աւետել թէ մեծ կոչուած պետութիւնները պիտի բարեհաճին եղբոր բարենորոգումներ մտցնել Հայաստանի մէջ:

— Ի՞նչ լուր հայրենիքի մասին, Գարադաշեան էֆէնտի:

== Տղա՛քս, շուարեր եմ այսօր, կ'երեւայ թէ մեր հարցը լուրջ կերպարանք առած է, մեծ պետութիւնները կ'աշխատին կոր: Կը յուսամ թէ լաւ բան մը պիտի ըլլայ:

Ուրիշ օր մը:

— Ի՞նչ նորութիւն, Գարադաշեան էֆէնտի:

== Մի՛ հարցնէք, տղա՛քս, գէշ է, գէշ՝ մեր վիճակը, Երզնկա ջարդ է տեղի ունեցեր... օ՛ֆ, ի՞նչ դժբախտ ազգ ենք:

Բիւրեղեա՛յ. հոգի, վսե՛մ ձերունի, քեզի՞ համար է որ կ'ըսէին թէ նիւթապաշտ մարդ մըն է լսկ, դասագիրք յօրինելով՝ ստակ ղիզող կ'ծի մը: Նիւթապա՛շտ, ո՞վ ըսաւ. մի՛թէ կարելի՞ է նիւթապաշտ փնթի մը ըլլա՞լ կերտելով Բննական Պատմութեան նման հրաշակերտ մը, արդիւնք երկար տարիներու անշահախնդիր տքնութեանց...:

Գեղեցկագիտութիւնը՝ առարկայ մըն էր, զոր առաջին անգամ Եղիա Տէմիրճիպաշեան մտցուց կեդրոնականի մէջ: Թէև, դժբախտաբար, երբեք չկրցանք վայելի Գրասէր Ատոմի մեկնոյց ձայնը, սակայն, ի փոխարէն, ըմբոշխնեցինք լիուրի թովմաս Թէրզեանի հիւթալից ու շինիչ գասախօսութիւնները: Սանդուխս Կոյսի հեղինակը, ինք ալ առաջնակարգ բանաստեղծ, տիրաբար կ'աւանդէր Գեղեցկը՝ իր ամէն ձևերով: Դեռ անքիս առջև է իր հոգեզմայլ քերթողի կերպարանքը՝ Հոմերոսը կարդալու կամ Շէքսպիրը մեկնելու պահուն: Կարելի՞ էր չազդուիլ ի տես իր հիացիկ գոհունակութեան և ի լուր իր հմտալից բացատրութեանց: Արդարև, գերազանցօրէն բարոյացուելի ու կրթիչ առարկայ մըն էր գեղեցկագիտութիւնը, զոր Եղեայէն կամ Թէրզեանէն զատ ո՛չ ոք պիտի կրնար աւանդել ա՛յնքան ձեռնհասօրէն:

Երախտագիտութեան շա՛տ խոշոր տուրք մըն ալ կը պարտինք պ. Արշակ Չօպանեանի: Խօսելու արտակարգ կարողութեամբ օժտուած, հակառակ իր պղտիկ տարիքին՝ զրական մեծ հմտութեամբ պուլցուն, Ծաղիկի խմբագրապետը երիտասարդական բովանդակ աւելնովն ու խղճմտանքովը կ'ուսուցանէր ընդհանուր զրականութիւն: Ժամերով կը խօսէր, իր ձևերն մէջ էր: Յափշտակուած մտիկ կ'ընէինք: Ֆրանսերէնին վրայ արագ ակնարկ մը նետելով՝ ի՞նչ սահուն կերպով կը թարգմանէր յոյն, հռոմայեցի, արաբ, պարսիկ և այլ ազգի հանճարներու գործերը: Պ. Յարութիւն Մրմրեան, անգամ մը, գասախօսութեան ներկայ դտնուելով, սքանչացմամբ ունկնդրեց և մեզ դառնալով՝ ըսաւ.

— Երանի՛ ձեզի, որ այսպիսի գասատու մը ունիք:

Իսկապէս, պ. Չօպանեան մեծ եղբոր մը պէս հոգ կը տանէր մեր գրական զարգացման, մատնանիչ կ'ընէր մեր սխալները, շիտակ ճամբան ցոյց կու տար, իր անձնական գրքերը տրամադրելի ըրած էր մեզ համար: Մեծ գրագէտներու շարքերը կարդալ, ուսումնասիրել, բաղդատել կու տար մեզ: Այսպէսով, մեծապէս կը զիւրացնէր զրեւոյն աւրուեստին գաղտնիքը և մանաւանդ կը զարգացնէր մեր մէջ քննադատական ոգին:

Երբ, 1895ին, պ. Չօպանեան Կ. Պոլսէն կծիկը դրաւ, իր դասերը յանձնուեցան պ. Փիէր Քիյեարի: Համակրելի խարտեաչ մը, գեղեցիկ ծաւի աչքերով, վառվռուն ֆրանսացի մը: Ի՛նչ պատատուն դլուխ, անընդհատ և անվհատ կը խօսէր, ժամերով, ընդհ. գրականութեան, մանկավարժութեան, քաղաքական տնտեսութեան վրայ: Սակայն միօրինակ ձայն մը ունէր, որ մեզ կը յոգնեցնէր: Դասամիջոցներուն մեզ հարցումներ կ'ուղղէր մեր թառապող հայրենքի կացութեան մասին, կը տեղեկանար Դրօշակի և Հնչակի պարունակութեան: Ապագայ Pro Armenia-ի խմբագրապետը արդէն կ'երևար յանձին պ. Քիյեարի:

Կ'արժէ յիշել նաև պ. Յովհաննէս Շահնազարը: Հայրենիքի անօրէնը մեզ կ'աւանդէր իրաւագիտութիւնն Հազիւ, սակայն, տարի մը դաս առած ենք իրմէ, ան ալ՝ յաճախադէպ ընմիջումներով, ըստ որում բաւական ժամանակ բանտարկուած մնաց անձնական խնդիրներու պատճառաւ: Կը ծանօթացնէր մեզ տեղական և միջազգային օրէնքները, շահեկան և ընդարձակ բացատրութիւններով: Բարկացոտ, գիւրագրգիւ, խիստ մարդ մըն էր, բայց էապէս բարի և օգտակար: Կը յիշեմ թէ օր մը դասը ընդհատելով՝ երկայօրէն ճառեց ընկերվարութեան և անիշխանութեան տարբերութեան վրայ՝ համոզուած և ներշնչուած բեմբասացի մը նման:

Հինգ տարուան ժամանակամիջոցին մէջ՝ ունեցած ենք կարգ մը ձանձրացուցիչ ուսուցիչներ ալ, մանաւանդ Օսմաներէնի ուսուցիչները, որոնք երբեք հրապուրիչ չդարձուցին այդ պաշտօնական լեզուն: Կարծես թէ բոլորն ճիգ մը կը թափէին չոր ու ցամաք ընծայելու համար լեզուն աղղի մը՝ որ վերջապէս ունեցած է իր զրական մշակները: Արդուհայ և վաճառականական նամակ անա՛ամրով թուրք գրականութիւնը որ կը ջամբուէր մեզ: Այս պատճառաւ է որ դասընկերներէս և ո՛չ մէկը փափաք զգաց օսմաներէն սորվելու: Մանաւանդ մեծ կոտորածներու չրջանին (1895—96)՝ ալ սիրտ չունէինք թուրքերէն կարդալու, վասնզի, միամիտ պատանիներս, կը կարծէինք թէ հայկական ջարդերու մէջ թուրք լեզուն ալ պատասխանատու-

Թեան մեծ բաժին մը ունի՝ Թուրք ժողովուրդին և Թուրք կառավարութեան հետ... Քանի մը ամիս միայն կրցանք պ. Ստեփան Կուր տիկեանէ դաս առնել: Այդ ազնիւ մարդը՝ մեր հողերանական վիճակն ըմբռնելով՝ յաջողեցաւ մեր ըմբոստ միտքերը գրաւել, պարսկական գրականութենէն գեղեցիկ հատուածներ կարդացնելով ու հայերէնի հետ խնամութիւն ունեցող բազմաթիւ պարսկերէն բառեր ուսուցանելով: Իր դասերը՝ կերպով մը շարունակութիւնը կը դառնային հայերէնի: Աւելորդ է ըսել թէ, քանի մը ամսուան սուղ միջոցի մէջ, բաւական օգտուեցանք պ. Կուրտիկեանէ:

Այսպէս ահա զպրոցականի յիշատակներս քրքրելով: աչքիս առջև կանգուն կը տեսնեմ մեր սիրելի կեդրոնականը: Նուիրական տաճար մըն էր գերազանցօրէն, ուր կը մտնէինք խորին պատկառանքով: Հիմա կը զգամ թէ Ազգին ի՛նչ մեծ բարիք ըրած են ա՛յն հայորդիները որոնք հիմնադիրները եղան անոր: 1891—1896 շրջանը՝ փայլուն թուականներէն մին է այդ հաստատութեան, ա՛յն ատեն կեդրոնական անդաստանը հասցուց ատոք հասկեր և զանոնք պարզեւեց հայ ժողովուրդին:

Օրհնեա՛լ ըլլայ յիշատակը Կեդրոնականի սատարներուն: Ապրի՛ն անոր մշակները:

ՎԱՐԴԱԶԱՐ ՏԱՔԷՍԵԱՆ

15 Դեկտ. 1911, Ռուսնուք

Ստրեւ կը հրատարակեմք իբրև նմոյշ Վարդապար Տափեսեանի անսիպ փերուածներէն երկուք:

Դ Ո Ւ Ն

Գարնայնի սիւսէն փաղելով համբոյր
Մինչ կ'ըմբռնես ծաղիկ խնկաբոյր,
Դուն դեմքս ելար, աղջիկ հոգեբով.
Ու բունդ հանեցիր սիքսս անխառով:

Կայտառ, գեղանուէ գերդ դրախտահաւ,
 Գու կ'ոսոսուէիր մեջտեղը մարդին,
 Օ՛, բու նայուածքդ սեզ, սիրաբերբել
 Մագնիսեց հոգիս սարսուռով անգին:
 Ինչպէս ողջակեզ որ կը նենների
 Ի սէր գերագոյն ու մեծ եակին,
 Ես ալ պաշտելիս, անբաժան գերի,
 Զոնր կ'ըլլամ ես սիրոյդ կրակին...

Վառնա. 3 Ապրիլ 1908

Չ՝ Ա Ր Ժ Ե Ր

Ապրիլ չեմ ուզեր, այս կեանքը սրժոյն,
 Յաւէս զրկուած շինիչ յուշերէ՛
 Գիշեր ու ցորեկ, առտու իրիկուն,
 Կը հալածուիմ ես՝ իբր անբախտ երէ:

Երազեցի աշխարհը՝ յասրոն,
 Եւ մեր ժամերը՝ հեծ. անգորր ու ձիգ,
 Արարածներն ալ՝ հրեշտակի հանգոյն
 Որ գվերջ ժրպսէին պիտի անկեղծիկ:

Կեանքի դպրոցին առակերս ըմբոս՝
 Սորվեցայ շատ լաւ քէ կեանքն է սին,
 Մեր դաժան բունէն չարքնցանք ընդոս.
 Լա՛ւ է քնանալ մեզ մուսլի փոսին:

Միշտ պիտի տրե խնդիրն անողոք,
 Չը պիտի ըլլան մարդիկ հաւասար,
 Մի՛շտ պիտի լսուին կոծ, հառաչ, բողոք.
 Չը պիտի խնդան խեղներն անհամար,

Նախանձոս աչնով՝ առ միշտ օրեկ հաց.
 Հէքը պիտի կրծէ, պիտի սրճնջայ
 Մինչ հաստփոր հարուստ սականք ընչաբաղջ
 Պիտի խնկարկէ անյաղք Մամոնան...

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Մ Ք
 Ե Ի
 Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Կ Ա Մ Ք

Ի՞Ն Չ Է Մ Ա Ր Դ Ը

Մարդս յարափոփոխ և բազմապիսի էակ մըն է: Անոր մէջ երկուան կու գան, երբեմն զատ զատ, երբեմն ալ իրարու միացած, բնազդ, զգացում, յուզում, կիրք, փափագ, մտածում, յիշատակ, նախատեսութիւն, մեկնարանութիւն, սովորութիւն, մոլութիւն եւ այլն եւ այլն:

Ան ովկիրանոս մըն է կարծես, որ այս բոլորը իր մէջ կը բովանդակէ և ըստ պարագային իր երեսը կը հանէ ու կը ցուցադրէ, անհունութիւն մըն է, որ իր մէջ կը պարփակէ անհունութիւններու շարք մը:

Մարդուն ներսը թաղուած կը մնան այնքան բազմատեսակ ու այլազան յատկութիւններ, որոնց գոյութենէն նոյն իսկ ինքը, մարդը, լուր չունի, և ինչպէս խռոված ովկիրանոսը յանկարծ իր երեսը կը հանէ իր խորքը անյայտ մնացած ու թագնուած մարմին մը, նոյնպէս մարդուն ներսը անյայտ մնացած այս յատկութիւնները յանկարծ երևան կու գան, դուրս կը ցայտեն՝ երբ առիթը կը ներկայանայ:

Ե Ր Ե Ք Կ Ա Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մարդ էակը կը յատկանշուի երեք կարգի կարողութիւններով. զործունեութիւն, կիրք (զգացում. յուզում) և իմացականութիւն (խորհուրդ, մտածում): Բոլոր յատկութիւնները կարելի է դասուորել այս երեք կարողութիւններուն մէջ: Կալկը առաւելապէս կապուած է գործունէութեան:

Մարդը կը սկսի գործել իր կեանքի առաջին վայրկեանէն իսկ: Դործունէութիւնը տեղի կ'ունենայ երեք կերպերով. նախ՝ բնազդով, այսինքն բնականօրէն, անգիտակից կերպով. կարծես ակամայ: Բնազդով գործունէութիւնը մարդուն կենդանական վիճակն է, որուն մէջ պատճառի քննութիւն և արդիւնքի մասին մտածում չկայ: Բնազդային գործունէութիւնը կոչուած է պաշտպանելու անհատի գոյու-

թիւնը և պահպանելու տեսակի տեւականութիւնը, այսինքն սերունդի շարունակութիւնը: Բնազդը, սերօթըն կապակցուած կենդանական զոր-
ծարանաւորումին, ճակատագրական ու կոյր, ան ինքնին կատարեալ
է, հետեւարար ենթակայ չէ յառաջդիմութեան:

Բնազդը մարդուն ուղեւորուն կամ չուղեւորուն չ'ենթարկուիր, որով
կամքին հետ ոչ մէկ կապ ունի:

Գործունէութիւնը տեղի կ'ունենայ նաև կալնով, այսինքն զի-
տակցարար: Կամքը անդրադարձ է, անով ուէ գործունէութիւն կա-
տարելու համար նախապէս նկատի կ'առնուին պատճառներն ու հե-
տեւանքները: Կամքն է որ անհասականութիւնը կը ընտրուէ, մարդոց
տարբերութիւնները ցոյց կու տայ, կենդանիներէն կը զատէ, կը բարձրա-
ցընէ անասնութեանէ և կ'առաջնորդէ զայն դէպի մարդկութիւն:

Գործունէութեան երրորդ կերպը տեղի կ'ունենայ սովորութիւնով՝
Սովորութիւնը ստացական է և երկսայրի սուրի կը նմանի, անոր մի-
ջոցաւ մարդ էակը կրնայ դառնալ դէպի կենդանականութիւն, այսինքն
անգիտակից գործունէութիւն, կամ կրնայ աւելի ևս բարձրանալ և ձգտ-
արի դէպի կատարելութիւն:

ԵՐԵՔ ԿՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՄՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մարդուն գործունէութեան ընթացքին անպայման այս երեք
կարողութիւնները միասին չէ որ դեր կը կատարեն, ընդհակառակը շատ
անգամ կեանքի մէջ անոնք իրարմէ անկախ ու անկապակից երեան
կու գան Օրինակի համար կարելի է որ մարդ մը զգայ ու չգործէ՝
մեր կեանքին մէջ շատ երեւոյթներու առաջ կը գտնուինք, շատ
բաներ կը զգանք՝ որոնք մեզի կը թելադրեն գործել, բայց մենք
չենք անսար անոր թելադրանքին ու չենք գործեր: Նոյնն է իմացա-
կանութեան մէջ, կը խորհինք շատ բաներ, բայց անոնցմէ շատ քիչերը
միայն կը գործադրենք, իսկ յաճախակի կ'ունենանք այն տեսակ գոր-
ծունէութիւններ՝ որոնք սակայն արդիւնքը չեն մեր զգացումներուն
կամ մեր մտածման:

Ի հարկէ անարդարանալի են այն մարդիկը, որոնք կը զգան, կամ
կը խորհին ու չեն գործեր, նոյնպէս անարդարանալի են անոնք՝ որ կը
գործեն առանց թելադրուելու իրենց զգացումներէն կամ մտածումէն:
Կատարեալ է այն մարդը որուն մէջ գործունէութիւն, զգայնութիւն եւ
իմացականութիւն համադրուած են եւ իրենց դերը կը կատարեն կողմ
կողմի ու անբաժան կերպով:

ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ ԵՒ ԿՄՄՔԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԶԳԱՑՈՒՄԻՆՎՐԱՅ

Սկսած ընական ու ընագիտական շարժումէն մինչև մտածումը՝

արդիւնք ամենաազնիւ ու վսեմ գործունէութիւնները, գործելը հաճոյք մըն է: Առածի կարգ անցած է արդէն «հաճոյքը գործունէութեան ծաղիկն է» խօսքը: Ամէն անգամ մարդ չի կրնար գործել իր ուզածին պէս, չի կրնար գոհացում տալ իր հաճոյքին և փոխանակ իր ուզածը ընելու՝ ստիպման տակ կը կատարէ այն՝ ինչ որ իրեն հաճոյ չէ. ահա այս պայմաններուն տակ զգացումները հեպզհետէ կը ձևափոխուին: Շատ անգամ ստիպուած կը կատարենք մեր չտիրածը, բայց յետոյ կը սիրենք մեր ըրածը, ուրիմն գործունէութիւնը ըլլալով գիտակից առաւել ևս և հզօրապէս կ'ազդէ զգացումներուն վրայ: Կամքով կրնանք մեղմել մեր բուռն զգացումները և նոյն իսկ կրնանք թաղել զանոնք, նոյնպէս կամքով կրնանք մեր մէջ զարգացնել և առաջին գծի վրայ իսկ բերել շարք մը զգացումներ՝ որոնք նախապէս շատ տկար կերպով ի յայտ կու գային մեր մէջ: Եթէ միշտ մեր զգացումներու թելադրանքով միայն շարժինք, մեր կեանքը պիտի ըլլայ փորձութիւններու և փորձանքներու շարք մը, մարդուս մէջ կամքի ազդեցութիւնը զգացումներու վրայ անհրաժեշտութիւն մըն է, քանի որ առանց այնոր չկայ ո՛չ անհատական ազատութիւն, ո՛չ բարոյական և ո՛չ պատասխանատուութիւն:

ԶԳՄՅՈՒՄԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՄՔԻ ՎՐԱՅ

Զգայնութիւնը գործունէութեան զսպանակն է: Յուզումները մարդկային կեանքի մէջ ամենամեծ դերը կը կատարեն, կարելի է ըսել որ կիրքն է որ աշխարհը կը վարէ, զգացումն է որ մեր քայլերը կ'առաջնորդէ: Յաճախ կամքի զօրութիւնը կը խորտակուի զգացումի փափկութեան մէջ: Բազմաթիւ օրինակներ կան կենդանական աշխարհին մէջ, վայրի գաղանկին կատարութիւնն անգամ կը մեղմանայ յուզելով զայն, նուազի ազդեցութեան տակ բարկութիւնը կ'անյայտանայ և կատարի օձն իսկ կը թմրի: Անողոք ու անսասան զատաւորը, որ իր կամքի ամբողջ ուժով կը ճգնի անաչառ ըլլալ, շատ անգամ իր կամքի խորտակումը կը տեսնէ քանի մը կաթիլ արցունքի և քանի մը յուզիչ խօսքերու ազդեցութեան տակ:

ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՄՔԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ԻՄԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մարդիկ յաճախ կը կատարեն անգիտակից, անխորհուրդ գործեր, որոնց շարժառիթներուն վրայ իսկ խորհած չեն, բայց յետոյ իրենց մտածումը կը համայնաշնչեն իրենց կատարած գործին: Մարդս կ'աշխատի տրամաբանութիւնով արդարացնել իր ըրածը: Կը պատահի որ մեր մտածումով անյարմար նկատած մէկ գործը երբ առանց մտա-

ծուժի անգամ մը գործենք, կ'աշխատինք զայն արդարացնող պատճառներ գտնել ու այնուհետև այլևս մեր մտածումին առաջ նոյն այդ գործը անյարմար նկատուելի կը դադրի: Ոչ ոք մտածումով գողութիւնը թոյլատրելի կը գտնէ, բայց գողութենէն յետոյ գողը արդէն իսկ իր արարքը արդարացնող պատճառներ կը գտնէ և այդ իսկ է պատճառը որ առաջին գողութեան կը յաջորդեն ուրիշներ՝ աւելի համարձակ: Կիրքի ազդեցութեան տակ ոճիր գործող մը իսկ կը ջանայ իր անպարտութիւնը վճռել: Ուրեմն գործունէութիւնը միշտ ալ կրնայ ազդել իմացականութեան վրայ, իսկ կամքը՝ առաւելապէս. նեւտոնի նրբ հարցուցին թէ «ի՞նչպէս գտած է կշռականութեան օրէնքը», պատասխանեց. «միշտ անոր վրայ խորհելով», այսինքն ըսել ուզեց. «կամք ընելով որ գտնեմ»: Կամքը կարող է աւելցնել իմացականութեան ուժը, ան է որ մարդը գիտուն կ'ընէ: Որպէսզի մէկը իսկապէս իր կոչման արժանի գիտուն ըլլայ, բաւական չէ միայն որ ան բարձր իմացականութիւն ունենայ, այդ իմացականութեան հետ հարկաւոր է նաև զօրաւոր կամք և այս պարագային է որ հնարաւոր կը դառնայ մարդուն միտքը՝ թափանցելու բնութեան գաղտնիքներուն ու երևան բերելու գիւտեր:

Փոխադարձաբար իմացականութիւնն ալ կ'ազդէ կամքին վրայ: Կամքը ընդհանրապէս մտածումէն կ'առաջնորդուի և մարդ կ'ուզէ ընել այն՝ ինչ որ կը մտածէ: Որքան մարդս լաւ մտածէ, որքան լաւ պրպտէ պատճառներն ու հնարաւորութիւնները, ասոնց վրայ հիմնուած կամքը այնքան զօրաւոր ու անընկճելի կ'ըլլայ:

Ի՞նչ Կ Ա Մ Ք Ը

Նորածին մանուկի սկզբնական բոլոր գործունէութիւնները բնազդային են, բայց քանի ան մեծնայ, այնքան կը հեռանայ բնազդային գործունէութենէն և կը մտնէ ուզելով գործունէութեան սահմանին մէջ, այսինքն հետզհետէ կը բաժնուի կենդանական կեանքէն, ու՛ր գրեթէ բացարձակապէս բնազդը կը տիրապետէ, և կը մտնէ բուն մարդկային կեանքին մէջ, այսինքն կը գործէ ըստ կամաց:

Բայց ի՞նչ է ուզելը:

Ուզել կը նշանակէ պատճառներու գիտակցութիւնով գործել՝ այսինքն կատարել գործունէութիւն մը որ ինքնակամ է, գիտակից ու ինքնիրեն տէր: Ո՛րքան բնազդը վեր է դուտ մեքենականութենէն և պարզ անդրադարձ գործունէութենէն, նոյնքան և աւելի ևս ուզելով բարձր է բնազդէն:

Մեր յիշողութեան մէջ կը զրոյժուին երեւոյթներն ու անցքերը և կը կազմեն մեր փորձառութիւնը, կը յայտնուին գաղտնիքներն

ու մտածումը, զգացումներն ու յուզումները և ահա կը ներկայանան գործունէութեան առիթներ, այս պայմաններու տակ կը գործենք ինքնակամ, հա այս ինքնակամ գործելուն է որ ուզել կ'ըսենք Գործունէութեան լաւագոյնը և նախընտրելին ուղելով կատարուածն է:

Ակներև է գոյութիւնը այն կային, որ կայ մէկ կողմէ ուղելուն և իմացականութեան կամ մտածումին մէջ և միւս կողմէ ուղելուն և զգայնութեան կամ յուզումներուն մէջ: Ուղելը կապուած է մտածումին, որովհետեւ էապէս գիտակից ու լուսարանուած, այսինքն իմացական գործունէութիւն մըն է: Ուղելը կապուած է յուզումներուն և զգացումներուն, որովհետեւ առանց նպատակի չի գործուիր, միշտ կը գործենք՝ հասնելու համար մեր փափագած վախճանին, իսկ ուղելը՝ ճշդելն է բացարձակապէս այս վախճանը և ձեռք առնելն է յաջողութեան համար անհրաժեշտ դատուած միջոցները:

Ի՞նչ է փափագը:

Փափագելը բոլորովին կը տարբերի ուղելէն: Մեր առօրեայ կեանքին մէջ շատ անգամ իրարու հետ կը չփոթենք այս երկու արտայայտութիւնները և փոխադարձաբար կը գործածենք զանոնք:

Փափագը զգացողական գործ մըն է և կը յատկանշուի յուզումով, փափագին մէջ կայ նախ հաճոյք և յետոյ դառնութիւն, որովհետեւ փափագը էապէս զրկանք մըն է և ամէն զրկանք տառապանք է: Հաճոյքի և դառնութեան խառնուրդով կը յատկանշուի փափագը, որ քմահաճ և անկայուն է: Ընդհակառակը ուղելը, այսինքն կամքը պաղարիւն է և կարող է ո՛չ միայն փրկապետելու փափագին, այլ նաև լռեցնելու կիրքը:

Փափագը մեզ կը խռովէ և կը տագնապեցնէ և այնքան աւելի շատ՝ որչափ որ ան բուռն է, զօրաւոր փափագ մը հոգին խռովեալ վիճակի մը մէջ կը պահէ: Ընդհակառակը կամքը ո՛րքան որ զօրաւոր ըլլայ, այնքան աւելի հանդարտ կ'ըլլայ:

Փափագը ճակատագրական է, իսկ կամքը ազատ:

Փափագը յաճախ անորոշ է և երբեմն նոյնիսկ անգիտակից, շատ անգամ որոշակի չենք գիտեր ալ թէ ինչ բան կը փափագինք: Ժողովուրդը սովորեր է «ի՛նչ ուղելը չի գիտեր» խօսքը կրկնել, որ սխալ մըն է, պէտք է ըսել «ի՛նչ փափագիլը չի գիտեր», ընդհակառակը կամքը որոշ ու սահմանուած է:

Ընդհանրապէս փափագը կախեալ է դրսի բաներէն և շատ անգամ մեզմէ կախում չունի: Յաճախ կը փափագինք այն տեսակի բաներու, որոնց հասնիլը անկարելի է, օրինակի համար կը փափագինք ձուկերու նման լուզակներ և թռչուններու նման թռեք սւննեալ ու անոնց նման

լողալ ու թռիլ: Մինչդեռ կամքը հիմնու ծ է մեր մտածումին, մեր ուժերուն և մեր յատուկ եռանդին վրայ, որով էսպէս մեզմէ կախեալ է: Կամքը գործ մը կատարել կամ չկատարելն է, խօսիլը կամ լռելն է:

Փափազը ունի հաղար աստիճանաւորումներ, կարելի է փափազիլ ուժգնորէն կամ թեթեւ կերպով, մինչդեռ կամքը պարզ է ու աստիճան չունի, բան մը ընելու համար շատ կամքի կամ քիչ կամքի հարց չի ծագիր, կամ կ'ուղենք ընել ու կ'ընենք, կամ չենք ուղեր ընել ու չենք ընել:

ԿՍՄՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Կամքը չորս ժամանակաշրջան ունի, յղացում, խորհրդածութիւն: լուծում և գործադրում: Մեր նախկին փորձառութիւնները, մեր բնական կամ ստացական հակումները, մեր զաղափարներու, զուգորդութիւնները երևան կը բերեն բան մը ընելու պէտքը, ասիկա յղացումն է: Յղացումէն յետոյ կը խորհինք պատճառներու և հնարաւորութիւններու վրայ, մեր մտածումը կը ճիւղաւորուի վախճանին հասնելու հնարաւորութեան և կատարուելէ յետոյ յառաջ գալիք հետեանքներու մասին, նկատի կ'առնենք միջոցներու շիւրութիւնը և անոնց միջոցաւ հետեանքին առաւել կամ նուազ չափով առաւելութիւններ ունենալու պարագաները, կ'ուենենանք գործելու վարանումներ եւ վերստին կը սկսինք նոր խորհրդածութիւններու և ահա հոս է որ կը յայտնուի կամքը և կշիռին մէկ նժարը կը հակեցնէ: Այսպէս ամէն բան կշռելէ յետոյ մէկ կողմը կը բռնենք, կը հանգինք լուծումին: Կամքը կը յաղթանակէ և մերկայպարանոց կը յայտնուի: Լուծումէն յետոյ սակայն կայ տակաւին գործադրումը, կամքը դեռ զաղար առած չէ, պէտք է գործի անցնիլ և կամքը երբեք պէտք չէ տկարանայ գործադրումի ամէն մէկ բոպէին, մեր կատարելիք գործը որքան որ յաջորդական աստիճան ունի, այդ իւրաքանչիւր աստիճաններուն պէտք ունինք կամքի արտայայտութեան, մէկ աստիճանին վրայ կամքի բացակայութիւնը կը քանդէ ամբողջ գործը:

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Ո Թ Ի Ի Ն

Անհատը իր կամքով գործող էակ մըն է: Մէկը ո՛րքան յաճախ իսկապէս կ'ուղէ, այնքան աւելի կամք կ'ուեննայ և այնքան աւելի իսկական Մարդ եղած կ'ըլլայ: Շատ անգամ մարդիկ կը գործեն առանց կամքի, բնազդով կամ սովորութիւնով միայն, ասիկա անոնց ինկած վիճակն է: Իսկական մարդը այն է, որ կը գործէ շատ աւելի յաճախակի կամքով: Անհատականութիւնը կը բնորոշուի կամքով: Ամէն մարդ պէտք է ձգտի ունենալ իր անհատականութիւնը, այսինքն ամէն մարդ պէտք է գործէ գիտակցաբար և կամքով:

Աննպատակ կեանքը տափակ ու տաղտկալի է, ամէն մարդ իր կեանքին մէջ նպատակ մը պէտք է հետապնդէ, իսկ նպատակին հասնելու ամենագլխաւոր աղղակը զօրաւոր կամքն է:

Կամքի ուժը այնքան մեծ դեր կը խաղայ յաջողութեան մէջ, որ կարելի է ըսել թէ առանց անոր լըիւ յաջողութիւն չկայ:

Բոլոր մարդկային կարկառուն դէմքերը մեծ եղած են, որովհետեւ ունեցած են զօրաւոր կամք:

Էօմէն Սիւ իր «Թափառական հրեայ» վէպին մէջ հերոսներէն մէկուն Ռօտէնի բերանը կը դնէ «Կ'ըսեմ և պիտի ըլլայ... վասնզի ապրիլ ուղեցի ու ահա կ'ապրիմ» խօսքը: Այո, ապրիլը անգամ յաճախ կ'ապուած է կամքին, կամքի ուժով մարդ աւելի շատ կը տոկայ նեղութիւններու, կը դիմանայ ցաւի, անօթութեան և ծարաւի: Կամազուրկներն են որ շուտով կը յուսահատին. կ'անճրկին ու մահը կ'ողջունէն զիրենք: Պատմութեան մէջ շատ անգամ տեսնուած է կամքի ուժի կատարած խոշոր դերերը: Նափուէնն իր կամքով յաղթած էր 3—4 մահացու հիւանդութիւններու ու կը մնար կենդանի:

Մարդիկ յաճախ իրենց կեանքի տեղութեան, զանազան առիթներով կը տիրանան շարք մը ստացական յատկութիւններու, կ'ենթարկուին սովորութիւններու ու մոլութիւններու: Մարդոց մեծամասնութիւնը կը ծիւ է ու կը խմէ, հակառակ ծանօթ ըլլալուն որ ծրխախտան ու ալքօլը թոյներ են և կը վնասեն առողջութեան, բայց մարդը անգամ մը սովորեր է և անգիտակցաբար կը շարունակէ, չի կրնար հրաժարիլ անոնցմէ, բայց կամք ունեցողը կրնայ թօթափել վատ սովորութիւններն ու ունակութիւնները:

Ամէն մարդ գիտէ թէ երկայնակեցութեան բանալին ժուժկալութիւնն է և զեղխութիւնը կեանքը կը կործանէ, բայց ժուժկալ կրնայ մնալ այն՝ որ զօրաւոր կամք ունի և անձնատուր չ'ըլլար իր զգացումներուն: Առհասարակ մարդիկ ծանօթ են առողջապահական և կենցաղագիտական շարք մը գիտելիքի և կը դաւանին թէ անոնք պահելն ու կիրարկելը իրենց համար օգտակար և անհրաժեշտ է, բայց այս բոլորը կրնան կատարել միայն անոնք՝ որ զօրաւոր կամքի տէր են:

Մարդկային մարմնի մասերը ենթակայ են երկու տեսակ շարժումներու, գործեր ու շարժումներ կան որոնք մեր մարմնոյն մէջ կը կատարուին ինքնաբերաբար, առանց մեր ուղեղուն կամ մտածման, ասոնք անգիտակից են, ինչպէս մեր մարսողութիւնը, շնչառութիւնը, արեան շրջանը և այլն, իսկ կան գործեր ու շարժումներ ալ որոնք կը կատարենք մեր կամքով: Սակայն կամքի ուժով կարելի է ազդել նոյնիսկ անգիտակից շարժումներուն վրայ: Չաքիրներու կա-

տարած գործերուն մեծամասնութեան հիմքը կամքի ուժն է: Կամքի ուժով է որ ան կ'արգիլէ իր մարմնի մէկ մասին մէջ արեան շրջանը կը դանդաղեցնէ և նուազադոյն աստիճանին կը հասցնէ իր շնչառութիւնը և արեան շրջանը և տեսնուած են այնպիսիներ, որոնք երկար ժամանակ առանց ուտելու, խմելու և շարժելու, նոյն դիրքին մէջ կենդանի մնացած են:

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Կ Ա Մ Ք

Երբ կամքի ուժը անհատին մէջ այսչափ մեծ դեր կը կատարէ, կարող է նոյնպէս աւելի մեծ դեր կատարել հասարակական կեանքի մէջ: Հասարակութիւն մը, ժողովուրդ մը, ազգ մը ևս պէտք է ունենայ իր կամքը՝ որպէս պայման յաջողութեան:

Բայց ի՞նչ է հասարակական կամքը և ի՞նչպէս կը կազմուի:

Անհատական կամքը ունէր 4 ժամանակաշրջան, յղացում, խորհրդածութիւն, լուծում և գործադրում: Պայազան նոյնն է հասարակական կամքին մէջ:

Հասարակութիւնը նախ իր աչքին առջև կը պատկերացնէ իր անցեալը, փորձառութիւնը, իր պատմութիւնը և իր մէջ յառաջ կր բերէ ձգտում մը, իտէալ մը, ասիկա յղացումն է. յետոյ նկատի կ'ունենայ ազգին բնական կամ ստացական հակումները, թիւը, ուժը՝ շրջապատի պայմանները, իր մէջ կը կատարէ գաղափարի զուգորդութիւն, կը խորհի պատճառներու և հնարաւորութիւններու վրայ, կը մտածէ վախճանին հասնելէ յետոյ յառաջ զայլիք հետեանքներու մասին, կ'որոճայ մանրամասնութեանց վրայ, կը խորհրդածէ, կը կշռէ: Կը տրամարանէ, ասոնց ընթացքին կ'ունենայ վարանումներու տատանումներ. ասիկա խորհրդածութեան ժամանակաշրջանն է: Ապա կու տայ որոշում, կշիռին մէկ կողմը կը հակեցնէ, այսինքն իր կամքը կը յայտնարերէ, ասիկա լուծումի ժամանակաշրջանն է: Սակայն բուն հարցը կու գայ աւելի յետոյ. պէտք է գործադրել տրուած որոշումը, իսկ գործադրութեան ատեն կամքը կրնայ միշտ զօրաւոր մը նալ կամ տկարանալ, անանկ որ կարևորութեանէ զուլի է հասարակական կամքի յայտնուելը, երբ չ'իրադրուելի գործադրումը, իսկ գործադրումը կ'անցնի շատ մը փուլերէ, յաջողութեան համար պէտք է կամքի ուժը բարձր բռնել ամէն մէկ փուլին մէջ, պահնափոքթթութեամբ մը կարող է քանդել ամբողջ գործը և յուսալքել ժողովուրդը:

Այնպիսի վրայ յաջողած են այն ազգերը, որ ունեցած են հասարակական ուժեղ կամք և ո՛չ մէկ ատեն տկարացած են իրենց

կամ քին մէջ, նոյնիսկ երբ դարեր տեւած է այդ կամ քի գործադրումը։ Անհատական կեանքի մէջ կամ քի կազմութեան խորհրդածութիւնը կը կատարուի անհատին մտքին մէջ, հասարակական կեանքի մէջ անհատներն են որ գաղափարը մէջտեղ կը դնեն, կը յղանան և հասարակութեան անդամները կ'իւրացնեն զայն։ Նոյն գաղափարը իւրացնող հասարակութեան անդամները կը կազմեն իրենց հաւաքական կամ քը և կը համախմբուին այդ կամ քը յատկանշող զրոյշին տակ։ Այս կերպով է որ կը կազմուին կուսակցութիւններ կամ խմբակցութիւններ։

Հասարակական կամ քի կազմութեան առթիւ խորհրդածութիւնը կը կատարուի խօսքով կամ գիրով, գաղափարներու ղուգորդութիւնը կը կատարուի վիճարանութիւններով ու հակահասութիւններով, լուծումը կը կատարուի կուսակցութիւններու կազմութիւնով կամ կուսակցական շարքերու խտացումով, կամ անհատի մը կամ անհատներու նկիւրկուելով, իսկ զործադրութիւնը կը կիրարկուի կուսակցութիւններու կամ անհատներու ղեկավարութիւնով։

Հասարակական կամ քը այն ատեն զօրաւոր կ'ըլլայ, երբ գաղափարը իւրացուցած են հասարակութեան լայն խաւերը, խորհրդածութեան փուլերը ակնյայտի են և հասարակութիւնը զրեթէ միակամ հասած է մէկ լուծումի։

Հասարակական կամ քը կազմելու համար ուժեղ կամ քի տէր անհատներու դերը անմխտելի է, զօրաւոր կամ ք ունեցող անհատն է որ իր կամ քը կրնայ պարտադրել։ Հասարակութիւնը իր կամ քը կազմելու ատեն կը փնտռէ նախ անհատներ, կը քննէ անոնց կամ քը, կ'ընտրէ անոնցմէ ամէնէն աւելի իրեն յարմար եկածը և այդ կամ քին արտայայտիչ անհատը կը բարձրացնէ, իրեն առաջնորդ կ'ընտրէ, ու անոր գործադրել կու տայ իր կամ քը։ Պարագան նոյնն է կուսակցութիւններու համար։

ժողովուրդ մը այն ատեն զօրաւոր կամ ք կ'ունենայ, երբ իր մէջ անհատական կամ քի տիրաններ կան, երբ ունի ուժեղ կուսակցութիւններ կամ խմբակցութիւններ։

Մենք հայերս ունինք այս տիրանները և կուսակցութիւնները։ Այս կերպով կազմած ենք մեր հասարակական կամ քը, եթէ այո՛, ու իր կամ կանուխ անպայման պիտի յաջողինք, եթէ ո՛չ, պէտք է նախ միջոցներ խորհինք կազմելու մեր կամ քը՝ մէկ և անփոփոխ, բոլորակից նոյն իտէալին շուրջ, ուժեղացնենք մեր իտէալները ունեցող խմբակցութիւնները։

Անհատը պէտք է ունենայ իր անհատականութիւնը, իսկ ամէն հասարակութիւն, ամէն ազգ պէտք է ունենայ իր ազգային անհատականութիւնը, իր հաւաքական ուժեղ կամ քը։

Ահա յաջողութեան պայմանը։

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Գեղեցկագոյն բաներն, ախտո՛ւ, միտս ամենէն եմ վաղանցուկ,
Առաջին սերն եւ առաջին համբոյրն անկուտ զազնաձաձուկ,
Ծիածաններն որ երկինքին արցունքներուն մէջ կը փքքին.
Եւ նայուածքներն որ կը խաչուին քեւերուն վրայ խղճի խայրին:
Ի՞նչ բո՛ր որուն կեանքին համար որ կը խուսի քու մարմինեդ,
Շոտայութեամբ վասնեցիր զայն յափեսակուած փողի մը պէս,
Բաբէ՛, կամուռն անցնելէ վերջ վայելքներդ ա՛լ կ'ըլլան աննե՛ս,
Ձերբակալուա՛ճ ես դուն մանէն, արիւնլւայ գողի մը պէս:

Քեզ կը սիրեմ այնպէս որպէս քե րլլայիր մեռած արդէն,
Յիշատակի պէս կը սիրեմ մասունքի՛ պէս՝ անյագօրէ՛ն
Եւ երէ յանկարճ պատանի որ քու բիւրեղ ձայնդ լսեմ,
Կը լսեմ զայն անդրժիրտի արձագանգէն ալ խոր վսեմ:

Ո՛վ բանձրապոս քաղենք ինե՛ր, փոզ դիզելու կիրքէն սարուած,
Գո՛ւք մեծագոյն քուտաններն ե՛ք՝ քանզի անկուտ յափեսակի՛չ,
Ձեր քամակին վրայ բեռցած լերան մը չափ ոսկի զանգուած,
Վար կը փլիք, կզակն ի հող, երբ ամէն բան կը քուեր քի՛չ:

Մեքենան որ մէկու մըն է, մէկուն համար լոկ կը գործէ,
Որքան ալ որ շատ ու շատեր միտս կը տասին անոր վրայ,
Մեքենան որ ամենու է ամենու ալ հաց կը քրծէ,—
Այդ մեքենան, այդ մեքենան կ'ուզեմ որ լոկ ընդհանրանայ:

Ամէն վայրկեան մեռելներով կը սնանինք որուակի,—
Յիշատակով ու անցեալով, սովորութեամբ կամ կրկնութեամբ,
Շիրտաքար չի՛ տարբերիր մեր խնջոյթի սեղանէն բամբ, —
Մեկը մամուռ դուրս կը ցայտէ, միւսն ալ փրփուրը յափրանքի՛:

Վախնան չունի հրապոյրն որ այս կեանքինն է անագորոյն.
Ծերունիներ կ'աւելցունեն քաղիքն իրենց ընկերներուն,
Ո՛չ մէկն ինքզինք ձեր չի՛ կարծեր. բայց ժամանակն աւելի բուռն՝
Կու գայ սեղմել ձնօք Սուսին, մարել նրազն եւ ցոյց տալ բաց դուռն...

Ըլլալիքիդ վրայ մի՛ խորհիր, մեծ ըլլալիքդ է մանն արդէն,
Ընելիքիդ վրայ մի՛ հոգար, մեծ ընելիքդ է լուսիքն,
Երէ կ'ուզես լոնցնելով հոգերն որ քեզ կը խոցոտեն,
Նայէ որ ձեռքդ ունենաս միտս ազնիւ գինւոյ շի՛տ մը լեցուն:
Ե. ԳՈՒԱՆՁԵԱՆ

ՄԱՐՄԵՍԿՐԹԱԿԱՆ**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ****Կ Ե Ա Ն Ք Ի Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ն Ե Ր Ը**

Մարդկային կեանքը ունի երեք զլխաւոր աստիճանաւորում, մանկուսիւն, չափահասուսիւն և ծերութիւն:

Մանկութեան ընթացքին անհրաժեշտ է զարգացում և անում, չափահասութեան ընթացքին՝ Ֆիզիկական միջոցներուն կատարեալ տարացում, իսկ ծերութեան ընթացքին կու գայ անխուսափելի անկում:

Երբ այս երեք աստիճանաւորումներու ընթացքին ալ ֆիզիքական դաստիարակութեան հոգ տարուի պատշաճօրէն, մարդկային կեանքը երկար առեն կը մնայ կորովի վիճակի մէջ և կը շարունակէ յաւիտենական երիտասարդութեան մէջ, այնպէս որ կեանքը մինչև իր վախճանը կ'անցնի կորովի և գործունէութեան բոլոր առաւելութիւններով:

Ծնողները պարտաւոր են իրենց տղաքը պատրաստել Ֆիզիկապէս և մտաւորապէս կեանքի պայքարին, և ասիկա կ'ըլլայ անոնց համաշափ զարգացումը ապահովող կանոնաւոր ֆիզիկական դաստիարակութիւնով:

Ֆիզիքական դաստիարակութեան վարժութիւնները մեծ չափով կ'օգնեն բնութեան աշխատանքին՝ մանուկը զարգացնելու և առաջնորդելու համար դէպի առողջ երիտասարդութիւն:

Տղան երբ անգամ մը մարդանքին ընտելանայ, այլևս անոր համար սովորութիւն մը, բնական անհրաժեշտութիւն մը կը դառնայ մարդանքը և զայն կը շարունակէ իր կեանքի ամբողջ աւելութեան:

ՀՅԿՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Տղան երբ ստիպուած է դպրոցական գրասեղաններուն վրայ համար երկար ժամեր կարդալ ու գրել և իր մարմինը քերի դիւրի մէջ պահել, անոր հակազդելու և հետեանքները չէզոքացնելու համար անհրաժեշտ է լաւ կերպով առաջնորդուած ֆիզիքական դաստիարակութիւն մը, հակառակ պարագային այս գէշ դիրքերը կ'ազդեն դպրոցականին բնականն և համաշափ աճումին վրայ:

Շատ անգամ տղաք այնչափ գէշ դիրքով կը կենան և կը քանան, որ ծնողք ստիպուած կ'ըլլան անոնց ըսել «չիտակ կեցիր, չիտակ քալէ», բայց այս ազդարարութիւնները վաղանցիկ ապաւորութիւն

միայն կը թողուն, այնուհետև ծնողք միշտ տղուն քով չեն որպէսզի կարենան յիշեցնել անոնց թերի զիրքերը: Ուրեմն զպրոցին վիճակուած է ստանձնել մեծ պարտականութիւն՝ կատարելու համար այս ուղղութիւնները, իսկ այս կ'ըլլայ մարզանքի միջոցով զօրացնելով տղոց զնդերները:

Դիտուած է, որ կանոնաւոր և լաւ առաջնորդուած մարզանքը ինքնին իսկ կ'ուզէ մարմինին թերի զիրքերը:



Կողմնակի կորացում
իբանի

Չափազանց ջանքերով և ուրիշ միջոցներով կը ջանան պահել մարմնի բարեձևութիւնը, բայց այս միջոցները այն անպատեհութիւնը ունին, որ փոխանակ զնդերները զարգացնելու զանոնք կը ճնշեն, անդործութեան կը մատնեն և հետեարար կը տկարացնեն:

Ճիշդիքական դաստիարակութեան նր պատակը պիտի ըլլայ ո՛չ միայն մարմնի բարեձևութեան պահպանումը, այլ նաև աւելցնել կենսային կորովի զօրութեան կանուրիւնը, այսինքն մարդ կակը օժտել առաւելագոյն և ամենամեծ կորովով: Դնդերներու զօրացումով կը կանոնաւորուին գործարաններու պաշտօնակատարութիւնները, ամբողջ գործանաւորութը կը հաւասարակշռուի, արեան շրթ

Գ Ն Գ Ե Բ Ե Ի Զ Ի Ղ

Ներկայիս այլևս միայն զնդերներուն զարգացումին ուշադրութիւն չի դարձուիր, ինչպէս ասկէ առաջ երկար տառն կ'ըլլար Դընդերը շարժական մեքենային մէկ մասն է, բայց, բաժնուելով ջիդերէն և ջգային կեդրոնէն, զրկուելով իր սննդառական գործարանէն, ան կը դառնայ անգործ ու անկենդան հիւսուածք մը, միտի կտոր մը:

Եր շարժումներուն, ինչպէս մեր կեանքի աղբիւրը կը դառնուի մեր ջգային կեդրոններուն մէջ, որոնք կը ղեկավարեն զնդերները:

Հետզհետէ աւելի կրթուած աստիճաններու վրայ կը տեսնենք անդրադարձ գործունեութիւն, ինքնավար գործունեութիւն և յետոյ կամաւոր գործունեութիւն, Այս վերջինը կը կիրառուի երկու ձևի տակ. գրգիռ եւ դադար:

Այս երկու ներհակ գործերու ազդեցութեան տակ կը կանոնաւորենք մեր գործունէութիւնը և օգտակարապէս կէ հրամայենք մեր զնդերներուն՝ ծառայեցնելով մեր շարժումները մեր պէտքերուն:

Ասոր համար պէտք է ինքն իր վրայ կատարեալ տիրապետում և ամէն վայրկեան գիտակցութիւն ճիգերէն յառաջացող արդիւնքներուն, առանց իմացական հակակշռի՝ մեր ջղային կորովին մէջ շփոթութիւն և անկարգութիւն կը տիրէ և անոր զէջ օգտագործումը՝ գործարանաւորումի յոգնութեան և վատնումի ամենաստոյգ պատճառն է:

Բաւական չէ միայն ուզելը պէտք է գիտնալ ի՛նչպէս ուզել՝ ստանալու համար մեր ճիգերուն առաւելագոյն արդիւնքը՝ խուսափելու համար մեր կորովի շարունակական վատնումէն:


Մեր շարժական կարողութիւնը մեզի կը թոյլատէ երկու բան մեկուսացնել մեր զնդերային կծկումները՝ դանոնք սահմանելով զնդերի սեղմ խումբի մը մէջ և կծկումները ներդաշնակօրէն ընկերացնել՝ որոշ ճիգի մը հկատամար. հոս է կծկումներու անկախութիւնը և համագործակցութիւնը:

Այս գործողութիւնները աւելի մտաւոր են քան զնդերային, սիրաւի նախքան գործելը պէտք է զազափարը ունենալ մեր ընել ուզած շարժումին:

Այս գազափարը կամ մըտապատկերը կազմուած է արդէն փորձարկուած պարզ զգացումներու, շարժումներու յիշողութիւնով, ասիկա կանխագոյն գործերու նոր դասաւորում մըն է, որ իրր հետեանք ունի ստացուելիք արդիւնքի տեսակէտով ճիգերու համակարգում մը:



Ուղիղ կեցուածք,
բազուկներու միասնական
կորացում



Իրանի ետեւ կորացումի վարժութիւն

Մեր շարժումներուն սխալները յառաջ կու գան անկատար շարժական պատկերներէ և շփոթ զգացումներէ:

Գծուխտաբար շարժումները կրնանք ուսումնասիրել միայն իրենց արտաքին աղբեցութիւններով, իրենց արագութիւնով և անցադիծով, անոնց պատճառները մեր չափական գործիքներուն չեն ենթարկուիր:

Արդէն շատ դժուար է սահմանել խնդրոյ առարկայ զնդերային ներդործութիւնները. զնդերադրութեան և ուժազրութեան փորձարութիւնները տակաւին շատ անկատար են: Այսուհանդերձ շատ արամարանական է մտածել որ զնդերային ձգտումները համեմատական են ներքին ջգային գործունէութեան՝ ինչպէս արդիւնքները իրենց պատճառներուն հետ:



Չախ արուցիկն վրայ կեցուածք աջ արուցիկ կորացումով



Մեկ արուցիկ վրայ կեցուածք՝ բազուկներու ուղղածից բարձրացումով

Մեր կծկումներուն լաւ կամ գէշ ընկերակցումները յառաջ կը տերին ճշգրիտ, լաւ կարգաւորուած ջգային գործեր, կամ շփոթ և անորոշ զեկավարում:

ձկուն, անճիգ շարժումները մեր կորովին իմացական գործածութեան ստոյգ արտայայտութիւններն են, իսկ բիրտ, կցկոտուր, անճիղ շարժումները անկարգութեան յատկանիշն են և իբր հետեանք կ'ունենան օգտակար աշխատանքին ոչ համեմատեալ ուժի կորուստ, ըստ խումները կենդանի ուժին կորուստեան պատճառ են՝ ի վնաս մեր գործարաններուն և աշխատանքի չափացոյցին:

Մեքենագէտները կը ձգնին մեքենաներուն կտորները խաղաքէ և բախումէ զերծ պահել, անոնք զիտեն որ իրենց պաշտօնակատարութենէն դուրս ամէն շարժում իրենց մսխումին պատճառ է: Լաւ շինուած ամենամեծ մեքենաներն անգամ աղմուկ չեն հաներ, նոյնպէս լաւ կիրառուած շարժումները ձկուն են: անոնք կը յատկանշուին այնպիսի անցագիծերով՝ որ չեն ներկայացներ ոչ աչքառու անկիւն և ոչ յանկարծակի դարձուած կէտ:



Չոյգով կտակաւն
տարժուածք

Դիւրին է ասոր համոզուել Վերլուծելով ընտրեալ ենթականերու ժամալուսադրութիւնով առնուած շարժումները, յիմարները, արտակարգերը և անհաւասարակ շիւթները միայն կը շարժին կըցկըտուր և կոշտ կերպով:

Բազմաթիւ զիտողութիւններէ հանուած եղրակացութիւնը այն է, որ մեր շարժումներուն կատարելագործումը, շնորհ, ձկունութիւնը և զիւրութիւնը զնդերներուն տարապայման զարգացումին հետեանքը չեն, այլ զնդերային գործքին նախընթաց կեդրոնական կարգը բարեօքող ջղային կեդրոններու դաստիարակութեան:

Շարժումի մը ինքնավար կրկնումը չի կրնար բարեօքել թերիները, այլ ընդհակառակը զանոնք կը հիմնաւորէ: Լաւ կատարուած բոլոր շարժումները խնայողական են, անոնք մեր կորովը կ'օգտագործեն պէտքեղ գործերու առաւելագոյնով՝ փոխան եղած վատնումին:

ՇԱՐՃՈՒՄՆԵՐՈՒ ԴԱՍԻՄԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ


Բայց հարց է զիտեալ թէ այդ բնական շարժումները ի՞նչպէս պէտք է սորվիլ Պէտք է զանոնք կիրառել, սկիզբէն իսկ, այնպէս ինչպէս պէտք է ընել, որովհետեւ ստացուած սովորութիւն մը գրեթէ անարմատախելի է:

Ընդհանրապէս մարմնակրթանք անուան տակ ծանօթ շարժումներու մեթոտաւոր ուսուցման մը վրայ հիմնած են ֆիզիքական դաստիարակութիւնը, բայց այս մեթոտները հաշուի չեն առնել շարժումներու ընախօսութիւնը:

Հոգ կը տանին միայն զնդերներուն հաստութեան՝ առանց մըտածելու զանոնք ղեկավարող ջղային կեդրոններուն և արգելքներուն բարեօքման մպոին:

Կ'ուզեն ցուցնել իրենց կորովը և մեծ ճիգերով կը վառնեն զայն առանց առնուազն ասոնք աշխատանքին պատշաճեցնելու: Քանակը հետը կը տանի շարժումի որակը: Հոս է մեծ սխալը, ասիկա նոյնիսկ ֆիզիքական դաստիարակութեան ժխտումն է, որովհետեւ այս կերպ կիրառուած կ'աւաջնորդէ զէպի ուժերու վատնում և անհամեմատական է արտաշքուած պէտքցու արդիւնքին հետ:

Կարելի չէ շարժումը փոխարինել անշարժութիւնով, աշխատանքը կաշուն ճիգերով. այն ատեն ինչո՞ւ անդամատել վարժութեան



Դիմադրութեան և սկլուճութեան վարժութիւն


Մը փուլերը կանգի ժամանակներով որ կը փոխեն թէ բնութիւնը և թէ մեքենականութիւնը, անկէ առնելով իր ամէն բնական նկարագիրը:

Բաւական չէ միայն նշանակել կերպեր և ցոյց տալ մեկնումի և հասնելու դիրքերը, պէտք է նաև սահմանել մէկ պաշտօնէն միւսը անցնելու կերպը, նշանակել անցքի ճամբան, ճշդել միջոցին մէջի շարժումին ձևը և զանազան մասերու արագութիւնը: Մէկ կայանէն միւս կայանը երթալու կերպերու անհունութիւնն մը կայ և արդարեւ լաւ կերպը զործադրելուն մէջ է որ կը կայանայ կատարումի որակը:

Մեր ֆիզիքական կատարելագործումը չի կայանար մեր կորովագիտական կարողութեան մեծ յաւելման մէջ, այլ աւելի՛ մեր ուժերը օգտագործելու կերպին մէջ:

Սես կերպը կը կանոնաւորէ մեր սպառումը և մեր աշխատանքի շափացոյցը, հեռի զայն զանց ընելէ, հոս է դաստիարակութեան էական առարկան:

Կարելի է նոյնիսկ ըսել որ դաստիարակութիւնը կը սկսի միմի-
այն այն վայրկեանին՝ երբ անով կը զբաղուի, մնացածը ըլլալով պար-
մանադրութիւն և անազուտ ցոյց:



Իրանի կորացում.—
Ոտքերը բացած, բա-
զուկները կախ վի-
ճակի մէջ կենալ, բա-
զուկները աստիճանա-
կան բարձրացնել՝ մէկ
կողմէն կուրծքը հա-
կեցնելով դէպի ետ,
բազուկները կը մնան
գլուխին կրկու կող-
մերը ետև հակած,
շտկուել աստիճանա-
կան՝ հակառակ շար-
ժուամով:

Ստորին անդամներու
աղեղնաւորում.— Չախ
կրունկը մօտեցնել
աջին, բազուկները
վեր բարձրացուցած
խաչաձևել, յետոյ գա-
նոնք իջեցնելով մար-
մինին առաջ, ազեղ-
նաւորել ստորին ան-
դամները՝ կրունկները
վերցնելով և սարա-
ձել բազուկները եր-
կու կողմերը՝ ափերը
դէպի վեր. շտկուել
բազուկները իջեցնե-
լով:

Շարժումի ձեւը անտեսելով կը յանգուի ջղային կորովի շփոթ,
անստոյգ և գէշ բաշխումի մը:

Ասիկա, լաւ դորձածուած, կը յայտնուի ճկուն և առանց յան-
կարձական շարժումներու, ամէն կոշտութիւն անկարգութիւն է, կո-
րովի փախուստ մը, և արտաքին ցոյցը կամ կորուստի մը յայտնուած
կամ աշխատանքի մը նուազումը:

Դաստիարակութեան մէջ սկիզբէն իսկ պէտք է հսկել խուսափելու համար այս անպատեհութիւններէն:

Պէտք է մարդկային մարմինը դարձանել հետեւելով իր միջոցներուն և կեանքի օրէնքներուն՝ եթէ կ'ուզուի իրապէս դաշն կատարելագործել և ոչ թէ անոր անօգուտ բաներ սորվեցնել: Մեր մօտ կարողութիւններ կան որոնց մասին կը կասկածինք, մեր դարձարանաւորումը արժեցնելու համար պէտք է մենք մեր ճանաչողութիւնը ունենանք՝ բնական օրէնքի համեմատ անոնց տիրանալու համար:



Կողմնակի կորացում՝ սարածուած բազուկներով.— Աջ սրունքը աղեղնաւորելի իրանը աղեղնաւորելով կողմնակի դէպի ձախ՝ բազուկները վեր տարածելով գլուխի երկու կողմը, իջեցնել բազուկները, տարածել սրունքը. յետոյ կատարել նոյն շարժումը հակառակ կողմը:

յաճախ նոյնիսկ կը կասեցնէ. սովորութիւնը գործ մը կը դիւրացնէ՛ ան լաւ է եթէ ուզուած արդիւնքին համաձայն է:

Մեր շարժումներուն դաստիարակութիւնը՝ հաստատուած ճիշդ մըն է մեր զանազան աշխատանքներուն պատշաճեցուցման համար՝ Այս ճիշդ կը պահանջէ ինքն իր վրայ իշխողութիւն՝ որպէսզի սովորութիւնէն աւելի հեւուն կարենանք երթալ:


Բնութեան մէջ կենդանիներու տեղաշարժումը մեղի ցոյց չի տար կոշտութիւն, այլ միշտ շարունակականութիւն և կապակցութիւն: Թուշունի թռչքը կատուին շարժումները և հովէն ծող ծառերուն ճօճումը կը գծեն կորցուած կորեր, հազուադէպօրէն կը տեսնենք ուժին բիրտ շարժումներու ձևին տակ օգտագործումը կամ երթալ գալու շարժումներ՝ նոյն ճամբէն վերանցնող:

Պէտք է այս օրինակներուն հետեւինք, անոնք երկար ժամանակուան մէջ պատրաստուած առակութիւններու և զանոնք հաստատող սովորութիւններու արդիւնքն են:

Բայց սովորութիւնը յառաջդիմութիւն չի ստեղծել:

Այս իշխողութիւնը կը յայտնուի և կը մշակուի մեր դնդերային կծկումներուն անկախութիւնով, ինչ որ կ'ենթադրէ մեր դնդերները զեկավարող շարժական ջգային տարրերու աշխատանքի բաժանումը և որոշ ճիգի տեսակէտով այս տարրերուն լաւ ընկերակցումը:

Գործնականացումով կարելի է հասնիլ իսկապէս դարձանալի անջատման արդիւնքի մը: Ենթականեր կրնան այսպէս կծկել գրեթէ մէկուսի կարգ մը մկաններ կամ առնուազն պարփակել իրենց կըծ-




Մեկ սրունքի վրայ նստած եւ բազուկները դէպ առաջ դիրք.— Սրունքին մէկը ազդեղնաւորել՝ միւսը հորիզոնական դիրքով տարածելով դէպ առաջ, ազդեղնաւորուած ոտքի կրունկը գետնին վրայ, նախապէս տարածուած բազուկները ուղղել հորիզոնական դիրքով դէպ առաջ:

Սրունքի մը սարածումը՝ միւսը բողոյով ուղղածից.— Երկու ոտքերը քովէ քով կենալ՝ բազուկները կախ, մէկ սրունքը երկարել դէպ առաջ հորիզոնական դիրքով՝ բազուկներն ալ մէկ կողմէ տարածելով իրանին երկու կողմը հորիզոնական դիրքով:

կումները շատ սահմանափակ խումբի մը մէջ: Այս արդիւնքը ստանալու միջոցն է ամբողջ մարմինին կամ միայն մասերէն մէկուն կամ աւոր թուլացումը: Ասիկա արգելումի կարողութեան վարժու-

Թիւնն է որ կը բերէ կատարեալ ճկուն ութիւնը, պզտիկ շարժում մը իսկ ընելու համար գլուխէն մինչև ոտքը կծկուելու սովորութիւնը ընդհակառակն ձեզ անկարող կը դարձնէ այս իշխողութեան:

Յրտութիւնը, մնայուն վիճակի վերածուած նոյնիսկ մեթոսաւոր կերպով, ուսուցուած է իրր ճկունութիւն ըսուած շարժումներու մէկ հանգամանքը: Դիւրաւ կը հասկցուի որ ամէն կատարեալ պատ-




Մունքին մեկուն կողմնակի բարձրացումը՝ ուղղածից բարձրացում բազուկներով.— Կենալ ոտքերը քովէ քով և հորիզոնական աստիճանաբար բազուկներով, սրունքին մէկը բարձրացնել՝ բազուկներուն տալով ղէպի վեր ուղղածից զիրք:

Դեպի ետ աղեղնաւորուած հակում բարձրացում բազուկներով.— Ոտքերը բացուած և բազուկները կախ կենալ, իրանը ծռել ղէպի ետ՝ բազուկները աղեղնակերպ բարձրացնելով հետզհետէ մինչև անոնց ղէպի վեր ուղղածից զիրքը:

չաճեցում անհնար կը գտնայ. նման միջոցներով կարելի չէ ընարել կծկուելիք ղնդերները՝ եթէ արդէն այս ղնդերները կարծրացած են շրփոթ և ընդհանրացած գրգռութիւնով մը:

Շարժումներու ներդաշնակութիւնը կը բովանդակէ համակէտ ճիգերու գումար մը, սրուն մաս կը կազմեն մարմնի բոլոր մասերը

և որուն արդիւնքը կախեալ է գործօն զնդերներու լաւ ընկերացումէն: Առաւելագոյն օգտակար արդիւնքի պայմանը այս է, այս տեսակի պատշաճեցումի օրինակներու կը հանդիպուի բոլոր արուեստագիտական շարժումներուն մէջ, սկսած ասեղի գործածումէն մինչև կացինի կամ երկաթագործի մուրճի գործածումը, բոունցքի հարուածի կամ սուրի հարուածի մէջ: Բոլորը կը կարօտին ճիզին նպաստաւոր՝ մարմինի նախապատրաստական զիրքի մը և կցորդուած՝ զնդերներու կծկումի համախմբումի մը: Այս մասնակի ճիզերու խընայողական նաւաքումը կ'արտադրուի նոյնինքն վարժութիւնով և առանց անոր կարելի չէ ստանալ: Երկաթը ձեռքելով երկաթագործ կ'ըլլուի:



Մէկ սրունքի վրայ իրանի կողմնակի աղեղնաւորումը. — Կենսալոտքերը քովէ քով և բազուկները կախած մարմինը մէկ սրունքին վրայ կողմնակի հակեցնել՝ միւս սրունքը տարածելով հորիզոնական և ուղղաձիգ սրունքին կողմը բազուկը բարձրացնելով դէպի վեր իրանին ուղղութիւնով:

ուի և որն է որ կ'ընտրուի: Երբ ինքնավարումը կը տիրապետէ՝ այլևս յառաջդիմութիւն չկայ:


Մասնակի մը մէջ շարժումներու տարբադարումը, իր վերլուծումին ի տես մասնակի գործադրումը անկարող են տալ արպաւորութիւնը կամ գաղափարը. գործադրումին մէջ շարունակականութիւնը նոյնինքն գործին պայմանն է, զայն խոտորելով կամ փոխելով կը ձեւփոխուի ամբողջովին համապատասխան ջիզերու և զնդերներու մեքենականութիւնը: Ասիկա ուշադրութեան արժանի կարևոր կէտ մըն է:

Չափազանց տաժանելի, բայց ծայրայեղորէն ստոյգ ուսումնասիրութիւնը կը լրացուի հետևնալ դիտողութիւններով:

Դաստիարակութեան մէջ ամէն շարժում պէտք է ըլլայ գիտակից և ուղեւով. անկարելի է յառաջդիմութիւն ունենալ առանց գիտնալու ինչ որ կ'ուզ-

Երբ մենք մեզ շարժման մէջ կը դնենք, երբ մեր ուշադրութիւնը արժարձուած է փորձուած զգայնութեանց վրայ, ամէնէն նուրբ գունակներն (nuance) իսկ կրնանք արգելուլ և այսպէս կ'ունենանք մեր ճիգերուն մէկ ծանօթութիւնը՝ մինչև իր ակը իսկ:

Կարելի է այս ճիգի ներքին զգացութիւնը մղել շատ հեռուն և զայն յիշողութեան մէջ պահել՝ յետոյ արժարձելու համար շարժական պատկերը ամենամեծ յստակութիւնով: Այս մտաւոր գործողութիւնը թոյլ կու տայ կիրառել յետոյ խառն շարժում մը, ըլլայ նոր



Մեկ ոտքը եւ մեկ ձեռքը գետնին վրայ դիրք. նախորդպատկի դիրքը առնելէ յետոյ զէպի վեր բարձրացած բազուկը իջեցնել մինչև գետին ու միւսը բարձրացնել զէպի գլուխը՝ իրանին ուղղութիւնով:

Մեկ սրունքի վրայ դէպի ետ աղեղնաւորած դիրք. — Ոտքերը քովէ քով ու բազուկները կախ կենալ, մէկ սրունքը տարածել զէպի առաջ և իրանը հակեցնել զէպի ետ:


Կամ ծանօթ տարրերու նոր կարգաւորում մը:

Ի մի բան, մեր շարժումներուն դաստիարակութիւնը հիմնուած է դնդերներու կծկումին անկախութեան և ներդաշնակութեան վրայ, առանց ունէ տեսութիւն ընելու: Ընթերցալ ենթականեր օրինակել բաւական է զայն լրացնելու համար:

Համակարգեալ անհատներուն քով, նշանաւոր իրենց ճկունութիւնով և ամէն շարժում կատարելու իրենց ղեւրութիւնով, տարբեր

յօղաւորութիւններուն և անդամներու ծայրերուն գծած անցագիծերը կը ներկայացնեն յատկանշական ձևեր: Ուղղութեան փոփոխումները կ'ըլլան առանց մէկէն ծռելու և սուր անկիւն կազմելու, անոնք շնորհալի կորերով կը դառնան և արագութեան փոփոխումները յանկարծական չեն:

Եթէ կարողացուի վերարտադրել վարպետ նուագածուի մը մատներու շարժումին գծած անցագիծերու ձևը իր շարժականութիւնով և արագութեան զանազան փուլերով, ասով իսկ կարելի պիտի ըլլայ



Մեկ սրունքի վրայ դէպի առաջ աղեղնաւորումով դիրք. — Ոտքերը քովէ քով ու բազուկները կտի կենայ, մէկ սրունքը տարածելի դէպի ետ, իրանը հակեցնելի շէպի առաջ, տարածուած սրունքին կողմը բազուկը երկարելի գլուխին քով իրանին ուղղութիւնով և միւս բազուկը դէպի ետ:

Իրանի կողմնակի աղեղնաւորումը մեկ սրունքին վրայ. — Ասիկա կը նմանի 189 էջինին, միայն իրանի հակումին ու մէկ սրունքին տարածման հետ բազուկները կը բարձրացուին դէպի վեր գլուխին երկու կողմերը՝ իրանին ուղղութիւնով:

Վերարտադրել տիպարին ջգային և դնդերային գործերը:

Այս գաղափարը ուսուցման մէջ օգտագործողները անսպասելի յաջող արդիւնքներ ձեռք բերած են մանաւանդ այն անհատներուն վրայ, որոնք նախապէս վերլուծական մաշկանքով չոր և յանկարծական կայքի սովորութիւններ ստացած չեն, փորձառութիւնը ցոյց կու տայ լաւազոյն պայմանները շարժումէն քաղելու համար հնարաւոր օգուտը:

Կարրլի է երեք էական յատկանիշի մէջ խտացնել.

Շարժումը պէտք է ըլլայ կատարեալ, շարունակեալ և կլորածնէ:
Մեր սովորական շարժումները, նոյնիսկ մեր մարզանքի շարժումները, սահմանափակ են բաղդատմամբ անոնց՝ որ կրնանք կիրառել:

Հեռի ենք իր ամբողջ տարածութիւնով գործածել այն բոլոր շարժումները, որ կը թոյլատրէ մեր իւրաքանչիւր յօդաւորումը: Մեր գործարանաւորումը ասով իսկ կը կորսնցնէ իր կարողութիւններէն մաս մը և մեր միջոցներուն այս նուազումին է որ պէտք է վերադրել մեր շարժական պաշտօնակատարութեան վրդովումը և աններդաշնակութիւնը. արդարեւ մեր մարմինին մէջ մասեր կան, որ անգործութեան պատճառով չեն ապրիր. կամ գէշ կ'ապրին: Բայց կրնանք վերագանել ինչ որ կորսնցուցած ենք, պայմանով որ վերստին կատարենք բոլոր շարժումները և կատարենք կարելի եղածին շափ լրիւ:

Ասիկա կը վերաբերի թէ շղային կեղրոններուն և թէ դնգերններուն կատարեալ շարժումի օգուտը կը մեկնուի բոլոր մասերուն մշակումով և հիւսկէններուն ներգործ աննդաւորումով, որոնց տկար պաշտօնակատարութիւնը վարժութիւնով կը վերանորոգուի:

Շարժումը պիտի ըլլայ շարունակեալ, խուսափելու համար լաւարեան շրջանի մը ներհակ տեղական ճիգէն, պատճառ շղային յօդուութեան և հակառակ ճկունութեան և լաւ կծկումի ընկերակցումին:

Պիտի ըլլայ նաև կլորած, խուսափելու համար բախումներէ և հարուածներէ: Իրանին և անդամներուն գործածական շարժումներուն մէջ գծած կորածեքը միշտ խնայողական ըլլալով, ողջմտութիւնը և գործնականը ցոյց կու տան ուրիշ բան չլինառել՝ բայց եթէ րնականին իրականացումը:

ԳՈՒՐԳԷՆՆ ՈՒ ՍԱՅԼՈՐԴԸ

Ամբան. որ մըն է՝ երկինքով պայծառ,
Պարեզ ու արեւ, անհամար անծայր,
Անյագ ծրծեին շողերն արեւուն
Ու բերին. պրտոյն կու սան համ, հոս, գոյն:

Թրքենոյն վրայ՝ ժ/ժ/ն ալ անաս
Կ'արձակէ՝ պահ պահ՝ կրոնն անիմաս.
Եւ ռամիկն հաւսայ քէ ամէն սարի
Այդ կրոնն բերէ բուրիս համ մերի:

Տանամեայ սրդեկ, աղբաս մօր զաւակ,
Գուրգէն նրսեր է բուրի ծառին սակ.
Ինքն ալ, անմբշակ, նրման ռամիկն
Չայնակից կ'ըլլայ ժ/ժ/ի երգին:

Ուպեզգի բուրբ չի մընայ շուս ուշ,
Ընծայէ իրեն վանաւք բարձ անուշ,
Հովն ալ, մե'ղք, չի գար շարժել քրքենին,
Ու ինք իր գուշը լեցրնէ դիւրին:

* * *

Ասադձ բեռցած կուռ՝ սայլեր նրոնրան
Գիլ գալով կ'երբան Աւանին շուկան.
Ինչ ցաւ Գուրգէնին որ սակաւին չէ
Յաջողած ծախել գուշ մը բուր՝ գոնէ:

Կը վուրայ ժողվել պարեզին գեցնէն
Ինչ որ խոսելի սեպած էր արդէն.
Լեցուցեր է, տե'ս, իր գուշը բուրիս,
Վազէ սիրանալ երագած գանձին:

Եւ ի՞նչ է այն գանձ.— Հինգ տար փարա,
Գուշ մը բուրի գին՝ որով կը յուսայ
Մայրիկին սանիլ մեկ կամ երկու հաց,
Ու, այսպէս, մեղմել անոր վիշտ կամ լաց:

Սիրակաք համբոյրն ան կանխաւ կ'ըզգայ
Մօրը շրթունքէն իր հակիկն վրայ.
Շողապատումովն անոր գրգուռնին,
Կը հրնուի այժմէն մանկունակ հոգին:

* * *

Կանգնած է Գուրգեն եղբերք նամբուն,
 Իր սրժգին վանառք ցոյց տալ ամենուն,
 «Ով որ չէ կերեր այս բուրբէն անուտ,
 «Չ'ունենար, կ'ըսէ, աչքի պայծառ լոյս:
 «Տեսէ՛ք, մեղրածոր կը վագէ քաղցուն,
 «Կերէ՛ք որ լոյս գալ ձեր մութ աչքերուն,
 «Երբ յոգնած էք, ուժ կ'առնէք նորէն,
 «Անոր համն ու հիւր ձեզ աւխուժ բերեն:»

Այսպէ՛ս, պերճաբան կարդար հրբաւեր
 Անցորդ գիւղացւոց որ, անձին ի սեր,
 Գրնէն իր վանառք ու նաշակէն զայն,
 Տալով փոխարէն իրենց մէկ լուման:

Սայլորդ, գիւղացի կ'անցնին անդադրում,
 Ամենքն ալ յոգնած, ամենքն ալ նրկուն,
 Կարծես չեն լրսեր սրդուն կոչն ու ձայն,
 Կ'որոնան, աւա՛ղ, հոգեր բազմագան:

* * *

Եւ անա շաչին պիրկ գաւազանի,
 Բարկանայք հարուած ծեծի ու գանի,
 Կը լըսէ սրգան ժրխորին մէջ խոր,
 Կը դառնայ դիտել իր շուրջը բոլոր:

Սայլորդ մըն է ձեր, քրտնաբոր նիհար,
 Որ, յոգնութենէ ընկնուն դողահար,
 Թողեր է. կարծես, խիղճ կարեկցութիւն.
 Անխրնայ բոպէ եզներն անասուն:

Եզները՝ քասուն՝ կը կրփին կ'ելնեն,
 Կը թօթունեն լուծը զոյգ պարանոցէն,
 Ոգորին, հեծեն, բայց չեն գրքներ նար,
 Ծանրը սաժանքը իրենց բա՛ղղն է չար . . .

Ի սես բարբարիկ այս սեսարանին,
 Մանուկը յիշէ օրերն առաջին
 Երբ դըպրոցին մէջ, վարժապետ մը ժանս
 Կը ծեծեր զինքը, եւ մերթ նետէր բանս:

Կը քուէր իրեն քէ մարմնոյն մեջէն
Յաւի հոսանուտ կ'անցնէր հրեղէն,
Կ'ապրէր ինք այն պահ երբ կը գալարուէր
Ֆալախահին սակ որ ոտքին լուծն էր:

Մոռնալով գանձը գոր երազած էր
Սայլորդին դիմէ, բի'րս սայլորդին ծեր.
«Ա.ս, կ'ըսէ անոր, կե'ր այս գուշին բուր.
«Թող աչքը բացուի, եւ կ'ունենաս գուր:»

Սայլորդը, ապշա՛ծ, կը նայի սրդուն . . .
Թոռնի՞կն էր արդեօք. մանրիկ ազագուն.
Որ եկեր էր հոն. հեռաւոր գիւղէն,
Վանել հոգերը իր պապուն մտէն:

*Ամպերը գլորուին, կը դադրի որոտ,
Պայծառ է երկինք, խաղաղ՝ մքնալորս,
Սայլորդը, խանդով կը գրկէ տղան,
Եզները հանդա՛րս. հիմա կ'որոնան:*

Գուրգենն ալ կ'երթայ սանի մայրիկին,
Փոխանակ գանձի, գրոյցը դէպքին:
*Մայրը՝ որդիով, որդին՝ իր գործով
Աւելի՛ չէն են քան թէ դրամով:*

Անվերս

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Ձո՛ւր կը պաւէ մեր կեանքն երկու լուսեանց դեմ.—
Մին՝ ձնեղէն առջի, միւսն ալ՝ մահէն վերջի,
Լեռներու մէջ երկու՝ հովիտն ենք կեղերջի,
Մեր ողբէն չի՛ խախտիւր փշուր մ'այդ լեռներէն:

Վայելին ի գո՛ւր է քանի որ շուտով կ'անցնի.
Եւ քանի որ կ'անցնի մարմինն ալ վայելէն,
Հեռանքէն վեր՝ միակ անանց կայ բան մ'յայտնի.—
Այն սերն է միտ կախուած երկնի սա բարձունքէն:

Ե. ԳՈԼԱՆՃԵԱՆ

ԶԱԽԿԻՆ ՍԷՐԸ

Տոկոսն և շինարար ժողովուրդ է հայը:

Հազար նեղութեանց ենթարկուած իրենց հայրենիքին մէջ — ուր սուրն աւերածութիւնը, աւարառութիւնն ու առեւանգումը այլևս սովորական երևոյթներ էին դարձած կարծես — շատ հայեր, գաղթականի ցուպը ձեռք առած, դիմած էին դէպի արևմուտք՝ ի խընդիր նոր բնակավայրի՝ ուր կարենային ապրիլ խաղաղ և հնարաւորութիւն ունենային վայելել իրենց ճակատի քրախնքով շահածը:

Ահա այս հայերն էին, որ քանի մը դարեր առաջ, թողած իրենց սիրելի հայրենիքը, տունն ու արածը, հաղարաւոր քիլոմէթր ճամբայ կտրելով հասած էին Բիւթանիա, ու հոն խոպան ու անկոխ տեղերու վրայ հիմնած բազմաթիւ զուտ հայաբնակ գիւղեր:

Պատմութենէն անտեղեկ մէկը երբ առիթը ունենար այս շրջանները այցելելու նախքան 1914 չարաշուք թուականը, անկասկած այն տպաւորութիւնը պիտի ունենար, որ հայերը հոն իրենց բուն հայրենիքին մէջն են և գիւղ, տուն ու արտ ժառանգած են իրենց նախնիքներէն: Իրապէս քիչ անգամ պատմութիւնը արձանագրած է այսպիսի պարագաներ, ուր ժողովուրդ մը իրր գաղթական երթալով ուրիշ պետութեան մը հողերուն վրայ, իր նոր բնավայրին վրայ իր ազգային կնիքը դնէ: Տարբեր է պարագան տիրապետող ազգերուն:

Եւ Բիւթանիոյ մէկ մասը կարծես Հայաստան էր:

Ք. գիւղը Բիւթանիոյ մէջ ^{*} ^{*} կը հաշուէր մօտ 2000 տուն, բոլորն ալ հայ:

Ահա այս գիւղի բարեկեցիկ մէկ ընտանիքին աղջիկն էր Հայկուհի, 1915ին լրացուցած իր 17 տարին:

Հայկուհի խարտեաշ, վայելչահասակ ու գեղեցիկ աղջիկ մըն էր որ 1912ին աւարտած էր գիւղին բարձրագոյն նախակրթարանի դասընթացքը և դպրոցէն յետոյ սորված էր նաև կարուսէ: Ան, ոչ միայն իր բարեկեցիկ ընտանիքի ղաւակ, նախակրթարանը աւարտած, կար ու ձև սորված և գեղեցիկ ըլլալուն համար գիւղին մէջ աչքի կը զարնէր, այլ նաև իր համեստ ու շնորհալի վարմունքով բոլորին համակրանքին արժանացած էր:

Ք. գիւղին մէջ 16 տարեկան աղջիկը հարսնցու էր արդէն: Եւ երկու տարիէ ի վեր գիւղի երիտասարդներուն աչքը Հայկուհիի վրայ էր: Շատեր չէին համարձակեր անոր ձեռքը խնդրելու, քանի մը

հոգիներ մերժուած էին արդէն և իրաց այս կացութեան մէջ 1914ի ամառը յայտարարուած էր ընդհ. զօրակոչ:

Երբ 21-45 տարեկան, բոլոր այրերը զինուորագրուած էին, այլևս ո՞վ կը մտածեր ամուսնութեան վրայ:

Սակայն հայկուհիի հայրը, որ ասկէ դատ ուրիշ զաւակ չունէր և կը գուրգուրար անոր վրայ, արդէն ընտրած էր իր փեսացուն, իսկ պաշտօնական նշանառութի համար կը սպասէր լաւ օրերու: Չէ՞ որ պատերազմը պէտք է շուտով վերջանար, ինչպէս բոլորը կը կարծէին և շուտով վերսկսէր բնականոն կեանքը:

Հայկուհիի հօր մտադրութիւնը գաղանփք մը չէր ընտանիքին մէջ, ան ո՛չ միայն իր կնոջ կատարեալ հաւանութիւնը առած էր, այլ հաղորդած նաև իր ազնկան՝ անոր արամադրութիւնը շօշափելու համար: Եւ Հայկուհի իր անկեղծ շնորհակալութիւնը յայտնած էր իր հօր՝ որ իրեն համար կը կամենայ նման արժանաւոր ամուսին մը:

Այսպիսի պայմաններու տակ եղած մտադրութիւն մը, որուն համաձայն են բոլոր կողմերը, արդէն տեսակ մը կատարուած իրականութեան համապատասխան է և Հայկուհին ինքզինքը նշանուած կը նկատէր ու իր մէջ արդէն սկսած էր սէրը հանդէպ իր ապագայ ամուսնոյն:

Հայկուհի քանի մը առիթներ ունեցաւ խօսելու իր նշանածցուին հետ և իւրաքանչիւր տեսակցութենէ յետոյ կարծես սէրը քիչ մը աւելի արմատացաւ իր սրտին մէջ:

Նշանածցուն, որ 1914ին 28 տարեկան էր և զինուորագրուած, պատերազմի ճակատը զրկուած չէր, այլ գիւղին մօտ խճուղի շինող գործաւորական վաշտի մը մէջ էր, որով հնարաւորութիւն ունէր գէթ ամիսը անգամ մը գիւղ երթալու: Եւ իր ամէն գիւղ երթալուն՝ նախ անգամ մը Հայկուհին կը տեսներ ու ապա կ'երթար իր հայրենի տունը:

*
*
*

1915ի ամռան էր:

Պատերազմը դեռ վերջացած չէր:

Հայերը, որ քանի մը դարեր Բ. գիւղին մէջ հանդիստ ապրեր էին — հանդիստ կ'ըսենք բաղդատելով ուրիշ վայրերու հայոց վիճակին —, բացի ընդհ. զօրաշարժի և պատերազմի հետեանքով ստեղծուած կացութեան բերումով իրենց ենթարկուած նեղութենէն, քանի մը կամիսէ ի վեր իբր հայ ալ սկսած էին ճնշման ենթարկուել պետութեան կողմէ: Արդէն անոնք լսած էին որ Պոսէն և գաւառներէն բազմաթիւ աչքառու հայեր աքսորուած են:

Ահա այս կացութեան մէջ հրաման հասաւ գիւղը, որ անմիջապէս բոլորը մեկնին առանց բացառութեան, հասան ոստիկաններ և ոստիկան զինուորներ և բռնութիւնով տեղահան ըրին գիւղի բոլոր Հայերը: զանոնք քշելով դէպի կայարան:

Գիւղացիին թողած իր տունն ու տեղը, իր ինչքնն ու գործը, արցունքը իր աչքին մէջ չորցած, կը հեռանար իր երկրորդ հայրենիքէն: Հայկուհի վերջին անգամ մըն ալ տեսաւ իր նշանածը: Յուզիչ էր տեսակցութիւնը: Չենք ուզեր նկարագրել այս տեսարանը: Կը բաւականանք միայն շեշտելու, որ անոնք արցունքէն ուռած աչքերով ու խտեցին յաւիտեան իրարու ըլլալ...

*
*
*

Տեղահանութիւն, աքսոր:

Ո՞ւր, — ո՞չ ոք գիտէ: Ինչո՞ւ, — որովհետեւ հայ են:

Երկաթուղին կը հասնի Պիլէճիկ, կարելի չէ իջնել վար, յառաջ: Կը հասնի Էսկի-Շէհիբ, արդիւրեւած է իջնել, յառաջ: Կու գայ Աֆիոն Գարահիսար, յառաջ: Վերջապէս Գօնիա կը հասնին տարագիրները:

Ճամբայ հանուած ատեն ըստեւած էր, որ մինչև Գօնիա պիտի տեղաւորուին, ուրեմն վերջին հանգրուանը պէտք էր ըլլար Գօնիան: Բայց հազիւ գիշեր մը կրնան մնալ հոս: Առաւօտուն կրկին ճամբայ կը հանուին:

Գարաման, հազիւ 3 օր կրնան մնալ: Էրէյլի՝ շարաթ մը միայն: Պողանթի, հազիւ օր մը կը թողուին:

Եւ Պողանթի ծայրն էր այն ատեն երկաթուղադին:

Անկէ կառքերով կը զրկուին Թարսուս Բայց հոս ալ մնալը արգիւրեւած է: Երկաթուղիով կը զրկուին Օսմանիյէ:

Օսմանիյէ դժոխք մըն է: Բայց հոն, այդ դժոխքին մէջ ալ չեն թողուիր Յառաջ, կառքով դէպի Սուրիա, դէպի Գաթմա:

Պողանթիէն մինչև Թարսուս Տաւրոս լեռնաշղթան 4 օրէն կը քրելէ յետոյ՝ Օսմանիյէէն մինչև Գաթմա, 6 օրէն, Ամանոսի լեռնաշղթան ևս կը կտրեն:

Այժմ Սուրիա կը գտնուին: Բայց Գաթմա ալ չեն յաջողիր մնալ՝ Յառաջ, միշտ յառաջ:

Գաթմայէն՝ Ազադ, անկէ՝ Աքթէրին, յետոյ՝ Պապ, հոսակ ուրեմըն Եփրատի եզերքը՝ Մէսքէնէ:

Դիւրին է թուել այս վայրերուն անունները: 1915—1916 թըւականներուն այդ վայրերը գտնուողները միայն կրնան գաղափար ունենալ հայ աքսորականին գողգոթային վրայ: Մարդ հայ ըլլալու է որ կարենայ զիմանալ ա՛յսքան տառապանքի:

Հայկուհի իր ծնողքին հետ կը կտրէ այս ամբողջ ճամբան, ցմը-
րուր կը քամէ դառնութեան բաժակը: Բայց ան իր յոյսը երբեք չի
կտրեր, ամէնէն գէշ վայրկեաններուն իր աչքին կը պատկերանայ իր
սիրականը ու ահա ամէն բան կը մոռնայ: Անշուշտ այս չարչարանքն
ալ վերջ մը պիտի ունենայ և ուր ուրեմն պատերազմը վերջանալով
պիտի դառնան իրենց գիւղը և իր սիրականին հետ պիտի կազմէ ըն-
տանեկան երջանիկ բոյն մը:

*

* *

Մէսքէնէն անդին կացութիւնը կը տարբերի, այլևս Եփրատի
եզերքը հայր ո՛չ մէկ արժէք ունի:

Տեղանան հայութիւնը մինչև հոս արդէն սպառած է իր կարո-
ղութիւնը և անօթիները մեծսամասնութիւն են կարավաններուն մէջ:
Շատ անգամ դրամ ունեցողն իսկ չի կրնար գտնել ուտելիք:

Ասոնց վրայ աւելցուցէք աւարառութիւն, բռնութիւն և առե-
ւանգումները, որոնք սովորական երեոյթներ դարձած են, իսկ հա-
մաճարակ Թիֆլիսը հազարաւոր կեանքեր կը հնձէ:

Հայկուհիի հօր նիւթական կարողութիւնը գրեթէ սպառած է, ան
քիչ մը ատեն Մէսքէնէ կարենալ մնալու համար 3 ոսկի կաշառք վը-
ճարելու անկարող է: որով ոստիկան զինուորները բռնութիւնով անոր
քանի մը զոյքերը նաւակ կը դնեն և ճամբայ կը հանեն ուրիշ հա-
րիւրի մօտ ընտանիքներով 6 մեծ նաւակներով դէպի Տէր-Չոր:

Եփրատի վրայ ճամբորդութեան երկրորդ զիշերը արարներ կը
յարձակին տարագիրներուն վրայ, կը կողոպտեն բոլորը և կ'առեան-
զեն աղջիկները: Յառաջ եկած խուճապին մէջ Հայկուհի, ինքզինքը
կորսնցուցած, չ'իմանար իսկ թէ ի՛նչպէս զինքը բաժնած են իր ծը-
նողքէն: Երբ խելքը գլուխը կու գայ ինքզինքը կը գտնէ արարի մը
վրանին տակ:

*

* *

Հայկուհի զիւղին մէջ հայերէնէն տարբեր լեզու չէր գիտեր, հա-
ղիւ քանի մը թուրքերէն բառեր կրնար թոթովել: Գաթմայէն մին-
չև Մէսքէնէ այ կարճ միջոց մը արարներու մէջ մնացած ըլլալով չէր
կրցած արարերէն սորվի:

Արարի վրանին մէջ ան բառ մը իսկ չի հասկնար: Իր առջև կե-
րակուր կը դնեն, բայց չի կրնար ուտել: Լալէն իր աչքերը ուռած են
և չի կրնար քնանալ:

Կ'անցնին այսպէս օրեր: Վիշտը և անօթութիւնը մաշեցուցած են
զինքը և կմախք մը դարձած է:

Սակայն և այնպէս կամաց կամաց կը հաշտուի իր ճակատագրին հետ, այսօր մէկ պատառ, վաղը երկու՝ կը սկսի ուտել: Վերջապէս արարելէնին ալ կը վարժուի, կը հասկնայ ու քանի մը քառ ալ կրնայ արտասանել:

Իր առեւանգումէն երկու ամիս անցած է արդէն:

Արարը իրեն կին դարձնել կ'ուզէ Հայկունին, որ սակայն կ'ընդդիմանայ:

Կ'անցնի ամիս մը ևս:

Արարը Հայկունին կը յանձնէ — թերևս կը ծախէ — ուրիշ արարի մը, գիւղարնակ: Սա ալ կ'ուզէ իրեն կին դարձնել, Հայկունի դարձեալ կը մերժէ:

Առաջարկները կը կրկնուին: Ի դ՛ուր, Հայկունի կ'ընդդիմանայ միշտ:

Սակայն, սոսկայի՛ր պահ, գիշեր մը արարը կը քաշէ եսթալանը և մահուան սպառնալիքով կը բռնաբարէ Հայկունին:

Խեղճ ազջիկը կ'անիծէ իր ճակատագիրը, հոգիով կ'ատէ արարը և լալով իրիկուն կ'ընէ օրերը:

Բայց ան կը զգայ քիչ ատենէն, որ մայր պիտի ըլլայ: Ժամանակի մը համար բռնադատեալ կը համակերպի իր տխուր բախտին:

Ուր ուրեմն Հայկունի կը ծնի մանչ զաւակ մը:

*
*
*

Այժմ Հայկունիի միակ մտածումն է իր զաւակը, ան ուրիշ ո՛չ մէկ բանի վրայ կը խորհի, միայն նուիրուած է իր զաւակին գիեցման:

Ո՛րքան կը սիրէ իր զաւակը, նոյնքան ալ կ'ատէ անոր ծըննդեան պատճառ դարձող մարդը, որ իրր թէ իր ամուսինը պիտի ըլլայ:

Ու այսպէս Հայկունի այս արարին տան մէջ կը մնայ երկուքուկէս տարի: Այժմ իր զաւակը երկու տարիի կը մօտի ու սկսած է բռնեթ թոթովել, ան հայերէն կ'արտասանէ մայր, հաց, ջուր և այլն: Բայց ո՛չ մէկ ատեն չի լսուիր անոր հայր բառը թոթովելը:

Ու վրայ կը հասնի գինադադարը:

*
*
*

Հայկունիի գիւղը կը գտնուի Մէսքէնէ-Հալպ ճամբուն վրայ: Անմիջապէս հոն կ'իմացուի գինադադարի լուրը և Սուրիոյ զբաւումը համաձայնական բանակին կողմէ:

Անրախտ ազջիկան ուրախութիւնը սահման չունի այժմ: Ան կ'երազէ իր գիւղն ու սիրականը, իր մտքին մէջ կ'որոճայ հազար ծրագիր:

Արար դիւզին մէջ Հայկուհին միակ հայը չէ, կը յայտնուի որ հոն կան ուրիշ հայ կիներ, աղջիկներ ու տղաքներ: Այժմ՝ անոնք համարձակ կը մօտենան իրարու և փախուստի միջոցներու վրայ կը մտածեն:

Մինչ այս մինչ այն որբահաւաքներ կ'իյնան ամէն կողմ՝ հաւաքելու համար հայ բեկորները, Հայկուհի իր զաւակը առած կ'ուզէ ընկերանալ որբահաւաքներուն, բայց արարը կ'ընդդիմանայ ու չ'ուզեր յանձնել ո՛չ Հայկուհին և ո՛չ իր զաւակը: Վերջապէս մասն զաւակը կը մնայ հօրը և Հայկուհի կը հասնի Հալէպ:

Առաջին օրերուն, տարուած հայրենաբաղձութենէն, մտածելով որ պիտի գտնէ իր ծնողքը, աւելին՝ պիտի կարենայ միանալ իր սիրականին, կը մոռնայ իր զաւակէն բաժանումը:

Սակայն ան միշտ կը զգայ մեծ պակաս մը, սիրտը հանգիստ չէ, հոգին խռով է: Գիշերը երազին մէջ կը տեսնէ իր զաւակը, որ ձեռքերը իրեն տարածած՝ մայր կը կանչէ:

Յաջորդ օր կը թողու զաղթակայանը և շունչը կ'առնէ իր զաւակին մօտ:

*

Որբահաւաքները դործի վրայ են, իրենց հետ ունին նոյնիսկ համաձայնական զինուորներ:

Այս անգամ հայկուհի կը յաջողի իր զաւակը միասին առնել:

Կը հասնին Հալէպ և անկէ շուտով ճամբայ կ'ելլեն դէպի Պոլիս:

Այժմ Հայկուհի իր զաւակին հետ Պոլիս գաղթակայանն է: Հոն գտնուողներէն տեղեկացած է, որ իր ծնողքը ազատուած է, բայց չի գիտեր անոնց ուր ըլլալը: Նոյնպէս իմացած է որ իր սիրականն ալ ողջ է և միշտ զինքը կը փնտռէ:

Բայց ինչպէս ներկայանալ իր զաւակով ծնողքին ու սիրականին: Ահա տառապանքի նոր շրջան մը:

Չաւակէն բաժնուիլ, այդ իրեն համար մահ կը նշանակէ: Սակայն կ'ատէ իր ամուսինը, ծնողքին կարօտովը կը տոչորի և իր սիրականը միշտ կը պատկերանայ իր աչքին:

Հակասութիւնները՝ աշխարհ:

*

Արարը կը փութայ Պոլիս ու օրէնքով տէր ըլլալ կ'ուզէ իր զաւակին: Արդեօք ան ալ գիտէ՞ թէ Հայկուհին չի կրնար բաժնուիլ իր զաւակէն և երբ աղան տանի՝ ան ալ պիտի դառնայ իրեն:

Թրքական օրէնքը որոշ է, մանչը հօրը և աղջիկը մօրը: Արարը կը յաջողի իր զաւակը առնել և մեկնիլ Սուրիա:

Պոլիս կը հասնին Հայկուհիի հայրն ու մայրը և կը գտնեն իրենց աղջիկը:

Սիրականն ալ դարձած է գիւղ:

Բողոքին յայտնի է այլևս Հայկուհիին կացութիւնը, ու ո՛չ ոք կը մեղադրէ զինքը, ընդհակառակը կը կարեկցին իրեն վրայ:

Սիրականը լուր զրկած է Պոլիս, որ միշտ կը սիրէ և առանց այլևայլի կ'ուզէ ամուսնանալ Հայկուհիի հետ:

Գիւղ վերադառնալու պատրաստութիւնները տեսնուած են:

Հայկուհիի հոգին խռով է միշտ սակայն:

*

Երկու իրարու գլխովին * * * հակառակ մտածումներ պատած են Հայկուհիի գլուխը:

Կը սիրէ իր զաւակը ու առանց անոր կարծես կեանքը իրեն համար աննպատակ է, բայց կը խորշի արարէն:

Կը սիրէ հաւասարապէս իր նշանածցուն, որուն հետ միայն կը կարծէ թէ երջանիկ պիտի կարենայ ապրիլ:

Միւս կողմէ իր մտքէն չի կրնար հեռացնել իր հայրենի գիւղի հաճելի կեանքը, որուն հետ բաղդատութեան ո՛չ մէկ եզր կրնայ ունենալ արաբ անհրապոյր գիւղը, ուր տառապանքի օրեր միայն ապրած էր:

Կայ նոյնպէս իր սէրը հանդէպ ծնողքին:

Ի՞նչ ընել ուրեմն:

Ան գիշեր ու ցորեկ կը մտածէ ու կը մտածէ, բայց անկարող կ'ըլլայ իր միտքը լուծումի մը յանդեցնել:

*

Արդէն ամէն բան պատրաստ է և պիտի մեկնին գիւղ:

Հայկուհի Պոլսոյ մէջ կը հանդիպի իր ամուսնոյն գիւղէն ծանօթ արարի մը, որ զործով եկած էր մայրաքաղաք: Խեղճ կրնը ընկ՛նուած, կը մօտենայ անոր և կ'աղայչէ որ զինքը տանի Սուրիա՝ ի՞ր զաւկին քով: Արարը սիրով կ'ընդունի առաջարկը և կէսօրին իսկ մեկնող շոգեկառքով, առանց իր ծնողին իմաց տալու, Հայկուհի կը մեկնի Պոլսէն:

Չաւկին սէրը մեռցուցած էր իր մէջ ուրիշ ամէն կարգի զգացում: Ան իր անձը կը զօհէր՝ իր զաւկին սիրոյն:

Այսպէ՛ս է զաւակին սէրը:

Յ. Գ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆ ՏՕՆԵՐԸ

Մեր նախահայրեր վեցերորդ դարուն (Քրիստոսի 552 թուին) արդէն վերջապէս նշգրտեցին հայ եկեղեցական *տոմարը*, այսինքն եկեղեցական տօներու օրերը նշգրտող գիրքը կազմած էին, որ կը կոչուի *Տօնացոյց*: Հայոց տօնարական թուականը կը սկսի 552ին, ուրեմն տօնարական թուին վրայ 551 աւելցնելով կ'ունենանք Քրիստոսի թուականը:

Տօնացոյցը անհրաժեշտ է, որովհետեւ ունինք փոքրաթիւ անշարժ տօներու կարգին՝ բազմաթիւ շարժական տօներ:

Շարժական տօները մեր այբուբենի ատենուն թիւով 36 տեսակ սարքաւորում ունին, իւրաքանչիւրը *Գիր տարւոյ* անունով ատի մը ասկ: Ամէն տարի ունի իր գիր տարւոյն եւ այդ տարւան տօները նշանակուած են նոյն գիր տարւոյն ասկ:

Գիր տարիներու յաջորդութիւնը՝ այբուբենական շարքին համեմատ չըլլար: Երբ Յուլեան (հին) տօնարին կը հետեւեալինք, անոնց շարքը նշուած էր տօնարին մէջ 532 տարւան մշտնջենական ցուցակով մը, որուն լրանալէն յետոյ կը սկսէր սկիզբէն: Բայց երբ Գրիգորեան (նոր) տօնարը ընդունուեցաւ այդ շարքը այլեւս անպէտ դարձաւ:

Ներկայիս Չասկի օրուան միջոցաւ կրնանք նշել գիր տարւոյն, որովհետեւ Չասկի տարւոյն 36 օրերէն մէկուն պիտի զուգադիպի անպայման, սկսած Մարտ 22էն մինչեւ Ապրիլ 26:

Ուրեմն կարելորն է Չասկի օրը նշել:

Չասկի օրը կը նշուի հետեւեալ կերպով.

Տարեթիւին 19ով մնացորդը՝ *ա*, 4ով մնացորդը՝ *բ*, 7ով մնացորդը՝ *գ* կը սեպենք:

*ա*ի 19 անգամին վրայ 24 աւելցնելով 30ի կը բաժնենք եւ մնացորդը *դ* կը սեպենք:

*բ*ի կրկինը, *դ*ի 4 անգամը, *դ*ի 6 անգամը եւ 5 գումարելով 7ի կը բաժնենք եւ մնացորդը՝ *ե* կը սեպենք:

Չասկի օրն է 22+*դ*+*ե* Մարտ, իսկ երբ այս թիւը 31էն մեծ ըլլայ՝ 31 պակսեցնելով Ապրիլ (կամ *դ*+*ե*-9 Ապրիլ):

Օրինակ 1939ի:

1939-ի 19-ով մնացորդը՝ 1=*ա*:

1939-ի 4-ով մնացորդը՝ 3=*բ*:

1939-ի 7-ով մնացորդը՝ $0=7$:

$(1 \times 19) + 24 = 43$, որուն 30-ով մնացորդը՝ $13=7$:

$(2 \times 3) + (4 \times 0) + (6 \times 13) + 5 = 89$, որուն 7-ով մնացորդն է $5=6$,
 2ասկի օրն է $22 + 13 + 5 = 40$ Մարտ, որ 31էն մեծ է, ուրեմն կո-
 գայ $40 - 31 = 9$ կամ $13 + 5 - 9 = 9$ Ապրիլին:

Ուրեմն 1939 տարւոյ տօները պիտի նշենք Ապրիլ 9-ին 2ասկի ցոյց
 տուող զի տարւոյ տակ նշանակուած ցուցակին համեմատ:

Անկախ ասոնցմէ, երբ 2ասկի քուականը վերոգրեալ կերպով կը
 նշդենք, գլխաւոր տօներու մեծագոյն մասին օրերը կրնանք նշդել ըստ այնմ:

Ունինք 1. Անշարժ տօներ, որոնք կապուած են Քրիստոսի ծննդեան
 հետ: Ասոնք են. Ս. Ծնունդ՝ Յունվ. 6. Տօն անուանակոչութեան՝ Յունվ.
 13, Յովնաննու Կարապետ՝ 15, Տեառնընդառաջ՝ Փետր. 14, Աւետում՝ Ապ-
 րիլ 7, քնծայում Ս. Աստուածածնի՝ Նոյեմ. 21, Յղութիւն Ս. Աստու-
 ածածնի՝ Դեկտ. 9:

2. 2ասկին կապուած շարժական տօներ. ասոնք են. 2ասկէն 7 շաբաթ
 առաջ՝ բուն Բարեկենդան. Բարեկենդանէն 15 օր առաջ՝ Շք. օր՝ Ս.
 Սարգիս, Բարեկենդանի նախորդ շաբթուան Գե. օրը Ղեւոնդեանց Բա-
 հանայից եւ Նե. օրը՝ Վարդանանց Զօրավարաց: Մեծ պահոց Ա. Կի-
 րակին՝ Արտաման, Բ. Կիրակին՝ Անառակին. Գ. Կիրակին՝ Տնտեսին, Դ.
 Կիրակին՝ Դասաւորին եւ ասոր նախորդ Շք. օրը՝ Քառասուն Ման-
 կունք, Ե. Կիրակին՝ Գալստեան եւ ասոր նախորդ Շք. օրը՝ Գրիգոր Լու-
 սաւորիչ մուտն ի վիրայ, Զ. Կիրակին՝ Ծաղկազարդ եւ ասոր նախորդ
 Շք. օրը՝ Յիշատակ Ղազարու Յարութեան, Ծաղկազարդի յաջորդ Նե. օրը՝
 Յիշատակ Ընթրեաց եւ Ոսկրուայ, Ուր. օրը՝ Յիշատակ Զարչարանաց եւ
 Թաղում Շք. օրը՝ Ճրագալոյց: 2ասկիին յաջորդող Ա. Կիրակին՝ Նոր
 Բ.՝ Աւետարանագրութեան կամ Կանաչ, Գ.՝ Կարմիր, Դ.՝ Ներեման հաջ.
 2ասկէն 40 օր յետոյ Նե. օրը՝ Համբարձում. ասոր յաջորդող Ա. Կիրակին՝
 Նրկորդ Ծաղկազարդ եւ Բ. Կիրակին—2ասկէն 50 օր յետոյ—Հոգեգա-
 յուտ: Հոգեգալուտէն 7 շաբաթ յետոյ Կիրակի օր՝ Վարդավառ: Հոգե-
 գալուտին յաջորդող Կիրակին՝ Նդիա Մարգարէ, ասոր յաջորդող Բե.
 օրը՝ Հովնատեանց, Գե. օրը՝ Գայեանեանց եւ Շք. օրը՝ Գրիգոր Լուսա-
 ւորչի ելն ի վիրայէն, Հոգեգալուտէն 2 շաբաթ յետոյ Կիրակի օր՝ Տօն
 Կարողիկէ Ս. Էջմիածնի: Հոգեգալուտէն 27 օր յետոյ Շք. օր՝ Գիւտ Նշխ-
 արիգոր Լուսաւորչի, Վարդավառէն 17 օր առաջ Նե. օր՝ Սահակ Մես-
 րոպ:

3. Մօջաւոր Կիրակիի կապուած տօներ. Վերափոխումն Ս. Աստու-
 ածածնին Օգոստ. 15ի մօջաւոր եւ հաշվեացը՝ Սեպտ. 14ի մօջաւոր Կիրա-
 կին, այսինքն երբ Օգոստ. 15ը կամ Սեպտ. 14ը Բե. Գե. Գե. օր գան՝ նա-

խորդ կիրակին, իսկ երբ Եւ. Ուր. Շք. օր գան՝ յաջորդ կիրակին կը սօնուին: Խաչվեացեան 2 շաբաթ յետոյ՝ կիր. օր՝ Վարազայ Խաչ է, իսկ 3 շաբաթ յետոյ՝ կիրակի օր՝ Գիւտ Խաչ, Վարազայ Խաչէն 13 օր յետոյ՝ Շք. օր՝ Թարգմանչաց սօնն է (Մշակոյթի օր):

Նոյեմբերի երրորդ կիրակին՝ Բարեկենդան Յիսնակաց: Նոյեմբերի չորրորդ կիրակիէն վերջի Շք. օրը՝ Թաղեռու, Բարբողիմէոս: Դեկտ. ի երկրորդ կիրակի օրը՝ Բարեկենդան Ս. Յակոբայ, ասոր յաջորդող Շք. օրը՝ Ս. Յակոբ, որուն կը յաջորդեն ըստ յարմարութեան՝ Դաւիթ Մարգ. Էւ Յակոբ առաքեալ, Ստեփաննոս, Պօղոս Էւ Պետրոս, Յակոբ Էւ Յովնաննէս: 8.

ԿԻՍՍԴԵՄՔԻ ԳԱՂՏԵԻՔՆԵՐԸ

Մարդկային դէմքը գաղտնիքով լեցուն է: Կեանքը մանկուտեան անբիծ դէմքին վրայ դիմակ մը կը դնէ. սառապանքի, կեղծաւորութեան. շինծու կամ իրական գուարբութեան դիմակ. կամ հեզմանքի, անբափանձելի ու պաղ դիմակ: Կերպարանքը այս կերպով կրնայ սեղ կամ խաբել: Արտաքին նշանները ուրեմն չեն յայտնէր էակներու հոգւոյ որակը, որ փոքրուած է պատրոկ գծերու սակ:

Բայց կիսադէմքը դէմքին նման լաւ չի կրնար դիմակաւորուիլ: Ան է որ ցոյց կու տայ մարդուն նեղրիտ նկարագիրը: Նախանձը կը մասնուի անկիւնները վար իջած շրթունքներ, ննչուած ունգունքներ կ'արտացոլայ պաղ ծաղրանք մը: Շահախնդիր Է վարձկան մարդոց շրթունքները սեղմուած, վերի շուրթը երկարած Է աչքը կէս մը փակուած կ'ըլլայ:

Մտին խորը պակաս գորով կը կենայ այն կնոջ, որուն կիսադէմքը խօսակցութեան ընթացքին այս նկարագիրները կը մերկացնէ:

Քիչը աւելի շահագրգիռ է. Քիչ մը մեծ էքի մը, որ կը տարածուի Է կ'երկարածուի բերանին վերեւ, ցոյց կու տայ յանդուգն ու ինքնասէլայ միտք մը: Իր օրինակը Է իր շրջապատը պիտի ցոյց տան քէ այս համակրելի գործարանը ունեցողին մտաւոր կարողութիւնները ի՛նչ ուղղութիւն կ'առնեն:

Մեծ բերանները լաւ նկարագիրի մը յայտարարն են. Կին մը որ կը խնդայ անխարդախ մեծ բերանով մը, ցոյց տալով իր ակուսները, վստահութեան արժանի է: Շատ փոքրիկ բերանէն է որ կը բափին բքու խօսքերը Է շնական դատողութիւնները: Լաւ է ուսումնասիրել մարդոց երկու կիսադէմքը, ցոյց տրուած անկանոնութիւնները յանախ կը մասնեն դժգոհ միտք մը:

ՀԱՒԿԻԹ՝ ՉԵՐ ՀԱՒԵՐԷՆ

Ընտանեկան սպառուժին համար ձեր հաւերէն հաւիթ ունենա-
նալը զիւրաւ իրականանալի և քիչ ծախքի կարօտ երազ մըն է:

Շատ յաճախ սիրողը, որ կ'առաջադրէ իր պարտէզին մէկ անկիւ-
նը հաւնոց մը տեղաւորել, զանցառութեան կու տայ անհրաժեշտ
զատորոշումը հաւարուծութեան և հաւկիթի արտադրութեան միջև:
Այս երկու բաները պ'յնքան մօտ կ'երևին իրարու: Արդ, ի՞նչ կը պա-
տահի յաճախ: Հաւարուծութիւնը, շատ աւելի դժուար, տաղտուկ
կու տայ իրեն և պատճառ կը գառնայ իր մտադրութենէն ետ կենա-
լուն: Ասիկա վրիպում մըն է որ պիտի չպատահի՝ եթէ դժուարու-
թիւնները նկատի ունենալով միայն հաւկիթի արտադրութեան ձեռ-
նարկուի, որ միանգամայն հաւեր ուտելու հնարաւորութենէն չի
զրկեր:

Նոյնիսկ միայն հաւկիթի արտադրութեան համար ալ պէտք է
զատորոշում մ'ընել. երկու սարքաւորում պէտք է, որոնցմէ մէկը
ընտրելու է, կամ կիրարկելու է յաջորդաբար:

1. ՊՍԻՉ ՀԱՒԵՐԷՆ. — Սեպտեմբերին կէս երկոտանեակ մը վա-
ռեկ գնեցէք՝ պատրաստ Հոկտեմբերին ամելու, տեղաւորեցէք հաւ-
նոցին մէջ՝ որուն շուրջ պէտք է կենայ փոքրիկ մակատեղի մը՝ վան-
դակապատուած, Ածէ զադրողները մորթեցէք: Եթէ ալ հաւ չմնայ ա-
մառուան վերջը, 5—6 շաբաթ հաւնոցը պարապ թողէք՝ հիմնապէս
զայն կարենալ հականեխելու համար, նոյնպէս մակաղատեղին, և
Սեպտեմբերին վերսկսեցէք:

Այս դրութիւնով՝ մորթուած հաւերուն միսին փոխարժէքով նսլ
հաւ կը գնուի և ստացուած թարմ հաւկիթին արժէքն ալ անոնց սը-
նընդեղէնի և պահպանման ծախքերուն կը բաւէ. նոյնիսկ հաւնոցին
չինութեան ծախքն ալ կ'ապահովէ:

2. ՉՈՅԳ ՀԱՒԵՐԷՆ. — Երբ աւելի մեծ հողամաս մը տլամադրե-
լի է — բաւական տասնեակ մը հաւի և քաղաղի մը — առաւելու-
թիւն մըն է մակաղատեղը բաժնել երկու հաւասար մասի և զոյ՞ք
հաւնոց չիւնել:

Այս դրութեան շնորհիւ հականեխելու համար հաւնոցը զատաբ-
կելու պէտք չի մնար, նախ մէկ հաւնոցը և մակաղատեղին կը հակա-
նեխուի, հաւերը հոն կը փոխադրուին, և ապա միւսը, իսկ պարապ
մնացած մակաղատեղին կարելի է փորել և շուտ հասնող կանաչեղէններ

րու և հացահատիկի մշակութեան յատկացնել՝ հաւերուն սննդեան համար:

Այս դրութիւնով ազատ կը մնանք լաւ ածող հաւերը մորթելու ստիպումէն, որոնք յաջորդ տարին եւս գոհացուցիչ արդիւնք կը խոստանան:

Քիչ արտադրող հաւերը փոխարինելու համար կարելի է Ապրիլին թուխս մը դնել եւ վառեակներէն լաւագոյնները Սեպտ.— Հոկտեմբերին ածողներուն վրայ աւելցնել:

Եթէ թուխս դնելու եւ վառեակները պահելու ձանձրոյթը յանձն առնել չուզուի, լաւագոյն է Սեպտ.ին ածող հաւերուն պակասը լրացնել՝ վառեակներ գնելով:

Ի՛նչ միջոց ալ որդեգրուի, պէտք չէ մոռնալ որ նոյնիսկ լաւագոյն ածողները, պէտք է երկու տարի յետոյ մորթել: Երրորդ տարին այլեւս քիչ կ'ածեն եւ արդիւնքը ծախքը չի գոցեր:

ԻնՉՊԷՍ ԸՆՏՐԵԼ ԱՄՈՂ, ՀԱԻԸ.— Տեսակ տեսակ հաւերու անուն կը տրուի իբր լաւ ածող, որոնք սարեկան նուազագոյն 100 հաւկիթ կ'ածեն: Սակայն ամէն շրջանի մէջ ալ տեղական լաւ հաւեր կարելի է գտնել, եւ ասոնք այն առաւելութիւնը կ'ունենան որ կլիմային վարժուած են: Եթէ անոնց առողջութեան ինչամք տարուի, անոնց արտադրութիւնը կ'աւելնայ:

Փորձառութիւնը ցոյց կու տայ որ լաւ ածող հաւերուն մարմինը յառաջացած է, գլուխը նուրբ, թաթերը մերկ, պոչը եւ թռիչները լաւ փետրաւորուած: Գիտութեան օգնութիւնով կը տեսնենք որ լաւագոյններն են անոնք՝ որ յարաբերաբար աւելի խոր եւ աւելի լայն կուրծք ունին եւ երկար իրան. նոյնպէս լաւ են այն հաւերը որոնց լանջուակրի կատարը յարաբերաբար երկար է և իր յետոյքը կոնքի ոտկրէն շատ բաց է: Աչքի հարուած մը բաւական է դանոնք ձանչնալու համար: Եթէ անոնք ածի շառութեան ախոյսանութիւնը չչանին՝ առնուազն կ'ապահովեն կանոնաւոր արտադրութիւնը:

ՍՆՆԴԱԿԱՆՈՆԸ.— Որպէսզի հաւ մը լաւ ածող ըլլայ, բաւական չէ միայն զայն կերակրել, նոյնիսկ առատօրէն, պէտք է որ անոր տրուած սնունդը պարունակէ հաւկիթներու կազմութեան համար անհրաժեշտ բոլոր տարրերը բաւարար չափով:

Երբեմն հաւերուն կը տրուէր միմիայն հատիկ. այս դրութիւնը դեռ շատ յաճախ կը կիրարկուի: Իրաւ է որ հատիկը լաւ կը սնուցանէ հաւը և թոյլ կու տայ որ ան ածի ու առողջ մնայ, բայց ան չի պարունակեր հաւկիթի կազմութեան անհրաժեշտ բոլոր տարրերը:

Հաւերու սննդականոնը՝ միայն մեծ հաւարոյձներու յատուկ չէ,

ան հաւասարապէս կը պատշաճի որ և է թիւով հաւ պահողներու և առատ հաւկիթ ստանալու համար ընդհանուր անհրաժեշտութիւն մըն է: Եթէ նոյնիսկ քանի մը հաւ միայն ունիք, մի վարանիք այս սը- նընդականոնը կիրառելու, որպէսզի եղանակին կարենաք ստանալ իւ- րաքանչիւր հաւէ գէթ երկու օրը մէկ հաւկիթ:

Այս սննդականոնը երեք տեսակ տարրեր նկատի ունի. հաւիկ, կա- նաչ և խմոր. և ասոնցմէ ոչ մէկը եփելու պէտք ունի:

Հաւիկ.— Երկու տեսակ հաւիկ պէտք է տալ, կակուղ և կարծր: Կակուղ հատիկը վարսակն է, որ լաւ է տալ քիչ մը ծլած վիճակի մէջ: Կարծր հատիկներն են պղտիկ ցորեն, գաւարս (ղեղին խոշոր կորեկ= սարը սարը) և եգիպտացորեն: Յորենը պէտք է ղատել՝ ղայն մաքրե- լու համար օտար և շատ անգամ վաւանգաւոր նիւթերէն: Գաւարսը այդ անպատեհութիւնը չունի: Գաւարսը և ցորենը պէտք է ծեծել՝ իւրաքանչիւր հատիկը 2—3 մասի բամբելով: Վարսակին հետ պէտք է տալ այս երեք կարծր հատիկներէն մէկը: Կարծր հատիկները մարսողական գործարանի կազմութեան տեսակէտով անհրաժեշտ են:

Կանաչ.— Սկզբունքով հաւերուն տրուելիք կանաչը պէտք է բաղկանայ քառորդ մասով կաղամբէ, քառորդ մասով առուոյտէ և կէս մասով թարմ խոտէ: Չմեռը, երբ կանաչ առուոյտ և խոտ կարե- լի չէ գտնել, ասոնց չորերը գաղջ ջուրի մէջ թրջելէ յետոյ պէտք է տալ: Հաւ պահողները պէտք է ձմեռուան համար կաղամբի պահեստ մթերեն: Կաղամբը կը հայթայթէ հաւկիթի կազմութեան մէջ զլխա-ւոր տեղ մը գրաւող ծծումբի գլխաւոր քանակը, ինչպէս նաև փետու-րի և եղջերաւոր մասերու կազմութեան մէջ դեր կը խաղայ, որով ան- հրաժեշտ է հաւին:

Խմոր.— Մուռնդէ աւելի ամելու համար էական տարր մըն է խը- մորը, որ պէտք է խնամքով բաղադրուած և չափաւորուած ըլլայ:

Բազմաթիւ ծանօթ տարազներու մէջէն լաւագոյններէն է. հա- րիւրին 17 աղացուած վարսակ, 17 աղացուած եգիպտացորեն, 16 առ- ուոյտի ալիւր, 10 միսի ալիւր, 18 ցորենի թեփալիւր, 18 ցորենի հաստ թեփ և 4 ոստրէի փոշիացած խեցի:

Առանուրդը պէտք է տրուի չոր կամ քիչ մը ջուր աւելցնելով: Ձմեռը գաղջ ջուր: Կարելի է խեցիին վրայ աւելցնել քիչ մը բարակ մանրախիճ և փոշիացած փայտածուխ:

Կերակուրի ժամանակը.— Առաւօտը տուէք ծլած վարսակ, ժամը 11ի ատենները խմորը և ըստ եղանակի թառելէն մէկ երկու ժամ ա- ռաջ կարծր հատիկ: Գալով կանաչին, որ պէտք է ըլլայ թարմ և ա- ռատ, պէտք է ամէն ատեն թողուլ անողներուն տրամադրութեան

տակ, կարելի է նոյնիսկ խոնաւ խմորին մէջ աւելցնել ջարդուած կանաչ:

Չափը.— Յուրտ եղած ատեն ձեր ածողներուն տուէք յաւելուածական հասիկ, յատկապէս եգիպտացորեն, հաւասարապէս շատցուցէք խմորի քանակը: Երբ տաք կ'ընէ հատիկները պակսեցուցէք: Լրիւ ածի ատեն, բացի խոնաւ խմորէն չոր խմորը ձգեցէք ածողներու տրամադրութեան տակ: Միջանկեալ եղանակներուն տուէք ըստ այնմ և աստիճանական պելցուցէք կամ պակսեցուցէք չափերը, որովհետև յանկարծական փոփոխումները ածին կը վնասեն:

Առողջապահութիւն.— Հաւերու առողջապահութիւնը բարդ չէ կարելի է բառի մը մէջ ամփոփել. մաքրութիւն: Մաքրութիւնը կարելի է դիւրաւ ստանալ պարզ սարքաւորումի մը մէջ: Աղբերը շաբաթը անգամ մը վերցուցէք. հողը մաքրել՝ ցանելով փայտի սղոցուք, աւաղ և մոխիր: Հաւնոցին ներսը ծեփեցէք կիրով և ժամանակ առ ժամանակ մէջը ծծումբ վառեցէք:

Ռ Ո Մ Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ի Ն Ի

Անա գիւնի ռումանկան.
Ու սեղանս է արեւալիւր,
Եւ խուցիս մէջ խոնարհ այնքան՝
Վարս կը հագնի ամեն մի իր:

Կը խմեմ զայն ես քաւ քաւ
Եւ կը բացուի մէջս ամեն դուռ,
Եւ այգիներ լուսամեծաբա
Ինձ կը բերեն կուժ կուժ համբոյր:

ձոխ այգիներ՝ որոնց սրւից
Աստղերն իրենց կարը վրնիս,
Չոր օրեցիկն հովերը վից
Ու երկինգն ալ շնորհեց օտիս:

Կը յետ ծիծաղն հնձանցերուն,
Խաղողը երբ կ'առեւանգեն,
Երբ սաքն առած՝ լոյս կը լընուն,
Երբ կ'առնեն բոցն անոնց կուրծքէն:

Կը կախուեն դեմքս. կարծես,
Բիւր աղջիկներ քայլով քրնար,
Ու կը նեճեն խնդումբես
Բաժակիս մէջ մեղր ու շաքար:

Բաժակիս մէջ ծաղիկներ կան,
Հալած երգեր, ծրփուն ծափեր.
Ամբողջ երկիր մ'ասպեսական
Իմ գինիս մէջ է քափեր:

Տանելով զայն իմ օրունցիին՝
Ես կը գրկեմ հողն այս բարի,
Ու արբեցած ու ժպտագին
Ու քեւաւոր կ'ելլեմ պարի...:

ՀԱՅԿԱՍԿԱՆ ԽԱԶԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Հայկական խաղերու՝ ինչպէս նաև շարականներու ուսումնասիրութիւնը՝ Հայ բանասիրութեան մէջ մինչև օրս մեծ բաց մը թողած է: Ասոր պատճառը ոչ այնչափ կարևոր բանասէր դէմքերու պակասն է եղած՝ որչափ պահանջուած բաւարար աղբիւրներու չգոյութիւնը:

Մեր հին մատենագրութեան Հաղարամեայ ընդարձակ շրջանին՝ միայն Կիրակոս Գանձակեցի* (1250) ակնարկութիւն կ'ընէ Հայկական խաղերու մասին, յիշելով այս առթիւ Խաչատուր Տարօնեցին, որ Մեծ Հայաստանի մէջ չըլելով՝ կը տարածէր նորահնար խաղերը ժողովուրդին մէջ:

Աղբիւրներու չգոյութեան այս պարզան նկատի առնելով՝ Հայկական խաղերը ուսումնասիրողին առջև կը բացուի լայն ասպարէզ մը, որ իր ընդարձակութեան չափ անմշակ է, ուր թաղուած են ստուգիւ անգին գանձեր:

Յաջորդով պիտի ներկայացնենք ընդհանուր գծերով ազգային հեղինակներու մինչև օրս կատարած ուսումնասիրութիւնները Հայկական խաղերու շուրջ:

* * *

Խաղերու քննութեամբ առաջին զբաղողը մեր մէջ եղած է Գրիգոր Դպիր Գապասաբալեան, որ 1803ին Կ. Պոլիս հրատարակուած «Գիրք երաժշտական» անունով փոքրիկ հատորի մէջ կ'ամփոփէ հայկական, յունական և պարսկական խաղագրութեան և երաժշտութեան հայող կարեւոր տեղեկութիւններ, հարցումով և պատասխանով (գրաբար):

Հայկական խաղերուն համար մեծ բաժին մը յատկացուցած է (ցերուցան էջերու մէջ), ուր կը խօսի յաճախ խաղերու անուններուն՝ տեսակներուն, թիւերուն և նշանակութեան վրայ: Այս վերջնոյն հար-

*) Հմմտ. Կիրակոս Գանձակեցի. «Համառոտ Պատմութիւն Հայոց» Տպ. Վեներիկ:

մար տուած մեկնութիւնները դժբախտաբար մեծ մասով աղօտ եւ անհասկնալի են: Բայց այսուհանդերձ՝ իր տեսակին մէջ — իրրե առաջին հնագոյն գործ — խաղաղիտական ընդհանրութեան համար կարեւոր աղբիւր մըն է Գապասաքալեանի այս գործը:

Ժամանակագրական կարգը պահելով՝ երկրորդ անգամ խաղերով հետաքրքրուողը կրնանք համարել Համբարձում Լիմոնեան (1768-1839), որ աւելի Պապա Համբարձում անունով ծանօթ է: Իրեն համար կ'ըսուի թէ շարականի խաղերուն վրայ այնպիսի հմտութիւն մ'ունէր, որ անոնց ելեէջէն ու ձեերէն կը կռահէր մերձաւորապէս նախնական եղանակը և այսպէս կը կենդանացնէր հին եղանակներէն շատերը* Լիմոնեան սակայն, որ գրաւոր տեսութիւն մը չէ թողած խաղերու իր անձնական մեկնութեան մասին, ոչ իրրե խաղերու մասնագէտ բանասէր, այլ իրրե հայկական նո՛ր խաղերու հնարիչ կ'անմահացնէ իր անունը: Հայկական խաղերու ուսումնասիրութեան մէջ՝ իր դերը լոկ ա՛յն է, որ անոնց հաստատուն նշանակութիւն տալու և զանոնք ընդհանուր գործածութեան մատչելի ընելու համար՝ կը հնարէ իր նոր Չայնագրութիւնը:

Խաղերու լուսարանութեան շուրջ թանձրացեալ արդիւնք մը ունի Եղիա Մ. Տիսեսեան՝ Գապասաքալեանէ յետոյ: Սա հմուտ նոր հայկական եւ եւրոպական ձայնագրութեան և ըլլալով միանգամայն քաջ շարականագէտ և պաշտպան ազգային երաժշտութեան հոգւոյն, իր ժամանակի (19րդ դարու վերջին կէսին) հմտագոյն դէմքն էր, որ հայկական եկեղեցական երգերու և խաղերու քննութիւնը նիւթ ընտրելով, զանազան պարբերաթերթերու մէջ կը հրատարակէ անոնց մասին կատարած իր լուրջ խուզարկութիւններուն արդիւնքները: Երաժշտագիտական ցիրուցան այդ յոգուածները յետոյ մէկ հատորի մէջ ամփոփելով՝ «Նկարագիր Երգոց Հայաստանեայց Եկեղեցւոյ» անունով կը հրատարակէ ի Կ. Պոլիս (1874): — «Կուսումնասիրէ նաև հայկական ութ ձայներն ու երաժշտական չափերու ամանակները, որոնք օգտակար են մեր խաղերու լուսարանութեան վերջնական գործին», ինչպէս կը գրէ երաժշտագէտ Հ. Դ. Տայեան**:

Աւելորդ կը համարինք յիշել հոս՝ Տնտեսանի ժամանակակից ուրիշ հայ երաժշտագէտներ, տիրացուներ, որոնք մասնաւոր արդիւնք մը չեն ունեցած շարականներու և խաղերու լուսարանութեան խնդրոյն մէջ: Ատոնց կարգէն է նաև Նիկողայոս Թաշեան, որ իրրե Պապա Համ-

*) Բագուավեպ 1873:

**) Բագուավեպ 1933, էջ 6

բարձուձի գիւտին զարգացնող և էջմիածնի Շարակնոցի խաղազրո՞
յաւերժացուցած է իր անունը:

Հայկական խաղերու և եկեղեցական երգերու կանոնաւորման հարցով զբաղած է նաև Վիեննայի Մխիթարեաններէն՝ Գերպ. Հ. Արսէն վրդ. Այսրնեան (1825—1902): Իբր այսպիսի ծանօթ է ան աղբայրին մամուլին: Օրինակ մը միայն, էջմիածնի կաթողիկոսական պաշտօնական ամսագիրը «Արարպտ» կը գրէ* — Առանձնապէս զնահատութեան արժանի է այստեղ անոր (Այալնեանի) այն ձգտումը՝ որով ձգտել է հայ-եկեղեցական երգեցողութիւնը զտելու օտարամուտ օտարերից և կանոնաւորելու»: Ցաւալի է սակայն, որ Այալնեան հայ-եկեղեցական երգերու, ինչպէս նաև խաղերու իր քննութեանց և կարծիքի մասին՝ զբաւոր աւանդ մը չէ թողած մեր ձեռքը:

Խաղերու ուսուցմասիրութեան պատմութեան մէջ, յիշատակութեան արժանի զիրք մը կը գրաւէ իր մասնաւոր տեսութեամբ՝ Իգնատիոս Կիւրեղեան Գերապոյժառ, (1833—1921) որ 1900—1904 շրջանի «Բաղմալէպ»-ի մէջ կը հրատարակէ «Ուսուցմասիրութիւն Շարականաց Խաղից» վերտառութեամբ յօդուածաշարք մը**, ուր առաջին անգամն ըլլալով — մեր մէջ — կը յայտնէ կարծիքը, թէ հայկական խաղերը ծագած ըլլան Լատիններու Գրիգորեան խաղերէն (Neuma), և այսու լուծած կ'ուզէ ըլլալ խաղերու կնճռոտ առեղծուածը: Այս մեկնութիւնը սակայն ընդունելութիւն չէ գտած և կը մնայ լոկ ենթակայական կարծիք: Կիւրեղեանի առընթեր յիշելու է հոս 1900 թուականի Գահիրէի քեմիկ դպրապետը որուն խաղերու վրայ ունեցած կարծիքը, զետեղած է Կիւրեղեան իր աշխատութեան սկիզբը: Ասոր համաձայն խաղերու գիւտը Ս. Մեսրոպ կատարած է երկնային յայտնութեամբ ըստ այսմ կ'որոշէ նաև անոնց յառաջագայութեան ժամանակը և կու տայ մեկնութիւններ, որ շատ խնդրական և տեղ տեղ անհիմն են:

Հայկական առողջանութեան խաղերու (ըութ, շէշտ, պարոյկ, սուղ և երկար ' ' ° °) միակ մասնագէտ կարելի է համարել երգահան և երաժշտագէտ բանասէր՝ Սպիրիդոն Մելիքեան (1880-1933) Պերլինի մէջ առած իր կրթութիւնը և կոմիտաս վարդապետի ձեռնհաս աշակերտ, որ իր համալսարանական աւարտաճառով (Dissertation) ուշադրաւ

* «Արարտ» ամսագիր (էջմիածին) 1902 էջ 680:

** «Բաղմալէպ» 1900 էջ 49, 159, 259, 418, 460, 546, 1903 էջ 315
Եւ 1904 էջ 126:

և հիմնաւոր լուսարանութիւններ կատարած է յիշեալ խաղերու մասին*:

Չանց առնելով յինքեան մեծ արժէք չներկայացնող ուրիշ մի քանի ուսումնասիրողներ, յիշենք ի վերջոյ հայկական խաղերու եւ Շարականներու քննութեամբ զբաղող ամէնէն աչքառու և վերջին դէմքը՝ ԿՈՄԻՏՍՍ ՎԱՐԴԱՊԵՏ (1869—1935):

Կոմիտաս՝ մեր ազգային երաժշտութեան պատմութեան մէջ յայտնութիւն մըն է, որ գլխաւորաբար երեք հսկայ գործերով կ'անմահացնէ իր անունը: Եւ արդարեւ իրե՛ն վիճակուած էր նաև հայկական խաղերու վերջնական լուծումը, եթէ չընդհատէր անոր գործունէութիւնը քստմնելի հիւանդութիւն մը, որուն բեռան տակ 20 տարի առաւպեցաւ մեր տոհմային երաժշտութեան այդ հերոսը:

Օտուտած երաժշտական բնատուր ձիրքերով, երաժշտական միջազգային կրթութիւն առած Եւրոպայի լուսաւոր կենդրոն մը — Պերլին—, ուսումնասիրած բոլոր՝ մասնաւորաբար արեւելեան ազգերու երաժշտութեան ոճն ու հոգին և բաղդատելով զանոնք մերինին հետ, երևան հանած էր տարբերութեան այնպիսի եզրներ, որոնցմով կ'ապացուցուէր մեր ազգային երաժշտութեան ինքնուրոյնութիւնը: Մինչև Կոմիտասի յայտնութիւնը Հայուն երաժշտութիւնը կը նկատուէր խառնուրդ կամ մաս արարական, իրանական և այլ զբացի ազգերու երաժշտութեան: Բայց Կոմիտաս կը ցրէ այս թիւր կարծիքը, և շրջելով ամբողջ Եւրոպա՝ նուազահանդէսներով ու բանախօսութիւններով կը հաստատէ, թէ «Հայն ալ ունի իր տոհմային սեփական երաժշտութիւնը», այնպէս անկախ օտար ազգերու երաժշտութենէն, ինչպէս իր զիրն ու լեզուն: Կոմիտաս վարդապետի երաժշտական գործունէութեան ամէնէն կարեւոր կէտն է այս:

Անոր երկրորդ կարեւոր գործը եղած է՝ Հայ ժողովրդական երգերու ուսումնասիրութիւնն ու հաւաքումն: Անձամբ շրջելով Հայաստանի գլխաւոր քաղաքներն ու գիւղերը՝ գրի առած է ուղղակի հայ գեղջուկին բերնէն անոր երգերը, որոնց մերձաւոր թիւը 3000 է կը հասցնէ. բայց ափսոս որ անոնց մեծ մասը անյայտացած է Պոլսոյ մէջ և հազիւ 300 հատ կորուստէ փրկուած են այսօր**:

*) Տե՛ս իր աւարտանախն մաս մը «Արարատ» ամսագրի մէջ 1902, էջ 685—698 «Մեր առողջանութեան խաղերը»...:

**) Սպիրիդոն Մելիքեան, «Կոմիտասի սեղծագործութիւնների Անալիզը», Երեւան, 1932, էջ 3:

երգերու ուսումնասիրութեանց մէջ զմեզ շահագրգռող կէտը այն է, որ նա սոյն երգերը ուսումնասիրած ատեն՝ եկեղեցական երգերու մասին ևս լուսաբանութիւններ կատարած է, այնու որ ժողովրդական երգերու պարզութիւնը հիմ առնելով՝ շարականներու մէջ յաճախուած շատ մը երկպարաձիգ և տաղտկալի խաղեր (Melisma) օտար երաժշտութեան և անուսում տիրացուներու քմահաճոյքի արդիւնք նկատած է*:

Անցնինք այժմ Կոմիտասի վերջին և երկու նախորդներուն թագն ու պսակն ըլլալիք գործին, որ աւա՛ղ, կիսաւարտ մնաց, Ա.յս՝ վերը յիշուած Հայկական խաղերու լուսաբանութեան կննդոս հարցն եր: Կոմիտաս այս հարցին գոհացում տալէ ետք միայն պիտի լրացընէր իր առաքման պաշտօնը: Եւ արդէն զիտակից իր կոչման՝ դեռ շատ կանուխ կը սկսի՝ այդ «տաժանագին» ուսումնասիրութիւնները — ի՛ր բարով—, որոնց վրայ 16 տարուան ջանք և ժամանակ կը սպասէ: Եւ 16 տարիներու այս խուզարկութիւնը առանց արդիւնքի չի մնար. կը գտնէ անծանօթ խաղերէն շատերուն բանալին և յոյս կ'ունենայ ի մօտոյ մնացածներն ևս լուծել և հրապարակ հանել այսպէսով 1000 ամեայ՝ աննախընթաց յայտնութիւն մը: Ըսենք ի՛ր իսկ խօսքերը**.— «Իրաւ է, ես գտել եմ հայ խաղերի բանալին, և նոյն իսկ կարողմ եմ պարզ գրուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ հասել, զի իւրաքանչիւր խաղի խորհրդաւոր իմաստին համար, նոյնիսկ տասնեակ ձեռագիրներ պրպտելով՝ երբեմն ամիսներ են սահում. իսկ ձեռքիս տակն եղած խաղերը, այն էլ անուն ունեցողները՝ 198 հատ են առ այժմ. մի կողմ թողնենք դեռ անանուն խաղերը, որոնք խիստ շահեկան են»։ Ապա կը շարունակէ. «Թող հայ հասարակութիւնը ներող՝ համբերող լինի, մինչև որ հնարաւոր չափով կատարելապէս վերջացնեմ իմ տասնեակեցամեակից աւելի տեղող տաժանագին ուսումնասիրութիւններու»։ Յոյս ունիմ որ մօտիկ ապագայում առանձին հատորներով՝ հասարակութեան սեփականութիւն կը դառնայ» խաղերու գաղտնիքին լուծումը:

*) Կոմիտաս եկեղ. երգերու կննդութեան համար՝ ժողովրդական երգերու համեմատական համբան շատ ուղիղ կ'ընտրէ. վասնզի Միջին Դարու Երջանի՝ Հայաստանի մէջ ժողովրդական երգերը կ'օգտագործուէին եկեղեց. երգերու համար, ինչպէս արժայոյտեցաւ դասախօսութեան առթիւ վիեճակի համալսարանի արեւելեան խաղերու մասնագէտ ուսուցչապետ Egon Wellesz:

***) «Տաճար» 1910, էջ 311:

նոստացուած հատորները լոյս չտեսան, վասնզի մտարախու-
թեան անողոքելի հիւանդութիւն մը եկաւ ընդհատել զինք՝ իր գոր-
ծունէութեան ամենարեղուն և ամէնէն խոստացուած շրջանին, կա-
սեցնելով ընդ միշտ իր գործը՝ լոյս տեսնելէ և զինք՝ մաքի գործու-
նէութենէ:

Այս տխուր իրականութեան վրայ կ'աւելնայ և այն պարագան՝
որ անոր երկարամեայ ուսումնասիրութիւններուն ձեռագիրներն ալ
այսօր հեռագուրկ անյայտացած են: «Այս
եղած էր արշիւնքն այն խուչարկութեանց,
որ բաւական թարի առաջ Պոլսոյ (Գում-
Գարուի) Հայ պատրիարքարանի կարգադ-
րութեամբ կատարուեցաւ՝ բացուելով Կո-
միտաս վրդ.ի արկղները... Ո՛րքան օգտա-
կար պիտի ըլլային նոյն խկ անոր կիսաւարտ
մնացած գործերը... որոնք ևս համազգա-
յին տառապանքի պնփոխարինելի զոհերն են
սնչուշտ», ինչպէս կը գրէ Հ. Տայեան*:

Ունինք սակայն ուրիշ բարեղէպ պարա-
գայ: Կոմիտաս վարդապետ իր հիւանդու-
թենէն յառաջ ազգային և օտար մամու-
լին մէջ հրատարակած է հայկական ժողո-
վըրդական և եկեղեցական երաժշտութեան
հայող մի քանի յօդուածներ, որոնք կրնան



Հ. ԳՐԻԳՈՐ ՀԷՊՈՅԵԱՆ

խաղերու և շարականաց քննութեան հա-
մար իբրև ուղեցոյց գործածուիլ: Իբրև այսպիսի յիշենք միայն. «Հա-
յոց եկեղեցական եղանակները» (Արարտ, 1894 էջ 222, 256): «Շա-
րականի խաղերու նշանակութիւնը» (Տանար, 1919 էջ 311): «Հայաս-
տանի ժողովրդական շուրջպարերը» (Թասրոն Էւ Երաժշտութիւն, 1910
էջ 26, 51, նախապէս գերմաներէն հրատարակուած Z. A. Ph. I (1903)
թերթին մէջ:

Գծուած անձուկ սահմանէն դուրս չելլելու համար՝ հարեանցի
յիշենք հոս ի վերջոյ մի քանի սեղիքներ ևս, որոնք կրնան շա-
հագրուել հայկական խաղերով հետաքրքրուողները: «Նշանք հայկա-
կական երաժշտութեան» (Բազմալիկայ, 1887, էջ 315): «Խաղերու գի-
տութիւնը. արեւելեան ընթերցանչանները» թրգմ. Prof. P. Wagnerի


*) Բազմալիկայ, 1933, էջ 10:

մէկ գործին, Բագմալիկայ, 1912 էջ 509, 533), «Հայկական խաղերու ուսումնասիրութիւնը մասնագէտներու կողմէ», (Անդ, 1933 էջ 5—11 Հ. 7. Տայեանէ):

Մեր առաջադրած նպատակը մեզ չի թոյլատրեր մխրճակելու հոս հայկական խաղերու հարցին խորքը, համեմատելու, քննելու անոնց յառաջադայութեան այլազան պարագաները, որոնք ընդարձակագոյն ժամանակի՛ն աւելի խղճամիտ աշխատանքի կը կարօտին:

Ֆիլիպի 1938

Հ. ԳՐԻԳՈՐ ՀԷՊՈՅԵԱՆ
Վ.Ի.ԵՆ. Մխիթարեան



ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՆՇԱՆԵԱՆ



ԶԱՐԵՀ ՊԼՊՈՒԼ



ՕՆՆԻԿ ՄԱՀՏԵՍԵԱՆ

Դ Ա Ս Տ Ի Ս Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Յոռի ու գռեհիկ զգացումներու արտայայտութեանց զսպումը եւ հաճելի ու ազնիւ շարժումներու արտարերումն է:

Դաստիարակուելու համար չի բաւեր գիտակցութեան մէջ լաւին, բարիին, գեղեցիկին ճանաչումը, չեն բաւեր իղձը, զգացումը, խորհուրդը եւ պատահական նոյնիսկ վեհ արտայայտութիւնները: Դաստիարակութիւնը՝ սրտի. հսգւոյ, մտքի, մկանտէնքներու տեւական միօրինակ գործակցութեամբը կ'ապահովուի: Մէկուն կամ միւսին թերացման պահուն, միւսը օգնութեան պիտի հասնի փոխելու համար մտածումի ուղղութիւնը, զսպելու համար զգացումի թափը, խորհելու համար աւելի գեղեցիկը եւ արտայայտուելու համար աւելի շնորհալին ու ազնիւը: Վատ զգացումները տեղի կու տան ազնիւ խորհուրդներու առջև, յոռի մտածումները կը վանուին ազնիւ շարժումներու գրոհին տակ:

Մարդու մարմինը կը թրթռայ ընտելեան եւ ընկերութեան ունէ ազդեցութեան առջև, իբր ամենազգայուն քնար մը, որուն նմանը չէ տեսնուած աշխարհի վրայ, սոյն ազդեցութիւնները առաջ կը բերեն համապատասխան շարժումներ եւ զգացումներ:

Որպէսզի մեր զգացումները գեղեցկանան, պէտք է արտաքին ազդակները բարելաւել, միջավայրը գեղեցկացնել, փախչիլ ստորին զգացումներ զրգռող միջավայրէ, փնտռել անոնք որ ազնիւ տպաւորութիւններ ներշնչելու ընտյժը ունին: Հեռացնել մտքէն ամէն ստորին ու վատ խորհուրդներ եւ ուշադրութիւն դարձնել այն ամէնուն վրայ, որոնք վեհ գաղափարներ կը թելադրեն մտքին:

Մարդկային էակը իր մէջ ունի ուժի անսպառ մթերք մը, զոր պէտք է տնտեսել, օգտակար ընծայել Ամէն դասակարգի ու զրադման տէր մարդիկ ուժ կը վառեն իրենց աշխատութեան համեմատ: Ուժի սպառումը համեմատական է աշխատանքի ծանրութեան հետ: Մեր շարժումները ուժ արժանոսող ծորակներ են, որքա՛ն խմարութիւն է բաց ձգել այդ բացուածքները որպէսզի ուժը վառուի յումթիւնէ բաց ձգել այդ բացուածքները որպէսզի ուժը վառուի յումթիւնէ: Երբ ան կոչուած ունի աշխարհը կերակուր եւ զբախտի վերածելու:

Դերձակը, կօշկակարը, ատաղձագործը, հիւսնը, դարբինը, սափ-
րիչը, նկարիչը, նուագածուէն, երգիչը իրենց արհեստի կամ արուեստի
պահանջած շարժումներով կը յօրինեն առարկաներ և գործիքներ: Ու-
մանք շատ և ոմանք քիչ ուժ կը սպառեն: Ոմանք աւելի ճարտար
են, ոմանք անճարակ, ոմանք յաջողած և ոմանք ձախողած համա-
ձայն իրենց նոյն առարկաները շինելու համար պահանջած շարժում-
ներու նրբութեան, մկաններու վարժութեան և դաստիարակութեան:

Երգիչի մը նագաղի ձայնական լարերու թրթռացումէն մարդիկ
կը հմայուին, կը վերանան, յուզումնալից վայրկեաններ կ'ապրին եւ
խելայեղ ծափահարութիւններով կը վարձաբերեն: Նոյն ձայնական լա-
րերու նրբութիւնը ունեցող գինովի մը պոռչառութիւն ընդհակառակը
մարդիկ կը դայրանան, կը սաստեն, կը յանդիմանեն և երբեմն ալ
կը դիմեն օտտիկաններու միջամտութեան, որովհետեւ անոր ձայնա-
կան լարերու թրթռացումը հաճելի եղանակներ յօրինելու համար
մարդուած ու դաստիարակուած չէ:

Որեւէ մէկուէն բան մը սորվեցնելու համար խրատներ տալը անօ-
գուտ է և անբաւական, պէտք է նպատակին համաձայն շարժումներ
ընել ասոյ Արհեստները կ'իւրացուին իրենց յատուկ օճական շար-
ժումներով:

Աշխարհ բոլորովին տարբեր կերպարանք մը պիտի զգենուը, եթէ
բոլոր մարդիկ իրենց ուժերը տրամադրէին զայն գեղեցկացնելու եւ
բարձրացնելու: Որքա՞ն շատ է թիւը անոնց, որոնք իրենց ուժերը կը
սպառեն աննպատակ, և դարձեալ որքան շատ է համրանքը անոնց,
որոնք գիտակցօրէն իրենց ուժերը կը վատնեն չարիքի, աւերի, սրա-
ծութեան և խռովութեան համար: Այս վերջինները յոռի դաստիարա-
կութիւն ստացողներն են, որոնք ուզողութեան բերելու ջանքերը
անօգուտ կ'անցնին, որովհետեւ արդէն կազմուած նկարագիրները
մարդուած ու սովորութիւն դարձած շարժումները փոխել կամ բարե-
փոխել անկարելի է: Այսպիսիներու չարիքներէն խուսափելու դարձանը
գտած են զանոնք հասարակութենէն մեկուսացնել բանտերու և ար-
գելարաններու մէջ փակելով զանոնք:

Միջին դասը որ ունէ լաւ կամ յոռի դաստիարակութիւն ստացած
չէ և աննպատակ կեանք մը կը վարէ ուժի անօգուտ մտնումով, կա-
րելի է զանոնք ուզողութեան բերել և վերածել օգտակար ազգակի մը:

Մանուէկներն ալ այս դասակարգին կը պատկանին: Երախաները
վարժարան կը յաճախեն բան սորվելու, դաստիարակուելու համար:
Մեր վարժարանները ներկայ դրութեամբ աւելի ատակ են մտաւոր
ծանօթութիւններ տալու, իսկ դաստիարակութիւն երբե՛ք: Մեր վար-

ժարաններու մէջ ո՛չ արհեստ և ո՛չ ալ արուեստ ունինք, ունէ օգտակար շարժումներ ընել տալու միջոց չունինք, ըլլայ բարեգործական, ըլլայ ընկերական, ըլլայ իրերօգնութեան մարդերուն մէջ: Տղան չի հասկնար երբ կը պատուիրեն որ սիրէ իր ընկերը, օգնէ անոր, այցելէ հիւանդին, միտիթարէ թշուառը, պատսպարէ աննեցուկը, առաջնորդէ կոյրն ու ծերը: Զայն պէտք է մարդել, ընել տալով եւ այս ո՛չ թէ պատահական ու քմածին կերպով այլ հետեողականօրէն անդուլ, անդադար առանց յուսահատելու և առանց ընկրկելու: Սոյն գործողութիւնները, շարժումները պէտք է միա ու արիւն դառնան, մկանունքներէն իւրացուին ու դառնան բնութիւն:

Դպրոցներու մէջ մենք ընդհանրապէս կ'արգիլենք անհաճոյ շարժումները և կը կարծենք այսպէսով դաստիարակել զանոնք: Ամէն զգացում անցք մը գտնելու է դուրս հոսելու համար, զսպումը աւելի փնասակար հետեանքներ կրնայ ունեննալ: Դաստիարակին պարտակալութիւնն է ո՛չ թէ արգիլել այդ դէշ արտայայտութիւնները, անոր տեղը պէտք է դնել հպճելին ու օգտակարը և այս վերջիններու միջոցով սպառել կուտակուած ուժը:

Սեբաստիոյ Ամերիկեան քօլէժի մէջ, ունէինք աշակերտական միութիւն մը, ամէն շաբաթ կէսօրէ յետոյ երբ ազատ էինք դպրոցական պարտաւորութիւններէ, վարչութիւնը կ'այցելէր քաղաքին պանդոկները, փնտռելու համար պանդոկիտ ազգակիցներ աղքատ կամ հիւանդ, անոնց բժշկական ու նիւթական օժանդակութիւններ ընծայելու համար: Դպրոցավարութեանս շրջաններուն յաճախ առիթներ օգտագործած եմ իրերօգնութեան, աղէտեալներու, հրկիզեալներու, սովեալներու և որբերու համար աշակերտական յաջող հանդանակութիւններ կազմակերպելով որակելով զանոնք «Սրտի մարզանք», համոզուած ըլլալով որ իրերօգնութեան հազար խրատ անօգուտ է, գործնական քայլ մը հետ բազդատամբ:

Մեր երիտասարդները ունին անսպառ ուժի մթերք, մէկը պէտք է որ այդ ուժերը հանրօգուտ ձեռնարկներու մէջ սպառուու հնարքը և որպէսզի անոնք յուժպէտս չվատնուին: Մեր տղաքը վարժարագտնէ, որպէսզի անոնք յուժպէտս չվատնուին: Մեր տղաքը վարժարանէն դուրս՝ ա՛լ չունին նպատակ, գործունէութեան համար իտէպլ եւ հետեալը անոնց շարժումները ուժի անօգուտ վատնումի միջոցներ են միայն:

Չեր ընտանիքը պահեցէք խաղաղ ու անդորր, հոգ տարէք բնակարանի մաքրութեան ու գեղեցկութեան, պատերը զարդարեցէք շնոր-

հալի և ներշնչող նկարներով, ընտանիքի բոլոր անդամներուն միջև թող տիրապետին յարգանքը, փոխադարձ ղիջումի, հասկացողութեան ներողամտութեան և հնազանդութեան ոգին՝ Այս պայմաններու տակ ընտանիքը պիտի վերածուի զրախտի, ուր խինդն ու ծիծաղը պնայական պիտի ըլլան դէմքերէն ու շրթներէն և ուր երեխան պիտի մեծնայ այնքան քնքօրէն ու բարի, որ պիտի դառնայ խսկական նեցուկ մը իր ծնողքին՝ ու բարի ամէնուն հանդէպ:

Մաքրեցէք փողոցը, զտեցէք ընկերութիւնը, դաստիարակեցէք ցեղին զաւակները՝ որպէսզի մաքրած ըլլանք միջավայրը, որ վաղը Ձեր սիրասուն զաւակին խաղաղայրը պիտի ըլլայ՝ Ծնողքներ, յանձն առէ՛ք ամէն զոնողութիւն ի սէր Ձեր խկ բարօրութեանը:

Մտէ՛ք ուրախ և տխուր ընկերութիւններու մէջ, անոնց արտաքին շարժումներէն պիտի վարակուիք, դուք ևս պիտի հետևիք անոնց ու պիտի ծնին Ձեր մէջ համապատասխան զգացումներ:

Գեղեցիկ խորհուրդներ և բարի գործեր կը խափանեն չար մտածումները և վնասակար շարժումները: Անգլիացին կ'ըսէ. «Բարկութեան արտայայտութիւն մը ունենալէ առաջ համրէ մինչև 10-ը, եթէ տակաւին բարկութիւնդ չէ անցած նորէն համրէ տասը ու այսպէս շարունակէ մինչև որ բարկութիւնդ անցնի»։ Խկ ևս կ'ըսեմ բարկութեան արտայայտութիւն մը ունենալէ առաջ փոխանակ թուարանական 10ը համրելու, ինչո՞ւ չէ, աղօթք մը ըսէ, եթէ բարկութիւնդ չէ անցած սաղմոս մը քաղէ մինչև որ բարկութիւնդ անցնի և պիտի անցնին ոչ միայն բարկութիւնը այլ ատելութիւն, նախանձ, թշնամութիւն, որովհետեւ երկու հակադիր զգացումներ, խորհուրդներ, գործեր միեւնոյն ժամանակ միեւնոյն տեղը չեն կրնար բռնել, ինչպէս երկու մարմիններ միեւնոյն ատեն միեւնոյն տեղը չեն կրնար բռնել ըստ բնական օրէնքի:

Որքա՞ն քէներ, ատելութիւններ, հակառակութիւններ, թշնամութիւններ, ոխեր անհետ պիտի կորսուէին, եթէ ամէն անգամ հետեւելով մեր ցոյց տուած սկզբունքին հակադրէինք անոնց Գրիստոնէական վեճ ընթերցումներով և նոյնիսկ բարեկամական կեղծ արտայայտութիւններով, վստահ ըլլալով որ անոնց պիտի յաջորդէ համապատասխան իրական զգացումներ:

Որքա՞ն լաւ օրինակ մըն է մեր ըսածներուն, Անգլիոյ վարչապետ պ. Չէմպլըրէնի ընթացքը, իջնել Այպիոնի դադաթէն մօտենալ հակառակորդին, անոր ձեռքը սեղմել ու բարեկամական արտայայտութիւններ ունենալ աշխարհը փրկելու համար պատերազմի սարսափէն: Սոյն չփումներով բարեկամական զգացումներ եկան տեղ բռնել

անոնց սրտին մէջ ու հեռու վանեցին պատերազմի մտածումները և աշխարհը փրկեցին համատարած աղէտէ մը: Անձնական յարաբերութիւններու մէջ ալ այս պարագան կրնայ իրր օրինակ ծառայել:

Կիրքը հպարտ է, բայց կը հալի գիտակցութեան աղնիւ ու վեհ ներշնչումին տակ:

Զանազան դարեր ունեցած են իրենց դաստիարակութեան իտէալները, քարոզիչներ ունենալով՝ Պղատոն, Արիստոտէլ, Թէթէսս ու Էմանուէլ Քանդ: Անցեալին մէջ դաստիարակութեան պատակը եղած է գլուխ մշակել, իսկ ի. դարու դաստիարակութեան նպատակն է, սիրք մշակել աղնուացնող արտաքին շարժումներով, մարմնական յամառ վարժութեամբ և գեղեցիկ խորհուրդներով:



Մեր մէջ դաստիարակութիւնը բարոյական ըմբռնում մըն է սոսկ, բայց մարդ- ՀՄԱՅԵԱԿ ՔՆ. ԶԱՐԴԱՐԵԱՆ կային կեանքի մէջ տեական արտայայտութիւններով, մարմնոյն մէջ իւրացուած ամէն մէկ յատկութիւն դաստիարակութիւն մըն է իր մարդին մէջ:

Երանի՜ թէ կարելի ըլլար որ մարդ ունենար ընդհանուր դաստիարակութիւն, իր կեանքին մէջ ունեցած բոլոր շարժումներուն ընծայելով գեղեցկութիւն, նրբութիւն, վայելչութիւն և պպտշածութիւն, առանց ամենազոյզն ուժի յուժպէտս վատնումին:

ՀՄԱՅԵԱԿ ՔՆ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

24 Հոկտեմբեր 1938
Պազարնր

Թ Ա Փ Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր ՈՒՂԵՂԻ ԵՒ ՍՐՏԻ ՄԷՋ

Մարդկային ուղեղը աշխարհներ կը պարփակէ իր մեջ: Մսածուսներու, երազներու հսկայ պասկերներ որոնք մոլորակներ կրնան շրջան բնել:

Մարդկային սիրքը ովկիանոս է որուն վրայ կը նաւարկեն հսկայ հսկայ վիշեր, ուրախութիւններ, զգացումներու ամեն Տեսակը փոխն ի փոխ կ'իւրացնէ կ'արտադրէ: Յանախ փոքորկոս է սիրքը բուռածը: Փոքորկոս՝ խաղաղութիւն բերելու, փոքորկոս՝ գայրոյք եւ վիշտ բերելու, երկուսն ալ անհրաժեշտութիւն են իրեն պաշտօնը լրիւ կատարելու, ազնուացնելու այն մարմինն ուղեղը որուն առաջնորդութեամբ կը հոլովէ իր նամբան մերք՝ սափակ կամ սահուն, մերք խորք ու փորք: զիկ-զակ: Միօրինակութիւն իրեն համար պիտի ըլլար անկեղանոց: Միօրինակութիւն մեղանշում է իր պաշտօնին... Կեանքի միօրինակութիւնը չէ որ յոգնութիւն ու ձանձրոյք կը հայրայրէ, այլ ուղեղի միօրինակութիւնը խոնջեցնելն ապաստանարանը կը դարձնէ մարդկային մարմինը եւ արտին վրայ կը ննուէ անչափ ծանրութիւն:

Երբ ուղեղը սաւառնի, սիրքը անոր կ'ընկերանայ միասին վայելելու մսածուսներու աշխարհները, անՏեսանելին քափանցիկ կը դառնայ ու ապրումներու պէտպէտութիւններ յղացումներ կը յասակագծէ գաղափարներու դաշտին վրայ: Կառուցանելու համար մտքին արտադրութիւնը, սիրքը կը քաջալերէ աշխատանք ուղեղը: Շեղում մը, ապացոյց՝ մտքի ցնցումի որուն արդիւնքը պէտք է նկատել անվերայ դիպումը:

Մսածուսան մեջ նիւթերու առաստիւնը անխուսափելի է: Յաջողութիւնը կախում ունի դասաւորումէն: Նուրբ է մտքին նիւթերը դասաւորել, զգացումներ յանախ մոլոր նամբաներ կ'առաջնորդեն:

Երագելը, մամարգանք է: Երագելը աւելի զգացումով կ'ապրեցնէ ենթական քան բանականութեամբ: Բանականութիւնը գաղափարը կը կառուցանէ ժայռի շողախով: Երագով ծնած գաղափարը կը նմանի այն ծաղիկին որ իր բերքիկները կը բանայ արեւը մար մտնելէն յետոյ եւ կը սիրէ լուսութեան ու մեղուութեան մեջ ապրիլ միայն իրեն համար:

Մարդկային բանականութիւն ու բնութեան ամենէն հարուստ կալուածը մտածումն է այս միտք մտածումը որ կը ստեղծէ: Ան՝ մտքի մեզասանի ծառերուն պտուղներ կը հայրայրէ ու բանականութիւնը գանձնէ կը հասցընէ իր արտադրած հաննարի ստուրբեան աստիճանաշարով: Միջավայրը, սակայն մտքի արտադրութեան *կիժան* է: Մտքէն ծնած եւ հասակ առած գաղափարը որքան ալ հուժկու ըլլան կը հալին, կը փերուին ու կը մոխրանան երբ *ժիջալայր* կոչուած կլիման չունի զայն ապրեցնելու նաշակ-քրուածիւնը եւ անոր պտուղը մարտելու՝ ուղեղ ստամոքսը, իտալիոյ Մուսոլինին երբ այլ երկրի մէջ ծնած ըլլար շատ հաւանական է, որ իր սաղմին մէջ ոչնչանար. Հիբլեր մը՝ գուցէ չէր կրնար ապրիլ Բրիտանիոյ կամ Ամերիկայի մէջ: Մտքի արտադրութիւնը շատ շատ առատ է. այնքան բազմազան է եւ անհամար: Հագուագիւտ են ապրուցներ. միտք կոչուած գործարանը քէ ծնունդ կու տայ եւ քէ կը սպաննէ:

Ուրեմն *դասաւորումն* է որ կեանք կու տայ մտածումներու, իսկ անոնց սնունդը միջավայրը կը հայրայրէ ընդունակ ըլլալով մարտելու՝ գաղափարէն նաշակած սնունդը:

Ուղեղ եւ սիրտ աշխարհներ են, որոնց խորքին մէջ. ծալներու. ծոցը պահուրսած են գանձեր. խորհուրդներ որոնք կը ծնին յաճախ դիպուածով, երբեմն դէպքերով: Պատահուներ դայեակն են խորհուրդներուն եւ սիրտը մայր է զգալու համար սխրանքը եւ վիշտը:

Ամեն ուղեղ իր աշխարհները ունի եւ ամէն սիրտ իր ովկիանոսները: Գաղտնիքներով լեցուն բան մըն է մարդկային մարմինը եւ այդ բանային կը գտնուի միջավայր կոչուած կլիմային ձեռքը: Անուրը կը զգայ, կ'երագէ, բայց միտք չ'ըմբռնէ: Մտաւորականը կը տառապի չի հասկցուելուն, չի մարտուելուն համար: Հոս ալ ուղեղ ու սիրտ կը քափառին շատ երկար հագիւ կը հանդիպին կայանի մը բայց կը մոխրանան անյաջողութիւն գերեզմանին առջեւ...

Ուղեղ ու սիրտ նամբորդներ են. նամբորդներ որոնք առանց կանգ առնելու կը քալեն... մինչեւ վերջին կայանը, հանգրուանը կեանքին: Յոյս կոչուած պատրանքն ալ հոս կը փերուի, այդ անաւոր ցնցումին առջեւ, հոգին՝ կը սլանայ յաւիտեանականութիւն...

Երանի՛ հաւատով նամբորդող ուղեղներու եւ սիրտերու:

ԲրոՅ. ՏԻՐԱՆ ԼԻԻԼԷՃԵԱՆ

Երուսաղէմ

Մ Ո Ւ Ր Ա Յ Կ Ա Ն Ա

Կը նայի տուներն ի վեր, որ քըր-
քիչներով գինովի, քուրաներու նման՝
կը փարփառին, և պատուհաններէն՝
չառափն ու խնդը՝ որպէս ճշմարտու-
թիւն, կը յորդի: Կը բախէ դուռները,
և շրթներն՝ վէրքի պէս արիւնաթոր,
կը կաթի մազթանք մը մինչդանդա-
չուն, ձեռքի լապտերը՝ գոյնզգոյն երիզ-
ներով պճնուած՝ կը թալթի, հիւսնդ
աչքի հանդոյն:

×

Երբեմն խնձղան շուն:

Փողոցներուն մէջ, որ ծննդավայրն
են հոգոյն, վառանց ունեցածը՝ ինչպէս
զինուորը խանդն ու արիւնը կը հեղու
հայրենիքին վասն ընծայ:

Եւ որպէս բորոժ՝ տեղ շունի կաղանդի սեղանին շուրջ ընկերնե-
րուն երբեմնի, ոչ ալ՝ դերդ քերթուած՝ բարձ աղուորի մը երդին տակ:
Հափափած հաճոյքներուն ու ցնծութեանց տենդը՝ անոպայ գլխին
մէջ, ծաղրանկարը զերդ իրեն՝ մուրացկան մըն է, որ բռնած լապտերը
շիջանուտ՝ իմաստութեան նման դառապարտուած, ափը կը բանայ
ամէնուն:

Մ Է Կ Հ Ա Տ Ի Կ Ս

Ունիմ՝ մէկ հատիկս, զոր չմոռցայ ոչ մէկտեղ, ոչոքի հետ փոխեցի:
Եւ սիրածներս այլազն՝ քովս՝ մինչ պատկերներու պէս ժամա-
նակէն եղծուած, անճանաչելի են դարձած, ա՛ն, կը մնայ անաղարտ՝
կարծես արև չէ տեսած:

Մտերիմս է, աչքը՝ ժպտի անդ մարմանդ, բառերը՝ հայկազեանի
ծաղիկը լուսվարդ:

Ե՞ս արդեօք զինք, թէ զիս ա՛ն է որ կը պահէ:

Ունիմ՝ ես ալ՝ մէկ հատիկս, զոր անբաժան՝ կը կրեմ գրքի հանդոյն
որբազան, և յաճախ մտքովս կը թղթատեմ՝ կրկնելով գանձերն ան-
թառամ:

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ



ԲԱՐԻՉ ՍԷՆ ՄԻՇԵԼԻ ՎՐԱՅ Ս Ր Ճ Ա Ր Ա Ն Մ Ը

Սև հովանոցները կը փալփին թաց փայլովը անձրևին, ցուցափեղկերէն ցայտող լոյսը այնքան տխրազղեցիկ է որ մարդ կը ցանկայ մութ գիւղի մը մութ փողոցներու միօրինակ անձրևը, որ բնական է, որ սև է, որ սակայն միմիայն սև է, գիշերուան սևութիւնովը:

Կը վազեն կ'երթան, կը վազեն կու գան շարունակ. ի՞նչ ունին այդ մարդիկը վազվզելու այդպէս. ո՞ւր պիտի հասնին, ինչի՞: Գուհատ, հեւ ի հեւ այդ այրերը, այդ կիները շարուած, կաս կարմիր, ծամածռութեան նմանող ժպիտ մը շրթներուն: Ինքնաշարժերը կը սուրան, ի՞նչ փոյթերնին թաց գետինը, լպրծուն գետինը ուր կեանքեր կրնան խորտակուելու չնչնայ: Ի՞նչ է արդարև մարդկային կեանքը. վայրկեանի մը հաճոյքը թերևս: Ինքնաշարժին բզկտող ճիրանը ամբոխին սոսկումին առջև. կամ անկողինին կակուղ բարձին վրայ, ցաւով մը անագորոյն. նոյնը չէ՞ մահը:

Ի՞նչ փոյթը վարիչին, շուտ ղէպի ժամադրավայր: Հանգրուա՞նը: Գգուանք մը թերևս, ողջագուրում մը, դաղջխուց մը խնկաւէտ, ծաղիկներ, սնդուս ու բեհեզ, աչքեր սիրատենչ. օ՛ն, շուտ շուտ ղէպի իրականութիւն, անուշաղիբ ու տենդոտ. կամ ցաւազին հրաժեշտը խղումի մահասարսուռ տեսակցութիւնը վերջին, մնաս բարովը արիւն ստուցնող, շղագրգիւ շարժում մը. աւելի շուտ, ժամ քառջ վերջանայ: Ա՛հ, եթէ կտորէր մեքենան:

Ու ոստիկանը փիլիսոփայ իր սուլիւնովը սպառնազին, ջանքովը կարգի բերելու այդ խելագարները, մէկ կողմէն երազելով հայրենի գիւղին մէջ իր խաղաղիկ տունը. իր բուխերիկը հնամենի, թանձր ապուրը խորթագրգիւ և զանգակատունը դրացի բարեկամի մը պէս մտերիմ:

Ներսը սրճարանը, լոյսով ողողուած, ցոլափայլող հայելիները, կեղծ ծաղիկները խոշոր. (ա՛հ, հողին սնուցած գեղանոյշ ծողիկներ ո՞ւր էք) առաստաղէն կախուած բիւր գնդիկները բիւրեղ, նստարան-

ները կարմիր թաւիչ, ամէնքը ծխախոտի մուխին, ըմպելիներու հոտին, կանացի բոյրերու, թաց վերարկուներու շողիին և ջերմաբաշխին ճնշող շունչին խառնուած:

Սրճարան մը լոյս ուտանին, երբեմնի Cartier latin-ին, Սէն Միշելի պողոտային վրայ, դարերէ ի վեր ուսանող երիտասարդութեան հիւրընկալ Սէն-Միշելին, անձրև իրիկուն մը, մթնոլորտովը տաքուկ եւ զգլխիչ, մինչ դուրսը խոնաւ, թայ անձրև:

Անձրև կու գայ եկընքեց

Ինչպէս արցունք արժիս մեզ...:

Բօլ վերլէն...: Կ'ուրուագծուի Սիլուէթի մեծ քերթողին, անոր որ քիչ մը ատեն Քօնքեւարբի մէկ անկիւնը, անքուն գիշերներուն ստեղծած է հրաշալիքը «իմասուքիւն»ին:

Հիմա ո՞վ կարող է ստեղծել, երկնել հոգեցունց աողեր այդպէս: Ոչ ոք, գէթ առայժմ:

Ի՞նչ են այդ բոլոր մարդիկը, այդ կիները հոն հաւաքուած, այնքան տարբեր մեր պատանեկութեանը երազներ տուած պոնեմի ուսանողութեանէն:

Հոս՝ զոյգ մը՝ հազիւ անցուցած պատանեկութիւնը, երկուքն ալ Աստուած իմ, որքան կը ձանձրանան. չեն խտիր, չեն ժպտիր, կը խեղդեն յորանջումներ, լուռ, դժգոհ, սկեպտիկ, ծնած ըլլալուն զղացած: Եղկելինե՛ր...:

Անդին անկիւն մը քաշուած չորս հինգ տղաքներ կը վիճին, իրենցմէ երիցագոյնը բոց-կրակ կտրած է. ի՞նչ կ'ըսէ. մարդկային ընկերութեան դէմ լուտանք. անիրաւութիւնը դասակարգային, հարուստին, աղքատին, թուեղ հանած է իր հոգին. ինչո՞ւ բարքօն, ինչո՞ւ գործաւոր, հաւասարութիւն, եղբայրութիւն: Խեղճ աղայ:

Տարեց պարոն մը իր շատ մատաղ ընկերուհիին կը ջանայ հաճոյանար կը մրմնջէ բառեր որ աղջիկը տաղտուկով մտիկ կ'ընէ: Հի՛նէն մնացած ալ բառեր՝ որոնց վրայ մաքէն կը խնդայ նորելուկ մանկամարդուհին... օրօրուած միմիայն յոյսով մուշտակէ սիրուն վերարկուի մը:

Կէս օրուան սատանային խաղալիք տարաբախտ ճաղատ դուրս: Երկու աղջիկներ, դեղձան ու կապուածաչուի, ամիլուած յօնքերով, վայելուչ բայց ոչ ճոխ, կարկտուած վայելութեան, ինչպէս կ'ըսեն, աչքերնին չորս դին. ի՞նչ կը փնտռեն. որս մը, ճաշ մը վճարել

տալու համար, ապահով ցերեկն ալ չեն ճաշած, խմած դարեջուրնին ալ վճարելու դրամ չունին. կարսօնը արգահատանքով կը նայի իրենց, թերևս ալ իր ազգակառուկներն են: Մօտի քանաքէին վրայ մարդ մը կու գայ, գերմանական տիպարով. կարսօնը կը փութայ աղջիկներուն սեղանին վրայ սպասարկել անոր, հոն զետեղելով մեծ գաւաթը փրփրազեղ ըմպելիին: Մարդը անտարբեր ծարաւը կը հագեցնէ, աղջիկները տարտամ կը ժպտին, աչք կ'ընեն. կէս ժամուան ջանք ապարդիւն:

Գերմանացին կը վճարէ և կը մեկնի: Պէտք է վերսկսիլ, տասն անգամ վերսկսիլ նոյն ճիգերը, երբեմն ալ բնաւ չյաջողիլ:

Երկու պարոններ մօտիկ սեղանի մը շուրջը, թխադէմ, լայն յօնքերով, գործի վրայ կը խօսին. կ'երևի կենսական է խնդիրը. շատ լուրջ են. հայկական լրջութիւն որ յարգանքի կը հրաւիրէ. առևտրական են թերևս, հայերէն բառերուն կը խառնուին թրքերէն ասացուածքներ, համոզումով արտաբերուած, սակայն այդ արգելք չէ որ հաճոյքով դիտեն անցնող դարձող ֆրանսացի Գեղուէիները, և ժպտով մրմնջեն իրարու, «աղւորիկ է. չէ». Օր մըն ալ թակարդը իյնան թերևս. ով գիտէ:

Սրճարանին զուռը կը բացուի անցք տալով նոր զոյգի մը: Որքան գեղեցիկ աղջիկ, թուխ, գանգրազեղ մատաղ, արշալոյսի ցոլքի մը պէս, կեանք սիւտող, տղան հուժկու, համակրելի, ազնուական, հռովմէական տիպար, մեծ էմբերաղօրէն վերջիշում մը բերող. կը յառաջանան ձեռք ձեռքի, կարծես լոյսի ցնորքներու մէջ է. կ'երթան նստիլ նուագածուներուն մօտ, քիչ մը դէպ ետև դրուած սեղանի մը առջև. կը նային իրարու հիացիկ զմայլումով, չեն լսեր, չեն տեսներ կարսօնը, իր հարցումը. իրենք պէտք չունին ըմպելիի, գերագոյն նեկտարը, իրենց էութեան մէջն է:

Երաժիշտները առաջնորդող ոռու կիներ, արուեստագէտ ու վայելչագեղ, արդէն թարշամած, ուշադրութիւն կը դարձնէ նոր զոյգին, (թէև իրեն համար ունկնդիր գոյութիւն չունին, ան կը նուագէ հայրենարարձութեամբ, երևակայելով իրեն ազգակիցներ շուրջը, հոգին անոնց հոգիին խառնուած) շրթներուն վրայ կ'ուրուագծուի ժպտի պէս բան մը, ոտքի կ'ելլէ, կ'առնէ ջութակը ու միմիայն դաշնակի ընկերակցութեամբ կը սկսի նուագել, մեղմ, դաշն, տարփատենչիկ, երազով հիւսուած . . . :

Երգահաններու ամէնէն տարարաղդին, գերազանցապէս զգացած

տառապած արուեստագէտին, Շօբէնի մէկ Գիշերայինն է. ամառ գի-



Ա. Ն Ա. Յ Ի Ս

շերուան մը պէս շգլխիչ, սիոփող ու գի-
նովցնող: Նօթերը կը թռին լարերէն, կ'անց-
նին անտարբերներու զլուխներուն, ծառա-
յողներուն երթեկին, գաւաթներու բազ-
խուժին, ամէն սովորական աղմուկներուն
վրայէն, կը կոխտան հասպաշտ գռնհիկու-
թիւնները, իրականութիւնները զգուելի,
տոիրները լսիրչ ու կ'երթան թափլ երկու
ճմարաապէս, աստուածային կերպով սի-
րող զոյգին սրտերուն մէջ:

Անձրէին կաթիլները ապակիներէն վար,
յոյսէ չինուած թիւերու պէս, թրթռացնել կը թռին գերմարդկային
նուազը, հզօր կարողութիւնը արուեստին:

Ա.Ն.Ա.Յ.Ի.Ս

Բարիգ



Ե. Գ. Գ. Օ. Լ. Ա. Ն. Ճ. Ե. Ս. Ն.



Հ Օ Ր Ի Օ Ն

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՒ ԻՐ ՈՃԸ

Կարելի չէ մօտենալ հայկական ճարտարապետութեան և ուղում-նասիրել զայն առանց նայելու թէ ո՞վ է եղած անոր ճարտարապետը, զայն յղացողն ու շինողը:

Երբ կը խօսինք ճարտարապետի մասին, մեր պատմութեան այն շրջանին մէջ որ ծաղկեցաւ և փայլեցաւ մեր ոճը, պէտք չէ մօտենալ այս բառին ներկայ ըմբռնութիւնով: Այսինքն՝ երևակայել մէկը որ կեցած է իր գրասենեակին մէջ և դժագրութեան սեղանին առջև, կը յօրինէ ու կը գծէ շէնքերու զանազան ձևեր, կը հաշուէ ու կը չափէ զանազան շինուածքներու անոնու թիւնը և հաւասարակշռութիւնը: Եւ երբ այս ամէնը պատրաստ է՝ կը յանձնէ որմնադիրին՝ որը առանց այլևայլի կը հետեի իրեն յանձնուած յատակագիծներուն գործադրութեանը, առանց որևէ հոգի:

Հին դարերու մէջ, նոյն խնկ՝ այսօր ա՛լ՝ արևելեան կարգ մը երկիրներու մէջ, ուղղակի որմնադիրն է որ կը յղանայ շինուածքին ձևը և բաժանումները: Ու առանց երկար բարակ թուղթերու և խրթին հաշիւներու մէջ կորսուելու, կ'անցնի ուղղակի իր մտածումէն՝ իրագործման: Ան շինութեան վայրին վրայ է որ կը չափէ, կը գծէ ու կը կառուցանէ: Գործնական փորձերով, շինուածքին վրայ խնկ կը փնտռէ հաւասարակշռութիւնը և անոնու թիւնը:


Հայ ճարտարապետը ոչ միայն որմնադիր մըն էր՝ այլև քարակոփ մը, քանդակագործ մը, որովհետև՝ հին ժամանակ՝ արուեստները, այսօրուան նման մասնագիտութիւններու չէին բաժնուած:

Այսօր, երբ չէնք մը կը շինենք, առ առնուազն 13 տեսակի մասնագէտներու աշխատութեանը պէտք է դիմել: Մէկը որմնադիր է միայն, ուրիշ մը ձեփերը կը դնէ, երրորդ մը տաշուած քարէ մասերուն միայն կը խառնուի եւ այլն:

Հին ատեն, սակայն այսպէս չէր: Այն որ կը շինէր շէնքը, պէտք էր գիտնար անոր բոլոր մասերը շինել: Այնպէս որ ճարտարապետը թէ՛ հիւսն էր, թէ՛ որմնաշէն, թէ՛ քարակոփ և թէ՛ քանդակագործ:

Երբ հասարակ որմնադիրը ցոյց կու տար այս ղանաղան ճիւղերուն մէջ ըրական արժէք մը, կը կոչէին «վարպետ» կամ «ճարտարպետ ի քար»:

Այս յորջորջումը ցոյց կու տայ թէ ան մէկն էր, որ իրեն մասնա-



Անիի խորհրդարանի ներքին տեսքը

գիտութիւնն էր ըրած քարի վրայ աշխատելը և քարաշէն կերտուածքներ շինելը:

Լիթրէ, ճարտարապետութեան սահմանումը տուած ատեն կ'ըսէ, «Ատաղձագործներու կերտուածքին կ'ըսեն նարսարապետութիւն»: Մեզի համար պիտի ըսէինք «քարագործին շինուածքին կ'ըսենք նարսարապետութիւն»:

Եւ այս շատ հասկնալի է: Հայաստանի մէջ գլխաւոր և միակ կարևոր շինուածանիւթը եղած է «քար»ը, իր ղանաղան պէսպիսութիւններովը: Ան գործուած է նախ կիկլոպեան հսկայ ղանգուածներու ձևին տակ՝ քարի, անագապղնձի և նոյնիսկ ուրարտական երկաթի գարեբուն. յետոյ գործածուած է տաշուած, սակայն առանց շաղախի և ապա սրբատաշ ու կրաշաղախով: Որձաքարէն միւշէ և թիւֆ՝ ամէն տեսակները գործածելով:

Փայտաշէն և աղիւսաշէն շինուածքները, բարերախտարար քիչ են եղած և պատահական, Հայաստանի մէջ:

Այնպէս որ Հայաստանի մէջ, շինութեամբ զբաղող «ճարտարա-
ըլլալ քարերու գործածութեան և անոնց

վրայ աշխատութեանց ձեւերուն Այս պայմանը ինքնին կը պարտադրէ «քարագործ» մը իբրև ճարտարապետ: Այսպէս է որ կազմուած է «ճարտարապետ ի քար» ածականը և յաճախ կը գտնանք շէնքերը կերտող ճարտարապետին անունին քով նաև «քարագործ» բառը:

Օրինակ՝ հայկական ճարտարապետութեան փառքերէն և միջագային համբաւի արժանացած Տրդատ ճարտարապետին անունին քով Ստեփանոս Ասողիկ կը գրէ:


«Այլ անդ զիպեալ ճարտարապետին հայոց Տրդատայ քարագործի» (Պատ. Տիեզ. Գիրք Գ. գլ. Իէ):

Ճարտարապետին նոյնանալը, որմնադիրին, քարագործին և վիմագիր քանդակագործին հետ ունեցած է շատ կարեւոր հետեանք մը ոճին ձևաւորման տեսակէտէն:

Այսպէս է որ կազմուած է հայկական քարի ճարտարապետութիւնը: Ոչ միայն շինութիւններու կերտաւորումը կը պարտինք մեր քարագործ ճարտարապետներուն, այլև այդ շէնքերու վրայ տեսնուած քանդակագործութիւնները ևս անոնց գործերն են:

Քարագործ բառը պէտք է առնել իր ընդհանուր իմաստովը, այսինքն թէ քարտաշ և թէ քանդակագործ:

Ասոր համար է որ մեր մէջ չեն գտնուած բառին բուն առումովը զուտ արձանագործներ, զլուխ գործոցներ արտադրող: Կը կարծեմ թէ արդէն հայկական ճարտարապետութեան գեղեցիկ



Ա մ ա ն ո ս ե ա ն Գ Ր Ո Ւ Ն Բ

կերտուածքները արտադրող քարագործ ճարտարապետէն շատ պա-

հանձնած պիտի ըլլայինք, եթէ ուզէինք որ ան արտադրած, ըլլար նաև գլուխ գործոց արձաններ:

Պէտք է ըսել թէ մեր մատենագիրները շատ ժլատ են եղած մեզ փոխանցելու, մեր նշանաւոր ճարտարապետներու անունները և անոնց գործերու թուումները: Հազիւ քանի մը հոգի բախտը ունեցած են մինչև մեզ հասցնելու իրենց անունը: Սակայն կը մնայ մեծ պարագ մը եօթներորդէն մինչև տասներորդ դար, շուրջ 300 տարի, որուն ընթացքին որևէ ճարտարապետի անուն մեզ չէ փոխանցուած, հակառակ որ այդ շրջանը կը կազմէ մեր քրիստոնէական ոճին կերտաւորման կարևոր ժամանակամիջոցը:

Ամենահին անունը որ գիտենք՝ Դանիէլ ճարտարապետինն է, Չ. դարուն, յետոյ ունինք Իսրայէլ Գուսազեցիի անունը Է. դար, Վասպուրականի Մանուէլինը Ժ. դար, աշխարհառչակ Տրդատինը Ժ. դար, նոյն դարուն վերջերէն մեզ կը հասնի Սամեհան


արեղայի անունը: ԺԱ. դարուն կը յիշուի Սարգիս քանդակագործ ճարտարապետին անունը, ԺԲ. դարէն ունինք Յակոբ Ճահեցին, ԺԳ. էն Ֆրէտ Կարնեցին, ԺԴ. դարէն Շահիկ ճարտարապետը:

Արդէն ԺԲ. դարէն կը սկսի հայկական դպրոցին անկումը: ԺԵ. ԺԶ. դարերուն եղան հայ ճարտարապետներ սակայն իրենց գործերը ոչ մէկ առնջութիւն ունեցան հայկական դպրոցին և ոճին հետ. ինչպէս է օրինակ աւելի վերջուան, ԺԸ. դարէն Շիրին խալիֆան և կամ հաւատափոխ Սինանը: Ասոնք չենք կրնար յիշել հայկական ճարտարապետութիւնը կիրարկող մեր աննման վարպետներու քովն ի վեր և անոնց կարգին:

Ամփոփելով, կրնանք ըսել թէ հայ ճարտարապետը եղած է քարագործ մը, շատ հմուտ քարի դանազան գործածութեանց և շատ ճարպիկ կարենալ օգտուելու համար




Ախյցխայի Երեւման
Ա. Խաչ Եկեղեցին



Աղիսու հին Եկեղեցւոյ մի
աւերակները

իր ձեռքի նիւթին տուած բոլոր կարելիութիւններէն: Շնորհիւ իր հմտութեանն է որ հայկական շինուածանիւթէն՝ քարէն, ան յաջողե-



ԱՅԻ միջնաբերդի մէջ ապարանից սրահ

ցաւ դուրս բերել ճարտարապետական հրաշալիքներ և կազմել «հայկական ոճ» կոչուած ինքնուրոյն ճարտարապետութիւն մը:

Ս. ձե՛վ. Ա. ՀԻՐՁԵԱՆ
ձարսարագէտ

Լոզան 1938

Սարգիս Ճէվանիրեան ծնած է Պոլիս 1898-ին, նախնական և երկրորդական ուսումը լրացնելէ վերջ անցած է Լոզան և իրրեւ ճարտարագէտ վկայուած համալսարանէն՝ 1924ին: 1924—1930 մասնագէտ ճարտարագէտ Հելլէն կառավարութեան մօտ: 1930-ին Զուլիցերիա կը հրաւիրուի St. Barthélemy թուճբերու կառուցման հսկելու համար: 1932էն ցարզ վարիչ ճարտարագէտ Զուլիցերիական ձեռնարկու տուններու:

Գլխաւոր ձեռնարկներն են. — Սթրիմօն գետի կանոնաւորումը, Եանեսա քաղաքի ջրարաշխուճը եւ այլն:

Աշխատակցած է պահ մը «Գիտութիւն և Գիտելիք» ամսաթերթին:




Հ Ա Յ Ե Ր Ը Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ձ

Իրարու յաջորդող և յարասե արշաւանաց, պատերազմներու և կոտորածներու հետեանօք, որ վաղ ժամանակներէ ի վեր և միջին դարերուն, Հայոց գլխէն պակսած չէին, ստիպուած էին անոնք շատ անգամ իրենց հայրենի երկիրը թողլու, հաստատուելով օտար երկիրներու մէջ և սեղծելով հոն իրենց նոր դաղթավայր մը: Այդ դաղթականութեան ամենամեծը և կարեւորն եղած է ժԱ. դարուն, Բագրատունեաց ցեղապետութեան անկումէն ետքը: Աւելի յետոյ նոյնպէս րաղմաթիւ և ստուար եղած են իրենց պանդխտութիւնները ժԳ. ժԶ. և ժԷ. դարերուն մէջ, ինչպէս նաև ի. դարուն վերջերը: Առաջին դաղթականութեան միջոցին, ժԱ. դարուն Հայերը բնակափոխ եղած են, ուղղուելով դէպի Սրիմեան թերակղզին, ուսկից իրենց մէ մաս մը զացած է ի Մոլտավիա, ուրիշ մաս մը ի Փոտոլ, Վոլինիա և ի Փոքր Հնաստան: Այդ հայ լգաղթականներու մեծ խումբ մը Փոքր Հնաստանի մէջ հաստատուած է ժԱ. և ժԳ. դարերու միջոցին, ոուս իշխանաց հրաւէրին և հաւանութեանը հետեանօք, որոնք սիրով ընդունեցան մեր դաղթականները իրենց երկրին մէջ, որ Թաթարներու արշաւանքէն աւերած էր: Հայերը հոն շարք մը դաղթավայրեր սեղծեցին իրենց համար: Մեծն Գաղիմիր, Հնեբու թագաւորը, Կարմիր Ռուսաստանի տիրապետելէն ետքը, Հայերուն շատ մը առանձնաշնորհութիւններ տուած էր, ի մէջ այոց 1367ին Լվովի մէջ հայկական եպիսկոպոսութիւն մը հաստատելով: Այդ ամբողջ առանձնաշնորհութիւնները, որ տրուած էին ոուս իշխաններէն և Գաղիմիր թագաւորէն, ապագային հաստատեցին Հեհաց յաջորդ թագաւորները: 1519ին Ձիկմունտոս լեհաց արքայն, կ'ընդունի և կը հաստատէ հայկական կանոնադրութիւնը, ըստ որում կառավարուած էին մինչև այն ատեն Հայերը, և որու կը հետեւէին իրենց ներքին, աղգային կենցաղակերպին մէջ:

Հնաստանի գրեթէ ամէն մի թագաւոր լիացուցած է Հայերը այլևայլ մենաշնորհմաներով, անոնց՝ երկրին մատուցած հաւատարմ ծառայութեանցը, նուիրած բարոյական և նիւթական նպաստներուն:

պատճառաւ: Լեհահայերը ամենալաւ և ամենահաւատարիմ զաւակներն էին, իրենց ընտրած նոր հայրենիքին, Լեհաստանի համար: Իրենց արեան զոհն անգամ չխնայեցին Հայերը, մասնակցելով այլևայլ պատերազմներու, ինչպէս Կրոււնլալտի 1410ին, Վառնայի 1444ին և 1683-



Լվովի Հայոց եկեղեցիին արտաքին տեսքը

ին Վիեննայի մօտերը, երբ Սոպիէսքի լեհաց թագաւորը, իր բանակովը Աւստրիացւոց օգնութեան կը հասնէր, Տաճկաց արշաւանքին դիմադրելու համար: Ասկից զատ Հայերը մեծամեծ ծառայութիւններ մատուցած են լեհական կառավարութեան իբր հմուտ թարգմաններ և կարող զիւանադէտ պատգամաւորներ, քաղաքական կարեւոր ինչդիրներու մէջ:

Լվովէն և Պոտոլեան կամենիցէն զատ, ուր որ իրենց գաղթականութիւնը բաղմամբիւ էր, Հայերը ուրիշ քաղաքներու մէջ ալ հաստատուած էին, զբաղելով զլիւսւորարար վաճառականութեամբ: Լեհաստանէն և արևմտեան Եւրոպայի մի մասին, Արեւելքի հետ ունեցած բոլոր առևտրական յարաբերութեանց և գործառնութեանց մէջ Հայերը ամենամեծ անուրանալի դերը կը կատարէին, ընդարձակելով իրենց գործունէութիւնը մինչև Տաճկաստան, Ռուսիա, Արապիստան, Սիրիա, Եգիպտոս և նոյնիսկ մինչև ի Հնդկաստան:

Հայերը Լեհաստանի զանազան քաղաքները ցրուած էին, որոնց մէջ ամենակարեւորներն կրնան սեպուիլ Պրոտի, Պժէժանի, Տուպնօ, Հօրօտենքա, Եարոսլաւ, Եաղլօվիէց, Գաժիմիէժ, Բուժի, Լուպլին, Լուցք, Լիշիէց, Բոտհայցէ, Ենիաթին, Սթանիսլաւօվ, Թիշիէնիցա, Չամոչչ, Չլօչուվ, Ժուլքիէվ և այլն ներկայիս հայկական անենաստուար կեդրոնացումը Լվովի մէջ է, յետոյ կու գան Սթանիսլաւօվ, Լիշիէց, Թիշիէնիցա, Պժէժանի, Հօրօտենքա, Ենիաթին և Բուժի, ինչպէս նաև ի Վարշաւիա, Բրաքովիա և Բօղնայն Ամրողջ Լեհաստանի մէջ 5000ի մօտ Լեհահայեր կը գտնուին, որոնք թէպէտ դժբախտաբար 7 դարերու մեջոցին լեզունին մոռցած և իրենց պատմութեանը անտեղ-



Լվովի Հայոց եկեղեցիին ներքին տեսքը

եակ են, սակայն պահած են իրենց եկեղեցական արարողութիւնը ըստ իմիջ: Աստուծոյ զատ բաւական թուով նոր գաղթած Հայեր ալ կը

գտնուին, մանաւանդ ի Վարչաւիա, և մի քանի ուրիշ գլխաւոր քաղաքներու մէջ:

Նիկողայոս Թորոսովիչ Արքեպիսկոսի օրերուն և անոր նախածնու-



Լվովի Հայկական Գրասխաններ

նութեամբը՝ Հայերը 1630ին, միացած են Հռոմայ աթոռոյն, ընդգրկելով ուղղափառութիւնը: Այդ ատենէն սկսեալ հայ Արքեպիսկոպոսները, փոխանակ էջմիածնի կաթողիկոսութեանը պատկանելու, ուղղակի Հռովմայ Ս. Աթոռոյն իրաւասութեանը ենթարկուած են: Լվով քաղաքը միշտ հայ Արքեպիսկոպոսներու բնակավայրն եղած է, ուր և կը գտնուի, հին ժամանակներէ ի վեր կառուցուած և վերջերս նորոգուած և ընդարձակուած, հոյակապ աթոռանիստ մայր եկեղեցին: Արքեպիսկոպոսութիւնը բաժնուած է երեք կարգերիցութիւններու, Լվովի, Սթանիսլավովի և Բուքիի, և կազմուած է ութ ժողովրդապետութիւններէ, որոնց մէջ կը գտնուին ինը եկեղեցիներ և 19 մատուռներ և ազօթատեղիներ. իսկ հայածէս քահանայից թիւը կը հասնի 24ի: Մայր եկեղեցւոյն շուրջը կը գտնուին Արքեպիսկոպոսի պալատը, երիցատունը և հայ կուսանաց վանատունը: Մայրապետները ի միջի երիցատունը և հայ կուսանաց վանատունը կը զբաղին, ունենալով զբայայոց, աղջկանց դաստիարակութեամբը կը զբաղին, ունենալով զբարոց մը ինչպէս նաև գիշերօթ մը, գաւառներէն ուսման համար քարոց մը եկող աղջկանց ի դիւրութիւնս եկեղեցւոյն շատ մօտերը կը զաքս եկող աղջկանց հաստատութիւն մըն ալ մանչերու համար, որ գտնուի ուսումնական հաստատութիւն մըն ալ մանչերու համար, որ 1864ին հիմնուած է Տոքթոր Յովսէփ Թորոշիէվիչի ձեռօք և անձնական դրամական նպաստիւք և որ մինչև ցայսօր կը շարունակուի կրեկով իր բարերար հիմնադրին անունը: Նոյն ուսումնարանի նպատակն

եղած է դաւառներէն, դպրոցները յաճախելու համար, քաղաքս եկող հայ աղքատ մանչերու, ձրիարար բնակութիւն, սնունդ և կրթութիւն տալն: Լվովի մէջ ունինք գրաւական Դրամատուն մը, որ 1668ին



Հայոց Նախարեմական Միութեան Վարչութեան անդամներ

հիմնուած է, ամբողջ հայ եկեղեցիներու մէջ զտնուող կորստութիւններու հիմնադրամովը և որ մինչև ցայսօր կը շարունակէ, ոսկիէ, արծաթէ և թանկարժէք առարկաներէ բաղկացող բերուած գրաւներու փոխարէն զրամական փոխատուութիւններ ընելով:

Լեհաստանի Հայերը լաւ զիտնայով, որ թէպէտ դարերէ ի վեր իրենց բուն հայրենիքէն հեռացած ըլլալով, հիմայ մասը կը կազմեն լեհական ժողովուրդի և իբր այնպէս ալ նկատուած են նոյն իսկ երկրիս կառավարութեան կողմանէ, սակայն միւս կողմանէ լաւ ըմբռնելով որ ծագումով հայ են և զգալով հայ արիւնը իրենց երակներուն մէջ, ջանացած են, մանաւանդ վերջին ժամանակներուս մէջ, ըստ կարելոյն ամփոփուիլ և բոլորովին չքացման չենթարկուելու նպա-

տակաւ 1930ին, Մայիսի մէջ ճկազմած են միութիւն մը, որուն «Նախաթեմական Միութիւն Հայոց» յորջորջումը տրուած է, կեդրոն ունենալով Լվով քաղաքը և ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ ունենալով ճիւղեր և գործակալութիւններ: Այս միութեան գլուխը կեցած է 24 անդամներէ բաղկացեալ վարչութիւն մը, իրենց իրրգահներէց ունենալով պ. Յովհաննէս Անթոնիէվիչը, եռանդուն և գործունեայ հայրենասէր հայազգի մը, որ նոյն պաշտօնը կը վարէ միութեանս ծագումէն ի վեր: Վարչութիւնը քօնէ ամիսը անգամ մը նիստեր կը գումարէ, ընթացիկ խնդիրները լուծելու համար: Միութիւնս ունի իր պաշտօնատեղին, իր գրադարանը և ընդարձակ սրահներուը յաճախ ընտանեկան և ընկերական ժողովներ և պարբերկոյթներ կը սարքուին և ատեն ատեն բանախօսութիւններ: Միութիւնս



ունի իր, առ այժմ, եռամսեայ պարբերաթերթը, լեհերէն լեզուով հրատարակուող, «Սուրհանդակ Ս. Գրիգորի» արտղոսով, որուն նպատակն է ընթերցողներուն ծանօթացնել հայ պատմական, աշխարհագրական և գեղարուեստի ճիւղերուն վերաբերեալ խնդիրները: 1932ին հայկական միութեան սրահներուն մէջ սարքուած ցուցահանդէսի մը առթիւ, վարչութիւնը որոշած է և իրագործած, հանդիսադրեալ առարկաներէ մնայուն

Յովն. Անթոնիէվիչ թանգարան մը կազմակերպել, ուր կը տեսնուին հայկական հին յիշատակներ, իւզաներկ նկարներ, եկեղեցական զգեստներ և սրբազան անօթներ:

Լվով. 1938

ՍԹ. ՏՕՆԻԿԻՎԻՉ

ԱՍՏԵՂԱՔԱՂ

ԵՐԳ ԵՐԷԿԻ, ԱՅՍՕՐԻ ԵՒ ՎԱՂՈՒԱՆ

Ժամացոյցս բաճկոնակիս զրպանին մէջ առաջ կ'երթայ արտօրանքով մը անտոյժ, անհնարին իղձով մը նոր ժամանակները ապրելու, սիրտս, սակայն, անոր ներքեւ — օ՛, կը լըսեմ արօրիւնն իր ալ քայլերուն — որ ետ կ'երթայ անցեալ ազուոր օրերուն...:

Կը հեռեւիմ անոնց վաղքին ես արտուամ: Անոնց վաղքին՝ որամէն պահ, օ՛ ապրըւած ամէն արեւ, քիչ մ'աւելի կը հեռացնէ ինձմէ զիս: Միջին ճամբայ չկա՛. գիտեմ, սակայն որո՞ւն անսալ: Անսալ

արդեօք ժամացոյցի՞ն՝ որ կը տանի զիս խելացնոր արաորանքով յաւերժական ներկաներուն, մինչ մեր հոգին կը ծերանայ քիչ մ'ամէն օր, թէ իմ սրտիս անսայ, որ զիս կեանքի ճամբէն կ'ուղէ շեղիլ կորսուած յուշ մը փնտռելու, որուն մէկ օր հանդիպեցանք, օ շատ կանուխ կամ քիչ մը ուշ... :

Եւ արտմութիւնն ամենօրեայ մ'եր գոյութեան : Ծաղիկներուն բարկ ըտրումը կը թափէ գարունն ամբան ուսերուն, արեւն Նրբին մետաքսի թելեր տանըս երգիկին, անցեալն անուշ յիշատակ կը հազցընէ ապագայի յոյսերուն... :

Ու մենք կառչած դեռ կը մնանք գո՛րշ անհատնո՛ւմ մ'եր ներկային՝ ներկան բարակ սև գիծ մ'է լոկ լա՛յն, անըսկիդք և վարդագոյն վարդ անցեալին և ապագայ մ'եր երկնագոյն կեանքին միջև ծաւի՛ծաւի՛... :

Սակայն ինչո՞ւ համար, ինչո՞ւ, անցեալն այնքան արագ փախուստ կու տայ մեզմէ, ու ապագան այնքան արագ կը դառնայ սև գիծ ներկայի... :

Անդրանիկ սէրն իմ մանկութեան իմ նոր բացուած սրտիս վըրայ ծաղկած աղուոր վա՛րդն եղար դուն, իմ կեանքիս մէջ յիշատակի քաղցրը ժըպիտ՝ արև ու շող վա՛րդն եղար դուն, չնաշխարհիկ պատմութեան մը նըման շըքդ, հոգեկան խոր ապրումներուն սկիզբն ու աւա՛րտն եղար դուն... :

Ես մի՛շտ կը զգամ սրտիս ներքև երակներուդ Վարկը ուժգին : Հոգիիս մէջ նուրբ կեանքի հրթիռ, ալիքներու ամենանուրբ սարսուռ ու շարժ ես կ'ընդունիմ ռազիոյական ընկալուչի մը նըման վարժ :

Դէպի իմ գիւղս հայրենական խոնջած ճամբորդն ըլլայի ես : Սահմանաքարի մը վրայ նստած իր լանջքին վրայ նորածիլ ուլ մ'ը տաքցընող գեղջուկ մ'ըլլայի ես : Ու մար մտնող արեգակն իր հոգիին մէջը ընդունող սարն երկնամերձ կամ ովկիանին անծի՛ր, անծա՛յր ըսկաւառակն ըլլայի ես :

Ակօսներու վըրայ երգող ճնճղուկներու երգին փոխան, հիմա հոգիս լուռ կ'ունկնդրէ մեքենային զըժոխալուր աղաղակը խո՛ր և արո՛ւ : Եւ փոխանակ մ'աճը ափին զոյգ եղներու : յամբը քայլովն ընթանալու : հիմա վաղքն է ելեքարական շարժիչ ուժին... :

Անդրասիտի ծուխը այսօր մ'եր թոքերուն մէջ կ'ակօսէ մեզ անծանօթ ցաւ մը մըթին, վաղը պիտի ճիչ արձակէ աղաղակի մը նման մեծ նո՛ր օրերու, նո՛ր կենցաղի կանչը ուժգին... :

Վաղը՝ այսօր, այսօրն՝ երէկ, հիմա անունդ կու տանք արդէն վրէժխնդիր կայծի մը՝ որ՝ այսօրն՝ երէկ, վաղը՝ այսօր, պիտի վառէ մ'եր կուրծքերուն տակ կուտակուած ատելութիւնն ուժանակի նման հըղոր... :

ԽԱՉԱԿԻՐ ԵՒ ԱՍՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ Ա.Ի.Ա.Գ. ՔՅ. ՊՈՅԱՃԵԱՆՅ

Ծնած Ռուսչուք 1857 Հոկտ.ին, հայրը Կարապետ Ստեփանեան, մայրը՝ Ծիրանի Հայրապետեան. ուսած տեղւոյն դպրոցը, պատանին Սարգիս — այս է մկրտութեան անուանը — չորսուկէս տարի ոսկերչութեամբ և ինքնադարձացմամբ պարապելէ վերջ 1856 Հոկտ.ին օգնական ուսուցիչ կը կարգուի:

1856—9ի ընթացքին Ռուսչուք այցելու հովիւ կը դրկուի Պոլսէն դիտուն և բարեկիրթ եկեղացական մը Ներսէս վրդ. Վարժապետեան, որ ապա պիտի անմահանար իր պատրիարքութեամբ:

Սա երբ դպրոց այցելելով կը տեսնէ Գրիգոր քհն. Բիւրտեան տնօրէնի խոր տգիտութիւնը՝ Սարգիս վարժապետին կը յանձնէ տնօրէնութիւնը: Սարգիս կը հմտանայ հին յունարէնի և մանաւանդ զբարարի, աստուածաբանութեան և քերթողական արուեստին. իր պաշտօնավարութեան յաջորդ տարին կը բանայ Աղջկանց վարժարան մըն ալ, որուն ուսուցչութիւնը ևս կը ստանձնէ: Ոգի ի բռին կ'աշխատի թրքախօս ժողովուրդը հայախօս դարձնելու, և կը յաջողի Երկոտասանամեայ բեղուն գործունէութեանէ մը վերջ, ժողովրդեան բազմանաց չկարենալով դիմադրել՝ 1868ի Աստուածածնայ տօնին (Սեպտ. 18) Սաստիւղի (Կ. Պոլիս) եկեղեցւոյն մէջ քահանայ կը ձեռնադրուի Ներսէս Սրբ. Վարժապետեանէ՝ Կարապետ կոչուելով:

Իր սաներն եղած են Յովհ. ծ. վ. Գրիգորեան և եղբայրը Սալիկ փաստաբան Կարապետ Այաթնեան, Սարգիս, Գրիգոր և Մանուէկ Գուլումձեան մեծահարուստ եղբայրները (առաջինը հայրն է Մայքլ Արլէնի) և Ստեփան Փափագեան:

Քահանայանալէն ետքն ալ անպակաս ըրած է իր հողածութիւնը տեղւոյն երկնու դպրոցներուն վրայէն, փոխն ի փոխ պաշտօնի կոչելով կարող ուսուցիչներ. որոնց մէջ անուանի էին Վարդան Շիշմանեան (1881—3) և Զննոր Մարլեան՝ Վենեսիկեան կարգաթող միաբան (1881—3) և Գերմանիոյ համալսարանէն ելած Յակոբ Պոնճագեան (1883 7), բանք, Գերմանիոյ համալսարանէն ելած Յակոբ Պոնճագեան (1883 7), Սալպանդիկեան (1898—1900): Ժողովրդեան լուծանքով 1900ին կը կառուցանէ Ս. Մեսրոպեան մանչերու դպրոցը, երեք տարի վերջ ալ աղջկանցը՝ Սարգիս Գուլումձեանի նպաստով:

Յիշատակելի են իր հօտին մատուցած ծառայութիւնները, Ռուսթուրք պատերազմին երկամեայ տեղողութեան՝ երբ պ. Գրիգոր քհն. Բիւրտեան Վառնա կը փախչի և Յովհ. ծ. վ. Պոլիս կը մեկնի՝ Տէր Կարապետ մինչև վերջ իր հօտին կողքին կը մնայ: Թէ՛ թուրք պուլ

կար պատուանշաններով (1877) և թէ պատրիարքական-կաթողիկոսական կոնդակներով աւագութեան տիտղոսով կը պատուուի և ի վերջոյ Խրիմեան Հայրիկէն 1898 Մարտ 7ին վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք կը ստանայ:

Կանուխէն մտերմացած է Հ. Այսրնեանի, Հ. Ալիշանի և ուրիշ բազմաթիւ Մխիթարեան զիտուն վարդապետներուն: Էջմիածնայ և Մխիթարեանց վանքերը ձեռագիրներով կը ճոխացնէ:



Իր ձեռք ձգած նուրբ գրչութեամբ դեղանկար մագաղաթեայ մէկ աւետարանը — որուն պատկերները գերադաս էին Սարգիս Պիծակի գծած պատկերներէն — 1881ին Պուլկարիոյ նորընտիր իշխանին Աղեքսանդրի կը նուիրէ:

Թողած է գրչի աշխատանքներ ալ: Առաջարկ բարեկարգութեան եկեղ. մասեցից լոյս տեսած Մանչեսթրի Հայ եկեղիցիին մէջ միաթերթ մեծ թուղթի վրայ տպուած ունի Արձանագրութիւն յաղագս Ա. շինութեան Ա. եկեղեցւոյս եւ Հայոց գալստեան այսօր ի Բուսշուկ: Անտիպ կը մնան Կարգապահութիւն Հայաստանեայց Ա. եկեղեցւոյ, Ազգաբանական պատմութիւն Բուսնուզի եւ հայ գաղութին, Յաջորդութիւնք Բահայից ի Բուսշուզ եւ ի Բուլգարիա: Ունի նաև ճառեր մեծաչափ եւ ընդարձակ տաղեր գրաբար:

Խոր ծերութեան մէջ շարադրած է իր սրտայոյզ «Կենսագրութիւնը» և խնդրած է որ ղինքը գերեզման իջեցուցած ասան կարգացուի կարգակիրէ մը:

Վախճանած է 10 Դեկտ. (հ. տոմ.) 1911ին և թաղուած դեկտ. 12ին: Զաւակներէն գրավաճառ Ստեփան Տէրտէրեան տարի մը վերջ Պոլիս տպել տուաւ Հօրը իշխատակին նուիրուած Յուսարձան անուն գրքոյկ մը, զոր ոչնչացուց էջերուն խառնակութեան և վրիպակաց առատութեան պատճառաւ:



Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ

Հայոց Գաղաքական և Եկեղեցական Տարիներուն հարցը պատմականորէն առաջին անգամ յուզողները, իմ գիտցածիս, եղած են ԺԼ. դարուն փայլած հետեւեալ երկու Ֆրանսացիները, երկուքն ալ ծովածաւայ հմտութեան արհացած մտքեր:

Նախ՝ Նիֆոլա Ֆուէուէն (1688—1749) քաջ Արեւելագէտ, Հնախօս, Դիցարան և Լեզուագէտ, և իսկոյն յետոյ Գուռ սը Ժրպրլէն (1725—1784), Le Monde Primitif analysé et comparé avec le Monde Antique վերնագրով, 10 ստուար հատորներէ բաղկացած Մատենաշարին հեղինակը, ժամանակակից Մեծ Հանրագիտակը խմբագրող Աւագներուն, ընդ որս մեծանուն տ'Ալյամպէոը որ զարմանքով հարցուցեր է, կը հաւատան, երբոր ժըպրլէնի այդ հսկայ ձեռնարկին ընդհանուր ծրագիրը հրատարակուեցաւ (1772) թէ արդեօք 40 գիտնականներ պիտի լծուէին գործի մը զոր ո՛չ ոք առանձինն փորձած էր:

Նման զարմանքով, այլ անկեղծօրէն, ես ալ այս առիթով անպայման սքանչացումս կը յայտնեմ Հայ Հանրագիտակին բազմավաստակ և յարգելի հեղինակին, Հ. Մ. Պոտուրեանի, մաղթելով որ անոր ալ չպակսին ազգասէր մեկենասներու օժանդակութիւնը՝ որով ժըպրլէնի թուականին, յաջողեցաւ հարստացնել Ֆրանսական Մատենագրութիւնը և թողուլ — Թէպէտ կիսաւարտ — գանձարան մը որուն տակաւին կարելի է զիմել:

* * *

Վերոյիշեալ այդ Մատենաշարին Historie du Calendrier վերնագիրը կրող, չորրորդ հատորին մէջ, Պարսկական, Կապաղովկեան Տոմարներէն յետոյ, ժըպրլէն՝ Ժ. գրութիւնը Հայկականին կը յաւկացնէ.

«Հայերը մինչև այսօր — այս տողերը 1776ին գրուած են — Պարսկականին նմանող Տարի մը կը գործածեն որ բաղկացած է երեսուորեայ 12 միասնէրէ և 5 Յաւելեաց (Épagomenes) օրերէ. Cette Année est absolument vague, sans aucune Intercalation.» այսինքն՝ չունի Նահանջ Տարի և ո՛չ ալ որեւէ Յաւելում: «Հետեւաբար, կը յաւելու,

մերինին (եւրոպականին) բաղդատմամբ, ամէն չորս տարի վերջը, մէկ օր ետ կը մնայ ինչպէս որ են 365 օրէ բաղդացած բոլոր անոր նմանները:

Պաշտօնական արձանագրութեանց և նամակագրութեան ծառայող այդ Քաղաքականը, ըստ Ֆռէռէին, Քրիստոսէ 809 տարի առաջ Հայաստան ներմուծուած է «Պարսիկ (Perses) Մոզերէն» (էջ 141): Աւելի ճիշտն էր ըսել Մար կամ Մեդացի (Mède). քանզի այդ հետաւոր զարբերուն Պարսիկները կիսավայրենի վիճակով — ինչպէս կը վկայէ Ստրաբոն — կ'ապրէին արդի Իրանի հարաւակողմը և որոնց կրթողները եղան ճիշտ առ ճիշտ, զարգացեալ այդ Մեդացիները:

Միևնոյն Տոմարը — մի՛շտ ըստ Ֆռէռէին — նախաքրիստոնէական այդ 809 թուականէն 120 տարի վերջը, Կապադովկիան ընդուն՝ եցաւ և զայն պահեց մինչև Կորբուզոն զօրավարին ժամանակ (Յ. Տ. 60). որմէ քիչ յետոյ, Ներսն կայսեր օրով, Յուլիան Տոմարը անոր յաջորդեց. որովհետև Պեղոմոն Արքայն հրաժարած ըլլալով, այնուհետև Կապադովկիան Հռովմէական կայսրութեան մաս կազմեց:

* * *

Հարց է արդ — որուն կլուաղատ պատասխանը բաղմամբուտ այդ Ֆրանսացիներուն կը պատշաճէր տալ — թէ ինչո՞ւ մեր նախնիքը պակասաւոր այդ Տոմարին հետ չէին ընդունած միանգամայն արևին ճշգրիտ չրջանին հետ անոր սրբագրութեան եղանակը, որու համար այդ միևնոյն Մոզերը՝ 120 տարին անգամ մը, Ամիս մը կ'աւելցնէին, իսկ Եգիպտացիները մէկ տարի մը, 1460 տարիներու չրջանէն յետոյ:

Արդ քանի որ Հայոց Քաղաքական Տարւոյն նկատմամբ խօսուած առեն ո՛չ մի ակնարկութիւն կ'ըլլայ Հայկի օրջանին, որ 45 դարերու պատկառելի հնութեան կը բարձրանայ, և եկեղեցականին համար տրուած ծանօթութիւններն ալ ինչ ինչ ճշտումի կը կարօթին, այս բոլորէն ուստի կը հետեւի որ այդ գիտնականներուն ստոյգ եւ յորդարուիս աղբիւրները կը պակսէին: Քանզի անըմբռնելի կը թուէ որ Մեդացիին չափ աշխարհ պտտած, հին Արևելքին գլխաւոր Շահաստաններուն մէջ առևտրական տուններ հաստատող, Ստրաբոնին նկարագրած վաճառական և հաշուազէտ Հայն ալ պակասաւոր իրեն Տարին մերթ ընդ մերթ ուղղելու կերպը չէր գտած, և որ ինքնին դժուար չէր: Կը բաւէր տրուած օրինակներէն անդրադառնալ թէ ինչպէ՞ս տարիներու բարդումին համեմատութեամբ տոմարական սխալը կ'աճէր 4 տարուան մէջ՝ 1 օր, 120 տարուան մէջ՝ 30 օր և 1460 տարուան մէջ՝ 365 օր, որ կը համապատասխանէր այն Տարիին զոր Արևելեան հին

Աղբերը, Հայն տլ միատեղ, ի վաղուց անտի կը գործածէին և որ ուրիշ բան չէր՝ բայց եթէ 5 Յաւելեացներով 360 օրէ բաղկացած նախաշրջանեղեղեան Տարին, որ երկրագնդիս առանցքին հակումէն առաջ, ճշտապէս կը համապատասխանէր Արեգակին տարուան մը չըջանին, ինչպէս ատենօք կը կարծէին: Մինչդեռ իրականին մէջ, Երկիրս էր որ Արեին շուրջը կը շրջէր, իր թաւալման մակարդակի վրան շարունակ ուղղահայեաց պահելով իր առանցքը, որով Արեգակն ալ այդ տարեշրջանին ժամանակ, շարունակ ուղղահայեաց կը ճառագայթէր երկրիս Հասարակածին շրջագծին. զոր նախնիք՝ նմանապէս, 360 մասի բաժնած էին. որով անոր ամէն մէկ աստիճանը օրուան մը ընթացք, մէկ օր կը ներկայացնէր:

* *

*

Հողագնտիս առանցքին 23°, 28' աստիճան հակումը, և որու հետեւանքով Սսուեքագիծը (Ecliptique) պիտի այլայլէին այդ նախաշրջանեղեղեան ներդաշնակութիւնը, առթելով տիեզերական նոր պայմաններ, որոնք՝ վերջ ի վերջոյ բոլորովին ի նպաստ Աշխարհիս բոբորութեանը պիտի յանգէին: Որովհետեւ, Սսուեքագիծն ձեւացումովը, Արեւը փոխն ի փոխ երկու կիսագունտերը այցելելով, աւելի ընդարձակ մակերեսներու վրան հաւասարաբաշխ պիտի յաջողէր տարածել կենսատու բերիքները, և մասնաւորապէս իրեն ջերմութիւնը, զոր նախորդ ընթացքին ատեն Այրեցեալ գօթիին վրան միայն կեդրոնացուցած էր:

Յետագայ դարերը՝ չուզելով դպչիլ աւանդաշատ այդ 360 թուին, ուղղակի անոր աւելցուցին Հին և Նոր Տարեշրջաններուն միջև նշմարուած 5 օրերու տարբերութիւնը: Այս բարեփոխումը, ըստ հմտագոյններու, Քրիստոսէ 2782 տարի առաջ տեղի ունեցած է: Աշխարհագրութիւնն ալ նոյն յարգանքով վարուեցաւ, Հիւսիսային և Հարաւային իրեն Լայնութիւնները և Միջօրէական Շրջանակները հաստատելով Հասարակածին 360 աստիճաններուն նախաւոր հիման վրան: Տոմարագիտութիւնն ալ, ասոնց օրինակին հետեւելով, այդ միևնոյն 360ին փոքրագոյն բաժանորդը, 3 թիւը հիմ բռնելով կարգադրեց Ամիսները՝ 12, Ամիսներուն օրերը՝ 30, Օրուան ժամերը՝ 24, ժամին վայրկեանները՝ 60 և Մանրերկրորդները՝ 360:

Եւ թէ՛ վերջապէս — ըստ Բիւռոս Քաղղէացիին յիշատակած Բաբելական մի աւանդութեան — «Արեին ընթացքին և 12 Ամիսներու լուսնական շրջաններուն» վրայ յօրինուած յեաշրջանեղեղեան առաջին Տարեցոյցին հեղինակութիւնը որո՞ւ կը պատկանի — Տարեցոյց մը՝ որ

առաջին անգամ Արմենիոյ մէջ գործածուեր էր—այս գրոյցներուն նշկատմամբ ընթերցողս Վիրգիլեան Երկնադարամեակին առթիւ հրատարակութեանս վերջին էջերէն կրնայ տեղեկանալ մանրամասն:

Վերադառնալով Հայկական Տարւոյն յատկացեալ ժ. գլուխին՝ իսկ և իսկ հոն կը հանդիպինք նախորդին չափ բարդ երկրորդ հարցի մը, որուն մօտաւոր պատասխանը կը պահանջէ ժըպրլէնին Ա. և Դ. հատորներուն ստուար խորութեանը պեղումը, որմէ ըստ ինքեան, ճարտարապետ մը պէտք չէ որ անարեկի, և ինչ որ պիտի փորձենք ջանալով ըստ կարելոյն հակիրճ վերածել այդ հարուստ թանգարաններէն սաացուած մեղի անհրաժեշտ կարեւորը:

Այդ խնդիրը, լաւ ևս շփոթութիւնը, Արեւելեան բառերուն սխալ ընթերցումէն հետեւած է, որուն պատասխանատուութիւնը Ֆրանսացի գիտնականին դիմած ազդիւրներուն վերագրել հարկ է: Յաւային, միայն, այն է որ Ֆրոնէէի և ժըպրլէնի կշռադատ հեղինակութեան վրայ հիմնուելով անոնց թուականէն ի վեր քանի՛ցս արդեօք սխալ յեղյեղուած են Հայ Պատմութեան վերաբերեալները: Եւ կրկնապէս ցաւալի՛ որ ժըպրլէնն իսկ չուարած, սխալ անուն մը տուած է Հայոց Տարւոյն առաջին ամիսին և մեր Նաւասարդ բառը Navazardi կարդալով կամ ենթադրելով անոր մեկնութիւնը ընել փորձած է՝ բնականաբար անյաջող, որուն նկատմամբ իսօքս յառաջիկային պահելով, լաւագոյնը կը նկատեմ նոյնութեամբ օրինակել ինչպէս սր գրուած է:

«Le Nourous (բառ մը որ գոյութիւն չունի), ou premier jour de cette année (Հայկականը) qui commence avec le mois Navazardi, est fixé depuis long tems au onzième du mois d'Août de l'année Julienne»:

Գոյութիւն չունեցող, սխալ ընթերցումէ ծնած այդ Նուրուսը պտրդապէս Պարսկաց Ամանորն է՝ Նեվրուզ, Նեվ = նոր և Րուզ = տիւ, օր. երկու բառերէն կազմուած, ինչ որ ժըպրլէնի նման քաջայանդուզն ստուգաբան մը իսկոյն մեկնած պիտի ըլլար՝ եթէ անոր հաղորդող հեղինակը այդ պարսիկ բառին վալլ գիրը ու կարդացած չլլար:

Նոյնը անտարակոյս հանդիպած է Նաւասարդ բառին «որուն՝ իմ գիտցածս, ո՛չ ոք մեկնութիւն մը տուած է» կ'ըսէ ժըպրլէն և կ'առաջարկէ հետեւեալը՝ շփոթութիւն յարուցանող պատճառաբանութեամբ:

Nav = Nouveau (նոր) և Azaz = feu (կրակ), և իսկոյն կը յաւելու...: Le jour du feu nouveau (ես եմ ստորագծողը), parce qu'on renouvellait tous les feux dans l'orient avec l'année, et parce aussi que C'EST (է՛) un nouveau Soleil lun ouvel an qui luit»:

Թէ կրակապաշտները սովոր էին իրենց Տարւոյն սկիզբը— ո՛ր թուականին որ նա զուգադիպէր— ատրուչաններուն կրակը նորոգել՝ ասիկա յայտնի և ծանօթ է ամէնուս. և թէ հեթանոսական դարուն, նա մանաւանդ Մոգերուն Տոմարին ներմուծուծէն յետոյ, Հայերն ալ այդ սովորութեան հետեւեցան, ասոր ալ կարելի է հաւանութիւն յայտնել այդ օրուան ժողովրդական ցնծութիւններուն աւանդաբար հաղորդուած նկարագրութենէն գոնէ դատելով որ՝

«Ո՛ր սայր ինձ զձուլս ծխանի եւ զուսուսոց նաւասարդի,
Մեք փող հարուաք եւ քմբկի հարկանեաք».

Այլ թէ Յուրեան Տոմարին Օգոստոս 11ին նշանակուած Հայոց Քաղաքական Տարեմուտին օրը ծագած Արեն ալ միանգամայն նոր Արեւ պէտք է ընդունիլ, նաւասարդին անյաջող ստուգարանութեան մը ծառայող այդպիսի պատճառարանութիւն մը ոչ գիտութենէն կրնայ յուսալ օգնութիւն և ո՛չ ալ Օգոստոս 11ին զուգադիպող Արեգական նոր Շրջանի սկսելուն վերաբերեալ յիշատակութիւն, զոր կարելի չէ գտնել ո՛չ մի Տարեցոյցի մէջ, աշխարհակալ հին Հռոմին գործածէն սկսեալ, որ անոր նուաճած և նաև ջնջած Ազգերուն Յիշատակարանը կրնայ նկատուել կրօնական և ազգային աւանդութեանց հաւաքածոյք մը՝ թէպէտև քիչ մը խառնակ՝ այլ քննասէրի մը համար յոյժ թանկագին:

Ժբպըլէն այդ Հռոմէականը, իր Դ. Հատորին սկզբնաւորութեանը՝ գէմ առ գէմ դրած է եզրիպտականին, Երրայականին և Հելլենականին, տալով չորսին ալ Տօներուն նկարագրութիւնը, և կարեւոր ծանօթութիւններ:

Ատոր քննութեան թողած առաջին տպաւորութիւնն է՝ որ բոլոր Հին Ժողովուրդներուն Տարին Աշնան Զուգահաւաստարին կը սկսէր: Բոլոր ազգերը, իրենց երկար կեանքին ընթացքին, առ նուազն երեք անգամ Տարեցոյց փոխած են: Նոր Տոմար կարգադրողները, Տարեմուտ փոխադրողները, մի՛շտ ջանացած են զանոնք տեղաւորել Արեգական Շրջանին չորս կարեւոր կէտերուն մօտաւոր, այսինքն է, երկու Արեւադարձներուն և երկու զուգօրուքեանց:

Այդ տեղափոխութեանց շարժառիթները ընդհանրապէս եզրած են, նոր դարագլուխ բացող պատմական դէպքեր: Հրէից եզրիպտոսէն ելքը, օրինակի համար, որուն ի յիշատակ կ'ըսեն թէ Մովսէս իր Ազգին կրօնական Տարին գարնանամուտին սկսել տուաւ:

Այսպէս նարոննասար Արքայն, ի յիշատակ Ասորեստանի լուծէն Բաբելոնը ազատելուն, Քաղղէացւոց հին տարեմուտը փոխադրելով և ջնջելով իրեն նախորդներուն յիշատակները, նոր Տարի մը կարգադրեց

որ Ere de Nabonnasar (էջ 136) պիտի կոչուէր, որ ըստ Յղեքսանդրիոյ Աստղագէտներուն, Գրիստոսէ 747 տարի առաջ, Փետր. 26ի ճիշտ կէսօրին սկսած է:

Փառասիրութիւնը, ինչպէս կը տեսնենք անցեալին մէջ և ներկայիս ալ. Տիրապետութեան ազդեցութիւնը, քաղաքական յեղաշրջումները, քաղաքի մը հիմնարկութիւնը և այլն, բոլորն ալ Տարեմուտներուն փոփոխումին մէջ դեր կատարած են:

Ծիծառնիկներուն մեկնիլն ալ Տարւոյն վերջանալուն և նորի մը ժամանիլը զգացնել կու տար: Այսպէս է որ Հռոմայեցոց նախահայրերը այդ թռչնիկին մեկնած օրը գամ մը ևս կը մխէին Մինչևոյա Դիցուհւոյն Տահարին մէջ:

Calendrier Rom. 13 Sept. Le Grand Préteur attache le Clou. Hirondelles s'en vont. Սովորութիւն մը որ շարունակեց Հռոմուլոսի կարգադրած Տարեցոյցէն ալ վերջը, որով Սեպտեմբերին Տարեմուտը Մարտին փոխադրուեցաւ: Նուժա, սա ևս Տոմար յօրինող մը վերահաստատեց այդ կարգադրութիւնը՝ ի յիշատակ Հռոմի հիմնարկին որ Մարտի Լուսնին՝ Ապրիլի մէջ կը տօնուէր և կը տօնուի տակաւին՝ այդ ամսոյն 21ին: Ժըպլէն այս առթիւ, Մայիս (Maja = Մայր Հողին Դիցուհին) և Յուլիս լատին բառերուն պարունակած նշանակութիւնէն հետեցնելով՝ «եղած ըլլալու է, կ'ըսէ, ժամանակ մը որ Սեպտեմբերի այդ Տարեմուտէն զատ, Հռոմէացիք Ամառուան Արեւադարձին սկսող ուրիշ տարի մ'ալ ունեցան» (էջ 149), որու փաստ կրնան ծառայել այդ Արեւադարձին 5 նախընթաց օրերուն ժողովրդական զննութիւնները, որոնց առթիւ նաևերը պսակազարդ կը պնէին և կը կատարուէր Ջրախաղաց:

«25 Juin.— Navires couronnés, où se font des festins sur le Tybre».

Յաջորդ օրուան համար Հռոմայեցոց Տարեցոյցը կը նշանակէ՝

«26 Juin.— Solistice. Ceinture d'Orion se lève».

Օռիօնի, այսինքն Հայկ Համաստեղութեան կամարին 3 Մոզերը կոչուած փայլուն աստղերուն Արեւադարձին օրը երևան դալուն այս խորհրդապաշտ զուգադիպութիւնը՝ մասնաւոր կարեւորութիւն մը կը ստանայ նկատելով՝ մասնաւոր, որ 3 Մոզերը երևան կու գան, կը յիշատակուին այն ամէն անգամ որ սկիզբ մը, ծնունդ մը կը պատահի: Սա տարբերութեամբ որ՝ Հեթանոսական շրջանին Մոզ կոչուած երեք փայլուն Աստղերը երևան կու գային հորիզոնին վրան Աշխարհը լուսաւորող Նոր Արեգակի մը ծնունդը աւետելու, մինչ Գրիստոսնէականին մէջ Աստղ մը փայլուն պիտի երևնայ 3 Մոզերուն աւետելու:

մարդկութիւնը լուսաւորող Արեգակի մը ծնունդը: Յուսով ենք որ զմեզ ալ լուսաւորելով հաշտարար և պատշաճ լուծումի մը կ'առաջնորդէ:

Առ այս հարկ պիտի ըլլայ, սակայն, Դիցարանութեան թողած ճամբաներէն ընթանալ և զիմադրաւել անոր յարուցած դժուարութիւնները:

Յաջողութիւնը՝ այլ ասացիկ անոր լեզուին մեր վարժութենէն կախեալ է:

* * *

Ծամածուռ և դժուարուած ճամբուն վրան մեր զիմաց առաջին ելողը, լաւ ես՝ կանգնողը պիտի ըլլայ Հերակլէս, այն որ յորջորջուած էր le Thébéen, որուն ստուգաբանութենէն (thèbe = ասպան = սաւ) ժըպըլէն կը հեռեցնէ որ անմահութեան չհասած, այդ հուժկու հսկան նաւավարի, ծովագնաց վաճառականի կեանք վարած էր և արկածախնդիր շահատակութիւններովը աշխարհահռչակ համբաւի արժանացած:

Ինչ որ է՝ մեզի կարեւորն է որ, Փեպոս Յոյն Ապոլոնին ծնելէն շատ առաջ, Դիցարանութիւնը արեւին օրաշուրջ զնդակը վարելու պաշտօնը այդ Թեպսցի Հերակլէսին յանձնած էր, որու 12 վաստակները պիտի ներկայացնէին Տարւոյն 12 Ամիսները՝ համապատասխան Հողագործին աշխատած 12 Ամիսներուն: Սրն որ, վերջ ի վերջոյ նոյնացաւ Արեւին հետ որ զերահօր Ախոյեանն է՝ անյաղթ՝ l'Athlète par excellence, le Dynaste physique.

Արդ այս Հերակլէս—Արեգը՝ ամէն տարեշրջանի վերջաւորութեանը, կին փոխելու սովորութիւնը ըրած էր: Հինը կ'արձակէր, նոր մը կ'առնէր որուն անունն էր Jula = Յուլա:

Արձակուած պտուրը, անգործածելին, և անոր 52 զաւակները, Հերակլէսի սիրասուն թոռին — որուն ալ անունն էր Jul = Յուլ — կը յանձնուէր, որպէսզի զանոնք տանէր տեղաւորել Մէսնիա կոչուած հեռուոր երկրին մէջ:

Այս յոյժ հաճելի Այլարանութեան մեկնութիւնը պարզ է:

Պառաւջած, այլևս անգործածելի դարձած կինը՝ հին Տարին էր, Յիսուն երկու զաւակները՝ վերջացած Տարիին Ծարաթները, Յուլա, նոր կինը, Յունիսին յաջորդող Ամիսն էր այսինքն Տարեմուտ: Իսկ Յուլ թոռանը արուած պաշտօնը կը կայանար՝ հեռացնել, ջնջել անպետը և անոր փոխան բանալ նոր Տարեշրջան, քանի որ հինը վերջացած էր, որու ի նշան Յունիսի վերջին օրը, նուազերգական հանդէսներով կը տօնէին Հերակլէսն ու Մուսաները:

Juin 30.— Hercule et les Muses. Retraite du Peuple en Juin.

Եւ ամէն մարդ իր տունը կը վերադառնար, քանզի յաջորդ օրը, Յուլիս 1, Հռոմէացիք սովորաբար բնակարան կը փոխէին և այս առիթով բնականաբար, նոր տունին կրակն ալ կը նորոգուէր:

Juillet 1.— Jour où L'on change de logis.

Տեղափոխութեան յղանցուցիչ գործողութենէն յետոյ — որ շարաթ մը կը տեւէր — սպասուհիներուն և ծառաներուն արձակուրդ կը տրուէր:

Juillet 7.— Fête des Servantes. և ... Romulus non apparuit.

Ինչո՞ւ Հռոմուլոս, աստուածացեալը, չէր երևար, ատոր մեկնութիւնը կնճռոտ է: Մի գուցէ նա ալ կին փոխելով, մեղրալուսնի առթիւ կ'անյայտանար:

Այս կերպով է որ Մինեովեան հինգօրեայ (Quinquates de Minerve*) տօնին վերջին օրուան Զրախաղացին յաջորդող առաւօտը (26 Յուլիս) Հռոմի մէջ շնորհաւոր նոր Տարի կը բարեմաղթէին իրարու, որովհետև ժըպրէնին նոյն իսկ բառերով — parce que c'est un Nouveau Soleil, un nouvel An qui luit.

Դէպք մը որ Յուլեան Տոմարին Օգոստ. 11ին երբե՛ք հանդիպած չէ:

* * *

Առարկողներ գտնուին, թերևս, թէ փոքր Ասիայէն այնքան հեռու երկիրներու վերաբերեալները ի՞նչ առնչութիւն կրնան ունենալ Հայկական Տարեմուտին առթիւ յիշատակուած անուաններուն՝ Անահիտ, Վահագն. Նաւասարդ որով կը սկսէր մեր նախահօր անունը կրող Հայկի Շրջանը:

Կարգը իմս է, արդ, հարցնելու. ինչպէ՞ս է որ այժմ, անսահման Ովկէաններէ բաժնուած ժողովուրդներ Քրիստոսի Ծնունդը, Աստուածածնայ Վերափոխումը միասին կը տօնեն, միևնոյն օրը Շնորհաւոր նոր Տարի կը բարեմաղթեն նշմարուած կարգ մը զուգադիպութիւններուն և յարաբերական աննչութիւններուն պատճառը այն է որ, այդ մեր շօշափած հնազարեան ժամանակ. Արևելիցիներուն համար Եւրոպան կը նկատուէր ինչ որ Գոլոմպոսին նոր Աշխարհը պիտի ըլլար Եւրոպացւոց համար, այսինքն է՝ նոր գաղթավայր: Եւ գաղթողները, Ենէասին նման, լքուած ծննդավայրին բարքերը և ընտանի զից պաշտամունքը միասեղ պիտի տանէին:

*) որ 360ին վրայ 5 օրերու Յաւելիացները կը ներկայացնեն.

Արեւելքէն Արեւմուտք այդ ընդհանուր հոսանքին հետեւելով, Ամազոնները՝ Պոնտական ծովեզրէն մեկնելով, Հռոմայեցիներուն նախահարց երկիրը, Լատինոնի մէջ պիտի տեղաւորուէին. հոն ուր դեռ այսօր agro Pontino կը կոչուի: Ուր պիտի ծնէր Վիրգիլիոսէն անմահացած Գամիլլա դիւցազնուհին որ՝ Ամազոններուն գործածած երկսայրի սակուրը (Լատ. Securis և Securiger (սակրաւոր սակրակիր) = les Amazones) ձեռքը, ահաւոր ջարդ տուաւ Ենէասին Տրովաղացիներուն, ստոնք այ նմանապէս Փոքր Ասիայէն դալթոններ:

Այս պատճառով Աշխարհագրութիւնն և Ազգախօսութիւնը հեռաւոր երկիրներու մէջ համանուններու կը հանդիպի. Հայաստանի Արաքս գետը, Պեղոպոնեսին մէջ, հրուանդանի կը փոխուի և անոր զիմացի Ագառնանեան եզերքին վրայ կը վերադառնայ գետ (Arachtos):

Այսպէս է որ նախահոմերական հռչակ վայելող Կապադովկիոյ Ուլիսաստեղիներուն Cuma անունը դեռ ներկայիս կը հանդպինք նոյնքան նշանաւոր Փիլեղեան (Campi Phlegraei, այժմ Սօլֆադատի) դաշտերուն մօտերը, ուր Դիցաբանութեան պատմածին, Հերակլէս մեզի ծանօթ Հսկան, Չեւս Արամազդին օգնութեան հասնելով, Տիտաններուն բանակը պարտութեան մատնեց և ազատեց Ոլիմպոսը անոնց սպառնական յարձակումէն:

Պատէն է աւելցնել որ նէպոլսէն քիչ հեռաւոր արդի Cuma Տաճարին մէջ կը գտնուէին, կ'ըսեն, Հին Իտալիներուն աւանդութեանց Տարեգրութիւնները, որոնք Գուժայի Սիպիլլայէն Տարգուլինիոս Հռոմի Արքայն գնելով՝ Կամպիտոլիոնի Դիւանին մէջ դրած էր, ուր խնամքով պահուած մնացին, ըսա ոմանց, մինչև Վերգիլիոսի թուականը:

Ահա թէ ինչո՞ւ անմահ Քերթողհօր յիշատակած Էբուլի, Մարսի, Հեթուր, Ալպան, Տիւրէն, և Տիբուռ որմէ Թիվոլի և Տիբեր, ազգանուններն ու տեղանունները, և մինչև անգամ Հռոմին արեւելեան զիրքով նշանակուած Capadocia գիւղը, և անոր մօտակայ Միսիա լեռը և այլք, իրենց համանունները աւելի դիւրաւ կրնան գտնել Կապադովկիոյ հին և նոր քարտէսներուն մէջ, և մինչև անգամ Հայկականէն վաղեմի յիշատակներ ստանար: Քանզի պէտք չէ զարմանայ և ո՛չ ալ ուսերը վեր թօթվել կթէ մէկը զուրցէ որ Ետուրրական հին Arretum քաղաքը, արդի Աւէցցօն, իր անունին ծագումին նկատմամբ ի հարկին կրնայ զիմել Բարձր Հայքի, Տուղրիլին այրած Արծնի. ինչպէս Ariminum, արդի Ռիմինին՝ Արմէն անունին:

Սակայն ինչո՞ւ այսքան երկարել երբոր գողթան երգիչները անգամ կը հաւաստեն վիշապաքաղ մեր Վահագնի և Խոթնաբախի Հիօթան սպանող Հերակլէսին նոյնացումը. զրոյց մը որ Խորենացին ալկաջովս լսեցի, կըսէ (Ա. Լա):

«Ընդ վիշապաց ասէին յերգն կուուել նմա և յաղթել և կարի իմն նմանադոյնս զՀերակեայ նահատակութեանցն նմա երգէին»:

Այս միեւնոյն համողումէն զրդուած՝ մեր Վահուհի Բրմապետներն ալ, երբոր Արտաշէս Հայ Արքային զրկած արձանները Հայաստան հասան, «զՀերակլեան զպոնապատկերն՝ զՎահագն իւրեանց վարկանելով նախնի, կանգնեցին ի Տարօն իւրեանց սեփական զիւղն յԱշտիշատ, յետ մահուն Արտաշէտի» (Խոր. Բ. Ժա):

Մինչ Վահագն և Հերակլէս այս եղանակով նոյնացած, Օգոստոս 11ի միեւնոյն օրը Հայ և Հռոմէական տարեցոյցներուն մէջ կը տեսնենք յիշատակուած.

AOÛT 11.— Au grand Hercule Gardien, dans le Cirque de Flaminus.

Վահագնը, Բաջուլթիւն պարգեոզը, Հայաստանի մէջ փառաւորուած, և Հերակլէսը՝ իրբև գերանզօր պահպանիչ, Հռոմի Յլամիւնեան կրկէսին մէջ տօնախմբուած, միւս կողմանէ ուրիշ զոյգ մը կը նշմարենք, Օռիօն և Հայկ, երկուքն ալ զիւցաղուններ, որոնք Օգոստոս 11էն տարբեր թուականի մը կը ներկայանան՝ անմահացած միեւնոյն համասեղութեան մը մէջ, որն որ Ամառնային Արևադարձին ճիշտ օրը Հերակլէս Արեգին նոր շրջանը կ'աւետէ, եռասուղ իրեն շողուն կամարը հորիզոնին վրան փայլեցնելով: Եւ զարմանալին այն է որ այդ 26 Յունիսի նախօրեակին Տիրեր գետին վրայ կատարուած Զրախաղացին նման ժողովրդական ցնծութիւն մը տակաւին այսօր Հայ Տարեցոյցը կը շարունակէ նշանակել այդ Արևադարձէն քիչ հեռաւոր: Սովորութիւն մը, որ տեղական աւանդութիւնը կը համարէ իրբև մի հեռաւոր յիշատակ Զրահեղին անարկու դէպքին, որմէ վերջը Աշխարհս վերստին ծնաւ:

Ծնունդ մը որ նգիպտացիք Նեղոսի ջրերուն վրայ Յուլիս 21ին հանդիսաւոր կը տօնէին:

Juillet 21. — Naissance du monde, selon les Egyptiens.

Մարդու թեան նախահարց հնաւանդ բարձրուն, անոնց կրօնական և ազգային Տօներուն վերաբերեալ այս կարգ մը յիշատակութիւններէն կարելի է հետեցնել որ՝ եղած է նաև ժամանակ մը, երբոր Արևը Երկնաւոր Միակ Զօրութեան խորհրդանշական ներկայացուցիչը պաշտուած էր. Արևը որ Զրհեղեղէն վերապրողները հիացումով տեսան յաղթական շրջիլ Չուրց անսահմանութեան վրան, երբոր երկրաւոր բոլոր զօրութիւնները պարտուած էին. եղաւ, կ'ըսեմ, ժամանակ մը որ Հայոց հեթանոս նախնիքն ալ, Օգոստոս 11ին սկսող այդ Տարիէն զատ, և անշուշտ անկէ առաջ, ունեցան ուրիշ Տարի մը որ կը սկսէր Ամառնային Արևադարձին, ինչպէս որ էր ժրպրկէնին հաստատածին նման հին Եգիպտականը և նախաւոր Իտալներուն գործածածը: Մշուշապատ Դարերուն նահապետական այդ Տարիին կը պատշաճի կոչուիլ Հայկի Երջան. և անոր առաջին Ամիսը՝ Նաւասարդ, որուն ստոյգ մեկնութիւնը փափաքողը Վեր. Տէրվիշեանի յոյժ հմտական երկասիրութենէն կրնայ կատարելապէս տեղեկանար: Եթէ այդ աղբիւրը ժրպրկէնի տրամադրութեան ներքև եղած ըլլար, վստահ եմ որ անոր սրամիտ ուշադրութենէն վրիպած պիտի չըլլար Նաւասարդ բառին վերջագիր Դ. բազաձայնին կարեւորութիւնը:

Արդարև՝ Նաւասարդ, որ կազմուած է.

Նաւ = Nouveau և Սարդ = âge, an, période,

Բառ առ բառ կը նշանակէ, նոր շրջան, ամ, եղանակ, միով բանիւ՝ Ամանոր, նոր Տարի:

Մայրենի մեր մեծասքանչ լեզուն, իրեն բարդութեանց մէջ այդ սարդ արմատը ուրիշ առթիւ ալ գործածած է.

Օրինակի համար. Երիտ-ա-սարդ = âge de vigueur, de jeunesse.

աւ-սարդ = âge de blancheur des cheveux.
de vieillesse, etc.

*
* * *

Եւ քանի որ առ հասարակ այլևս գործածուած Տարեցոյցին Ամանորը մօտալուծ է, ինծի ուրիշ բան չի մնար բայց միայն իմ սիրելի Ազգայիներուս բարեմաղթել, ինչպէս անցեալին մէջ,

Շնորհաւոր Նաւասարդ


և ընդհուպ վերադարձ այն երջանիկ ժամանակներուն երբոր ամենայն Հայոց աշխարհին կը հասնէր.

«Դիցն օգնութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ Կիկնոջէ, և քաջութիւն ի քաջն Վահագնէ» (Ագարանգ. էջ 106):

Այլ նախ և առաջ՝ վերադարձ օտար աստղերու տակ թափառող Հայութեան, որպէսզի ա՛լ ևս դադրին որդեկորոյս մեր Մօրկան արասուքը:

(Բրոճ.) ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ
(Ճարտարապետ)

Անօր «Արարատ» 11 Նոյ. 1938



ՄԱՅԲԼ ԱՐԼԵՆ ՆԻ Գ. ԿԱՌԱՎԱՐԵՆՑ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵՒ ՄԻՋՈՑ՝ ԱՇԽԱՏԱԶՐԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿՈՌԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հին ժամանակներէ ի վեր քաղաքային աշխատադուրկներուն կ'առաջարկուէր, ձգել քաղաքները և նուիրուիլ երկրագործութեան՝ համագործակցային հիմունքներով: Այսպէս կոչուած ներքին քոլոնիզատիոնը ղէպի ինքը գրաւեց ո՛չ միայն երկրագործական, այլ նաև մասամբ ճարտարարուեստային գործաւորները: Այս ներքին քոլոնիզատիոնը վերջին ժամանակներս յաջողութիւն ունեցաւ մասնաւորապէս Իտալիոյ և Գերմանիոյ մէջ:

Քաղաքային գործաւորները սակայն մեծաւ մասամբ յարմարութիւններ չունէին երկրագործական աշխատանքի համար. և ինչ որ աւելի տխուր է, անոնց քաղաքային ու փրոլետարական հակումներն ու կեցուածքը քիչ անգամ կը հաշտուէին երկրագործական պայմաններուն հետ: Ուստի՝ այս կարգի գործաւորներու համար աւելի ղիւրին է քաղաքի մէջ մնալ և այն տեղ բան մը ձեռնարկել՝ համագործակցական հիմունքներով:

Գծրախտարար այս պարագային համագործակցութեան ամենայն յարմար ձևը արտադրական համագործակցութիւնն է, որը սակայն ամենադժուար ձևն է, ուստի և՛ ան կը պահանջէ, զոնէ առաջին շրջանի համար, որոշ ծանօթութիւններ, կարգապահութիւն և նոյնիսկ զոհարերոց ոգի: Համագործակցութեան այս ձևը աւելի հին է, քան սպառողական ընկերութիւնները, բայց և այնպէս՝ ան վերջիններէս շատ է յետ մնացած:

Արտադրական Համագործակցութիւնը ճարտարարուեստի մէջ մինչև այսօր ալ սիրելի ձևն է ո՛չ միայն գործաւորներու, այլ նաև վիպագիրներու համար: Վերջիններուս սիրած շատ մօտիկ է կեցած աշխատադուրկներու շահերուն: Յրահասցի իմիլ Զոլայի պէս նշանաւոր վիպագիր մը իր «Աշխատանք» վէպին մէջ կը նկարագրէ արտադրական համագործակցութիւնը:

Յայտնի ամերիկացի վիպագիր Ուիթոն Սինքլէր իր վերջերս լոյս տեսած «Քօ—Օփ (Քօ—Օփ) վէպին մէջ արտադրական համագործակ-

ցութիւնը կը նկարաչարէ իրբև միջոց մը, լուծելու համար աշխատազերկութեան հարցը: Խուժար մը աշխատազերկներ Ամբրիկայի մէջ կը հիմնեն Համագործակցութիւն մը, որ անոնց կու տայ աշխատանք եւ միաժամանակ կը բաւարարէ անոնց բոլոր անհրաժեշտ կարիքները: Համագործակցութիւնը շրջանառութենէն կա կը քաշէ դրամը եւ ասոր փոխարէն կը ներմուծէ շէքեր, զորս կը ստանան գործաւորները իրենց աշխատանքի դիմաց եւ զորս անոնք կը փոխանակեն յետոյ կենսական բարիքներով: Քալիֆորնիոյ մէջ արդէն գոյութիւն ունի Սինքլէրի պատուական վէպին մէջ նկարագրուած նման կազմակերպութիւն մը: Ըսենք նաև, որ այս վէպը արդէն թարգմանուած է բազմաթիւ լեզուներու: Նման կազմակերպութիւն մը — միայն թէ ան բոլորի եւ ո՛չ թէ միայն աշխատազերկներու համար է — փորձի տակ է արդէն, քանի մը տարիներէ ի վեր, Քանատայի Ալպերթա պետութեան մէջ:

Մեզի մօտիկ Եւրոպայի մէջ ալ օրինակներ ունինք աշխատազերկներու շատ լաւ աշխատող արտադրական համագործակցութիւններու: Այսպէս՝ Անգլիոյ մէջ քանի մը տարի առաջ երկու աշխատազերկներ հիմնեցին Հարաւային Ուէլսի մէջ «Համագործակցային հիմունքներով ինքնահոգածողութեան ընկերութիւն» մը: Դասախօսութիւններով եւ նուիրահաւաքութեամբ անոնք կարողացան որոշ դրամար մը ստեղծել, որով եւ գնեցին զարեջրի կիսակործան գործարան մը: Ուրիշ աշխատազերկներու օգնութեամբ՝ անոնք կրկին կարգի դրին շէնքը եւ չայտել հաստատեցին զանազան բաժանմունքներ՝ բազմազան աշխատանքներու համար: Հոն կան գործատեղիներ դերձակներու, կօշկակարներու, ատաղձագործներու, սասայնանկներու եւ պատեր պատաստողներու համար: Այս բաժանմունքներէն իւրաքանչիւրը կը կառավարուի վճարուող վարպետի մը կողմէ: Այս վարպետներու պարտականութիւնն է սովորեցնել այս արհեստները աշխատազերկներուն, որոնց համար նման զբաղմունքներ բոլորովին նորութիւններ էին, որովհետեւ իրենք մեծ մասամբ հանքագործներ էին: Ուսուցման այս յաջողութիւնները կարելի է հիմակուրէն արդէն նշմարել: Նկարագրուած Համագործակցութիւնը, որուն անդամներուն թիւը 280 է — ասոնցմէ 260՝ ընտանիքներով — իր վրան է առած նոր կարեւոր պարտականութիւն մը: Ան բացաւ ջաղաց մը, փուռ մը եւ խանութ մը՝ համագործակցութեան արտադրած բոլոր ապրանքներու համար: Համագործակցութիւնը կը զբաղի նաև երկրագործութեամբ:

Ձեռնարկութեան գլուխն է կեցած Համագործակցութեան հիմնադիրներէն մին՝ Փօրրեսթը: Իսկ բաժանմունքներու վարիչները կ'ընտրուին իրենց՝ աշխատազերկներու կողմէ, ամաէ ամիս գումարուող ժողովներու մէջ:

Համագործակցութիւնը լոյս կ'ընծայէ ամսագիր մը ու կը կազմակերպէ իրիկուէնները դասախօսութիւններ, որոնք Համագործակցութեան անդամները հողեպէս իրաքու կը մօտիկցնեն: Գործաւորները ապահովուած են հիւանդութեանց և արկածներու դէմ: անոնք ամէն տարի ութն օրուայ արձակուրդ մը ունին, երբ ընտանիքով կը դրկուին ծովափ, ուր կ'ապրին վրաններու ասկ:

Համագործակցութեան անդամագրուելիչ ու անկէ հեռանալը միանգամայն ազատ է: Աշխատանքի ժամանակը կանոնաւորուած է, ուսելիքը լաւ է եւ աժան:

Նկարագրուած Համագործակցութեան նրպատակն է, աշխատազուրկներն այնպէս կազմակերպել, որ անոնք կարող ըլլան կեանքի համար ամէն անհրաժեշտ բարիք իրենք ստեղծելու: Միայն վարպետները կը վճարուին, իսկ գործաւորները՝ ո՛չ, որովհետեւ ասոնք պետութեանէն, իրրեւ աշխատաւորներ, արդէն կ'աջակցուին Համագործակցութեան ապրանքները՝ իրենց արժէքի գնով կը բաշխուին անդամներուն: Եւ որովհետեւ այս ձեւով՝ օրավարձեր գոյութիւն չունին, ինչպէս նաեւ գոյութիւն չունին ձեռնարկողի շահ ու առեւտրական շահ, ուստի և զինները, ատոր համեմատութեամբ՝ շատ աւելի վար են, քան սովորական շուկայի գինները:

Համագործակցութիւնը ստիպուեցաւ ճակատ տալ համայնավորներու, առեւտրականներու և բանտերական միութեանց առաջնորդներու հակառակութեանց: Բայց և այնպէս՝ ան — շնորհիւ իր անդամներու մեծամասնութեան միութեան, կրցաւ հակառակորդներու փորձերը չէզոքացնել և բարգաւաճիլ հրաշալի կերպով:

Նկարագրուած Համագործակցութեան օրինակը կրնայ նաև եւրոպական մայր ցամաքին յանձնարարուելի Անիկա ո՛չ միայն արտադրական համագործակցութիւն մըն է լոկ, այլ՝ այսպէս կոչուած ամբողջական, այսինքն՝ բազմաթիւ գործաւորութիւններով սփռուած համագործակցութիւն մը:

Այսպէս կը լուծուի, որոշ չափով մը՝ Համագործակցային կազմակերպութեան հարցը աշխատազուրկներու, որոնք ամէն պարագային չպիտի անհետանան երբեք:



Բրոն. Վ. ՏՈՏՈՄԵԱՆՑ

ԲՐՈՅ. Վ. ՏՈՏՈՄԵԱՆՑ

ԱՅՏԸՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Յորմէյետէ բաղմաձայն երգեցողութիւնը մուտ գործեց մեր եկեղեցիներէն ներս ու հեծողհեծէ ընդհանրացաւ մեր պատարագի մեղեղինները հանդիսացան պատրաստ նախանիւթ մը հայ երաժշտագէտներուն՝ բաղմաձայնութեան այդ նորամուտ արուեստի մշակումին համար։ Ուրախալի է տեսնել թէ մեր զանազան միաբանութեանց հոգեւորականութիւնը չի բաւականանար միայն պահպանելով և իրարու փոխանցելով կրօնական հին երգերը իրենց նախնական, միաձայն ձեւին մէջ, այլ ամէն տեղ կը գտնուին երաժշտասէր հոգեւորականներ, որոնք կ'ուսումնասիրեն եւրոպական ներդաշնակութեան օրէնքները, և յետոյ զանոնք կը կիրարկեն մեր կրօնական երգեցողութեանց դաշնաւորումին։ Այսպէսով մեր վանքերը, ազգային դպրութեանց մէյ մէկ կեդրոններ մնալով հանդերձ կը դառնան նաև, աւելի կամ նուազ չափով, երաժշտական արդեւստիին զարգացումին ու տարածումին նպաստող մէյ մէկ ազդակներ։

Այտընեանի պատարագը, որուն ձեռագիրը ունիմ այս պահուստ ձեռքիս տակ և որուն մասին կ'ուզեմ հակիրճ ուսումնասիրութիւն մը ընել Գաղութահայ Տարեգիրքին էջերուն մէջ, ինծի առիթը կու տայ, այս հաստատումը ընելու։

Վիեննան ամէնէն նպաստաւորուածն է իր դիրքով։ Բացի, անցեալին մէջ Հայր Այտընեանէն, այդ միաբանութիւնը ներկայիս ունի իր անդամներուն մէջ երկու հմուտ երաժշտագէտներ՝ Հայր Մովսէս Սրապեան, նոյնպէս հեղինակը բաղմաձայն պատարագի մը, որուն մասին պիտի խօսիմ ուրիշ առթիւ, և Հայր Գրիգոր Հեպոյեան, ծանօթ արդէն Կոմիտասեան երգերու իր փունջերով, յօրինուած երգչախումբի և նուազախումբի համար, ինչպէս և ուրիշ ինքնագիր գործերով։ Վենետիկի միաբանութենէն Հայր Ղեւոնդ Տայեան իր լուրջ ուսումնասիրութիւններով երաժշտական շրջանակներուն ուշադրութիւնը կը գրաւէ։ Երուսաղէմի միաբանութիւնը, յանձին Պսակ վրդ. Թումայեանին ունի իր տեսարան-քննադատ երաժշտագիրը. իսկ Պէյրութէն, Հայր Յովսէփ Գալա, ձեան, Հռոմի Լեւոնեան վարժարանին մէջ ուսած, կը ճանչցնէ ինքզինքը իր մէկ նոր հրատարակութեամբ «Հայ եկեղեցական երգեր»

քառաձայն խումբի կամ երգեհոնի համար, տպուած ի Վիեննա: Կը
բաւէ միայն աւելցնել այս անուններուն վրայ Կոմիտաս վրդ.ին պան-
ծալի անունը, համոզուելու համար թէ հայ կղերականութիւնը ինչպիսի



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

մեծ նպատակը բերած է ու կը բերէ առ հասարակ երաժշտութեան
զարգացման համար:

Այտրեան պատարագը, զրի առնուած 1884ին, արժանիքն ունի

ըլլալու հայ առաջին բազմաձայն պատարագը, թէև անցնող յիսուս տարիներու ընթացքին հայու թիւնը առիթը չէ ունեցած լսելու այս գործը, երգուած ըլլալով միայն քանի մը անդամներ Աւստրիոյ մէջ: Ինչ որ կը կազմէ այս գործին երկրորդ ու մեծագոյն արժէքը, օրկի և նուագախումբի ընկերակցութեան մաս մ'ունենալն է, ինչ որ կը պակսի մեր միւս պատարագներուն:

Այս է պատճառը անշուշտ որ այս գործը քիչ անդամներ միայն երգուած է, իր ներկայացումը հանրութեան՝ կապուած ըլլալով մեծ ծախսերու: Յիրաւի, բացի երկսեռ խումբէն ու օրկէն նուագախումբը պէտք է մէկտեղէ առնուազն 30 հոգի, լարային գործիքներու խումբը, սրինգ, երկու զլարինէթ, երկու օպոյ, երկու պասօն (ֆակօթ) 2 վալտօրն, 2 թրումպա, թրումպօն և թէմբաներ:

Աւելորդ պիտի ըլլար բաղդատել Այտրնեան պատարագը կոմիտասեան պատարագին հետ, քանի որ երկու քին ունեցած զեղեցկութիւնները տարբեր տեսակէ են: Կոմիտասին պատարագը, որ արդէն արական խումբի համար գրուած է, առանց գործիական ընկերակցութեան, թանկազին է մեղեդիներու զեղեցկութեամբ, անոնց տոնմիկ հարադատութեամբ, խաղերու ճոխութեամբ և անոնց ճշգրիտ, բծախնդիր ութագրութեամբ:

Ոչ միայն երաժշտագէտի մը այլև արուեստագէտ երգիչի մը գործն է անս Այդ երգերուն ղաշնաւորումն է միայն որ չէ հասած հեղինակին միւս գործերուն, մասնաւանդ զեղջուկ խմբերգներուն ղաշնաւորումի կատարելութեան: Ինծի այնպէս կը թուի թէ Կոմիտաս իր այդ գործին մէջ աշխատած է ստեղծել նոր ոճ մը, հայ կրօնական-եկեղեցական երգերու մասնայատուկ ոճ մը: Բայց միթէ՞ իր կեանքի անզիտակից չըջանին հրատարակուող այդ էջերը, կրած էին նախապէս վարպետին վերջին յղումը: Ապահովաբար ո՛չ: Եւ ես վստահ եմ որ, թէև ինք անձամբ երգել տուած էր այդ պատարագը Պոլսոյ մէջ, բայց երբ բախտն ունենար ինքը տպագրութեան յանձնելու զայն, ապահովաբար հիմնական վերաքննութենէ մը պիտի անցընէր զայն, մասնաւորաբար երկրորդական ձայներու մասերը, որոնք խրթին գօնթրարունք թի ոճի մը բերումով, շատ տեղեր անյաջող բաղակցութիւններ կը կազմեն երգող ձայնամասին հետ, ատով իսկ դարձնելով այս զեղեցիկ պատարագը դժուար երգուելիք և դժուար ընդհանրանալիք գործ մը:

Այտրնեան պատարագին մէջ, ընդհակառակը, ղաշնաւորումի և օրքէսթրապիօնի մասն է որ գերակշիռ է: Մեղեդիներու չըջագիծ լաւ ձեւաւորուած չթուեցաւ ինծի: Խորհուրդ խորինը, օրինակի համար, շատ պարզացուած, նախնականեղանակ մը կը թուի բաղդատմամբ կո-

միտաօեանին. այդպէ՛ս նաև ուրիշ երգեր: Հայր Այսրնեան նօթագրած է այդ եղանակները բրոֆ. Վայսին օժանդակութեամբ, իսկ վերջէն, դաշնաւորումը և օրքէսթրասիօնը կատարած է բրոֆ. Յ. Պէօմի հա-



Հ. ԱՅՏԸՆԵԱՆ

Լանարար լման աշխատակցութեամբ: Ինչ որ ալ ըլլայ այս երկու օ-
տար վարպետներուն ստանձնած բաժինը, դատելով գործէն, Այսրնեան
պէտք է եղած ըլլայ անոնց՝ յուսաւոր առաջնորդ մը, ճաշակաւոր
խորհրդատու մը: Դաշնակաւորումը կատարուած է մեծ հմտութեամբ
ու խնամքով: Ոչ մէկ տեղ կրօնական շունչը կը արժանի կամ կը կոր-
սընցնէ իր վեհաշուք լրջութենէն. ու ինչ որ ամէնէն կարեւորն է այս
դաշնաւորումը, օգտուելով հանդերձ եւրոպական արուեստի ամէն տե-
սակի նրբութիւններէն, բոլորովին օտարաբոյր չէ. ու կարելի եղածին
չափ կը ճգնի մօտենալ գլխաւոր մեղեդիին ոգիին: Օրքէսթրային
վստահուած է կարեւոր դեր մը գեղեցիկ նախերգանքեր, միջնախա-
ղեր և մանաւանդ յանդուզն բայց ոչ խորթ մօտիլապիսիօններով վեր-
ջաբաններ, որոնց չնորհիւ երգերը կ'ընթանան, փոխն ի փոխ, մօտ
տաքը տեսակ թօնալիթէի վրայ, մամէտ կամ մինէտ: Ընկերակցու-
թեան բաժինը հարուստ է պէտպիսուն ըրթմերով և տեղ տեղ օւժեղ

մուսնոյն թելադրութիւններով, կը սկսի հայ կեանքով շահագրգռուի և ի սպաս դնել իր ուժերը՝ մաւաւանք իր կորովը, Հայ ազգին, առաջին անգամ մտնելով Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան Տիկնանց Որրախնամ Յանձնաժողովին մէջ: Տիկ. Չազըր անգամ մը շահագրգռուած Հայ կեանքով, հետզհետէ աւելի եռանդով նուիրուեցաւ Հայութեան:

1931էն ի վեր կը վարէ Գահիրէի Կանանց Այժնմիկ Միութեան նախագահութիւնը խղճամիտ ու անձնուէր աշխատութեամբ մը, ամէնէն պղտիկ մանրամասնութիւններով ալ զբաղելով և կանոնաւորութեան հսկելով: Տիկ. Չազըր այսպէս հիմա ունի Եգիպտոսի հայ գաղութին մէջ, իր ամուսինին հետ գործօն դեր մը և կը նուիրէ իր աջակցութիւնը շատ մը ազգային ձեռնարկներու:

Անձնապէս իր ծանօթութիւնը Հայ ազգին արժէքներու մասին ընդլայնելու համար, ինչպէս նաև ուրիշներու օգտակար ըլլալու համար 1937ին և 1938ին կազմակերպեց դասախօսութիւններ Հայ գրականութեան և Հայ պատմութեան վրայ իր տանը մէջ, որոնք օգտակար եղան: Ինչպէս ազգային նոյնպէս նաև միջազգային շրջանակներու մէջ ծանօթ դէմք մըն է Տիկ. Չազըր, որ կ'անդամակցի Եգիպտոսի Կանանց Միութեան, որուն կողմէ զրկուած պատուիրակութեան մը իրր անդամ մասնակցեցաւ Կ. Պոլսոյ մէջ գումարուած Համաժողովի մը և այցելեց նաև Էնկիւրի Բ. Ատենապետն է Միջազգային Մարդական Միութեան: Ինքը նախագահուէին է Կրըլ կայսերու հայկական հատուածին:

Մասնաւորապէս ունի՝ անձանօթին հետաքրքրութիւնը և չափօգանց մեծ սէր ճամբորդութեան և երկիրներ տեսնելու:

Իրեն ծանօթ է գրեթէ բոլոր Եւրոպան, սակայն իր նախասիրած վայրերն են, հետաքրքրական Արևելքը և անձանօթ աշխարհները, որոնց նկատմամբ իր ունեցած խանդավառութիւնը նոյնիսկ արկածալից ճամբորդութիւններու միշտ է զինքը դէպի Պարսկաստան դէպի Թուրքիոյ ներքին գաւառները և վերջապէս դէպի Մարոքի ներքերը:

(Ա. Ա.)

Զ Ա Գ Ը Ր Ճ Ա Ն Ի Կ Հ Ա Յ Կ

Մնած է 1879 Յունիս 1 (ն. Տ) Կ. Պոլիս Տափուտ փաշա եւ մկրտուած է Ենի-Գարուէ եկեղեցւոյն մէջ Հայկ անուռնով: Որդի Սկիւտարցի Մարտիրոս Համբարձումեանի (Իրանլը Չագրը օղլուի) եւ Շահինի (ծն. Ռափայէլեան), որոնց զաւակներուն եօթներորդն է ինքը:

Իր նախակրթութիւնը ստացած է Ենի-Գարուէ եւ Գնալը կղզիի ազգ. վարժարաններուն մէջ: Յետոյ յաճախած է Ենի-Գարու Սանտըզ Պուռնի հաստափուած Մեսաուճեան մասնաւոր վարժարանը:

1888—89ին կ'աշակերտի Պէրպէրեան վարժարանին եւ 1890ին Գատը-Գիւղի Արամեան վարժարանը կը փոխադրուի Մինաս Ծալեանի տնօրէնութեան առին, որ առին իրենք ալ կը բնակէին Գատը Գիւղ: 1892ին իրենց տունը հրդեհի մը զոհ երթալով, կը հեռանան Գատը-Գիւղէն եւ ինքն կը զրկուի Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն վարժարանը եւ 1895ին կը մտնէ Ռուպէթ Գոլէճ ուրկէ շրջանաւարտ կ'ելլէ 1900 Յունիս 15ին:

Ռուպէթ Գոլէճի մէջ իր ուսանողական շրջանին Հայ Ուսանողական Միութեան մէջ գործօն դեր կ'ունենայ եւ երկար առին կը վարէ անոր Ատենապետութիւնը, ինչպէս նաև խմբագրութիւնը՝ Միութիւն եւ Քնար թերթերուն: Նոյնպէս առնապետած է զպրօցի Երիտասարդաց Իրիտոնէական Միութեան:

Դպրոցը աւարտելէն յետոյ հակառակ իրեն եղած հրապուրիչ առաջարկներուն, (ինչպէս իր եղբորը ծանօթ տպարանատէր Սէրվիչէնի տպարանին տնօրէնութիւնը ստանձնելու եւայլն) չ'ուզեր Կ. Պոլիս մնալ եւ կ'անցնի Եգիպտոս ուր կը հասնի 1900 Նոյեմ. 19ին եւ Դեկտեմբերին կ'ընդունուի Wagons-Litsի Միջազգային Ընկերութեան պաշտօնէութեան մէջ եւ 1 Յունուար 1901էն կը ձեռնարկէ գործի:

1902ին ընկերութիւնը զինքը պաշտօնով կը փոխադրէ Կ. Պոլիս, սակայն Համիտական կառավարութիւնը չ'արժանար իր Թուրքիա մուտքը եւ ետ կը դարձնէ: Ընկերութիւնը զինքն այս անգամ կը զրկէ Իտալիա ուր Պրինտիզի եւ Նարոլի կը մնայ չորս ամիս ամառը եւ ձմեռը կը դառնայ Եգիպտոս:

1903ին դարձեալ ամառը Եւրոպա կ'անցնէ պաշտօնով: 1904ին կը փոխադրուի Բարիզ Ընկերութեան service d'exploitationի ճիւղին մէջ գործելու համար եւ այս առթիւ նաև կ'այցելէ 1905ին Գերմանիա: 1905ի ձմեռը նորէն Եգիպտոս կու գայ եւ կ'անուանուի ընկերութեան շարժման վարիչ 1906ին եւ 1907ին փոխ-տնօրէն եւ 1925 Յունդարին Եգիպտոսի եւ Պաղեստինի ընդհ. տնօրէն կ'ընտրուի:

Իր նախաձեռնութեամբ Արևելքի մէջ Wagons-Litsի ընկերութեան գործառնութեանց շրջանակը կ'ընդարձակէ և 1927ին Սուրիոյ, Իրաքի և Պարսկաստանի ներկայացուցիչ կ'անուանուի նոյն ընկերութեան և կը յաջողի կաղմակերպել մահճաբարձ վակոններու սպասարկութիւնը, 1921ին Պաղեստինի, 1925ին Սուրիոյ և Թուրքիոյ, 1928ին Իրաքի և 1930ին Պարսկաստանի մէջ, ուշագրաւ յաջողութեամբ մը, որ կը գնահատուի թէ՛ ընկերութեան և թէ՛ այն երկիրներուն վարիչներուն կողմէ:

Ֆրանսական կառավարութիւնը՝ 1929ին զինքն պատուած է պատուոյ լեգէոնի ասպետական, Պելճիական կառավարութիւնը՝ 1930ին պելճիական թագի սպայութեան, Ռուսական կառավարութիւնը՝ 1930ին Ռուսմանիոյ թագին հրամանատարի, Իտալական կառավարութիւնը՝ 1933ին Իտալիոյ թագին ասպետութեան աստիճանով, դարձեալ 1933ին Սուրիական կառավարութիւնը սուրիական արժանեաց շքանշանով, և Պուլկար կառավարութիւնը 1934ին՝ պուլկար քաղաքային արժանեաց ազգային մեծ խաչի, Շուէտական կառավարութիւնը՝ 1935ին՝ Շուէտական արքայական թոլուրոյ աստղի ասպետական, Ֆրանսական Հանրապետութիւնը՝ 1937ին պատուոյ լեգէոնի սպայութեան աստիճանով և Լիբանանի հանրապետութիւնը 1937ին Լիբանանեան արժանեաց ոսկի շքանշանով:

Տիար Ճանիկ Չազըր, եզիպոսի մէջ միջազգային դէմք մըն է որ իր զիրքին բերմամբ յարաբերութիւններ ունի, պետական բարձրագոյն պաշտօնատարներու, ինչպէս նաև զիւրանազիտական ներկայացուցիչներու հետ:

1925էն սկսեալ կը վարէ պատուակալ Ընդհ. քարտուղարի պաշտօնը Association pour favoriser le Tourisme en Egypte ընկերութեան, որուն նախագահն է Սիւլէյման փաշա, իսկ 1926էն ի վեր սնդամ է վարչական խորհուրդին Եզիպոսի պանդոններու ընկերութեան:

Տիար Ճանիկ Չազըր, մին է հիմնադիրներէն Գահիրէի Միջազգային Thésophieի Ընկերակցութեան և կարեւոր անդամներէն մէկն է Բրիտանեայ Եկեղեցիներու Միութեան որուն նախաձեռնողն է Շուէտի ղեսպան պ. սը Պիլտ:



ՃԱՆԻԿ ՉԱԳՐ

Տիար Ճանիկ Չազրը, ծառայած է նաև Հայ ազգին, ազգային շրջանակի մէջ գործելով:

1912ին վարած է Աղբ. Գալուստեան վարժարանի Հոգաբարձութիւնը, Մինաս Մալեանի տնօրէնութեան շրջանին Նոյնպէս 1919ին Բար. Ժողովը իրեն վստահած է Առաջնորդարանի վերակազմութեան ծրագիր մը պատրաստելու գործը, որուն համար խնամեալ տեղեկագիր մը կազմած է որ սակայն դժբախտաբար անդործադրելի ձգուած է:

1923 Ապրիլ 29ին ընտրուած է երեսփոխան և այդ թուականէն ի վեր կը պահէ իր պաշտօնը, 1936ին վերընտրութեամբ, և Ատենապետն է 1924էն ի վեր Գահիրէի Թեմական ժողովին, անընդհատ բոլոր նշտաշրջաններուն միաձայնութեամբ վերընտրուելով, իր անժխտելի ձեռնհասութեան և պաշտօնին պահանջած անկողմնակալութեան համար:

Տիար Ճանիկ Չազրը, Եգիպտոսի Հայ Հասարակութեան ամէնէն աչքառու անձնաւորութիւններէն մէկն է, որ կը սատարէ բոլոր հանրային գործերու նիւթապէս և բարոյապէս:

1935ին կաթողիկոսական լիազօր նուիրակ Գարեգին Արքեպ. Յովսէփեանի առաքելութեան իր ընծայած թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական ձեռնտուութեան համար, ինչպէս նաև Եգիպտոսի Հայ գաղութին իր մատուցած ծառայութեանց ի գնահատութիւն, յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Նուիրակ Սրբազան իրեն տուաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ պատուանշանին Ա. աստիճանը:

Տիար Ճանիկ Չազրը, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան ալ ընծայած է իր աշխատութիւնը և 1919ին՝ երբ այս մեծ կազմակերպութեան կեդրոնական Վարչութիւնը Գահիրէ էր դեռ, ընտրուած է փոխ-անդամ կեդրոնական վարչութեան:

1921ին երբ կեդրոնը փոխադրուեցաւ Բարիդ, և Գահիրէ մնաց Գործադիր Ժողով մը միայն՝ Առաքել պէյ Նուպարի առեւտրատուութեամբ. այդ ժողովին գործօն անդամներէն մէկը եղած է ինքը և մինչև 1925ի վերջը մասնակցած է այս ժողովին աշխատութեանց:

1926ին Գահիրէ կ'ունենայ Շրջանակային յանձնաժողով մը որուն մէջ կը պահէ իր պաշտօնը մինչև 1932, երբ վերակազմուած յանձնաժողովի մէջ կ'ընտրուի փոխ-Առեւտրատու, պաշտօն որ ցարդ կը վարէ, խղճմտօրէն հետաքրքրուելով այս Բարեգործական մեծ կազմակերպութեան գործերով:

Գլխաւորապէս իր գործը եղած է Նուպար Մարզարանի հիմնարկութիւնը, որուն վարիչ մարմնոյն նախագահն է ինքը:

(Ա. Ա.)

ՅՈՅԺ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԴԷՄՔ ՄԸ
ՄԵՍՐՈՎ Պ Յ. ՍԷԹԵԱՆՑ*

Հայ գրական և ուսուցչական դեմքերուն մէջ կա՛յ հատ մը՝ որուն ամբողջ կեանքը վաստակաւոր աքնութեանց և անխոնջ պրպըտումներու երկարաձիգ շղթայ մը եղած է, ի սականաւոր և արդիւնաշատ ուսումնասիրական գործերով: Այդ թանկագին Հայը որ իր և հարազատ հետեւող մեր նախնեաց լեզուին և երկասիրութիւններուն, գրաբարի պաշտումը ունի և անոնցմով օժուէն են իր գրութիւնները, ներկայիս կ'ապրի Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, ուր միակն է մեր ազգակիցներուն մէջ Հնդկահայութիւնը և անով ամբողջ Հայութիւնը անդիլական երկիրներուն ծանօթացնողը:

Բարի և աղնուական աչքեր, հին հայերու երկար պերեւելչտներ, ալեւոր մազեր և խոհուն դէմք, ահա՛ ինչ որ կը ներկայացնէ իր արաքիւնը կամ ֆիզիքականը, իսկ իր ներքին մարդը, այն որ բնութեան ստեղծագործած վեհմազոյն էակին մէջ հոգին կը կաղմէ, անստղիւտ է իր թանկագին կարողութիւններով և զգացումներով:

Պարոն Մեսրոպը Յ. Սէթեանց, ինչպէս ըսինք, ալեւոր է այժմ, եօթանասուն տարիքն անցուցած, բայց ան դեռ երիտասարդ է մտքի աշխուժութեամբ և գործունէութեամբ. իր հասակակիցներէն շատեր՝ տարիքի յառաջխաղացումով կամ մարմնական հիւժումով՝ սկսած են տակաւ քաշուիլ գրական հրապարակէն, իսկ ան դեռ կը շարունակէ ծառայել և արտադրել երկեր, որոնք պատիւ կը բերեն նախ իրեն եւ ապա իր պատկանած ուշիմ ցեղին: Ահա այդ երկերը, որոնք ատեն մը ետքը չպիտի կորսուին վիպական և թեթև գործերու պէս, այլ պիտի մնան և մասկազմեն մեր ազգադրական պատմութեան. Armenians in India, The Republic of Armenia, Armenia of Agra and Gwalior, Agah

*) Սիրով տեղ կու տանք բանկագին բարեկամ Սեթեանցի այս ներբողական տղերուն որուն կրթական ու գրական յոբելեանը կը զուգարդիպի այս տարի (1938): Մեծանուն բանասէր խուզարկողը ծնած է 1866ին. 1939ի ընթացին՝ պէտք է հայ ազգը անոր յիսնամեայ անխոնջ նակիին վայ ոսկեայ պսակ մը գետեղէ:

Catchick A'akiel, Khojah Petrus, Hindoos in Armenia, *ևւայլն: Եւ նկա-
տելով որ ասոնք աւելի շատ օտարներէն կը գնահատուին և կը գնուին
քան թէ մերիններէն, ողբայի չէ՞ք գտներ հայ ժողովուրդի անտար-
բերութիւնը դէպի իր իսկապէս արժէքաւոր մտաւորականները*
1928 Նոյեմբեր 4ին Կալկաթայի մէջ կատարուեցաւ պ.Մ. Սէթեանցի



ՄԵՍՐՈՎՊ Յ. ՍԵՅԵԱՆՅ

կրթական և գրական և գործունէութեան քառասնամեայ յորեկեանը
Թերթեր ու հանդէսներ շատ քան գրեցին իր մասին, բայց եղա՞ւ ազ-
գակից հարուստ մեկնեալ մը, որ դրամական նուէրով մը պատուէր այս
պատկառելի ծերունին: Ո՛ւր ևս ազգային արժանապատուութիւն: Հան-
գուցեալ Պալաքեան եպիսկոպոս օր մը կը պատմէր ինձ թէ, Լոնտոնի
մեծ պրոդոտոյէ մը անցած ատեն տեսած էր հիւանդանոց մը, որուն
ցուցատախտակին վրայ գրուած էր թէ այն իրիկունը այդ բարեօր-
ական հաստատութիւնը պիտի փակուէր 40000 սթերլին բացով: Ե-
պիսկոպոսը օր մը վերջը նոյն տեղէն անցած միջոցին տնօրէնէն կը
ստուգէ թէ մեծահարուստ մը վճարած էր պարտքը և հիւանդանոցը կը
շարունակէ իր գործունէութիւնը, ինչո՞ւ, որովհետեւ անպիտաներու:

արժանապատուութեան դէմ էր տարիներ առաջ բացուած ազգային հիմնարկութեան մը փակումը: Օրինակը թէև հեռաւոր, բայց մեզի համար ալ միթէ անպատուութիւն չէ՞ ձգել որ հայ հեղինակներու գործերը փոշիներու մէջ կորսուին և անոնք — հեղինակները — չքաջալերուին իրենց աշխատելու եռանդին մէջ

Պ. Մ. Սէթեանց կրթական ասպարէզը մտած է 1888ին և ժամանակ մը պաշտօնավարելէ վերջ Նոր-Ջուղայի մէջ, անցած է Հնդկաստան, ուր լրացուցած է Կալկաթայի համալսարանին ընթացքը յաջող քննութեամբ: 1894—1928 պետական համալսարանին մէջ հայ լեզուի քննիչ եղած է: Կալկաթայի Մարդասիրական ձեմարանը շատ բան կը պարտի այս մեծանուն ուսուցչին, որ երկար տարիներ հոգարար ձեռնութեան անդամ կամ վարիչ եղած է նոյն դարաւոր հաստատութեան:

Լոնտոնի և Բարիզի Ասիական Ընկերութիւնները պատուոյ անդամ ընտրած են զինքը, իսկ Հնդկի կառավարութիւնը գնահատելով իր գրական և հեղինակի ծառայութիւնները, 1925ին ընտրած է զայն անդամ The Indian Historical Records Commission-ին:

Պ. Մ. Սէթեանց, հեռու հայկական կեդրոններէ, կ'ապրի Գանգէսի ափերուն մօտ տեսակ մը մենութեան մէջ, ուր իր գրիչն ունի միայն իր հայու սրտին խօսող և կազդուող զգացումները: Կը մաղթենք երկարատե կեանք և յաջողութիւն իր աղգասէր ձեռնարկներուն:

Վ.Ա.Հ.Բ.Մ. ԱՐԾՐՈՒՆԻ

(Հիմնադիր Տնօրէն Թարգմանչաց վարժարանի)

Աղեփաանդրիա, 1938 Գեկս.



Վ.Ա.Հ.Բ.Մ. ԱՐԾՐՈՒՆԻ

Հ. ՅՈՎՀ. Ծ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

(ԱՂԱՄԱՆԴԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՐ)

Վենետկոյ Մ. Ռափայէյեան վարժարանի մէկ համեստ խցիկին մէջ, մեծ կրօնական մը իր բեղուն կեանքին անդամանդեայ սանդուխին վրայ կը կոխէ:

Թակաղիր Արրայ Հ. Յովհաննէս Ծ. Վ. Թորոսեանն է ան: Հայ մամուլէն ու գրասերներէն յարգուած և ծանօթներէն պաշտուելու չափ սիրուած:

Մեծն Մխիթարայ այդ արժանաւոր զաւակը իր ծննդավայր գեղածիծաղ Պարտիզակի լեռնէն առած իր պարթևական հասակը (ծնած 1864ին), անոր ծիծղուն երկնքէն համակրելի ժպտուն զմօքը, մանուկ հասակին Ս. Ղաղար կը զրկուի շուրջ 1874ին, ուր կը տիրանայ առողջ մտքին, և 1882 Դեկտ. 25ին զեւ հազիւ 19 տարու խորան կը բարձրանայ:

Նախ վանքին մէջ ուսուցչութիւն կ'ընէ. 1890ին ծննդավայրը կ'այցելէ. 1891ին Հռոմի համալսարանը կը յաճախէ: 1894ին Մ. Ռափայէյեան վարժարանին ուսումնապետ կը կարգուի: 1895—1902 վերակացուն է վանքին աշակերտաց ու 1902ին Մխիթ. Միարանութեան ու ազգին 8 վարդապետներ կ'ընծայէ, որոնց գլուխը կը գտնուի Բարիլի (Սեվրի) Մուրատեան վարժարանի եռանդուն բեմբասաց ու պատմագէտ Հ. Սահակ վ. Տէր Մովսէսեան (Մշեցի), թարգմանիչ և դաստիարակ Հ. Ալեքսիս վ. Յովսէփեան (Արարիլիցի), խղճամիտ մատակարար Հ. Թորոս վ. Սիրունեան (Արարիլիցի), գրագէտ ու հայկաբան Հ. Ներսէս վ. Անդրիկեան (Մշեցի), քաջ մատակարար Հ. Բենիկ վ. Շամանճեան (Անգարացի), բանաստեղծ լեզուագէտ Հ. Կարապետ վ. Տէր Սահակեան (Մշեցի), պատմագէտ Հ. Յարութիւն վ. Աստուրեան (Մարաշի), և յետինս՝ Պարտիզակցի:

Ամէնէն տաղանդաւոր խոստմնալիցները, Մշոյ դաշտին ծաղիկները Հ. Կարապետ Տէր Սահակեան, 1915ին բարբարոս թուրքերէն մէկուն լախտի հարուածին տակ կ'իյնայ ու Հ. Ներսէս Անդրիկեան ջղային հիւանդութեան մը զոհ եղած՝ կը խամրի Պոլսոյ մէջ 1936ին:

Հ. Յ. Թորոսեան 1903—7 Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանին անսլութիւն կ'ընէ, յետոյ նոյն պաշտօնով Վենետկոյ Մ. Ռափա-

յէլեան վարժարան կ'անցնի: Նախապէս վարչական ժողովի անդամ, 1909էն սկսեալ վանքի վարչական գործերը կը վարէ իրր ընդհ. քարտուղար, Աթոռակալ և տեղապահ: 1929էն մինչև 1937 իր օրով բացուած Սէվրի վարժարանին մեծաւոր կը կարգօրի և 1938էն վեներտիկ կ'առանձնանայ:

Գրական մարզին մէջ Հ. Յ. Թորոսեան ճանչցուած է նախ իրր



Հ. ՅՈՎ. Հ. Ծ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

«Հ. Պոսուրեան, կ'ըսէր ինձ Տսֆր. Գր. Սայեան 1920ին, Բարլիզի համազգային ժողովին մէջ ամենէն համակրելի եւ ամենէն ողջամիտը, հայրենակիցդ ու տեսուչդ Հ. Թորոսեանն էր»:

լիզուագէտ, գիտէ ասորերէն, յունարէն, լատիներէն, երբայեցերէն, ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, քաջ հայկաբայի է և աշխարհաբարն ալ սահուն, ժամանակին հետ ընթացող:

Տակաւին երիտասարդ՝ հայ պատանիին «Հայկակ»ին տուած է ընթեր Հայկազունէր, անոր մէջ Ս. Մեսրոպն արթնցնելու, վարդանի առաքինութիւնը մշակելու, ազգասէր զօրավարներու և թագաւորներու կտէն քալեցնելու համար: Հ. Թորոսեան «Բազմավէպ»ի թէ

աշխատակից և թէ խմբագիր եղած է ու հրատարակած հայ-մատենագրական ուսումնասիրութիւններ: 1901ի Մխիթարեան Միաբանութեան 200ամեակի առթիւ գրած է Մխիթարայ վարքը, ընդարձակ, սիրուն ոճով, նոյնպէս Միքայէլ Փորթուզալ փաշայի կենսագրութիւնը: Թարգմանած է կրօնական գրքեր, հայագէտ Գեյցերի «Հետազոտութիւնք Հայ դիցարանութեանը», «Հայկ. Եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը», Տէ Ամիշիսի «Յուշք Կոնտրայի», և վերջինիս «Անթառամ» վէպը:

1932ին Ս. Ղազարու մէջ իր քահանայական յիսնամեակը տօնուեցաւ «Գաղութահայ Տարեգիրք»ի Առաջին գիրքը անո՛ր համար կը փակեմ, իմ մեծ դաստիարակիս կենսագրութեամբ, որովհետեւ ինքն է իմ քայլերը առաջնորդած հայրենագիտութեան դաշտին մէջ, ի՛նք սովորեցուցած է ինձ թէ ո՛ր ծաղիկները պէտք է հաւաքեմ և մանաւանդ՝ ինքն եղած է Հայ Հանրագիտարանի յղացողը. երբ 1902ին օր մը այդ վարդապետը իր շուրջ հաւաքած իր ութը Աշակերտները՝ նիւթերը բաժնեց. բայց պարագաները շուտով ցրուեցին մեզ. խորհուրդը սակայն իր սաղմին մէջ չանէացաւ. զայն իմ հետ տարի 1911ին ի Թրանսիլվանիա, նախնեաց Յիշատակարաններէն նիւթեր հաւաքեցի, ընդհ. պատերազմի ատեն երբ մարդիկ պատերազմի դաշտին վրայ զիրար կը կոտորէին, ես Հանրագիտակին համար կ'աշխատէի: Միայն 1915ի վերջերը երբ լրագիրները հեռուէն եկան ինձ պատմելու միլիոնէն աւելի իր արենակիցներու տառապալից տեղահանութիւնը և Պոլսոյ մտաւորականութեան բնաջնջումը, այդ ատեն միայն իմ այս գործը մեկզի նետեցի դառնացած:

«Հայ Հանրագիտակ»ին կողքին, թանկագին Հա՛յրս, Գաղութահայ Հրատարակչական մը լոյս աշխարհ բերի, որուն երախայրիկն է Գաղութանայ Տարեգիրքը:

Ինձի հետ են «Գաղութահայ Հրատարակչական»ի բոլոր մեկեանաս, հիմնադիր ու ընթերցող անդամներն ու աշխատակիցները, ու երբ դուն 1939ի սկիզբը, բեղմնաւոր կեանքիդ ադամանդէ սանդուխին վրայ կը կոխես 75 տարիներու բեռան տակ՝ Բեզի՛ կը նուիրենք այս Գիրքը, մաղթելով որ դեռ չա՛տ տարիներ ապրիս և գրադարանիդ մէջ այս գործին յաջորդական շատ մը հատորները ղեռնդես:

Որդիդ

Հ. ՄԿՐՏԻՁ Վ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Յ Ա Ն Կ

1.	Փոխան յառաջարանի		3
2.	Սասունցի Դաւիթի Տօնախմբութիւնը Հայաստանի մէջ	Արշակ Սահրասեան	5
3.	Սոնաթ Ամառին	Արսէն Երկաթ	10
4.	Մշոյ Տոմ գիւղի հարսնիքը	Հ. Եփրեմ Պողոսեան	12
5.	Դիւան Պուլկարահայոց պատմութեան	Ներսէս Գասապեան	14
6.	Հայ պատմական վէպ մը	Ֆիքսէն Բօզ	18
7.	Հաւախօս	Գ. Կառվարեց	26
8.	Թշուառութիւն	Զ. Պլպուլ	27
9.	Կարգրէլ տ'Անունցւոյ	Գ. Գեղարժունի	28
10.	Հիւր թանկագին	Զ. Պլպուլ	32
11.	Անճաւորութեան դաղափարի մասին	Կ. Պալկեան	33
12.	Կարօտ	Օննիկ Մահեսեան	50
13.	Պոլսոյ հայ ընկերութիւնները	Արշակ Ալպոյանեան	51
14.	Հրաչայի...	Վ. Մեհստեան	61
15.	Գովերգ և ատելութիւն	Սօս-Վանի	65
16.	Զէյթունի ապստամբութիւնը		73
17.	Դաշտի ճամբաներ	Օ. Զարմունի	74
18.	Ի՞նչ է ազատութիւնը	Ա.	75
19.	Հայկական հին դրամները	Ա. Բօքրեհեհեան	81
20.	Իրաքի հայ Հիբրոգրատը	Վարդան Մելիքեան	91
21.	Յուշեր Նիշեր	Ասրուսեան	93
22.	Դարնահային	Հօրիօն	96
23.	Կարեկցութիւն	Մ. Մանուկեան	97
24.	Էջ մը Յունական դիցարանութենէն	Յ. Ալունեան	98
25.	Անկախ խոհեր և մտածումներ	Վահրամ Տասրեան	108
26.	Խոստովանանք	Մ. Մանուկեան	110
27.	Ի՞նչ են կենսանիւթերը	Վարդան Մելիքեան	111
28.	Յիշատակներ Տիրան Զրաքեանէն	Գր. Նեանեան	113
29.	Վերջին Պոկտանեանը	Թարգ. Ա. Էմսահար	124

30.	Քառեակներ	Ե. Գ. —	129
31.	Երեք քնարակիր	Մինաս Թեօթեան	130
32.	Մոլորածը	Հ. Մ. Պոսուրեան	140
33.	Հայրենիքի աղաղակը	Ս. Գաբամանեան	146
34.	Զեւարուեստը Կեսարիոյ մէջ	Ճիվան Արզրեան	151
35.	Սրբուհի Մեծ Մայր Գալֆայեան	Գ. Ա. Մալաքեան	156
36.	Ներքնաթաղումներ	Օ. Զարմուհի	160
37.	Վարդգահոճաքէսեան	(Խնկնակեանագրութիւն)	161
38.	Անհատական կամք և հասարակական կամք	Յ.	169
39.	Քառեակներ	Ե. Գ. —	178
40.	Ֆիզիքական դաստիարակութիւն	Յ.	179
41.	Գուրգէնն ու Սայլորզը	Գ. Ա. Մալաքեան	193
42.	Քառեակներ	Ե. Գ. —	195
43.	Զուկին Սէրը	Յ. Գ. Արանասեան	196
44.	Եկեղեցական տօները	Յ.	203
45.	Կիսադէժի Գաղանիքները		205
46.	Հակոբ ձեր հաւերէն		206
47.	Ռոմանական գինի	Զ. Պլպուլ	209
48.	Հայրական խաղերու ուսուցնաթիրութիւնը մեր մէջ	Հ. Գր. Հեպոյեան	210
49.	Դաստիարակութիւնը	Հ. Բն. Զարգարեան	217
50.	Թախառումներ	Բրոն Ծիրան Լիւլեկեան	222
51.	Քերթուածներ	Գ. Գեղարեւոնի	224
52.	Բարից Աէն Միչէլի վրայ սրճարան մը	Անայիս	225
53.	Հայ ճարտարագետը և իր ուժը	Ս. Ճեվանիրեան	229
54.	Հայերը Լեհաստանի մէջ	Ար. Տոնիկիեվիչ	234
55.	Երգ երէկի, այսօրի և վաղուան	Ս. Սեմա	239
56.	Կարագետ Ա. քն. Պոյաճեանց		241
57.	Նատասարգ	Լեւոն Կիւրեղեան	243
58.	Համաբարձ սիգուլթիւնը իրրև միջոց՝ աշխատազօհուլթեան դէմ կռուելու համար	Բրոն. Վ. Տոսումեանց	255
59.	Այտրեան պատարագը	Յ. Ալասեան	258
60.	Զագրը Սաթենիկ	Ա. Ա.	262
61.	Զագրը Ճանիկ Հայկ	Ա. Ա.	264
62.	Մեսրոպ Յ. Ալթեանց	Վահրամ Արծրունի	267
63.	Հ. Յովհ. Ծ. Վ. Թորոսեան	Հ. Մ. Պոսուրեան	270

Վ Ր Ի Պ Ա Կ — Ո Ի Ղ Ղ Ե Լ Ի

Մեր բնօրհաններուն և ներդաստիքներ կը խնդրենք զբխա մէջ սարդած վրիպակներուն համար, որոնց կարելորագոյնները կը նշանակենք հոս՝ խնդրելով որ նախան կարողալը զայն սրբագրեն:

(Վ = վերէն, ա = ակէն)

Էջ	Տող	Վ Ր Ի Պ Ա Կ	Ո Լ Ղ Ղ Ե Լ Ի	
18	3	վ	նահանգը	նահանգը
19	14	ս	ոսկորեսիք	ոսկերոսիք
26	4	ս	Ու	Ու
29	10	ս	վիրապրի	վերապրի
37	4	վ	կազմաւորող	կազմաւորուող
41	7	ս	լաս	լալ
43	9	վ	Ալիօսէն	Ալիօսէն
47	15	ս	բնկերութիւններ	բնկերաբաններ
66	2	վ	ասուածներուն	ասուածներուն
66	7	վ	բմբումի	բմբումի
71	20	վ	քեզմէ	քեզմէ
71	14	ս	քաղաքներ	քաղաքներ
71	7	ս	գազալներ	գազալներ
81	2	ս	ուսումնասիրութիւն	ուսումնասիրութեան
91	13	վ	հիւանդներու	հիւանդներ ու
95	3	ս	ունէր	ունէիր
96	14	վ	սերերու	սերերուս
96	11	ս	լուրեան	լուրիւն
97	2	վ	գրութեանդ	գրութիւնդ
97	4	վ	սար	յար
97	5	վ	բիրութիւնն	բերիութիւնն
97	11	վ	լոյսերդ	լոյսերդ
106	2	վ	Երեւոս	Երեւոսէ
111	15	ս	ազդեղէն	ազդեղէն
112	2	վ	մակարդակին	մակարդին
112	12	ս	իւղին	իւղին
113	10	վ	նորէն	նորէն
116	1	ս	առաջնորդ	առաջնորդելու
121	2	ս	Սրբազակին	Սրբազանին

302

Էջ	Տող	Վ ը ի պ ա կ	Ո լ ղ ղ Ե Լ Ի
124	3 վ	Չոյմուս	Չոյմուս
125	12 s	զնել	ղնել
125	6	հին	հոն
127	15 վ	րնոն	րուն
135	17 s	րիների	ների
139	14 վ	բ-բեն	գրբեն
140	11 s	անուսանդիր	անուսանդիր
143	4 վ	զուխ	զուխը
144	15 s	բարեկենդանն	բարեկենդանին
144	7 s	ընդունուած	ընդունած
148	9 s	սպագրութիւնք	սպաւորութիւնք
149	13 s	նոք	մք
150	21 վ	վերջին	վերջէն
151	4 s	մանս	մանու
152	8 s	սսանաւ	սսանայ
153	16 s	աղաղային	Աղաղէն
154	5 վ	բնկեր	բնակեր
154	1 s	ոսկինոց	ոսկի
156	10 վ	նամբին	նամբէն
156	12 s	կարգ	կառք
156	7 s	մրասուներ	մրասուներ
157	2 s	գարգ	գարգ
159	11 վ	դոր	գոր
176	13 s	վարանումներու	վարանումներ ու
181	2 վ	կէ	կը
185	2 s	փախուս	կորուս
192	1 վ	կարելի	կարելի
193	4 s	կ'ըզայ	կը զզայ
196	7 s	իւր	իբր
206	17 s	մակասեղի	մակաղասեղի
223	7 s	դուրին	դուրեան
226	2 s	վայելչութեան	վայելչութիւն
230	1 s	ըլ...	պէս մը պէտք էր տեղեակ ըլ...
240	1 s	ՍԻՄԱ	ՍԵՄԱ
241	3 s	Պ.	Տ.
246	14 s	tems	temps
258	3 վ	Յորմենէէ	Յորմենէէ
270	6 վ	քակալիւր	քազակիւր



Ա Ն Ա Հ Ի Տ

Մեր վաստակաւոր յորելիար գրագէտ պ. Արշակ Չօպանեանի պարբերաթերթը, Հանդէս մտածման եւ արուեստի: Տարեկան բաժնեգինն է Ֆրանսա, Սուրիա եւ Պալքանեան երկիրներ՝ 100 ֆր. այլ երկիրներ 5 տոյարու Հասցէն Mr. A. Tchobanian, 9 Rue Say Paris (9^e), France: Կարելի է «Հայ Հանրագիտակ»ի գործակալներուն վճարել բաժնեգինը և մեզի քարդ մը գրել:

ԶՈՒՍՐԹՆՈՅ

Սմտօրեայ գրաթերթ. խմբագիր Յ. Բալուեան: Մեծադիր այս գրական ամսաթերթը, որ կեդրոնավայրն է բոլոր մեր ներկայ գրողներուն՝ (տարեկան 10 թիւ) զ'արժէ Ֆրանսա, Սուրիա 30 ֆր. Արտասահման 40 ֆր. Իսկ Պալքանները 35 ֆր.:

Բաժանորդագրուելու համար դիմել՝ Mr. Palouyan
1 Rue de l'Aqueduc, Paris (10^e), France:

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Գրական ամսագիր, որ կը խմբագրուի Մ. Պարսամեանէ, տարին յոյս կը տեսնէ 10 թիւ յատ մաքուր թուղթով: Մեր ընթերցողներուն կը յանձնարարենք բաց քարդով մը նմոյս թիւ մը խնդրել խմբագրէն հետեւեալ հասցէին բաց քարդ մը գրելով Réd. „L'Art et la Vie“, 46 Rue Richer, Paris (9^e) France:

Տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 40 ֆր. ուրիշ երկիրներ 50 ֆրանք:

«Հայ Հանրագիտակ»ի գործակալներուն կարելի է վճարել բաժնեգինը և Հ. Մ. Պոռուբանի Frumoasa-Ciuc (Roumanie) բաց քարդով մը տեղեկացնել:

A $\frac{II}{4931}$

Մեկ
օրինակ

ՄԵՐ ՔՈՎ ԿԸ ՎԱՃՍՈՌՈՒԻ

ՄՕՐ ՄԸ ՍԻՐՏԸ հաւաքածոյ 33 լաւագոյն պատկանածքներ
(հեղինակ Ն. Լ. Մելիսոնեան) գինն է 25 լեվա, 40 լէյ, 6 ֆր. ֆ

ՍԻՐՈՅ ԵՏԵՒԻՆ վեպ Ասապագարի կեանքէն եւ ախորի ժամ
հակառչանէն: Գրեց Յ. Գ. Աբանասեան, գին 80 լէյ

ՄԵՐ ՃԱՄԲԱՆ հայկական դիւցազնամարտի դրուագներ, Լեւ
Լանիսի, գին 120 լէյ:

Այս երեք գրքերը գնելու համար դիմել Հ. Մ. Պոստրեան
Frumoasa-Ciuc (Roumanie)

Գ Ի Ն 120 Լ Է Յ

Արտասահման 1 տոլար. 4 ժիլին, 120 լեվա,
24 ֆր. 4 գուլդ. ֆր. 50 արախի

Գնելու համար դիմել Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆԻ
Frumoasa (Ciuc), Roumanie

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0023794

ЦЕНА

~~А II~~

4931